

Ի. ՀԱՏՏԷՃԵԱՆ,
ՅՈՒՇԱՏԵՏՐ – 47


ԱՌԱԳԱՍՏ
ԴԷՊՈՒ ԲԱԿԱՍՏԵՂՇՈՒԹԻՒՆ



ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԹԱՆ – ԻԳՆԱ ՍԱՐԸԱՍԱՆ –
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ – ԶԱՊԷԼ ԱՍԱՏՈՒՐ (ՍԻՊԻԼ) –
ՊԱՐՈՅՐ ՍԵԻԿ – ԱՏՈՒ ԵԱՐՃԱԿԵԱՆ (ՍԻԱՄԱՆԹՅՈՒ) – ՄԻՍԱԲ
ՄԵԾԱՐԵՆՅ – ԻՌԻԲԷՆ ՍԵԻԿ – ԱՐՏԱՇԸՆ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Ամսաթիվ
Տար Զարգացում
Զիջեցիկաբան
Երանցիկ արժեքներ
հիշող Արևիկ Արևիկ

ՅՈՒՇԱՍԵՏՐ - 47



1.11.2018
Մ. Շու

**ԱՌԱԳԱՍՏ՝
ԴԷՊԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻԲՆ**



Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ

ՅՈՒՇԱՏԵՏՐ - 47

**ԱՌ-ԱԳԱՍՏ՝
ԴԷՊԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻԲՆ**

ԻՍԹԱՆՊՈՒԼ

2006



**Որպէս Մուրք
ԵԹԷ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ
ՍՏԵՂԾՈՒԱԾ ՉԸԼԼԱՐ...**

Մեր կեանքէն բան մը կը պակսէ՞ր արդեօք, եթէ ստեղծուած չըլլար բանաստեղծութիւնը՝ որպէս գրական սեռերէն մէկը:

Ոմանց համար, ո՛չ, բան մըն ալ չէր պակսեր: Բանաստեղծութիւնը որեւէ իմաստ կամ կարեւորութիւն չունի անոնց համար: Ասոնք նոյնիսկ իրենց կեանքին մէջ մէկ հատ իսկ բանաստեղծութիւն չեն կարդացած, կամ չեն ալ գիտեր թէ կայ գրական սեռ մը, որ բանաստեղծութիւն կը կոչուի:

Ոմանց համար ալ, այո՛, անտարակոյս շատ բան կը փոխուէր եթէ ստեղծուած չըլլար բանաստեղծութիւնը: Ասոնք գեղեցիկին սիրահար այն անձերն են, որոնք գիտեն թէ իրենց կեանքը շատ անհամ կը դառնար եթէ չըլլար բանաստեղծութիւնը, եթէ չըլլար երաժշտութիւնը, եթէ չըլլար նկարչութիւնը, եթէ չըլլային բնութեան գեղեցկութիւնները, եթէ չըլլային աստղերը երկնքին վրայ, կամ եթէ ամպ մը չթառէր հեռաւոր լեռան մը կատարին վրայ, եթէ երգ մը չհնչէր քովի սենեակէն՝ աներեւոյթ մէկու մը չրթներով: Ասոնց համար բանաստեղ-

ծուլթիւնը վայելք մըն է որ կեանքը կը լեցնէ, ինչպէս որ ինքնին բանաստեղծուլթիւն են բոլոր այն գեղեցկուլթիւնները, որոնցմով բան մը կը շահի ո՛չ թէ մեր մարմինը, այլ մեր հոգին:

Ողջո՛յն կրկին բանաստեղծուլթեան:

Ահա կրկին գրադարանէս վար կը քաշեմ ինը հայ բանաստեղծներ եւ պահ մը կը մտնեմ անոնց մտերմուլթեան մէջ: Պատահաբար ընտրուած բանաստեղծներ են անոնք, որոնք անպայման գեղեցիկ խօսք ու զգայնուլթիւն ունին ինծի փոխանցելու: Կրնայի ուրիշներն ալ ընտրել, կամ պատահաբար ձեռքս դնել մէկուէ կամ միւսին վրայ: Չկայ մէկը որ իր սա կամ նա էջով յուզում չպատճառէ ինծի, կեանքի օրերուս գոյն ու ապրում չչնորհէ: Կը բաւէ որ ես պահ մը առանձնանամ անոնց հետ եւ ականջ տամ անոնցմէ հասնող ձայներու, ինչպէս որ ականջ կուտամ ձայնի մը, որ քովի սենեակէն կը հասնի աներեւոյթ ու մեղամաղձոտ երգիչի մը շրթներէն:

Ողջո՛յն կրկին հայ բանաստեղծուլթեան:

Հայոց ընտիր բանաստեղծուլթեան:

Ես սիրով այդ բանաստեղծուլթիւնը կը բաժնեմ այն գեղասէր մարդոց հետ, որոնք ինծի նման կը մտածեն թէ կեանքը շատ անհամ կը դառնար, եթէ բանաստեղծուլթիւնը ստեղծուած չըլլար:

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ

**ԿԱՐԴԱԼՈՎ
ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԸ**



ՀԱՅՐ, ՕՐՀՆԷ՛

Ա.

Դանիէլ Վարուժա՛ն:

Երբ կը հնչեմ այս անունը, աչքերս կրնան խոնաւնալ, կրնամ սրտիս մէջ անօրինակ յուզում մը զգալ, նոյնիսկ տառապիլ: Ինչո՞ւ: Որովհետեւ կը վախնամ որ մեր բանաստեղծութեան այս հսկան արդէն իսկ սկսած է մոռցուիլ:

Այո՛, մի՛ գայթակղիք գրասէր սակաւաթիւ բարեկամներ, ձեր աչքերը խոշոր մի՛ բանաք, մի՛ աճապարէք պնդելու թէ կը ստեմ, կը մեղանչեմ, անարգարութիւն կ'ընեմ «Հացին երգը»ին հեղինակին: Ես գիտեմ թէ ինչ կ'ըսեմ: Կը վախնամ որ մեր բանաստեղծութեան այս հսկան, այս անհասանելի կատարը արդէն իսկ սկսած է մոռցուիլ: Սփիւռքահայ անծայրածիր տարածութեան վրայ ապրող միլիոնաւոր հայ երիտասարդներէն քանի՞ հոգի արդեօք այսօր տարւոյն մէջ մէկ էջ բանաստեղծութիւն կը կարդայ Դանիէլ Վարուժանէն, կամ քանի՞ հոգի լսած է Դանիէլ Վարուժանին անունը: Սփիւռքահայ գետնի վրայ ապրող միլիոնաւոր հայ երիտասարդներէն մէկ հոգի իսկ կա՞յ արդեօք, որ պատանութեան շրջանը աւարտելէ վերջ իր հօրը զիմաց անցնի եւ աղօթքի մը նման կարդայ «Հայր, Օրհնէ՛» բանաստեղծութիւնը, որպէսզի մէկ կողմէ ըմբոշխնէ հայ գրականութեան ամենագեղեցիկ էջերէն մէկը, միւս կողմէ ալ արժանանայ իր հօրը օրհնութեան ու համբոյրին:

«Հայր, Օրհնէ՛»:

Նոյնը պիտի ըսեմ: Երբ կուտամ այս բանաստեղծութեան անունը, աչքերս կրնան խոնաւնալ, կրնամ սրտիս մէջ անօրինակ յուզում մը զգալ, նոյնիսկ տառապիլ: Ո՛չ թէ միայն անոր համար որ այս կարճ

բանաստեղծութիւնը ինծի համար Դանիէլ Վարուժանին գեղեցկագոյն բանաստեղծութիւնն է, այլ նաեւ անոր համար որ այդ բանաստեղծութեան մէջ ես կը տեսնեմ մեր ժողովուրդին տառապակոծ անցեալն ու կեանքի դժուարութիւններուն դէմ պայքարելու հերոսական կեցուածքը: Նաեւ այն ոյժը զոր ամէն հայ երիտասարդ կ'առնէր, պէտք է առնէր իրեն ծնունդ տուած հօրմէն, որ այլեւս կը դադրէր պարզապէս հայ, պարզապէս ծնողք նշանակելէ եւ կը դառնար ամբողջ ժողովուրդ:

Հայր իմ, օրհնէ՛, ժամը հասաւ, պիտ' երթամ.

Նոր կեանք մ'իմծի կը սպասէ:

Պատանութիւնն ես թողուցի. մոր արիւն

Երակիս մէջ կը վազէ:

Այս չորս տողերով արդէն կը բացուի հրաշալի պատկերը հայ պատանիին, որ կը պատրաստուի պատանութեան հրաժեշտ տալու, դիմագրաւելու կեանքը, եւ ատոր համար ալ կը խնդրէ հօրը օրհնութիւնը: Պատկեր մը՝ որ թերեւս բաւական սովորական ու տեսանելի էր ասկէ հարիւր տարի առաջ, որ սակայն այսօր անհետացած է աշխարհի բարքերուն մէջէն եւ Սփիւռքահայ ժողովուրդի ապրումներէն ներս:

Ես վստահ եմ որ Դանիէլ Վարուժանն ալ արցունք հոսեցուց երբ գրեց 36 տողերէ բաղկացեալ այս բանաստեղծութիւնը: Հրաշալիք մը, զոր, եթէ չվախնայի ծիծաղելի դառնալէ, պիտի ուզէի որ ամէն երիտասարդ կախէր իր անկողնին վերեւ, ինչ տարիքի ալ պատկանէր, կեանքի որ հանգրուանին ալ հասած ըլլար:

Յառաջ, յառաջ.- գլուխս ետ չեմ դարձներ.

Երկիմքէս վար թող իյնամ

անվիշտ կեանքիս ամէն աստղեր. հոգս չէ.

Անցեալս իջնայ թող դամբան:

է՛հ, իր հօրը օրհնութեան արժանանալու սա պահուն
այս երիտասարդը գիտէ թէ այլեւս վերջացած պէտք
է ըլլան պատանեկան կեանքի փայլուն օրերն ու աստ-
ղերը: Ի՞նչեր իրեն կը սպասեն կեանքին մէջ, ի՞նչեր
իրմէ կը սպասեն իր փոքրիկ ծնողքը՝ որ մայրն ու
հայրն են եւ մեծ ծնողքը՝ որ մեր ժողովուրդն է: Գնա՛
դէպի առաջ, եւ եթէ պէտք է, անցեալդ թաղէ հողին
տակ: Երիտասարդը արդէն համաճայն է:

Հայր, ես կ'երթամ այն մամրայէն՝ որ մերմակ
մագերուդ գիս կը տանի,
վաստակաբեկ ոսկորներուդ, ծեր սրտիդ
եւ սէրերուդ կենդանի..
Բաւական է.- աշխատեցար, կրեցիր,
ամէն մտի, հարուածի
վահան եղար ինձի համար. հոգիդ է՝
որ հոգւոյս մէջ կը յածի:

Ա՛խ, կեցէք, չաճապարենք, քանի մը անգամ
կարդանք իւրաքանչիւր բառը ու տեսնենք թէ քանի
քանի խորհուրդներ կան սա ութ տողերուն մէջ: Այստեղ
ամէն բանէ առաջ ուխտ մը կայ, հանդիսաւոր երդում
մը: Ես ալ պիտի ընթանամ քու ճամբէդ, կ'ըսէ տղան,
ես ալ մագերս սպիտակ պիտի դարձնեմ քեզի նման,
ես ալ օր մը պիտի ունենամ վաստակաբեկ ոսկորներ,
ծերացած սիրտ մը, որ սակայն երբեք պիտի չմոռնայ
իր հին սէրերը, ինչպէս դուն: Եւ երախտագէտ տղան
կ'աւելցնէ. «Պաշտելի հայր, կը բաւէ որքան աշխա-
տեցար ու յոգնեցար: Դուն գիս պաշտպանեցիր աշխարհի
բոլոր հարուածներէն ու նետերէն, եղար կեանքի իմ
վահանս: Հիմա կարգը իմս է: Կը մեկնիմ իմ հոգւոյս
միացնելով քու տառապակոծ հոգին»:

Կ'արժէ տեսնել թէ դեռ ինչեր պիտի ըսէ անցեալի

մէջ մ'նացած այս հայ երիտասարդը, որ Դանիէլ Վարու-
ժանեան շքեղ լեզուով կ'աղերսէ իր հօրը օրհնութիւնը:

ՀԱՅՐ, ՕՐՀՆԷ՛

Բ.

Մեր գաւառաբնակ ժողովուրդին չարքաշ անցեալէն
փառաւոր պատկեր մըն է որ կը պարզուի սա «Հայր,
Օրհնէ՛» խորագրուած բանաստեղծութեան տողերէն:
Ես ա՛յդ է որ կը տեսնեմ այս բանաստեղծութեան մէջ
երբ կը նայիմ երիտասարդ հայ տղուն որ երախտա-
գիտական խօսքեր արտասանելով կը պատրաստուի մեկ-
նիլ պապենական տունէն: Մեկնիլ դէպի ո՛ւր: Դէպի
պանդխտութիւն, դէպի կեանքի կռիւ:

Իմ արիւնս է գոյացած քու քրտիմբէդ.-

յոգնութեանդ ծիլն եմ տխուր:

Հոգիդ, կաղնի՛, երբ կուրծժ կուտար մրրիկիմ՝

ես շուքիմ տակ՝ հանգիստ, լուռ,

կը մեծնայի.- Հարկ է հիմա ա՛լ հանգչիս,

ես ես քեզի յաջորդեմ:

Խոնջէմք, խոնջէմք - կ'ուզեմ կուռիլ, աշխատիլ,

ելլել կեանքիմ, կեանքիմ դէմ

Եւ երախտագէտ զաւակը, իր այս ուխտէն վերջ կ'ար-
տասանէ բանաստեղծութեան վերջին չորս հրաշալի
տողերը.

Հայր իմ, օրհնէ՛, դողդոջ սեռերդ գլխուս դիր,

Թող մատներէդ կաթի վար

աղօթքդ՝ եկած հոգւոյդ պայծառ խորանէն:

Վերջիմ ժամն է, օրհնէ՛, հայր:

Եկէք եւ այս բանաստեղծութեան մէջ մի՛ տեսնէք

մեր ժողովուրդին այն ողբերգութիւնը, որմէ շուք մը ինկած է բոլոր հայ ընտանիքներու կեանքէն ներս: Ո՞րն է այդ ողբերգութիւնը, որ երէկ կար ու այսօր ալ կը շարունակուի: Անիկա այն ճակատագիրն է որ բաժան բաժան կ'ընէ հայ ընտանիքները, զաւակը կը հեռացնէ ծնողքէն, մէկը կը նետէ կեանքի յորձանքին մէջ, միւսը կը թաթխէ կարօտներու ծովուն մէջ: Հայ ժողովուրդը բաղկացնող միլիոնաւոր ընտանիքներու մէջ, այստեղ կամ այնտեղ, Սփիւռքի մէջ կամ Հայաստան, քանի՞ ընտանիք պիտի կարենանք գտնել ուր ծնողք ու զաւակ կ'ապրին նոյն քաղաքին մէջ, իրարմէ քիչ հեռու, շաբաթը մէկ կամ երկու անգամ վայելելով մէկգմէկու ներկայութիւնը եւ կամ շաբաթը անգամ մը գտնէ աղօթելու նոյն ճաշասեղանը բանալէ առաջ: Պատկերը միասնութեան պատկեր չէ, բաժանումի ու կարօտի պատկեր է, այսօր ալ, ինչպէս եղած էր անցեալի օրերուն: Այսօր ալ երիտասարդը օր մը, յարգանքով ու երախտագիտութեամբ թերեւս, ծունկի կուգայ իր հօրը ու մօրը առջեւ եւ կ'ըսէ. «ալ կը բաւէ որքան դուք յոգնեցաք: Հիմա կարգը իմս է: Ես պիտի երթամ ու պիտի կռուիմ՝ իմ կեանքս շինելու համար»: Ու ան հրաժեշտ պիտի առնէ առանց անշուշտ Վարուժանեան ճաճանչազեղ բառամթերքով իր հօրը օրհնութիւնը խնդրելու: Հրաժեշտ պիտի առնէ հօրենական տունէն, հօրենական բարքերէն, հօրենական լեզուէն ու սրբութիւններէն, նոյնիսկ թերեւս իր ժողովուրդէն: Բայց հիմա պահ մը մոռնանք ողբերգականը ու նայինք գրականին: Նայինք թէ մեր տաղանդաւոր բանաստեղծը ի՞նչպէս կը խօսեցնէ երախտագէտ զաւակը.

Իմ արիւնս է գոյացած քու քրտինժէդ.
Յոգնութեանդ ծիլն եմ տխուր:

Եթէ կը սիրենք բանաստեղծութիւնը, կրնա՞նք անտարբեր անցնիլ այս երկու տողերուն գրական գեղեցկութեան առջեւէն: Մեզմէ ո՞վ պիտի ուրանայ որ բոլորս ալ մեր արիւնը կը պարտինք մեր հօրը, կամ մեր ծնողքի քրտինքին: Այստեղ հայրը միայն հայր չէ, է՛նաեւ մայր, ամբողջ ծնողքը: Մեր ծնողքին աղի քրտինքն է որ մեզի փոխանցուած է կարմիր արիւն դառնալով: Եւ այստեղ հայրը միայն ծնողք ալ չէ, ամբողջ ժողովուրդ է:

Մեզմէ ո՞ր ապերախտ հայորդին պիտի ուրանայ որ մեր երակներուն մէջ կը կրենք ամբողջ մեր պապերուն քրտինքը, անոնց դարեր շարունակ հոսեցուցած քրտինքը: Եւ տակաւին ո՞վ պիտի ուրանայ որ մենք բոլորս մեր պապերուն յոգնութենէն ծիւ առած ընծիւղներ ենք, ճիւղեր ենք: Կը բաւէ որ չմոռնանք այս ճշմարտութիւնը եւ հաւատարիմ մնանք այդ քրտինքին: Եւ ո՛չ միայն հաւատարիմ մնանք այդ քրտինքին, այլ նաեւ մեր ծերացած ծնողքին, կամ հազարամեայ մեր ժողովուրդին դողդոջ ձեռքերէն խնդրենք պապենական օրհնութիւն մը՝ դէպի կեանքի ծովը բացուելէ առաջ: Որովհետեւ այդ օրհնութիւնն ալ մեր պապերուն քրտինքին ու արեան նման կը սկսի պտըտկիլ մեր երակներուն մէջ:

Պիտի կրկնեմ: Հրաշք մը պատահէր եւ ամէն հայ երիտասարդ, ուր որ ալ ապրէր, իր հօրը անմիջական շրջանակին մէջ ապրէր կամ ոչ, իր հայրը վաղուց կորսնցուցած ըլլար կամ չէ, Վարուժանի այս բանաստեղծութիւնը կախէր իր անկողնին վերեւ, կամ կախէր իր աշխատասեղանին դիմաց, ու օրը անգամ մը կարդար անոր վերջին չորս տեղերը: Որովհետեւ որքան ալ բանաստեղծութեան մէջ ըսուի թէ վերջին ժամն է օրհնութիւն խնդրելու, ամէն ժամ վերջին ժամ է, կամ ո՛չ մէկ ժամ վերջին ժամ է.

Թող մատներէդ վար գլխոյս վրայ կաթի
հոգւոյդ պայծառ խորամէն եկող աղօթքդ,
վերջին ժամն է այս, օրհնէ, հայր:

ՕՐՀՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԻՐՆ Է

Ա.

Դանիէլ Վարուժան հաւանաբար տակաւին հազիւ քսան տարեկան էր երբ կը գրէր «Հայր, Օրհնէ՛» հիանալի բանաստեղծութիւնը եւ կեանքի սեմին վրայ էր որ կը խնդրէր իր հօր օրհնութիւնը: Տարիներ վերջ ան ալ իր կարգին անշուշտ իր օրհնութիւնը պիտի տար իր որդւոյն: Կեանքի կարգը այս է:

Եւ սակայն Դանիէլ Վարուժանի տրուած էր երկար կեանք ունենալ, ալեւորիլ, ծերանալ: Հազիւ 31 տարեկան հասակի մէջ ան ալ, ուրիշ բազմաթիւ գրադէտներու ու բանաստեղծներու կարգին, պիտի զոհուէր 1915 թուականի չարաղէտ դէպքերուն: Ինչ որ Հայ գրականութիւնը ժառանգած է որպէս Դանիէլ Վարուժանեան գանձ, ընդամէնը տասը-տասներկու տարիներու վաստակ մըն է, զոր Մխիթարեան վանքի մթնոլորտին մէջ սնունդ առած, գրաբարի ազդեցութեան տակ մնացած, զգացական զեղումներու շունչով խոյանք առած սկսնակ բանաստեղծը տասը տարուան կարճ ժամանակի մը մէջ հասցուց արուեստի ու լեզուի, մարդասիրական զեղումներու գագաթնակէտի մը: Անկարելի է չհաշուել թէ Դանիէլ Վարուժան տակաւին մինչեւ ո՛ւր կրնար երթալ, եթէ իրեն տրուէր քսան տարի եւս ստեղծագործելու առիթ:

Բախտին բերումն է: Քսան տարեկան երիտասարդը, որ իր հօրը օրհնութիւնը կը խնդրէր, երեսուն տարեկանին արդէն դարձած է օրհնութիւններ բաշխող հայր, ամուսին, ու բանաստեղծ: «Հացին երգը» խորագրեալ իր իբրեւ թէ կիսաւարտ, իրականութեան

մէջ հրաշալիօրէն աւարտուն իր հաւաքածոյին մէջ, զոր իր գրական ու ազգային կտակը կրնանք նկատել, մեր անզուգական բանաստեղծը ունի «Օրհնութիւն» խորագրեալ բանաստեղծութիւն մը: Հոս ան իր օրհնութիւնները կը բաշխէ իր «կտրիճ Որդի»ին, իր «սիրուած Թոռնիկ»ին, իր «վարդ Թոռնուհիին», իր «աղուոր հարս»ին եւ վերջապէս մի ոմն «պառաւ Աննա»յին: Եթէ գիտես թէ շատ կարճ ժամանակ վերջ ինչպիսի ճակատագիր մը կը սպասէր բանաստեղծին, չափազանց կը յուզուիս այս բանաստեղծութիւնը կարդալով:

Ափ մը ցորեամ փերուդ մէջ
թող լեցնեմ, կտրիճ Որդիս,
կտրիճ Որդիս, գօտիմ մէջքիս.
Թող մաքակալ բազուկներէդ
Քսան ցուլի արիւմ անցնի,
եւ եղեւնի թու հասակէդ
Քսան տունի սիւնը կանգնի.
Ու երբ թիւովը մատերուդ
սերմանես թու սերմնցում՝
հնձես թիւովն աստղերում:

Հեթանոս երգերու սիրահար մեր բանաստեղծը, որ երիտասարդական օրերու իր խոյանքին մէջ հուժկու ցուլ մը մատաղ ըրած էր Վահագնին, իր պապերուն աստծոյն, ցուլը կը նկատէր մարդուն ու ցեղին հզօրութեան խորհրդանիշը: Հողագործական մաճը բռնած իր որդւոյն ահա թէ ինչ կը մաղթէ ան. քսան ցուլի արիւն անցնի անոր բազուկներէն, որպէսզի ըլլայ հզօր մշակ իր ընտանիքին ու իր ցեղին համար: Կ'օրհնէ ու կ'աղօթէ, որպէսզի իր կտրիճ որդւոյն եղեւինի նման հասակէն դուրս գայ քսան տան սիւն, քսան երդիք ընտանեկան: Եւ տակաւին կ'աղօթէ ան որ իր կտրիճ

որդուոյն տասը մատներովը ցանուած սերմնցուն աստ-
ղերու թիւին չափ հունձք տայ իրեն եւ մեր ժողո-
վուրդին:

Դանիէլ Վարուժան բանաստեղծական խնջոյքի կը
վերածէ այս օրհներգութիւնը, օրհներգութիւն՝ որ,
որդիէն կ'անցնի դէպի Թոռ, Թոռնուհի, Հարս, եւայլն:
Բոլորն ալ վերնագրով գրուած, այս բառերը ընտանիքի
մը անդամներէն աւելի՛ կը խորհրդանշեն ամբողջ հայ
ժողովուրդի որդիները, թոռներն ու հարսերը: Բոլորն
ալ գիւղին ու դաշտին մարդիկն են, որոնց համար
ցորենը ոսկի է:

Ափ մը ցորեամ գլուխդ ի վար
թող որ թափեմ, Թոռնի՛կ սիրուած,
Թոռնիկ սիրուած, ցուպս ծաղկած.
Թող մակատիդ վրայ դրուի
հարիւր սաղմոս իմաստութեամ:

Ի՜նչ խանդաղատանք ու բարի մաղթանք նաեւ Թոռ-
նուհիին համար, որուն գլխէն եւս անձրեւի նման պէտք
է իջնէ ցորեանը:

Ափ մը ցորեամ մագերուդ մէջ
թող որ տեղամ, վարդ Թոռնուհիս,
վարդ Թոռնուհիս, պսակ շիրմիս.
Թող այտերուդ վրայ շողամ
ամէն գարուն մոր կակաչներ,
եւ աչքերուդ մէջը լողամ
ամէն ամառ մոր մաճանջներ:

Դանիէլ Վարուժան, որքան ալ ուսանած ըլլար
Վենետիկի Մուրատ Ռափայէլեան վարժարանի կամ
Պելժիոյ Կանտ համալսարանի մէջ, կրնա՞ր մոռնալ

իր հայրենի գիւղի ցորենահամ արտերը: Պիտի գարմանանք որ ան իր սիրածներուն գլխուն վրայ ոսկրի նման «ցորեան» կը տեղացնէ օրհներգութեան մէջ:

Շարունակե՛նք կարգալ այս սքանչելի բանաստեղծութիւնը:

ՕՐՀՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԻՐՆ Է

Բ.

Բանաստեղծը օրհնեց իր կտրիճ Որդին, օրհնեց իր սիրուած Թոռնիկը, օրհնեց իր վարդ Թոռնուհին: Հիմա զո՞վ պիտի օրհնէ ան: Պիտի օրհնէ Հարսը, իր աղուոր հարսը, որ անկասկած իր կեանքի ընկերուհին ըլլալով հանդերձ կը խորհրդանշէ նաեւ աշխարհի բոլոր հայ հաւատարիմ կողակիցները: Ափ մը ցորեն ալ անոր՝ օրհնութեան ձեւով:

Ափ մը ցորեան ծոցերուդ մէջ
թող որ ցանեմ, Հա՛րսս աղուոր,
հարսս աղուոր, սէ՛րս հեռաւոր.
Թող անկողնիդ ակօսիմ մէջ
հասկ մը ծլի՛ լման շարժով,
եւ օրօրած օրօցֆիդ մէջ
արշալոյսներ մնջեմ փառժով,
ու երբ կթես Բառսում երիմջ՝
դոյլերուդ մէջ մակրդի
կաթը՝ արծաթ, դալմ՝ ոսկի:

Հեթանոս բարքերու եւ ցեղին սիրտի երգիչը ամէն վայրկեան ականջ կուտայ հողին կանչին, եւ պաշտամունքի նիւթ կը դարձնէ ցորենը, ցորենը որ հողագործին արդար քրտինքն է եւ ժողովուրդին արգար հացը: Մեր նոյն բանաստեղծը չէ՞ր որ անգամ մը այնքան գեղեցկօրէն նկարագրած էր «ցորեանի ծո-

վեր»ը, որոնց մէջէն հովեր կ'անցնէին, ծովեր կ'անցնէին: Խաչի տեղ այդ ցորենն է որ իր սիրածներուն գլխուն վրայ կը դնէ բանաստեղծը, երբ կ'ուզէ իմաստուն մարդու օրհնութիւն տեղացնել անոնց վրայ:

Եւ հարսէն վերջ, ցորենահամ այդ օրհնութենէն բաժին պիտի իյնայ նաեւ պառաւ հայուհիի մը եւ իրեն՝ նոյն ինքն բանաստեղծին: Եւ այս բանաստեղծութիւնը պիտի վերջանայ երեք շատ յուզիչ տողերով:

Ափ մը ցորեամ, ափ մը ցորեամ,
ա՛յ իմ պառաւ, ա՛յ իմ Աննա,
մեր գլխում ալ թող որ տեղայ.
Թող չսառի՛ արեւն աշմամ
մեր մազերում ձիւններում մէջ,
չմարի՛ մեր մոմն իրիկում
ժամում մարմար սիւններում մէջ:
Ու երբ դրուիմք ա՛լ գերեզման՝
մեր մերժեւ հո՛ղը, Աննա,
Քիչ մը կակուղ թող ըլլայ:

Գաւառի կեանքի բարքերն են որ կը յորդին այս ուստր նման բանաստեղծութիւններուն մէջէն: Բանաստեղծը կեանքի շատ կարճատեւ շրջանի մը մէջ իր առաջին ստեղծագործութիւնները ցոլացնող երիտասարդական «սարսուռներ»էն մեկնելով հասած է մինչեւ «հացին երգը», հեթանոսական կուռքերու պաշտամունքէն անցնելով հասած է մինչեւ ցորենի պաշտամունքը, կարճ խօսքով հասած է հասունութեան ու իմաստութեան կատար մը, ուրկէ կը նայի մեր ժողովուրդին ապագային: Կը նայի մեր ժողովուրդին ապագային ու կը տեսնէ իր ժողովուրդին մշակները, իր ժողովուրդին սերմանողները, որոնք կ'ակօսեն հողը եւ հողը յդի կը թողուն ցորեաններու ապագայ ծովուն:

Հո՛, հոօ՛, հոօ՛, հոօ.- հոդիմ տակ հոնդիւնն է
արօրիմ:

Կը լսէ այդ հոնդիւնը եւ կը մտածէ թերեւս որ մեր
ժողովուրդին ապագան կախեալ է արօրին այդ հոնդիւ-
նէն, կամ սերմնացանին հոսեցուցած աղի քրտինքէն:
Օ՛ տարիները՝ որոնք անցեր գացեր են շատ բան
փոխելով: Կարգալէ վերջ այս անմահ բանաստեղծու-
թիւնները, պահ մը չփորձուի՞նք հիմա հարց տալ թէ
մեր սիրելի բանաստեղծը ինչ պիտի մտածէր այսօր,
եթէ վերադառնար մեզի ու փնտռէր մեր մշակներուն
ստեղծած ցորեանի ծովերը, ինչ պիտի մտածէր եթէ
տեսնէր որ այսօր իր ապրած ու երազած հողերուն վրայ
ո՛չ մէկ հայ մարդ մնացած է արօրին ետին ու ցորեան-
ներու դաշտերուն մէջ, ինչ պիտի մտածէր եթէ տեսնէր
որ մեր օրհնութեան սեղաններուն վրայ կամ մեր
օրհնութեան աղօթքներուն մէջ մոռցուած է հացը,
կամ հացը դարձած է միայն ապրանք մը, զոր ամէն
իրիկուն պատրաստ կը գնենք փուռէն:

Մշակներն են իմ գիւղիս, դաշտի հօօ՛ր գաւակներ,
բրտիմբներով մարգարտեայ՝ քնութեան թագն են
հիւսեր:
Երբ որ Քալեն, մայր-երկիրն իր արգանդէն
կը սարսռայ:

Ո՛ւր են գիւղին այդ մշակները:
Եկէք եւ սրտցաւօրէն գոչեցէք սիրելի բանաստեղծին.
«Ի՞նչ կ'ըսես դուն, բանաստեղծ, ո՞ր մշակին, ո՞ր
քրտինքին, ո՞ր արօրին, ո՞ր դաշտին մասին է քու այդ
խօսքը: Ի՞նչ ցորեան: Մենք հիմա խանութներու եւ
գործարաններու գործարարներ ենք, մենք հիմա արօրի
տեղ ինքնաշարժ կը գործածենք, օդանաւ կը նստինք,

զբօսանաւեր ունինք եւ մեր զաւակները աշխարհի լաւագոյն համալսարաններուն մէջ ամէն ինչ կ'ուսանին, բացի հողագործութենէ: Բանաստեղծ, բանաստեղծ, զուէն ի՞նչեր կ'ըսես հիմա»:

ԴԵՌ ՄԻՆՉԵՒ Ե՞ՐՔ

Դանիէլ Վարուժանի ամէնէն ժողովրդական եւ ամէնէն յուզիչ բանաստեղծութիւններէն մէկն է «Կարօտի նամակ»ը, որ կարօտի գրականութեան գլուխ գործոց մը կը նկատուի: Այս բանաստեղծութիւնն ալ հայ մայրերու տառասպանքին մէկ յուշարձանն է: Բանաստեղծին մայրն է որ նամակ կը գրէ իր պանդուխտ զաւակին եւ զայն իր քով կը կանչէ այլեւս: Կը կանչէ ի՞նչ տողերով: Կարելի չէ որ այստեղ ընդօրինակենք ամբողջ բանաստեղծութիւնը: Բայց նախ կարդանք առաջին տողերը.

Կը գրէ մայրս.- «Ո՛վ իմ որդեակս պանդուխտ,
Դեռ միմչեւ ե՞րբ պիտ' անծամօք լուսնի տակ
օրերդ անցնիմ, դեռ միմչեւ ե՞րբ հէգ գլուխդ
ես չսեղմեմ լանջքիս տակ:

Իսկապէս ի՞ր մայրն է որ կը գրէ, թէ ոչ այդ մէկը երեւակայական մայր մըն է, թէ ոչ այդ մէկը խորհրդանշանն է իր զաւակը հեռաւոր ասիեր զրկած հայ մայրիկին:

«Անձանօթ լուսնի տա՛կ ապրիլ»: Բանաստեղծական հզօր պատկեր մըն է սա արդէն լուսնի մը համար որ մէկ հատ է իրականութեան մէջ եւ որ սակայն օտար ու անձանօթ կը դառնայ, եթէ նոյն վայրկեանին չի լուսաւորեր իրարմէ հեռու ինկած մայրն ու զաւակը:

Հերի՛ժ օտար սանդուղներէ ելլեմ վեր
ոտքերդ՝ որ օր մ'ափերուս մէջ տա՛ցուցի.
Հերի՛ժ ալ սիրտդ՝ ուր իմ ծիծերս եմ պարպեր
դատարկ սրտէս դուրս հիւծի:

Խեղճ մայր, որ ամբողջ իր կաթը պարպեր է իր
որդւոյն սրտին մէջ եւ որ հիմա կը նշմարէ որ իր սիրտը
պարապ է: «Յեղին սիրտն» է այս իրականութեան մէջ,
ինչպէս կոչեր է բանաստեղծը այն գիրքը որմէ առնուած
է այս բանաստեղծութիւնը: Յեղին սիրտն է, պան-
դուխտ որդեակի կարօտով կիզուած: Եւ բանաստեղծը
տակաւին շէր գիտեր որ իր մահէն մօտաւորապէս հա-
րիւր տարի վերջ հայ մայրերը պիտի շարունակէին
«կարօտի նամակ»ներ գրել իրենց պանդուխտ որդի-
ներուն, առանց կարենալ գործածելու այստեղ գոր-
ծածուած հիանալի բառերը.

Դրանս առջեւ կը նստիմ միշտ տխրալիր,
լուր կը սպասեմ վրադ ամէն կոունկէ՛ որ կ'անցնի,
այն ճիւղն ուռի՛ գոբ քու ձեռքով տնկեցիր
վրաս կ'ընէ հովանի:
Իրիկունները տուն դարձիդ կը սպասեմ.
Կու գամ կ'անցնիմ գիւղիմ քաջերը համակ.
մշակը կ'անցնի, կ'անցնի կովարծը վսեմ-
կը մնամ լուսնիմ հետ միմա՛կ:

Կը տեսնէ՞ք շարժանկարի պատկերը: Դրան սեմին
վրայ նստած մայրը մի առ մի կը նայի զրան առջեւէն
անցնող մշակներուն, կովարածներուն, գիւղին քաջե-
րուն, բոլոր տղամարդերուն, որոնց աչքերուն մէջ
կ'ուզէ պահ մը տեսնել իր որդւոյն աչքերը: Բայց բոլորն
ալ պիտի անցնին-երթան, ու ինք դարձեալ առանձին
պիտի մնայ լուսնին դիմաց: Քիչ մը եւս պիտի սպասէ,

յետոյ ներս պիտի մտնէ, քանի մը կաթիլ արցունք պիտի հոսեցնէ, թերեւս կարօտի նոր նամակ մըն ալ պիտի գրէ, յետոյ պիտի աղօթէ Աստուծոյ: Գիտենք թէ ի՞նչ պիտի աղերսէ իր աղօթքին մէջ: Օ՛ տառապանքը ամէն գիշեր տեսնելու այդ քաջերն ու մշակները, որոնք իրենց տունները կը վերադառնան: Անոնք իրենց տունները երթալու համար ուրիշ ճամբայ մը չունէի՞ն, որպէսզի չանցնէին իր զակին սպասող այս մայրիկին դրան առջեւէն եւ չխաղցնէին անոր սիրտը:

Եկո՛ւր որդեակ, հայրենի տունդ շէնցուր.-
Դուռն եմ կոտրեր, մառաններն ո՛ղջ դատարկեր.
Կը մտնեմ ներս լուսամուտէն ջարդուփշուր
գարնան ամբողջ ծիծառներ:

Բայց ահաւասիկ յանկարծ բան մը փոխուեցաւ շարժանկարի պատկերին մէջ: Կարօտի զգացումին վրայ աւելցաւ շատ բան կորսնցուցած ըլլալու տառապանք մըն ալ: Տունը կորսնցուցած է իր շէնութիւնը: Դռները կոտրուած են, մառանները դատարկուած կամ թալանուած են, ապակիները ջարդուփշուր եղած են: Ո՞վ դարձեալ պիտի շէնցնէ այս տանիքը, եթէ ոչ «որդեակ»ը: Ու մայրը կը գրէ իր որդւոյն.- Որդեակ, երբեմնի գառնուկներու, կովերու, խոյերու հօտէն ախոռին մէջ մնացեր է միայն խոյ մը, մէկ հատիկ խոյ, որ երբ գառնուկ էր, քու ափին մէջէն գարի կերած էր: Միայն այդ խոյը մնացած է եւ ես գիշեր-ցերեկ սնունդ կուտամ այդ խոյին, բրինձ ու առուոյս կը կերցնեմ:

Տօսախ սանտրով կը սանտրեմ քուրդն աղուակամ-
Ան գոհ մըն է թանկագին:
Դարձիդ՝ պնած վարդերով գլուխն իր համակ՝

պիտի մորթեմ կեանքիդ համար ծաղկատի.
Իր արեան մէջ պիտի լուամ, Քաղցր որդեակ,
ոտքերդ յոգնած՝ պանդուխտի:

Թէեւ այսպէս կը վերջանայ այս սքանչելի բանաստեղծութիւնը, բայց մենք կարծես ամէնէն վերջը դարձեալ կը լսենք առաջին ողբը.

Ով իմ որդեակս պանդուխտ,
Դեռ միմչեւ ե՞րբ ...

Իսկապէս: Դեռ միմչեւ ե՞րբ:

ՓՈՔՐԻԿԸ

ԻՐ ՀՕՐԸ ԲԱՆՏԻՆ ՍԷՉ

Մօրը բերնով գրուած կարօտի նամակէն առաջ, բանաստեղծ Դանիէլ Վարուժան ունի ուրիշ բանաստեղծութիւն մը, որ անսովոր զգայնութեան մը, ահաւոր բողոքի մը եւ մանկութեան սեւ յիշատակի մը անդրադարձն է: «Հօրս բանտին մէջ»: Ասիկա այցելութիւն մըն է որ բանաստեղծը փոքրիկ տարիքին տուած է չենք գիտեր ինչու համար բանտարկուած հօրը բանտին: Հայրը յայտնապէս բանտարկուած է անիրաւ կերպով, թերեւս քաղաքական պատճառներով կամ զրպարտութիւններով: Յետագայ տողերուն մէջ բանաստեղծը հօր պատկերի մը դիմելով պիտի ըսէ. «Յեխին նետուած սրբութիւն»: Հայրն է այդ. ցեխին նետուած սրբութիւն:

Դեռ փոքր էի. եկայ ինձի մեծաւոր
մութ գնտանիդ մէջ այցի:

Մայրս հիւանդ էր. կը շրջէի ես ազատ
մէջտեղ թանտի եւ մահմի:
Լուր տուիմ ինձ, եկար առջեւը դրամ
վանդակապատ՝ որ -ռնի՛ր-
Կը քաժմէր մեր ռոջագուրումը կողկաթ:
եկար անխօս, վշտակիր:
Որքա՛ն միհար էիր եւ որքա՛ն աչքերդ
ծարաւ էիմ արեւու.
Մօրուքիդ տակ, կարծես ոսկրի վրայ բուսած,
ո՛վ հայր, մեռել մ'էիր դու:

Տէքօրը բացուեցաւ արդէն: Փոքրիկ տղան, հիւանդ
մօրը ու բանտարկուած հօրը միջեւ շուարուն, արդէն
մեռել մը կը տեսնէ իր հօրը նիհար ու տառապակոծ
երեսին վրայ: Արեւէն ու ազատութենէն զրկուած այդ
մարդը իր գաւակը համբուրելու իրաւունք իսկ չունի:
Ի՛նչ պիտի մտածէ փոքրիկը այս տեսարանին դիմաց:

Նշմարելուդ պէս գիս՝ ժպտիլ սկսար,
բայց այդ ժպիտը քարի
այդ սուտ ժպիտն՝ էր մումնութա՛ր մը ծաղկած
լնի մը վրայ արտօսրի:

Արցունքի լճի մը վրայ բացուած նունութար մը,
հօրը այդ ժպիտը: Խեղճ հայր, որ իր որդին ուրա-
խացնելու համար կը ժպտի, բայց մանուկն անզամ
պիտի նշմարէ որ այդ ժպիտը կեղծ ժպիտ է:
Եւ ահա կծիկը պիտի քակուի.

Ո՛վ տխուր ժամ: Քեզ մի առ մի պատմեցի
սեւ վիպակները մեր տան,
հանիիս մահն, ու հիւանդ մօրս հազը խուլ
լռութեան մէջ գիշերուան.

Ըստի թէ մեր տանհիֆիմ վրայ, լուսնին տակ,
բուերը պար կը բռնեն,
թէ այս տարի մեր վարդենին չորացաւ
գերեզմանատան խորշակէն:
Կը լսէիր զիս եւ հարցում կ'ընէիր,
երբ հրաման մը վայրի,
կոյր հրաման մ'եկաւ զմեզ բաժնելու...
դարձար ... առանց համբոյրի:

Այնուհետեւ հայրը դարձեալ մութ գնտան պիտի առաջնորդուի եւ մանկիկը հոն պիտի մնայ սառած, յուսահատ, եւ զայրացած: Երկար պիտի նայի իր հօրը ետեւէն եւ այն ատեն է որ լալ պիտի սկսի: Եւ այդ պահուն է որ պիտի զգայ թէ իր սրտին մէջ կը լեցուէր բարկութեան ու ոխի զգացում մը: Օ՛ սիրոյ կեանքը, քրտինքի լանջը, փուշի սիրտը, սրբութիւններ՝ որոնք նետուած են ցեխին մէջ, սրբութիւններ որոնք արեւուն ճառագայթներուն դէմ զոցուած են: Ու փոքրիկ մանուկը, իր ուռած սրտով պիտի տեսնէ թէ ինչպէս բոլոր այս սրբութիւններուն հետ դէպի մահ, դէպի սպանդ պիտի սուզուին բոլոր կրօնքներու սուրբերն ու «Յիսուսները թքնուած»:

Դանիէլ Վարուժանի ուժեղ բանաստեղծութիւններէն մէկն է այս, որուն մէջ բանաստեղծը կարծես կը տեսնէ ապագայի այն տխուր իրադարձութիւնները, որոնք պիտի պատահին: Եթէ գրուած ըլլար քանի մը տարի վերջ, թերեւս աւելի ուժեղ, աւելի ցնցիչ ու «բանաստեղծական» բանաստեղծութիւն մը գուրս պիտի գար այս ապրումէն, բայց այս մէկն ալ արդէն կը յուզէ մեզ ու կը մտնենք իր հօրը պատկերին դիմաց խղճահարած ու ընդվզումով լեցուած մանուկին մորթին մէջ: Ինչե՛ր պիտի ուզէր ընել այդ մանուկը, եթէ կարենար.

Մուժ քանտիդ մէջ գարնան վարդերը ամբողջ
պիտի լեցնել ուզէի:
Կամ մղմիմ հասակս ու ապագամ հասակիս՝
պիտ՝ հոն թաղել ուզէի:

Ո՛չ այդ, ո՛չ ալ միւսը: Կրնանք ենթադրել որ մանուկը
հօրը բանտին առջեւէն հեռացաւ իրեն հետ տանելով
զայրոյթ ու ընդվզում: Պատմութիւնը որքա՛ն իրական
է չենք գիտեր: Բայց գիտենք թէ այսպէ՛ս է որ մարդիկ
իրենց փոքրիկ տարիքէն կը սկսին լեցուիլ անիրաւ-
ներու, ապօրէններու, կեղեքիչներու, զրպարտիչներու,
անարդարներու դէմ ատելութեան կրակով, կրակ՝ որ
աւելի վերջ հրաբուխի նման պիտի ժայթքի կրակէ
լաւաներ արձակելով:

ԵՐԳ ՈՒ ՊԱ՞Ր ՎԱՐՈՒԺԱՆԵԱՆ ՔԵՐԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Դանիէլ Վարուժանի բանաստեղծութիւններուն մէջ
սա մէկը կարծես կ'առանձնանայ միւսներէն, կը դառնայ
եզակի, կը դառնայ շուրջպար եւ երաժշտութիւն:
Դիւրին չէ մեր մեծ բանաստեղծին ամբողջական գործին
մէջ գտնել այսպիսի քանի մը բանաստեղծութիւններ,
որոնք գրուած ըլլային քնարաշունչ ու բառախաղային
արուեստի անսովոր ներչնչումով: Բայց այս բանաստեղ-
ծութեան մէջ մեզ առաւելաբար կը հմայեն իրարու
մէջ ընդելուզուած երկու տարբեր պատմումներ, որոնք
կրնային իրարմէ անջատուիլ եւ դառնալ երկու տարբեր
բանաստեղծութիւններ: «Հացին երգը» հաւաքածոյէն
է որ կը քաղենք այս սիրուն բանաստեղծութիւնը.

Հումձժ կը ժողվեմ մամգաղով

- լուսնակը եարս է-
 ահօս ահօս մամ գալով:
 - սիրածս հարս է -
 Գլխարաց եմ եւ բոպիկ
 - Անն՛ւշ եմ հովեր -
 Արտերուն մէջ թափառիկ
 - մագերն եմ ծովեր -
 Յորեմ, կակաչ, կարօտով
 - կա՛մաւը կուլայ -
 կապեցի մէկ նարօտով
 - ձեռքերն եմ հիմա -

Ամբողջ բանաստեղծութիւնը կ'ընթանայ նոյն երա-
 ժրչտականութեամբ ու նոյն պարային կշռոյթով: Չանց
 կ'առնեմ բանաստեղծութեան մնացեալ տողերը,
 որովհետեւ այսքանով իսկ կ'արժէ որ տեսնենք թէ բա-
 նաստեղծը ինչպիսի խաղ մը սարքած է մեզի՝ այնքան
 երջանկօրէն ընտրուած սա բառերուն ու պատկերներուն
 ընդմէջէն: Այստեղ բանաստեղծը կարծես իր զգացո-
 ղութիւնն ու մտածումը երկուքի բաժնած է եւ այդ
 երկու զգայնութիւնները միացուցած է իրարու: Եկէ՛ք
 խանգարենք այս խաղը եւ իրարմէ անջատենք այդ
 երկու զգայնութիւնները: Եւ տեսնենք թէ ինչպէս
 երկու տարբեր բանաստեղծութիւններ դուրս կուգան
 այս մէկ բանաստեղծութենէն:

Նախ՝ երկար տողերով գրուածը.

Հումձ՛ք կը ժողվեմ մամգաղով
 ահօս ահօս մամ գալով:
 Գլխարաց եմ եւ բոպիկ
 արտերուն մէջ թափառիկ:
 Յորեմ, կակաչ, կարօտով
 կապեցի մէկ նարօտով:

Յետոյ՝ կարճ տողերով գրուածը.

լուսնակը եարս է,
սիրածս հարս է:
Անո՛ւշ են հովեր,
մագերն են ծովեր:
Կա՛քաւը կուլայ,
ձեռքերն են հիմա:

Դանիէլ Վարուժանի բանաստեղծական աշխատանքի երջանիկ մէկ պահն է ասիկա, բանաստեղծական գիւտի եւ բառային խաղերու հազուագիւտ պահերէն մէկը: Քիչ անգամ մեր պաշտելի բանաստեղծը գրիչը դուրս կը հանէ փոթորկոտ զգացումներու ու ազգային խոյանքներու սեւ մելանէն ու զայն կը թաթխէ այսքան գուարթ ու երփներանգ մելանի մը կաղամարին մէջ: Բայց պէտք չէ զարմանալ բանաստեղծին այս լաւ ու գուարթ տրամադրութեան վրայ: Չէ՞ որ ան «Հունճք կը ժողովեմ» կոչած է իր այս բանաստեղծութիւնը եւ չէ՞ որ Հունճքը, արտը, ցորենը, զաշտերու զեղեցիկ ծաղիկները, կակաչները, հողագործին ամենօրեայ գործիքները ինչպէս մաճ, մանգաղ, արօր, տափան, նիւթեր են որոնք զինքը յանկարծ կը տանին բանաստեղծական ներշնչումներու դէպի ամէնէն բարձր եւ ուրախ ոլորտները: Այս տրամադրութիւնը չէ՞ որ զինքը կը գիտովցնէ մշակներու տեսարաններով, որոնք կը լեցնեն «Հացին երգը»:

Մշակ, ցանէ, - յամուն Տիրոջ նշխարին
թող մատներէդ յորդին սերմեր լուսեղէն.
վաղը ամէն մէկ հասկի մէջ կաթնային
պիտ՝ հասունմայ մաս մ'Յիսուսի մարմինէն:
Ցանէ ցանէ - նոյնիսկ հեռու սահմանէն,

աստղերու պէս, ալիքներու պէս ցամէ:
Ծիտերն ի՛նչ փոյթ թէ հատիկներդ կ'աւերեմ-
տեղը Աստուած պիտի մարգրիտ սերմանէ:
Լեցուր ակօսմ, յորդէ՛ հերկերը բերրի:
Հողիմ ծոցէն ոսկի լոյսեր թող հոսիմ:

Ի՛նչ հաւատք՝ հողին ու հունձքին նկատմամբ, ի՛նչ վստահութիւն՝ Տիրոջ բարեգործութեան ու վարձատրու-
թեան նկատմամբ: Ծիտերը թող ուտեն հատիկները,
հող չէ, Աստուած անոնց տեղ մարգրիտներ պիտի սեր-
մանէ: Հողին ծոցէն ոսկի լոյսեր պիտի հոսին: Եւ այդ
ոսկի լոյսը օրհնութեան մը պէս պիտի դրուի իւրա-
քանչիւր մշակի, իւրաքանչիւր հայ մարդու ճաշասե-
ղանին վրայ: Ի՛նչ հաւատք, ի՛նչ երջանկութիւն՝ այդ
հաւատքին ընդմէջէն:

Եւ ահա թէ ինչու կը տխրինք երբ կը կարդանք
Վարուժանը: Այս քերթողութիւնը փշրուած երազներու
բեկորներով կը ծեծէ մեր սիրտն ու ուղեղը:

ԲԱՌԵՐ, ԲԱՌԵՐ

Ա.

Բայց չենք կրնար այսքան շուտ եւ այսքան կարճ
տողերով անցնիլ Վարուժանեան քերթողութեան այն
տողերուն վրայէն, որոնք կը փառաւորեն մշակն ու
հունձքը: Որքան ալ անոնք մեզ հարուածեն որպէս
փշրուած երազներու բեկորներ, այդ տողերը մեզ
արուեստի ճամբով կ'արբեցնեն թէ՛ որպէս բանաս-
տեղծական հզօր ստեղծագործութիւն, թէ՛ որպէս մօտիկ
անցեալի բարքերու անջնջելի արձանագրութիւն:

Ահա պատկերը սերմանողին, յաղթահասակ մշակին,
որ «մայրամուտի ոսկեթոյր շողերուն մէջ» կանգնած,
պիտի սերմանէ «աստղահատ ցորենները, որոնք կը
լեցնեն անոր խորունկ գոգնոցը»: Գեղջկական կեանքի

հզօր պատկեր: Եւ բանաստեղծը՝ որ կը ձայնէ անոր.

Մշա՛կ, ցանէ՛.- յանուն տանդ սեղանին
թելիդ շարժումն անպարագի՛ծ թող ըլլայ.
վաղը նետած ցորեններդ յորդ կը թափին
օրհնութեան պէս թռոնիկներուդ գլխուն վրայ:
Մշա՛կ, ցանէ՛.- յանուն մօթի թշուառին
թող գոգնոցէդ կէս չելլէ ափդ բնաւ.
Աղբատ մ'ախօր նրագին մէջ տաճարին
վաղուան հունձֆիդ համար հուսկ ձէթը դրաւ:
Լեցուր ախօսմ, յորդէ՛ հերկերը բերրի:
Հողին ծոցէն ոսկի լոյսեր թող հոսին:
Օրը ահա կ'իրիկնամայ.- կ'երկարի
շուքը թելիդ հորիզոններն աստղային:

Շարժանկարի ժապաւէնի մը մէջ տեսնելու պէս կը
հետեւինք մշակին շարժումներուն, մինչ ան իր գոգ-
նոցին մէջէն ամբողջ ափ մը լեցուն սերմ կը վերցնէ
ու թեւի «անպարագիծ», թեւի մինչեւ անհուն երկարող
շարժումով մը ալօսներուն մէջ կը թափէ այդ սերմերը՝
որպէս վաղուան ցորենն ու հացը: Կը տեսնենք այդ
պատկերը իր ամէնէն վառ գիծերուն մէջ, մեր լեզուին
ամենագեղեցիկ բառերուն ընդմէջէն: Ու բանաստեղծը
կը պաղատի մշակին: Կը պաղատի թշուառ ու աղքատ
մարդուն անունով: Չըլլա՛յ որ ափդ կիսով միայն լեցուն
դուրս ելլէ գոգնոցիդ մէջէն, մշակ: Լեցո՛ւր զայն ամ-
բողջովին յանուն վաղուան հունձքի յաջողութեան:
«Առատութիւն, բերրիութիւն, պտղաբերում թող ըլ-
լայ», պիտի՛ ըսէ ուրիշ բանաստեղծութեան մը մէջ:
Բայց անկէ առաջ, ահաւասիկ աղքատիկ կին մը եկե-
ղեցիին ճրագին մէջ իր վերջին ձէթը զրաւ, որպէսզի
աղօթէ վաղուան հունձքի առատութեան, ու մշակի
յաջողութեան համար: Աղքատներուն աղօթքն է որ

մշակին գողնոցը լեցնող սերմերուն պիտի միանայ ու վաղը ոսկի լոյսեր պիտի պոռթկացնէ հողին ծոցէն:

Դարձեալ կը տեսնենք շարժանկարին մէջ: Իրիկուն եղաւ արդէն եւ մշակը դեռ իր թեւը կ'երկարէ ակօսներուն վրայ անձրեւի կաթիլներու նման ցորենի հատիկներ տեղացնելու համար: Արեւը մայրը մտնելու վրայ է ու շուքերը սկսած են երկարիլ: Մշակին թեւին շուքն ալ կ'երկարի մինչեւ աստղային հորիզոններ: Բայց միայն շո՞ւքն է որ կ'երկարի մինչեւ այդ հեռաւոր ասիերը: Ո՛չ: Անոր բարիքներն ալ կ'երկարին մինչեւ հեռու, մինչեւ այն իւրաքանչիւր տունը, որուն երդիքին տակ ընտանիքներ բոլորուած են սեղանի շուրջ ու կը նային տաքուկ հացին, որ տակաւին կը մխայ փուռին տաքութենէն ու մշակին սիրտէն կրակ դարձած:

Դանիէլ Վարուժան ուսուցիչ էր երբ կը գրէր այս տողերը: Բնաւ արտ ելա՞ծ էր, սերմ ցանա՞ծ էր, արօր քա՞ծ էր, հունձք քաղա՞ծ էր: Հաւանաբար ո՛չ: Բայց կրնամ վստահօրէն ենթադրել որ երբեմն ժամեր շարունակ կը նստէր արտի մը եզերքը ու կը դիտէր մշակները, կը նայէր դաշտերու առաջին ծիւերուն, կը նայէր եզերքներէն բուսած կակաչներուն, կը նայէր առաջին հասկերուն եւ ցորեանի ծովերուն, երեսը կուտար անոնց մէջէն փչող հովերուն: Եւ ան այս տեսարանները իր մտքին մէջ կը քանդակէր հողագործական հայաշխարհի հրաշալի բառամթերքով մը, այդ բառամթերքին վրայ աւելցնելով մեր լեզուին ամենագեղեցիկ բանաստեղծական բառերը: Անգի՛ն ծառայութիւն: Այսօր եթէ Վարուժանեան քերթողութիւնը ոչի՛նչ ունենար մեզի տալիք, արդէն պիտի չդադրէր հողագործական գրականութեան ու բառամթերքի գանձարան մը ըլլալէ: Աւա՛ղ, հայախօս մշակները չկան այլեւս, մեր պապերուն ապրած հողամասերուն վրայ ո՛չ մէկ մշակ «առա հօ» կ'ըսէ իր եզան, «Հօ՛, հօ՛,

հոօ՛, հոօ» կ'երգէ: Հողագործական գործիքներուն ու գործողութիւններուն հայերէն բառերը չրթներու վրայ չեն հնչեր, մոռցուած գացած են քաղքենի բարքերու եւ հայոց լեզուի համատարած անտեսումին մէջ: Եթէ չկայ հողագործ, եթէ չկայ սերմանող, չկայ նաեւ բառ եւ լեզու: Բայց հոն է Վարուժանեան բանաստեղծութիւնը, որ բանաստեղծութեան սահմաններէն դուրս պոռթկալով կը դառնայ նաեւ լեզուաբանական խոյանք, ազգագրական արձանագրութիւն: Յորեան, խոզան, մաճ, սերմ, մանգաղ, կամ, կալ, հօտաղ, սայլ, անդաստան, հնճուոր, խաչբուռ, գոմէչ, ցանք, գերանդի, որայ, փարչ, հունդ, գուղձ: Բառեր՝ որոնք այսօր կ'ապրին միայն բանաստեղծութեամբ: Բայց կ'ապրին: Եւ շարժանկարի ճշգրտութեամբ պատկերներ կը ստեղծեն բոլոր անոնց աչքերուն առջեւ, որոնք տակաւին կը յամառին իրենց մտքերուն մէջ զանճի մը պէս պահել մեր պապերուն առօրեայէն յամեցող ապրումներ:

«Յեղին սիրտ»ն է որ այսպէս վերածուած է «հացին երգ»ին:

ԲԱՌԵՐ, ԲԱՌԵՐ

Բ.

Այսօր միլիոնաւոր հայեր կ'ապրին աշխարհի ամէն կողմը, Հայաստանէն մինչեւ չենք գիտեր ուր: Կ'արժէ հարց տալ: Միլիոնաւոր այս հայերուն մէջէն քանի՞ հոգի արդեօք կրնայ Դանիէլ Վարուժանը լրիւ կարգալ ու ամբողջութեամբ ըմբռնանել առանց բառարանի մը դիմելու: Հայերէն լեզուի բոլոր նրբութիւններուն տիրացած գրասէրն իսկ երբեմն պահանջը պիտի զգայ բառարանը բանալու, կամ պիտի անցնի առանց հասկնալու սա կամ նա բառին իմաստը: Բայց, Աստուած իմ, մեր մայրենիին սիրահար ոեւէ մէկու համար ինչ

արբեցութիւն է, ի՞նչ հիանալի փորձառութիւն է բառարանը բանալ ամէն քայլափոխին ու տեսնել թէ ի՞նչի մասին կը խօսի մեր անմահ բանաստեղծը, երբ ան իր տաղանդին թափ կուտայ երգելու համար հեթանոս երգեր կամ հացին երգը:

Հիմա կ'արժէ որ բառարանը առնենք մեր քով ու լրիւ կարդանք Վարուժանի 14 տողերէ բաղկացեալ փոքրիկ մէկ բանաստեղծութիւնը, «Հացին երգը» հատորէն: Բանաստեղծութեան խորագիրն է՝ «Հարկիք»: Որպէսզի տպաւորութիւնը վնաս չկրէ, նախ մէկ շունչով կարդանք ամբողջ բանաստեղծութիւնը.

Եզներս եմ խարտեաշ, լոյս ցախտմներով՝
գոր պաճուներ եմ մուսխայով կապոյտ:
Գարունի առտուան օդէն եմ գիճով.-
Կը մայիմ, խաղա՛ղ, դաշտերուն անճոյթ:
Ձմեռը գանճմբ խարո՛վ սնուցի -
Մեհեանիմ պարարտ կուռֆերմ եմ կարծես.
Իրեմց սանտրուած պոչը թաւարծի
կը լիզէ իրեմց կողերմ՝ օձի պէս:
Կը սիրեմ անոնց մուսը բիրաճալ,
ռունգերմիմ տամուկ, բիրերմիմ խոշոր՝
ուր կայ դաշտերուն երազն անայլայլ,
եւ ցօճքը իրեմց, եւ պոչիւնն հօօր
հորիզոններէ՛ն, -երբ կ'երթան անվերջ
եղջիւրմիմ մխած Արշալոյսիմ մէջ:

Ասիկա Դանիէլ Վարուժանի ամէնէն դժուար հասկնալի բանաստեղծութիւններէն մէկը չէ, ընդհակառակը: Ամէն տողին մէջ բառարանի կարօտ մէկ կամ երկու բառ չկայ այստեղ: Այնուհանդերձ այս կարճ բանաստեղծութիւնը զաղապար մը կուտայ թէ Վարուժան ինչպիսի բառամթերք մը կը գործածէ երբ կը փորձէ

նկարագրել հայրենի դաշտերու եզները: Եւ որպէսզի լրիւ վայելենք զայն, բանաստեղծութիւնը անգամ մըն ալ կարդանք այս անգամ բառարանը քանի մը հեղ բանալով:

Նախ խորագիրը. հարկիք: Այս բառը, որ երբեմն յարգանք, կամ պարտադիր ծառայութիւն կը նշանակէ, այստեղ պիտի նշանակէ լուծի կապուած եզ:

Բանաստեղծը իր եզներու քալուածքն է որ կը նկարագրէ այս բանաստեղծութեան մէջ: Խարտեաչ են անոնք, ունին լոյս ճակատներ: Բանաստեղծը անասուններուն այդ լուսաւոր ճակատները պաճուճեր է, զարդարեր է կապոյտ նուխայով, այսինքն մեզի ծանօթ մուսխայով, որպէսզի անոնք աչքի չգան: Գարնան առաւօտ է եւ եզները օդէն գիւնովցած են արդէն: Կը նային դաշտերուն, դաշտերուն՝ խաղաղ, անբոյժ, այսինքն ասպհով: Անվտանգ են դաշտերը ու եզները կը քալեն դէպի այդ դաշտերը:

«Ես զանոնք ամբողջ ձմեռը խարով, չոր խոտով կերակրեցի, կը գրէ բանաստեղծը: Հիմա անոնք հեթանոսական տաճարներու կուռքերուն նման ուռած են, պարարտ են: Թաւ մագերով ծածկուած (թաւարծի) եւ լաւ սանտրուած անոնց պոչերը օձի մը պէս կը լիզեն անոնց մարմինները»:

Կը քալեն եզները, ու բանաստեղծը որքան կը սիրէ անոնց կռնակը (նուսը) բիւրածալ, անոնց ուռնգերը, անոնց խոշոր բիբերը, որոնք լեցուն են սա հանդարտ դաշտերուն մասին հիւսուած երազներով: Եւ որքան գեղեցիկ է այդ եզներուն շորոր շորոր օրօրուիլը, ճօճքը, եւ անոնց հզօր պոռչտութիւնը (պոչիւն) դէպի դիմացի հորիզոններ՝ երբ անոնք այսպէս կը քալեն շարունակ իրենց եղջիւրները միսած Արշալոյսին մէջ:

Քանի մը բառ սորվեցանք եւ դեռ ինչեր պիտի սորվինք եթէ խղճմտօրէն ու հասկնալու վճռակամութեամբ

կարգանք Վարուժանի չքեղ քերթուածները: Այսօր կրնա՞նք արդեօք հաւատալ որ Վարուժանի ժամանակակից մշակները, գիւղացիները, արջառ արածողները, դաշտ ելած այդ պարզունակ մարդիկը, որոնք թերեւս դպրոցի մը սեմին վրայ իսկ չեն կոխած, այս բառերը կը գործածէին իրենց առօրեայ խօսակցութեան մէջ: Ի հարկէ բանաստեղծը չէր որ հնարած էր այս բառերը: Եթէ կար դաշտը կամ արտը, եթէ կար հողագործութիւնն ու հունձքը, եթէ կային արջառ ու անասնաբուծութիւն, ուրեմն կային նաեւ, անպայման ըլլալու էին նաեւ այս բառերը, որոնք բառարաններէ չէ որ դուրս կուգային, այլ վերջն է որ կը մտնէին բառարաններու մէջ: Այլ խօսքով, ո՛չ բանաստեղծն էր որ ստեղծած էր զանոնք, ոչ ալ լեզուագէտը: Ժողովուրդն էր որ ստեղծած էր զանոնք եւ զանոնք փոխ տուած էր բանաստեղծին, որ ան ալ իր կարգին անոնցմէ շինէ մէկմէկ բանաստեղծական կոթող:

Բառեր, աննման բառեր, որոնք լքուեցան մեր ժողովուրդին կողմէ: Ժողովուրդը այլեւս պէտք չունէր այդ բառերուն: Եւ բառերը այլեւս պիտի ասորէին միայն բանաստեղծութիւններու մէջ:

ՄԱՅՐԻԿ, ՔՈՅՐԻԿ, ՀԱՐՄՆՈՒԿ, ՀՕՏԱՂ...

Դանիէլ Վարուժան բանաստեղծական իր երջանիկ գիւտերէն մէկն ալ ըրած է այն բանաստեղծութեան մէջ, զոր կոչեր է «Առաջին ծիլեր»: Ո՞ր մեծանուն բանաստեղծը պիտի չուզէր իր անունը որպէս ստորագրութիւն տեսնել այս բանաստեղծութեան տակ: Դարձեալ «հացին երգ»ն է որ կը բարձրանայ այս

բանաստեղծութեան մէջէն:

Ջեղում աւիշն հողերում տակ պայթեցուց
սերմերն: Արտերս այս գիշեր
կամանչցեր են լուսնկայի տակ գարնամ...
- Մայրիկ, ինձի ծիլ մը բեր,
Քրտիմֆիս ցօղը վրամ:

Առաջին երեք տողերը նկարագրական են: Այդ երեք
գեղեցիկ տողերը արդէն կը բանան տեսարանը: Բայց
յաջորդող երկու տողերը բանաստեղծութեան ոգին կու-
տան մեզի, հոգին, միտքը, տեսիլքը: Սերմերը պայ-
թեցան, ծիլ արձակեցին: Մայրիկ, ծիլ մը բեր ինձի,
քրտինքիս ցօղը տակաւին անոր վրայ է: Այդ ծիլը
աշխատանքիս վարձատրութիւնն է, որովհետեւ անոր
վրայ իմ արդար քրտինքս կայ:

Այս հինգ տողերը չորս անգամ եւս պիտի կրկնուին
միշտ նոյն զուգահեռականութեամբ, միշտ նոյն գեղեց-
կութեամբ:

Կատաղօրէ՛ն, կատաղօրէն յորդեր են
տե՛ս, ցորեններն աղարծի:
Դաշտերն հագեր են զմրուխտէ պատմուեան...
- Քոյրիկ, ծիլ մը բեր ինձի,
եզիս շողի՛ք վրամ:

Ծիլին վրայ միայն հողագործին քրտինքը չէ որ կայ,
կայ նաեւ եզան շողիքը, եզան լորձունքը, չարքաչ
եզին բերնէն թափած մածուցիկ թուքը: Նողկալի չէ
այդ շողիքը: Այդ շողիքն ալ այնքան սիրելի է, որքան
հողագործին քրտինքը:

Բայց այսքան չէ:

Կը փռոտփռոտիմ արտավարէ արտավար
կարծես կանաչ մոմիկներ:
Ամէն ընձիւղ մարգրիտ մ'ունի իր բերանն ..
- Հօտաղ, ինձի ծիլ մը բեր,
արեւուն շողը վրան:

*Բանաստեղծական նոյն խաղն է որ կը շարունակուի,
առաջին ծիլին բեռցնելով նաեւ արեւուն շողը, արեւուն
ջերմութիւնը:*

Կը գարդարէ ամայութիւնը հողիմ
մատղաշ ծաղիկը հացի:
Կանանչիմ մէջ կոշտերը թուխ կը լողան ..
- Հարսնուկ, ծիլ մը բեր ինձի,
մատերուդ բոյրը վրան:

*Եկէք եւ հասկցէք թէ բանաստեղծը ի՛նչ ըսել կ'ուզէ
երբ կը գրէ. «Կանանչին մէջ կոշտերը թուխ կը լողան»:
Կոշտը՝ հողին այն կոշտ մասն է արդեօք զոր կը փշրես
սերմը ցանելէ առաջ: Բայց անցնինք, որովհետեւ պէտք
է որ ժամ առաջ վայելենք այս հնգեակին վերջին
բաղցրաբաղցր երկու տողերը.*

*«Հարսնուկ, ծիլ մը բեր ինձի. մատներուդ բոյրը
անոր վրայ թող ըլլայ»:*

*Եւ հիմա կարգանք բանաստեղծութեան վերջին
հատուածը, որ այս անգամ վեց տողերէ կը բաղկանայ.*

Ծիլ արտերուս մէջն է ծլեր մշենիս.
հոն միսմիմակը՝ ծաղկեր:
- Մայրիկ, ինչիկ, հօտաղ, հարսնուկ սիրակամ
բերէ՛ք անկէ ծաղիկներ,
բերէ՛ք վարդոյն ծաղիկներ,
հնձուորին յոյսը վրան:

Երաժշտութեան պէս կը հոսի կ'երթայ այս բանաստեղծութիւնը, որուն մէջ բանաստեղծը կրկներգի նման կը պոռթկացնէ իր պաշտամունքը բոլոր այն բաղկացուցիչներուն նկատմամբ, որոնցմով հողը ճեղքած ու հոնկէ դուրս արձակուած է եղանակին առաջին ծիլը կամ առաջին ծաղիկը: Բանաստեղծին արբեցումը կը նոյնանայ հնձուորին, չարքաշ հողագործին քրտինքին ու յոյսին հետ: Քրտինք եւ յոյս: Երկուքն ալ կախած են առաջին ծիլին վրայ եւ թրջած են զայն: Քրտինք: Մանաւանդ յոյս: Դարձեալ պիտի ըսենք. առատութիւն թող ըլլայ: Բերրիութիւն թող ըլլայ:

Այսօր ալ երկրագունտի անծայրածիր դաշտերուն ու արտերուն մէջ ամէն եղանակին ցորենի հասկերը առաջին ծիլեր կ'արձակեն ու կը մեծնան, կը հասուննան, ցորեանի դաշտեր կը ստեղծեն, կ'օրօրուին հովին դիմաց, կը թրջուին անձրեւներէն եւ եզներու շողիքներէն: Ինծի այնպէս կը թուի սակայն թէ այս երկրագունտին վրայ կայ խորհրդաւոր հողամաս մը որ ամէն գարնան կ'ընդունի մեծ բանաստեղծի մը ոգիին այցելութիւնը: Ինծի այդպէս կը թուի, այո՛: Յորեաններու ծովէն անցնող հովերուն մէջ այդ բանաստեղծին շունչն ալ կայ:

«ԴՈՒՆ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՉԵՐԹԱՍ ԱՆ»

Դանիէլ Վարուժան ունի բանաստեղծութիւն մը, որ մեր սիրելի բանաստեղծին միւս քերթուածներէն որոշապէս տարբեր մթնոլորտ մը ունի: Այս քերթուածին մէջ Վարուժան ընկերվարական մերձեցումով իր տաքուկ սիրտը կը բանայ գործարանի մը բանուորուհիին: Վարուժանի գործերուն ծանօթ ընթերցողը

արդէն հասկցաւ: «Բանուորուհին» անուն բանաստեղծութիւնն է այս: Ահաւասիկ գործ մը, որուն մէջ Վարուժան կը զսպէ բանաստեղծական իր պոռթկումները, մէկդի կ'ընէ մեր լեզուին ճաճանչագեղ բառերը, աւելի իրապաշտ բառամթերք մը գործածելով մարդասիրական իր զգացումները կը պոռթկացնէ ի տես այն խեղճ ու անբախտ կնոջ, որ ամէն առաւօտ անոր պատուհանին տակէն կ'անցնի գործատուն երթալու համար:

Պատուհանիս տակէն, ամէն առաւօտ,
ուրուականի պէս կ'անցնիս.
Եւ կուսագեղ գլուխիդ վրայ կ'արտասուէ
տերեւաթափ վարդենիս:
Եւ կը խորհիմ թէ թնատ ես եւ մօթի,
իրանդ հովէն կը դողայ:

Բանուորուհին անտարակոյս բնաւ լուր չունի որ պատուհանի մը ետեւէն բանաստեղծ մը իրեն կը նայի մարդասիրական տաքուկ զգացումներով: Ան ամէն առտու հոսկէ կ'անցնի, քնացող բանաստեղծը արթնցնելով հագով մը որ անոր աղուոր ծոցը, անոր աղուոր կուրծքը կը տանջէ: Գուցէ քնատ է, գիշերը բնաւ չէ քնացած որովհետեւ ունի հիւանդ մայր մը, մսած է որովհետեւ ճրագին իւղը սպառած է, անօթի ալ է, որովհետեւ բան չէ կերած երկու օրէ ի վեր: Բանուորուհի մըն է ան, աղուոր, բայց տկար, ճարահատ, որ պէտք է առտու կանուխ գործատուն երթալ եւ «աշխատի լոյսի ու կեանքին համար»:

Ես կը խորհիմ - եւ խենթի պէս կը քաղձամ
վար իջնել, թոյր դալկադէմ,
Բովդ իջնել, համբուրել ձեռքդ միհար,
Եւ հեծծել. «Քեզ կը սիրեմ»:

Ձէ՛, չխարուինք, ասիկա սիրահարական սէրը չէ,
ասիկա այն միւս սէրն է զոր ազնիւ մարդիկ կը զգան
անբախտին ու զրկուածին նկատմամբ: Պիտի տեսնենք
որ բանաստեղծը կը սիրէ բանուորուհիին ո՛չ գեղեցիկ
աչքերը, ո՛չ դալուկ դէմքը, ո՛չ գեղեցիկ կուրծքն ու
իրանը, այլ կը սիրէ անոր զրկանքները, անոր տառա-
պանքը, անոր սեւ ճակատագիրը.

Կը սիրեմ վիշտդ՝ որ իմ վիշտս է գերագոյն,
կը սիրեմ կուրծքդ քան ինչ
որուն մէջ դեռ կը յամառի Սէրդ երգել
արտոյտի պէս սրարբած:
Կը սիրեմ քու անօթութիւնդ ու ծարաւդ,
եւ ռսկորներդ ու ժապաւոյն.
Ես կը սիրեմ կոյս աղիքներդ ցամքած,
մագերուդ սուզմ՝ ուսէդ վար:

Վարուժանին մահէն տարիներ վերջ համայնավար
հազարաւոր բանաստեղծներ բանուորներուն ու աշխա-
տաւորներուն համար պիտի փորձէին նմանօրինակ փա-
ռապսակներ հիւսել, ոմանք ինքնաբոլոր զգացումներով,
ոմանք ապսպրանքի վրայ: Բայց Վարուժանի հիւսած
փառապսակը տարբեր ջերմութիւն մը ունի, տարբեր
ինքնանուիրում, տարբեր ինքնամատուցում մը:

Եւ ես կ'ուզեմ ամփոփել ինչ սրտիս վրայ
տատրակի պէս տարագիր,
տալ ուժս ինչ, մրցանակներս փառքի,
եւ ազգամուս անբասիր:
Կուրծքս վահան ընել կուրծքիդ նշաւակ,
եւ իօղմ ըլլալ պատիւիդ,
կրամիտէ բազուկիս տակ պաշտպանել
սէրդ ու գեղդ անժպիտ:

Կարեկցութեան ու մարդասիրութեան աժան տողեր չեն ասոնք: Կը հաւատանք այդ տողերուն անկեղծութեան: Համոզիչ են անոնք եւ կ'ըսենք որ անոնք գրուած չեն պարզապէս գեղեցիկ բանաստեղծութիւն մը մէջտեղ հանելու մտահոգութեամբ: Բանաստեղծը պատրաստ է տալու ինչ որ ունի, որպէսզի այդ տարաբախտ կիներ փրկուի իր սեւ ճակատագրէն: Եւ ահա կուգան բանաստեղծութեան վերջին ութ տողերը, որոնք ամէնէն ցնցիչն են, ամէնէն յուզիչը, ամէնէն մարտունակը ու առնականը: Հոս է որ հզօր մարդը գետին կը դնէ իր սուրն ու իր յաղթանակի դափնիները ու համեստօրէն կը խոնարհի անբախտ կնոջ մը մեծ տառապանքին առջեւ:

Կ'ուզեմ՝ քեզ տալ ինչ որ պայժարմ ինձ տուաւ,
ինչ որ խլեցի մարտերով:
Քեզ պսակել արիւնիս գոյմն ունեցող
յաղթանակիս վարդերով:
Միայն թէ դուն չըլլաս տժգոյմ ու քաղցած,
արեւուն տակ գհագաս,
մօրդ վերել չմարի ճրագն, ու, ո՛վ քոյր,
դուն գործատուն ա՛լ չերթաս:

Եւ սակայն գացին ու այսօր ալ կ'երթան: Այսօր ալ գործատուն կ'երթան աշխարհի անբախտ բանուորուհիները, առտու կանուխ ուրուականի նման անցնելով փողոցներու մէջէն, քնատ, անօթի, իրենց կուրծքը հալածող խուլ հազ մը արձակելով փողոցի լռութեան մէջ: Միչտ ալ հիւանդ մայր մը կայ անոնց տան մէջ, մարած ճրագ մը, մեռած սէր մը:

ԲԱՐՏԻՆԵՐԸ

Դանիէլ Վարուժանի գրական վաստակին մէջ կարեւոր թիւ կը կազմեն այն քերթուածները, որոնք լայնաշունչ են, լայնաշունչ թէ՛ տողի լայնքի տեսակէտով, թէ՛ քերթուածի երկարութեան տեսակէտով: Բանաստեղծը զանոնք ընդհանրապէս գրած է կեանքի այն հանգըր-ւանին վրայ երբ կ'երգէր «ցեղին երգը» կամ «հեթա-նոսական երգեր» եւ տակաւին գիւտը չէր ըրած «հացին երգին»: Ուժեղ բանաստեղծութիւններ են ասոնք, որոնց տողերուն արանքէն կը պոռթկան Վարուժանեան շքեղ լեզուն, հեթանոսական բարքերէ յամեցող եւ ազգային զգացումներով զեղուն ուժականութիւնն ու մտածողութիւնը: Անոնք մեզ կ'առաջնորդեն դէպի քերթողական արուեստի անսովոր կատարներ: Միայն թէ այս բանաստեղծութիւնները այնքան ալ դիւրին ընթեռնելի չեն, մէկ շունչով չեն կարդացուիր, ընթերցողը կը ստիպեն որ դանդաղի, կրկին կարդայ սա կամ նա տողը: Այդ բանաստեղծութիւններէն իւրաքանչիւրը գրականութեան ուսուցիչի մը համար մէկ կամ երկու դասաժամի նիւթ կրնայ դառնալ: Արդէն պէտք է դառնայ: Ուսուցիչն է որ աշակերտին պիտի սորվեցնէ թէ ինչպէս կարելի է պեղել այս բանաստեղծութիւններուն հողը ու անոնց տակէն երեւան հանել հոն թաքնուած զանձերը:

Բայց Դանիէլ Վարուժանի ամէնէն ժողովրդական ու ամէնէն շատ սիրուած բանաստեղծութիւնները ասոնք չեն: Մեր տաղանդաւոր քերթողին ամէնէն սիրուած, նաեւ բանաստեղծական գիւտի ու յուզումի տեսակէտէ ամէնէն յաջող բանաստեղծութիւնները այն միւսներն են որոնք գրուած են կարճ շունչով եւ որոնք կը կարդացուին մէկ ակնարկով: Քսան-քսանըհինգ տողերէ աւելի երկար չեն անոնք, իւրաքանչիւր տողն ալ էջին

մէկ կողմէն մինչեւ միւս կողմը չ'երկարիր: Երբ կը նայինք այդ բացառիկ բանաստեղծութիւններուն, իսկապէս կը փորձուինք ակամայ հաւատալ որ քերթողական արուեստին մէջ լաւագոյնը շուտ եւ կարճ ըսուածն է:

Հիմա պիտի բանանք «Հեթանոս երգեր» հատորի վերջընթեր էջերէն մէկը եւ պիտի կարդանք սա գողտրիկ բանաստեղծութիւնը, որուն խորագիրն է «Բարտիները»:

Տանս առջեւի ջրհորին ինձ
պապս է տնկեր գոյգ մը բարտի.
Լոյսն Աստղիկին, դողդոջելով,
ամռնց վրայ մախ կը կաթի:
Այնքան մօտիկ եմ իրարու՝
որ նոյն սիւքով կը թրթռան.
Մէկն իր երգը նրբ որ թողու՝
միւսն իր շունչով կ'աւարտէ գայմ:
Մրրիկներում մէջ հերարձակ
գրկուած, խոր, կը հեծեծեն.
Եւ կը բզզան լուսնակին տակ
փեթակներու պէս լուսեղէն:

Պահ մը կանգ առնենք եւ հասկնանք թէ ինչու բանաստեղծը իր տան առջեւի այդ երկու բարտիներուն մէջ շատ սիրելի բան մը կը տեսնէ: Իր պապն է որ տնկած է զանոնք: Ուրեմն սրբութիւն են անոնք: Բացի անկէ՝ որ նաեւ գեղեցկութիւն են: Բայց նախ սրբութիւն: Աստուածուհիին լոյսը ամէն առտու ամէն բանէ առաջ այդ երկու բարտիներուն վրայ կը կաթի: Եւ այդ երկու գեղեցիկ ծառերը նոյն հովին տակ կը սարսուան ու կը դողան: Նոյն մրրիկներուն գիմաց կուլան, կը հեծեծեն, նոյն լուսնին տակ լուսեղէն փեթակ

կը դառնան: Բայց բանաստեղծը որքան կը յուզէ մեզ, երբ կը գրէ. «Մէկն իր երգն երբ որ թողու, միւսն իր շունչով կ'աւարտէ զայն»: Միասնութեան ու եղբայրութեան հրաշալի պատկեր, քով քովի տնկուած երկու բարտիններու դէպի երկինք սլացքին մէջ:

Բանաստեղծութեան այս առաջին տասներկու տողերէն վերջ ունինք տակաւին ութ տողեր, որոնց մէջ յանկարծ շունչ մը կը փոխուի:

Հարսս ու ես անոնց կոթնած,
կը մստիմք հոն, ամէն գիշեր:
Տերեւներն յար կ'ներգեն յուզուած
այն որ կը զգամք ու չենք յիշեր:
Մագերն անոր՝ երբ մագերուս
խառնել կուգայ յանկարծ քամին՝
գոյգ բարտինները սիրասոյց
աստղերուն մէջ կը համբուրուին:

Է՛հ, կարդացէ՛ք ու տասն անգամ կարդացէ՛ք սա ութ տողերը: Եւ ջանացէ՛ք հաղորդուիլ գեղեցիկ խօսքին, կախարդական սիրոյ, եւ բնութեան հետ եղբայրանալու երեք խորհուրդներու հետ: Ի՞նչ պէտք կայ երկարաշունչ տողերու ու նկարագրութիւններու: Ահաւասիկ բանաստեղծն ու իր սիրելի կինը ամէն գիշեր կը նստին այդ բարտիններուն տակ, կռնակ կուտան անոնց եւ կը լսեն անոնց երգած երգը, որ կուգայ պայպերու ապրած անյիշելի շրջաններէն: Եւ երբ փչող հովը գլուխ գլխի տուած այս երկուքին մագերը իրարու կը խառնէ, սիրոյ այդ միասնութեան դիմաց կը խենդենան նաեւ բարտինները եւ իրենք եւս իրարու կը միանան, համբուրուելով աստղերուն մէջ:

Փոքրիկ ու շողշողուն աղամանդ մը ահաւասիկ՝ որ Վարուժանեան քերթողութեան խորութիւններէն զուրս

կուզայ որպէս մասմաքուր եւ անխարդախ հարստութիւն: Կը կարդանք այս բանաստեղծութիւնը, մեր աչքերուն առջեւ կը պատկերացնենք բանաստեղծին ու իր կնոջը մեզի այնքան ծանօթ պատկերները եւ հարց կուտանք.

«Ո՞ւր էք հիմա, բանաստեղծին պապին կողմէ տնկուած երկու բարտիներ, ո՞ւր էք»:

ՀԱՅՈՅ ԼԵՉՈՒԻ ՈՒ ՀԱՅԻՆ ՓԱՌԱԲՈՐՈՒՄԸ

Դանիէլ Վարուժան, կեանքի առաջին հոգեբանական սարսուռներուն մէջէն անցնելէ, հեթանոսական եւ դիցաբանական խոկումներով թրծուելէ, ազգին բազկերակը բռնելով իր ժողովուրդին հոգերով տագնապելէ վերջ, իր կարճատեւ կեանքի վերջալոյսին՝ մեզի կը յայտնուի իր երկու նախասիրութիւններով: Նախ՝ մեր լեզուին նկատմամբ պաշտամունք մը: Յետոյ՝ հացին, ցորենին, հողագործական քրտինքի նկատմամբ անօրինակ սէր մը: Այս երկուքը իրարու միացած են մասնաւորաբար «Հացին Երգ»ին մէջ, այն հրաշալի գիրքին մէջ՝ ուր հողագործական աշխատանքի ու քրտինքի բանաստեղծական նկարագրականը հասած է անգերազանցելի կատարի մը՝ թէ՛ քերթողական արուեստի, թէ՛ հայերէն լեզուի շքեղ գործածութեան տեսակէտէ:

Ինչ մեզք, հազար անգամ մե՛ղք որ հայ ժողովուրդի դաւակները այսօր ջախջախիչ մեծամասնութեամբ ի վիճակի չեն լրիւ հասկնալու եւ ըմբոշխնելու այս բացառիկ գիրքին մէջ գործածուած լեզուն: Պատճառն այն չէ որ Վարուժանի գործածած բառամթերքը այլեւս ժամանակավրէյ պարճած հին ու դասական բառամթերք մըն է: Բացարձակապէս: Վարուժանի բառամթերքը

այսօր ալ կենդանի բառամթերք է, հայոց լեզուի այսօրուան կատարելութեան մէջ ճարտարապետ դարձած, ստեղծագործ դարձած բառամթերք մըն է եւ մեր ժամանակակից հայ մարդը այսօր լրիւ կրնար ըմբոշխնել զայն, գործածել այդ բառամթերքը եթէ հայախօսութիւնը այնքան նահանջած չըլլար Սփիւռքահայ անասան տարածութեան վրայ:

Այսպէս՝ Դանիէլ Վարուժանի բանաստեղծութիւնը ամէն բանէ առաջ լեզուական հարց մը կը դնէ մեր սեղանին վրայ: Եթէ աշխարհի վրայ կան հայ մարդիկ՝ որոնք զաղափար չունին իրենց ազգային լեզուին կատարելութեան եւ փառաւորութեան մասին, կամ եթէ կը կասկածին հայերէնի զագաթային գեղեցկութենէն եւ կատարելութենէն, անգամ մը պէտք է կարգան Վարուժանը: Խղճամիտ ու գիտակից հայու մը համար զարմանահրաշ փորձառութիւն եւ միաժամանակ տառապալից վայելք մըն է Դանիէլ Վարուժանի ընթերցումը: Այսօր ամէնէն գրասէր եւ հայախօս հայ մարդն անգամ կրնայ չչմիլ Դանիէլ Վարուժանի բանաստեղծութեան մէջ առկայ լեզուական գեղեցկութեան դիմաց: Եւ անկասկած կրնանք պնդել թէ Դանիէլ Վարուժան իր ընթերցողները չմեցնելու, կամ իր լեզուագիտութիւնը ապացուցանելու փառամոլութեամբ չէ որ կը գործածէ անսովոր կամ զարտուղի բառեր: Ո՛չ անսովոր են այդ բառերը, ո՛չ ալ զարտուղի: Իր նիւթին համար եւ այդ նիւթը բանաստեղծօրէն արտայայտելու համար անհրաժեշտ բառերն են որ կը գործածէ բանաստեղծը: Ձէր կրնար չգործածել զանոնք եւ գործածած է: Իր ժամանակակից հայ մարդը աւելի՞ հանգիստ եւ ամբողջական վայելքով կը հասկնար այդ բառերը, չենք գիտեր, բայց անտարակոյս այդ շրջանին զանոնք հասկցողները աւելի շատ էին քան թէ այսօր: Որովհետեւ այդ բառերէն շատեր արդէն իրենց տեղն

ունէին առօրեայ խօսակցութեանց մէջ: Այդ շրջանի հայ մարդը. եթէ քիչ մը զարգացած, քիչ մը բանիմաց մարդ էր, պիտի չգիտնա՞ր իմաստը, օրինակ, ցորեան, կող, գեղադալար կամ պարզապէս դալար, յուռթի, պատմուճան, ծփուն, լուսնակ, սափոր, կալ, զմրուխտ, ծիտ, մոլեգին բառերուն: Այսօր հարիւր հայու վրայ մէկ կամ երկու հայ կը գործածէ՞ այս բառերը: Մինչդեռ շատ սովորական բառեր են ասոնք, զոր կը քաղենք «Ցորեանի ծովեր» բանաստեղծութենէն որ Վարուժանի ամենագեղեցիկ, ամէնէն ժողովրդական քանի մը բանաստեղծութիւններէն մէկն է: Այս սովորական բառերուն քով կան անշուշտ աւելի բարդ, բանաստեղծին կողմէ կամ ժողովուրդին կողմէ շինուած կամ ժողովուրդին կողմէ ցանցառ կերպով գործածուած բառեր՝ ինչպէս ալետատան, փողփողուն, փրփրագին, եւլն.:

Եթէ այսօր Դանիէլ Վարուժանը կ'ապրի դպրոցներու մէջ կամ բեմերու վրայ, իր այդ անմահութիւնը, մասամբ կը պարտի «Ցորեանի ծովեր» անուն այս բանաստեղծութեան, որուն վրայ կ'արժէ որ մենք ալ քիչ մը ուշադրութիւն կեդրոնացնենք, դանդաղելով հինգ տուներէ իւրաքանչիւրին վրայ:

Հովե՛ր կ'անցնին.–

Ու ցորեաններս յուշիկ յուշիկ կ'արթննամ,

Իրենց խորժէն կը հոսի դռդ մ'անսահմամ:

Գեղադալար կողերն ի վար բլուրին

Մովե՛ր կ'անցնին:

Վարագոյրը արդէն բացուեցաւ նկարչագեղ դաշտանկարի մը վրայ: Ահաւասիկ հովը կը փչէ ու ցորեանները «յուշիկ յուշիկ» կ'արթննան: Բայց ո՞ր ցորեանները: Ուշադրութիւն: Բանաստեղծը այստեղ կը գործածէ «ցորեաններս» բացատրութիւնը: Այնքան սիրահար

է ցորենին, այնքան կ'ախորժի ցորենի դաշտէն, որ ցորենները ի՛րը կը նկատէ: Վարուժանի՛ ցորեաններն են որ յուշիկ յուշիկ կ'արթննան փշոզ հովերուն գգուանքէն: Եւ եկէ՛ք տեսնենք յաջորդ տուները:

ՀՈՎԵՐ ՈՒ ՃՈՎԵՐ Կ'ԱՆՑՆԻՆ

Հովեր կ'անցնին.-

ու ցորեաններս յուշիկ յուշիկ կ'արթննան:

Այստեղ Վարուժանի «յուշիկ-յուշիկ»ը զինքը աւելի վերջ պիտի եղբայրացնէ մեր բանաստեղծութեան միւս գազաթային քերթողին հետ, որ է Միսաք Մեծարենցը: Մեծարենցին եւս ամէնէն ժողովրդական բանաստեղծութիւններէն մէկուն յատկանշական բառն է այս. «Յուշիկ»:

Յուշիկ փախչող իրիկունամ ծիրանի լոյսն է գուարթ...

Յուշիկ: Այս գեղեցիկ բառը, որ դանդաղ ու զգացական մեղմ կը ուղթով ընթացող ժամանակի խորհրդանշանն է, այսօր ի՛նչ մեղք որ չի գործածուիր մեր լեզուին մէջ: Երանի՛ թէ գործածուէր եւ զաղրէր մեզի միայն Մեծարենցն ու Վարուժանը յիշեցնող գողտրիկ բառ մը ըլլալէ:

Ահա արդէն երկրորդ տունը՝ «Ցորեանի ծովեր» բանաստեղծութենէն.

Հովեր կ'անցնին.-

Ա՛յնքան կը յորդի, կը կատողի դաշտը յուռթի՛ որ պիտի հոն արածող ուլը խեղդի:

Գոգիմ մէջէն ալետատամ հովիտիմ

ծովե՛ր կ'անցնին:

Արդէն յանկերգի վերածուեցան երկու կարճ տողերը: «Հովեր կ'անցնին», «ծովեր կ'անցնին»: Եւ այս երկուքին միջեւ՝ ի՛նչ տեսարաններ կը տողանցեն մեր աչքերուն առջեւէն: Բանաստեղծին կողքին, մենք ալ ահաւասիկ նստած ենք հոն ու կը նայինք մեր ցորեաններու դաշտին, ուրկէ անցնող հովերը ցորեաններու ծով մը կը ստեղծեն: Հովը թեթեւ չէ եւ անոր ազդեցութեան տակ յուռթի դաշտը, ցորենով լիացած դաշտը, կը յորդի, կը կատղի, ու այդ ուժեղ փշուտին դիմաց, փոքրիկ ուլ մը որ կ'արածի, քիչ կը մնայ որ խեղդուի: Եւ այսպէս՝ հովը չէ որ կ'անցնի ալիքներուն մէջ տատանող հովիտին մէջէն, այլ ծովն է: Ծովե՛ր, ծովե՛ր կ'անցնին դաշտին վրայէն:

Հովե՛ր կ'անցնին,-
ու ցորեանին պատմութեանները ծփում
մերթ կը պատռին, մերթ կը կարուին փողփողում:
Ստուերի մէջ, լոյսերու մէջ փրփրագին
Ժովե՛ր կ'անցնին:

Վարուժան տակաւ թափ կուտայ իր բանաստեղծական պատկերացումներուն. «ցորեանի պատմութեան», «ծփուն-փողփողուն - փրփրագին», «ստուեր-լոյս»: Այս բոլորին մէջ երրորդ անգամ ըլլալով կը կրկնուի հովերուն ու ծովերուն եղբայրութիւնը, ճամբայ բանալով չորրորդ անգամուան:

Հովեր կ'անցնին.-
Քիստերում տակ կ'ալեծփին եղնիներ՝
ուր լուսնկան իր սափորին կաթն է հոսեր:
Կալերէն գիւղ, գիւղէն մինչեւ աղօրին՝
Ժովե՛ր կ'անցնին:

Հովերու ու ծովերու տեսարանէն արբշիո՛ւ՝ բանաստեղծը հետզհետէ կը զօրացնէ քերթողական արուեստի իր գիւտերը: Մենք ալ, որ նստած ենք բանաստեղծին քով, երանի՛ թէ վրձին մը ունենայինք մեր ձեռքին մէջ եւ նկարէինք այն ինչ որ կը տեսնէ բանաստեղծը: Նկարէինք ոսկեգոյն ցորեններուն սա հրաշալի տեսարանը, «գմրուխտներով ծփացող անհուն դաշտը», նկարէինք «ծիտը որ թառած է օրօրուն հասկի մը վրայ ու կ'երգէ»: Մեր վրձինը պիտի կարենա՞ր ի վերջոյ նկարել այն ծովերը որոնք ցորեաններու տակէն կ'անցնին:

Այս հրաշալի բանաստեղծութեան մէջ վերջին խօսքը ծովերուն չի պատկանիր, այլ կը պատկանի հովերուն: Թերեւս պիտի սպասէինք որ բանաստեղծը քերթուածին վերջին հատուածն ալ իր աւարտին բերէր նախկիններուն պէս, «ծովեր կ'անցնին» բառերով: Բայց այդպէս չէ ըրած: Անոր ետեւէն աւելցուցած է «Հովեր կ'անցնին»ը:

Ծիտը կ'երգէ, քառած՝ հասկի մ'օրօրում,
միմչ իր տակէն ցորեաններու մոլեգիմ
ծովեր կ'անցնին,
հովեր կ'անցնին:

Վերջին երեսուն, քսան տարիներու ընթացքին, Արեւմտահայ գրականութեան անդաստանէն ներս, ոսկեհատիկ ցորեններու դաշտի մը վրայ այսքան գեղեցիկ ուրիշ բանաստեղծութիւն մըն ալ գրուեցա՞ւ արդեօք: Վերջին երեսուն, քառասուն տարիներու ընթացքին ցորեաններու տակէն հովեր ու ծովեր անցա՞ն արդեօք: Արեւմտեան այս ափերուն վրայ ուրիշ բանաստեղծ մըն ալ արծաթեայ մանգաղ մը վերցնելով գնա՞ց հնձելու ոսկի ցորեանը:

Օրօ՛ր, ոսկն'ւն արտ,
Օ՛ր տուր հասն'ւն արտ,
գամ ոսկիդ հնձեմ
մանգաղով արծաթ:

«Հացին երգը» գրուած է այս շունչով եւ այսօր այդ գործը հպարտօրէն իր անմահութեան ամենաբարձր ոլորտին վրայ կը մնայ նոյնիսկ եթէ մէկ հոգի չկարդայ զայն: Պիտի ըսեմ որ անկախ է իր ընթերցողներէն: Հսկայ լեբան մը նման: Հիմալայաները, Ֆուժի-Յամաները, Արարատները կը մնան խրոխտ ու յաւերժական, առանց սպասելու որ մէկը այցելէ իրենց:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՀՐԱՇԱԼԻ ԿՏԱԿԸ

Դանիէլ Վարուժանի ամբողջական բանաստեղծութեան նուիրուած հատորներու մէջ վերջին խօսքը միշտ կը պատկանի «Հացին երգը»ին եւ այս բաժնին մէջ ալ վերջին բանաստեղծութիւնն է «Անդաստան» խորագրեալ գլուխ գործոցը: Կարելի է ըսել ուրեմն որ Դանիէլ Վարուժանի վերջին խօսքն է այս, այսինքն կտակը: Անկասկած կրնանք մտածել թէ «Անդաստան»ը Դանիէլ Վարուժանին գրիչէն եղած ամենավերջին բանաստեղծութիւնը չէ: Արդէն կը պնդուի որ «Հացին երգը» անաւարտ գործ է եւ Դանիէլ Վարուժանին ողբերգական մահէն վերջ է որ այս գործը հրատարակուած է գրքի ձեւով: Թող ըլլայ: Մենք իրաւունք պիտի ունենանք ըսելու որ «Անդաստան»ը Դանիէլ Վարուժանի վերջին պատգամն է մեզի, որ կը հնչէ աւելի քան իննսուն տարիէ ի վեր եւ պէտք է հնչէ յաւերժօրէն: Ծայր աստիճան յուզիչ եւ մարդկայնական

բանաստեղծութիւն մըն է ասիկա, իրական աղօթք մը, որ պէտք է հնչէր նաեւ մեր եկեղեցիներուն մէջ որպէս շատ աւելի ճաշակաւոր աղօթք ու քարոզ, քան թէ այն աղօթքներն ու տափակ քարոզները որոնք երբեմն կ'արտասանուին մեր եկեղեցիներու բեմերուն վրայէն: Այս բանաստեղծութիւնն է որ պէտք է գոնէ անգամ մը կարդացուէր մեր եկեղեցիներուն մէջ կատարուած անդաստանի արարողութիւններու ընթացքին: Անդաստանի արարողութեան նախագահող հոգեւորականը այս անմահ բանաստեղծութեան չորս տուներէն իւրաքանչիւրը պէտք է կարդար դէպի Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս եւ Հարաւ դառնալով: Բայց ո՛չ մէկ հոգեւորական պիտի ընէ այս բանը, որովհետեւ մեր հոգեւոր մեծերուն համար եկեղեցական խօսքը ուրիշ բան է եւ շատ աւելի սուրբ է, քան բանաստեղծական խօսքը: Մինչդեռ հայաշխարհի մէջ, կամ ամբողջ աշխարհի վրայ, ո՛չ մէկ եկեղեցական այնքան ճիշդ եւ մարդասիրական խօսք արտասանած է, որքան մեր սիրելի բանաստեղծը կ'արտասանէ այս քերթուածով: Ահաւասիկ կարգով կարգանք անոր չորս տուներէն իւրաքանչիւրը:

Արեւելեան կողմն աշխարհի
Խաղաղութի՛ւն թող ըլլայ ...
Ո՛չ արիւններ, քրտինձ հոսիմ
Լայն երակիմ մէջ ակօսիմ,
Ու երբ հնչէ կոչնակն ամէն գիւղակի՝
Օրհներգութիւն թող ըլլայ:

Թող հոգեւորականները մերժեն, բայց ես ահաւասիկ կը տեսնեմ եկեղեցիի բարձրաստիճան ծառայ մը, որ բուրվառ ճօճելով դարձաւ դէպի Արեւելք եւ կարգաց վերի տողերը: «Խաղաղութիւն թող ըլլայ»: Խաղա-

դուժիւն ամենեցուն: Ո՛չ թէ արիւն, այլ քրտինք միայն
հոսի ակօսներուն մէջ:

Երեւակայութեանս մէջ հոգեւոր ծառան այժմ կը
դառնայ դէպի Արեւմուտք ու կը կարդայ.

Արեւմտեան կողմն աշխարհի
Բերրիութիւն թող ըլլայ ...
Ամէն աստղէ ցօղ կայլակի,
Ու ամէն հասկ ձուլէ ոսկի,
Եւ ոչխարներն երբ սարին վրայ արածին՝
Ծիլ ու ծա՛ղիկ թող ըլլայ:

Նախ խաղաղուժիւն, յետոյ բերրիութիւն: Ահա
արգար մարդուն մաղթանքն ու աղօթքը: Աստղերէն
ցօղ թող կաթի, հասկերը ոսկիի վերածուին, սարերը
լեցուին ծիլով ու ծաղիկով: Եւ ո՛չ թէ միայն
Արեւմտեան կողմ աշխարհի, այլ ամենուրեք.


Հիւսիսային կողմն աշխարհի
Առատութիւն թող ըլլայ ...
Ոսկի ծովուն մէջ ցորեանին
Յաւէտ լողայ թող գերանդին,
Ու լայն ամբարն աղուններուն երբ բացուի՝
Բերկրութիւն թող ըլլայ ...
Հարաւային կողմն աշխարհի
Պտղաբերում թող ըլլայ ...
Ծաղկի՛ մեղրը փեթակներուն,
Յորդի գինին բաժակներուն,
Ու երբ թխնն հարսերը հացը բարի՝
Սիրերգութի՛ւն թող ըլլայ:

Ահաւասիկ հոգեւորականը աւարտեց դէպի չորս ուղ-
ղուժիւն զրկուած աղօթքն ու խնկարկումը: Մաղթեց

խաղաղութիւն, բերրիութիւն, առատութիւն, պտղաբերում, եւ այս բոլորէն վերջ այն երրորդ սրբութիւնը, որուն պէտք ունի մարդ խաղաղութենէն եւ առատութենէն վերջ. սիրերգութիւն: Սիրերգութիւն:

Այս է ահա աստուծոյ բանաստեղծին վերջին կտակին վերջին մաղթանքը: Սիրերգութիւն: Սէ՛ր անհատական ու մարդկային: Ո՛չ թէ ատելութիւն, թշնամանք, կատաղութիւն:

Բնականաբար այս մաղթանքէն բնաւ բաժին չէին ստացած այն ոճրագործները որոնք վերջ տուին «Անդաստան»ի հեղինակին կեանքին: Բայց այդ ոճրագործները ամենուրեք են, ամէն կողմ կը գործեն՝ Արեւելեան կողմն աշխարհի թէ՛ արեւմտեան կողմն աշխարհի, Հիւսիսային կողմն աշխարհի թէ՛ Հարաւային կողմն աշխարհի, կը գործեն առանց գիտնալու թէ բանաստեղծ մը իբրեւ վերջին խօսք՝ սիրերգութիւն կտակեց մարդուն: Ի՞նչ պիտի պատահէր՝ եթէ գիտնային:



**ԿԱՐԴԱԼՈՎ
ԻԳՆԱ ՍԱՐԸԱՍԼԱՆԸ**

ՄԻՐՈՅ ԴԱՐՔԻՆԸ

Եթէ աշակերտ մը իր գրականութեան ուսուցչին հարցնէ թէ ի՞նչ բանն է որ բանաստեղծ Իգնա Սարըասլանի բանաստեղծութիւնը կը յատկանշէ, ուսուցիչը պարտի պատասխանել մէկ բան.

- Սէ՛րը:

Աշակերտը նօթ պիտի առնէ, յետոյ պիտի հարցնէ.

- Շատ լաւ: Սէ՛րը: Յետոյ ուրիշ ի՞նչ:

Ուսուցիչը պէտք է կրկնէ.

- Դարձեա՛լ սէրը: Դարձեալ ու դարձեա՛լ սէրը:

Աշակերտը այդ ալ պիտի արձանագրէ: Յետոյ քիչ մը պիտի մտածէ, ու վարանումով պիտի հարցնէ.

- Շատ լաւ, բայց չկա՞յ ուրիշ բան մըն ալ որ Իգնա Սարըասլանի բնորոշ մէկ գիծը տայ մեզի:

Հիմա ուսուցիչը նեղ կացութեան մատնուած է ահաւասիկ: Այո՛, ուրիշ ի՞նչ: Մեր այս սիրելի բանաստեղծին յուզական երփներանգ աշխարհը լեցուն է զգացական ու մտածողական, բայց մանաւանդ զգացական այնպիսի պատկերներով, որ դիւրին չէ անոնց մէջէն ընտրել ամէնէն յատկանշականը: Ի՞նչ պիտի պատասխանէ ուսուցիչը:

Այն ատեն անոր պիտի յանձնարարենք որ բանայ բանաստեղծին «Սիրոյ Գոյնը» անուն հաւաքածոյին 25րդ էջը ու իր աշակերտին կարգայ սա բանաստեղծութիւնը.

Լուսոյ մառագայթ մը եթէ միջավայր փոխէ
Կը բեկամի

Մեմֆ լուսոյ մառագայթներ

Մեմֆ բանաստեղծներ - սիրոյ երկրպագուներ

Պահ մը եթէ գիծ փոխենմ
Պահ մը եթէ ազատատեննչութենէն շեղիմք
Նորայրսիրութենէն հեռանամք
Փոթորիկներու մէջ կը խեղդուիմք
Կ'այրիմք անապատներու մէջ

Այս բանաստեղծութիւնը այսքան է իր ամբողջութեանը մէջ: Բայց ան բանալի մըն է թերեւս Իգնա Սարըասլանի մէջ տեսնելու համար բանաստեղծի ամէնէն յատկանշական ու տենչալի չորս յատկութիւնները: Ինքն է որ կը շարայարէ այդ չորս յատկութիւնները: Լոյսի ճառագայթ մը ըլլալ, սիրոյ երկրպագու ըլլալ, ազատատենչ ըլլալ, եղբայրասէր ըլլալ: Ատոնք են բանաստեղծին կոչումները: Բանաստեղծը բանաստեղծ է ու իր շրջապատն ու ինքզինք ազնիւ զգացումներու մէջ կը ծաղկեցնէ որքան ատեն որ կը մնայ այս կոչումներուն զծին վրայ: Իսկ եթէ շեղի այդ գիծէն, այն ատեն փոթորիկներու մէջ պիտի խեղդուի եւ անապատներու մէջ պիտի այրի:

Այս բանաստեղծութիւնը քերթողական արուեստի գազաթնակէտ մը չէ, ո՛չ ալ մեզի նմոյշ մը կը բերէ Իգնա Սարըասլանի բանաստեղծութեան այն մեղամաղձոտ, այն տաքուկ, այն վիպապաշտ, գեղագոյն ու գեղաճայն երգերէն, որոնցմով լեցուն են մեր բանաստեղծին գիրքերը: Բայց այս բանաստեղծութիւնը իր «Հաւատոյ հանգանակ»ն է, այսինքն քերթողական արուեստի դասագիրքը, ուղեցոյցը, աւետարանը:

Բայց ուսուցիչը իրաւունք ունէր երբ իր աշակերտին պատասխանած էր որ Իգնա Սարըասլանի բանաստեղծութեան ամէնէն հիմնական ու ամէնէն անսպառ թէման սէ՛րն է: Մեր բանաստեղծին ամբողջական գործին մէջ դժուար է գտնել բանաստեղծութիւն մը որ հիւսուած չըլլայ սիրոյ թէմային շուրջ, որ սիրոյ

բոլոր տեսակներով չպոռթկացնէ բանաստեղծին սիրտը: Երիտասարդ բանաստեղծին առաջին բանաստեղծութենէն մինչեւ հասուն բանաստեղծին տակաւին մէկ շաբաթ առաջ գրուած վերջին բանաստեղծութիւնը, սէրն է որ ուղիղ գծի մը նման կ'երկարի-կ'երթայ բոլորին մէջէն եւ կ'արբեցնէ բանաստեղծը: Առաջին գիրքը կոչուած էր «Լօ»: Խորագրին մէջ ըսուած չէր, բայց գիրքը կարգացողը կը հասկնար որ «Լօ»ն աշխարհի բոլոր սիրահար մարդոց գերագոյն ու պաշտելի սիրականն է, սիրոյ տաքուկ առարկան, այն՝ որուն համար կ'արժէ ապրիլ: Երկրորդ գիրքը կոչուեցաւ «Քառասմբակ Սէրերով»: Հոս եւս բանաստեղծին սէրերը սուրացին քառասմբակ խոյանքներով: Երրորդը կոչուեցաւ «Սիրոյ Գոյնը»: Բանաստեղծը նայեցաւ աշխարհի բոլոր գոյներուն ու չբաւարարուեցաւ անոնցմով: Ան կ'ուզէր գտնել սիրոյ գոյնը:

Անհասանելի գագաթ մըն էր սէրդ ինծի համար
Լերան կողերն ի վեր քանի սիրերգ հիւսեցի
Քանի սիրերգ - չեմ յիշեր
Բայց ես ինչ շրթներուդ չափ կիզիչ
Քու շրթներուդ չափ զգլխիչ
Տառ մը անգամ չկրցայ գրել

Միմչդեռ ես սիրոյ դարբինն էի
տողերով
տաղերով
տառերով գիմով

Անկասկած բնաւ առարկութիւն չունինք մեր սիրելի բանաստեղծին: Թող խօսի սիրոյ մասին եւ մեզի յիշեցնէ բոլոր այն սէրերը, որոնցմով լիցուեցան մեր ալ սիրտերը: Հոն ուր սէրը չկայ, դժոխքն է: Բանաստեղծը

հաւատարիմ թող մնայ իր «Հաւատոյ հանգանակ»ին
եւ երբեք չզաղրի «սիրոյ երկրպագուն» ըլլալէ, չզաղրի
ինքզինք «Սիրոյ դարբին» կոչելէ:

Եկէք քիչ մը շրջինք Իզնա Սարըասլանի սիրոյ
պարտէզներուն մէջ եւ մենք ալ փնտռենք սիրոյ լոյսն
ու գոյնը:

ՄԻՐՈՅ ԲԱՆՈՒՈՐԸ

Քու շրթներուդ չափ զգլխիչ
Տառ մը անգամ չկրցայ գրել

Մի՛նչդեռ ես սիրոյ դարբինն էի
տողերով
տաղերով
տառերով գի՛նով

Բանաստեղծը ինքզինք սիրոյ դարբին կոչած էր վերի
տողերուն մէջ: Սիրոյ սիրահար մեր բանաստեղծին
համար անսովոր ինքնամկրտութիւնն չէ այս: Բանանք
իր նախորդ գիրքը եւ տեսնենք թէ հոն ալ ան ինքզինք
կոչած էր «Սիրոյ բանուոր»:

Սիրեցի առանց կէտի
Առանց ստորակէտի

Նոր տող ըսի՛մ - ոչ ըսի
Տողադարձ - չակերտ ըսի՛մ - ոչ ըսի

Առանց գործադուլի
Առանց դադարի սիրեցի

Սէրս անսկիզբ տող

Մէրս անսպառ մելամ
Մէրս անվերջ նամակ

Մինչ ես գինովցած
Նամակին տակ
Ստորագրութիւնս չդրի

Սիրեցի առանց կէտի
Առանց ստորակէտի

Մէրը յաւերժութիւնն էր միթէ
Թէ յաւերժութիւնը սէր - չգիտցայ

Սիրել առանց կէտի, առանց ստորակէտի, առանց նոր տողի կամ տողազարձի: Այսինքն սիրել անդուլ անդադար, սէրը հոսեցնել անսպառ մելանի մը նման, սէրը դիմացիներն զրկել անվերջանալի նամակի մը ձեւով, եւ երբեմն մինչեւ իսկ մոռնալ ստորագրութիւն մը դնել նամակին տակ, այլ խօսքով սիրել անանուն կերպով, սիրել մարդասիրաբար, սիրել՝ առանց բան մը պահանջելու ատոր փոխարէն: Բանաստեղծին սէրը ա՛յս տեսակ սէր է: Եւ Ինք այդ սիրոյ բանուորն է: Թերեւս բեռնակիրը: Թերեւս ստեղծագործը: Դարձեալ՝ դարբինը:

Բայց վերի բանաստեղծութեան վերջին երկու տողերուն մէջ Իգնա Սարրասլան յանկարծ ուրիշ գուռ մը կը բանայ մեր առջեւ: Հարց կուտայ յաւերժութեան մասին: Յաւերժութի՛ւն: «Մէր» բառին չափ սիրելի ուրիշ բառ մը ահալասիկ. «Յաւերժութիւն»: Այս բառն ալ յաճախանք մըն է մեր բանաստեղծին մտածումներուն եւ զգացումներուն մէջ: Բայց այս մասին՝ աւելի վերջը:

Իսկ հիմա՛ սէր: Միայն սէր: Բանաստեղծին կեանքին

մէջ կայ մէկը որ «կեանքը ապրելու արժանի դար-
ձուցած է» իրեն: Եւ անոր է որ իր խօսքը կ'ուղղէ
ուրիշ բանաստեղծութեան մը մէջ.

Նախ ամէն ինչ
Աղմուկ էր եւ ժխոր
Դուն եկար
Ամէն ինչ երգ եղաւ
Եւ երաժշտութիւն

Զարմանալի: Բանաստեղծը այս անգամ բնաւ չէ
գործածած սա այնքան սիրելի բառը. Սէր: Բայց
բանաստեղծութեան հինգ տողերը խխում դարձած են
սիրոյ մէջ թաթխուելու հետեւանքով:

Բայց չաճապարենք: Կը բաւէ որ էջ մը դարձնենք
եւ դարձեալ մեր զիմաց պիտի ելլէ «սէր»ը: Եւ այս
անգամ հրաշալի երաժշտութեան մը ընկերակցու-
թեամբ.

Սէր - սէր ծաղկեցայ
Դուն երագ մը - դուն շունչ մը
Անցար ու գացիր
Մինչ ես արթնցայ արիւն- քրտինք

Հոն
Հոն այդ սիրոյ պարտէզին մէջ
Թօշմած վարդ մը մնաց գլխիկոր

Մայրամուտին
Արեւը սրտիս նման
Վիրաւոր կարմիր թռչուն մը եղաւ
Ինկաւ - թաղուեցաւ ջուրերուն մէջ

Հիմա - հոն հեռուն

Փշուր փշուր յիշատակներու - գլխիկոր վարդերու
Շունչի նման շոգիացող երազներու քովն ի վեր
Հորիզոնին վրայ մշուշին մէջ
Թաւջութակ մը մեր սէրը կ'երգէ

Է՛հ, գիտենք անշուշտ որ միշտ չէ որ սէրը փայլուն
ու գերհզօր է: Սէրը երբեմն թօշնած վարդ է, վիրաւոր
կարմիր թուռուն մըն է, փշուր փշուր յիշատակ է,
հորիզոնին վրայ մշուշ մըն է: Նաեւ երաժշտութիւն,
որովհետեւ հիմա բանաստեղծին շատ սիրելի նուազա-
րան մըն ալ սկսած է երգել այդ սէրը: Թաւջութակ
մը: Թաւջութակին ճայնը: Երաժշտական բոլոր ճայ-
ներուն մէջ ամէնէն տպաւորիչը, ամէնէն սրտախօսիկը,
ամէնէն մարդկայինը: Եթէ կայ նուազարան մը որ
պիտի խօսի մեր սիրոյ մասին, թաւջութակն է ան:

Եւ թաւջութակին ճայնը կը շարունակէ հնչել մեր
ականջներուն մէջ, երբ քանի մը էջ եւս կը դարձնենք
ու կը կարդանք.

Եւ դուն երբ

պիտի գգաս առանձութիւնը

ծաղիկի մը կամ սիրոյ որ կը ծլի - կը ծաղկի

եւ կը սպասէ քեզի

քեզի

դուն որ օր մը թերեւս պիտի գաս

եւ գայն պիտի հոտուրտաս

Առանձնութիւնը ծաղիկի մը կամ սիրոյ մը որ նոր
կը ծլի:

ՍԻՐՈՅ ԾԱՌԸ

Ժամանակակից մեր բոլոր բանաստեղծներուն նման
Իգնա Սարըասլանն ալ ունի Կաղանդի ու Տօնածառի
վրայ գրուած բազմաթիւ բանաստեղծութիւններ: Բայց
Իգնա Սարըասլան իր Կաղանդի Ծառը կը կոչէ Սիրոյ
Ծառ: Պիտի չզարմանանք: Սիրոյ դարբինին ու սիրոյ
բանուորին կաղանդի ծառն ալ պիտի կոչուի Սիրոյ
Ծառ: 1981-ի Կաղանդին է որ գրուած է սա «Սիրոյ
Ծառ» բանաստեղծութիւնը.

Երկրագունտին վրայ ծնող - ծաղկող
բոլոր կանանչ յոյսերը հաւաքեցի
տերեւ - տերեւ միւղ - միւղ
կաղանդի ծառ մը կերտեցի

Ճիւղերն ի վեր - միւղերն ի վար
ձեր բիրերուն փայլը
ձեր սրտերուն զարկը
ձեր երակներուն խանդը կախեցի

Ճիւղերուն ի վեր - միւղերուն ի վար
սրինգի մը շունչը
կիթառի մը ծիծաղը
երգեհոնի մը հառաչամբը սփռեցի

Բանաստեղծական ցնցիչ ու արտասովոր պատկերներ
չկան այս տողերուն մէջ, բայց կան բոլոր այն բա-
րիքները, որոնցմով շրջապատուիլ կ'ուզէ ամէն մարդ
Կաղանդ Գիշերով:

Յոյս:

Սիրելի մարդոց սրտի զարկը:

Եւ քիչ մը երաժշտութիւն սրինգով կամ կիթառով:

Բայց դեռ ուրիշ ի՞նչ:

Բանաստեղծը պիտի շարունակէ ճիւղերուն քովն ի վեր, ճիւղերուն քովն ի վար տեղաւորել այն ինչ որ ըստ իրեն անհրաժեշտ է որպէսզի Տօնածառը ըլլայ կատարեալ ու երջանկաբեր.

Պիտի տեղաւորէ քրտինքը ձեր ճակտին:

Պիտի տեղաւորէ ձեր եղբայրութիւնը:

Պիտի տեղաւորէ ձեր բարեկամութիւնը:

Նաեւ քիչ մը զոհաբերութիւն:

Եւ այս եզակի ծառին ամենաբարձր կէտին վրայ պիտի տեղաւորէ երջանկութեան աստղը: Հիմա ծառը պատրաստ է: Իրաւ ալ բանաստեղծը կրցած է «կերտել» իր Կաղանդի Ծառը: Եւ ահա թէ այս բանաստեղծութեան վերջին տողերուն մէջ ինչ պիտի ըսէ մեր սիրելի բանաստեղծը ձեր աչքերուն մէջ նայելով.

Ծառս սիրոյ ծառն է գրկաբաց

հրամեցէ՛ք

սիրով լեցունելու - սէր ըմպելու - սէր շնչելու

սիրոյ ծառին տակ

սէր կաղանդով անմահանալու

Իրականութեան մէջ Սիրոյ Ծառը չէ որ գրկաբաց է: Բանաստեղծն է: Բանաստեղծն է որ իր գիրկը բացած է ձեզի, դուք՝ նշանաւոր կամ անանուն, յայտնի կամ պատահական մարդ, իր գիրկը բացած է ձեզի եւ ձեզ կը հրաւիրէ իր շուրջ՝ որպէսզի սէր ըմպէք ու սէր շնչէք: Կը բաւէ որ ընդունիք հրաւերը եւ դուք ալ ձեր գիրկը բանաք բանաստեղծին:

Իգնա Սարրասլանի սա երկու առաջին հատորներուն մէջ «սէր» բառը, բարձր արտասանուած, կամ լռելեայն ըսուած, մնայուն խօսք է, եւ ի վերջոյ մենք ալ կը հաւատանք որ բանաստեղծը միայն տպաւորութիւն

գործելու համար չէ որ իրեն մտասեւեռում ու սրտասեւեռում դարձուցած է «սէր»ը: Կը հաւատանք իր անկեղծութեան եւ կը դարմանանք բոլոր անոնց վրայ, որոնք բանաստեղծին հրաւէրին ընթացք չեն տար ու սիրոյ այս հսկայածաւալ կարկանդակէն իրենց բաժինը չեն ստանար:

Քերթողական կեանքի այս առաջին երկու տասնամեակներուն պիտի յաջորդեն ուրիշ տասնամեակներ, բանաստեղծը պիտի սկսի թրթռացնել տարբեր լարեր, ման պիտի գայ աշխարհի ամէնէն հետաքրքրական պարտէզներուն մէջ, պիտի հնչեցնէ Վիվալտիէն կտոր մը, կամ Շոպէնի *Տօ Մինէօր Ուվէրթիւրը*, կամ Նիչայուրէք ու Շէտարապան ոճով Արեւելեան երաժշտութիւն մը, եւ այս բոլորին մէջ ան «սէր» բառը այլեւս այնքան յաճախակի կերպով պիտի չարտասանէ որքան կ'արտասանէր առաջ, բայց իրականութեան մէջ բանաստեղծին նոյն սիրոյ սիրահար սիրտն է որ կողմնացոյցի մը նման իր սլաքները պիտի դարձնէ դէպի իր սիրածը, դէպի իր սիրելին, դէպի սէրը:

Դու՛ն իմ քեւեռս նս
Նս սիրոյ կողմնացոյցը
Սլաքս միշտ քեզի կ'ուղղուի

Եւ յիշենք որ սիրոյ զգացումով թաթաւուն իր առաջին բանաստեղծութիւններէն քառասուն տարի վերջ, 2002 թուականին, դեռ հազիւ չաբաթ մը առաջ, մեր բանաստեղծը իր երեւակայական նոր սիրելիին՝ Ֆէլիսիային հետ, այդ «երազ աղջկան» հետ թեւանցուկ կը քալէր Վենետիկի Սանթա Մարիա Ֆորմոզայի հրապարակին վրայ, փաթիլ փաթիլ տեղացող ձիւնին տակ:

Պատկերը սիրոյ տպաւորիչ ու շարժանկարային

պատկեր էր: Ինչպէս բաղեղ մը որ անդիմադրելի կիրքով կը փաթթուի նոյնիսկ փշաթելի մը, անտես առնելով անոր սիրտ ծակող փուշերը, Ֆէլիսիան ալ իր ամբողջ էութեամբը կը նուաճէր սիրոյ ու տարփանքի կատարը: Բանաստեղծին աշխարհը կը շարունակէր ուրեմն մնալ այն թաղարը, որուն մէջ անպայման սէր մը պիտի ծաղկէր: Ու «Լօ»էն քառասուն տարի վերջ, «քարուքանդ սրտի մը մէջ սէրը Ֆէլիսիա պիտի կոչուէր»:

Բայց մենք դեռ պիտի դանդաղինք քսան - երեսուն տարի առաջուան սէրերուն վրայ:

ՄԻՐՈՅ ԳՈՅՆԸ

Ըսած էինք. Բանաստեղծը նայեցաւ աշխարհի բոլոր գոյներուն ու անոնցմով չբաւարարուեցաւ: Ան կ'ուզէր գտնել սիրոյ գոյնը:

Սիրոյ գոյնը: Սէրն ալ իր մասնաւոր գոյնը ունի՞ արդեօք:

Միայն բանաստեղծներն են որ պիտի կարենան ուղղել այսպիսի հարցում մը: Տեսանելի առարկաները իրենց գոյները ունին, բնութեան մէջ ամէն ինչ իր սեփական գոյնը ունի: Այդ գոյները նկարիչներուն երջանկութիւնը կը կազմեն: Որովհետեւ այդ գոյներն են որ նկարիչներուն ապրելու նպատակ մը կուտան, կամ նկարիչներու համար արուեստ մը կը ստեղծեն: Եւ ընդհանրապէս բոլորս ալ գիտենք թէ այս երկրագունտին վրայ ինչ բան ինչ գոյն ունի: Զիւնը ճերմակ է: Տարբեր գոյնով ձիւն մը չենք կրնար երեւակայել: Երկինքը կապոյտ է: Ծառին տերեւը կանանչ է եւ երբեմն կրնայ փոխուիլ դէպի սրճագոյն, դեղին, կարմրորակ, բայց երբեք դէպի կապոյտ կամ սեւ: Զերկարենք: Բնութեան մէջ գրեթէ ամէն ինչ կը պայմանաւորուի յատուկ գոյնով մը: Կան ալ առարկաներ,

որոնց վրայ մենք կրնանք դնել մասնաւոր գոյներ: Ըստ մեր կամքին: Օրինակ, կրնանք մեր տան պատը ներկել սպիտակի, բաց սրճագոյնի, վարդագոյնի, եւայլն: Նկարիչը որքա՛ն պիտի երջանկանայ եթէ տիրապետէ այս գոյներուն, եթէ զանոնք իր ուզած ձեւով ցոլացնէ իր կտաւին վրայ: Բայց նկարիչը ի՞նչպէս պիտի ներկէ, եթէ ուզէ իր կտաւէն ցոլացնել բարկութեան զգացումը, կամ եթէ ուզէ ցոլացնել նախանձը, կամ սէրը:

Հոս ահաւասիկ նկարիչին գործը կը վերջանայ ու կը բացուի բանաստեղծին աշխարհը: Բանաստեղծն է որ պիտի տեսնէ մարդս փոթորկող զգացումներուն գոյները, կամ բանաստեղծն է որ գոյն մը պիտի տայ մարդուս հոգին փոթորկող սա կամ նա զգացումին: Եւ այդ բանաստեղծներէն մէկն ալ Իգնա Սարըասլանն է: Ան, Ապրիլի ցուրտ օրով մը նստած է բնութեան դիմաց եւ տեսնենք թէ ինչեր կ'ըսէ մեզի.

Ապրիլ է- ցուրտ Ապրիլ մը
ցուրտ Ապրիլի մը կէսօրէ վերջն է
լիճը անդադար գոյն կը փոխէ
երկնագոյն -արծաթագոյն -մոխրագոյն - մեղրագոյն
ուռիներուն տերեւները դեռ հագիւ տեսանլի
դեղին - կանաչ քօղ մըն են հիմա
միմչ լեռներուն վրայ դեռ ձիւն կայ

Մեր սիրելի բանաստեղծը հոս տակաւին նկարիչ մըն է եւ կը հաղորդուի բոլոր այն գոյներուն հետ, որոնք բնութեան կողմէ կը սարքուին իր առջեւ:

Ցուրտ Ապրիլ մըն է - կէսօրէ վերջ
սալորեմիները - մշեմիները ծաղկեր են
գոյն-գոյն

կաղամախիմներու մերկ շուքերը լիճիմ մէջ
կը լողամ
ամձայն են գորտերը տակաւին
օձերը դեռ չեն արթնցած
միևչ մննդուկները - սոխակները կը շաղակրատեն
մրջիւնները - սարդերը- մեղուները իրարու հետ
կը մրցին

Յուրտ Ապրիլի այս տեսարանին առջեւ մեր նկարիչ
բանաստեղծը ինքզինք յանձնած է «բազմաձայն լու-
թեան» մը: Բազմաձայն լուութիւն: Ա՛յս է այս
բանաստեղծութեան խորագիրը, որ հակասական երկու
բառերը քով քովի բերելով մեզի կը յիշեցնէ այն
միջնորտը, ուր ձայները կը նոյնանան լուութիւն-
ներու հետ եւ ոստում մը կ'ընեն դէպի բնութեան
հազարումէկ գոյները.

Ապրիլ է - ցուրտ Ապրիլ մըն է
լիճը անդադար գոյն կը փոխէ
երկնքի - արծաթի - մոխիրի - մեղրի գոյն
լիճը գոյնէ գոյն կը մտնէ
իսկ ես այս բազմաձայն լուութեան մէջ
բաժակիս մէջ շերտ մը գարուն
նստած - սիրոյ գոյնիմ կը սպասեմ

Ահաւասիկ քերթուածին վերջին տողին մէջ նկարիչ-
բանաստեղծը արտասանեց այն ինչը՝ որուն համար
գրուած է ամբողջ բանաստեղծութիւնը: Սիրոյ գոյնը:
Կիճը շարունակ գոյն կը փոխէ, լիճին գոյներուն հետ
շարունակ գոյն կը փոխեն նաեւ ինչե՛ր ու ինչեր որոնք
առընչուած են տեսարանին: Գոյներու այս խրախճան-
քին մէջ ի՞նչ է սակայն գոյնը այն սբանչելի զգացու-

մին, զոր մենք սէր կը կոչենք: Սէրն ալ իր մասնաւոր
գոյնը չունի: Եթէ ունի, ո՞րն է ան:

Աստած – սիրոյ գոյնիմ կը սպասեմ

Պիտի յայտնուի՞ այդ գոյնը: Սիրոյ գոյնը:
Բանաստեղծը պիտի ճանչնա՞յ զայն երբ պիտի յայտնուի
այդ գոյնը: Եւ այդ գոյնն ալ, քիչ վերջ, լճին հետ,
չարունակ գոյն պիտի փոխէ՞:

Բազմաճայն լուսթեան մէջ բանաստեղծը կը սպասէ
սիրոյ գոյնին: Եթէ բանաստեղծութիւնը հոս վերջացած
չըլլար, թերեւս մենք ալ բանաստեղծին հետ միասին
պիտի տեսնէինք թէ ի՞նչ գոյն ունի սէրը:

Բայց բանաստեղծութիւնը հոս կը վերջանայ: Եւ մեր
բանաստեղծը իրեն կը պահէ իր գաղտնիքը:

Ո՛վ գիտէ: Թերեւս ամէն մարդուն սէրը տարբեր գոյն
մը ունի:

Կամ սէրը ամէն մարդու համար տարբեր գոյն մը
ունի:

ՈՒԹԵՐՈՐԴ ԿՂԷՈՊԱՏՐԱՆ

Ո՛վ գիտէ: Թերեւս ամէն մարդուն սէրը տարբեր գոյն
մը ունի:

Կամ սէրը ամէն մարդու համար տարբեր գոյն մը
ունի:

Բանաստեղծ Իգնա Սարըասլանի «Բազմաճայն
Լուսթիւն» խորագրեալ բանաստեղծութիւնը մեզ կը
հրաւիրէ ուղղելու այս հարցումները: Տեսանք արդէն:
Բանաստեղծը նստած էր լճին եզերքը եւ կը նայէր
լիճին, որ շարունակ գոյն կը փոխէր: Բայց բանաս-
տեղծը կը սպասէր սիրոյ գոյնին: «Նստած – սիրոյ

գոյնին կը սպասեմ» ըսած էր ան վերջին տողով մը: Սիրոյ գոյնը պիտի յայտնուէ՞ր, եթէ բանաստեղծու-
թիւնը վերջացած չըլլար այդ կէտին վրայ:

Բայց բանաստեղծութիւնը վերջացա՞ւ արդեօք: «Գոնէ
այս գիշեր» խորագրեալ իր շատ սիրուն մէկ բանաստեղ-
ծութեան մէջ մեր սիրելի բանաստեղծը պատգամ մը,
թերեւս գաղտնիք մը կուտայ մեզի: Անկախաբար իր
նիւթէն, բանաստեղծութիւնը կը վերջանայ երեք
հետաքրքրական տողերով, զորս մենք պէտք է պահենք
մեր մտքին մէջ, եթէ կը կարդանք որեւէ բանաստեղ-
ծութիւն, Իգնա Սարըասլանէն կամ ուրիշէն:

Եւ

չկարծուի թէ այս քերթուածը հոս վերջացաւ
այս քերթուածը հոս չի վերջանար

Վերադառնանք մեր բանաստեղծին որ կը շարունակէ
նստիլ լճին դիմաց եւ սպասել սիրոյ գոյնին:
Բանաստեղծը այնքան սիրած է սիրոյ գոյնը, որ արդէն
«Սիրոյ Գոյնը» կոչած է իր երրորդ գիրքը: Բայց անկէ
առաջ ան ունէր իր երկրորդ գիրքը, «Քառասմբակ
Սէրերով», որուն մէջ անմիջապէս մեր ուշադրութիւնը
կը գրաւէ Արա Կիւլէրին ձօնուած բանաստեղծութիւն
մը: «Գոյնը Սիրոյ Եւ Կարօտին»: Շատ գեղեցիկ, ինք-
նատիպ միջնուորտ մը ունի այս բանաստեղծութիւնը,
որ թերեւս այն բանալին էր որ բանաստեղծին առջեւ
գուռ մը կը բանար զգացումներու եւ հոգեվիճակներու
գոյները փնտռելու համար:

Վայրի ձիթեմիներու շուքերը կ'իյնան
կ'իյնան ժաշտերուն վրայ

Եւ վերջալոյսը կարօտի գոյնը կ'առնէ հիմա

ուևնի ինչպէս իրական կրակը: Հոգ չէ թէ ինչ գոյն է ան, բայց գոյն մըն է վերջապէս, որ բնութեան գոյններէն մէկ տարբերութիւն միայն ունի. անտեսանելի գոյն է:

Եկէք կարդանք նաեւ այս բանաստեղծութեան վերջին երեք տողերը, որոնք յանկարծ մեզ կը ձերբազատեն աշխարհի բոլոր գոյներէն եւ մեր առջեւ կը բանան խորհրդածութիւններու եւ յուզումի ուրիշ աշխարհ մը: Երեք տողեր պարզապէս, որոնք սակայն ամբողջ բանաստեղծութիւն մը կ'արժեն, կամ ամբողջ վէպ մը կը գրեն մեզի համար:

Մոռցուած վերջալուստի մը նման

Պատմութիւնն ալ

Ընկղմած երազներով լեցուն ծով մըն է

Կ'արժէ որ կրկին ու կրկին կարդանք այս երեք տողերը, որոնց բանաստեղծական զեղեցկութեան դիմաց կրնանք գլխարկ հանել, եթէ պիտի չուզէինք գլխարկ հանել անոնց հոգեբանական, իմաստասիրական ու ընկերաբանական տխուր խորհուրդին առջեւ: Բայց եկէք ընդունինք որ այս վերջին խորհուրդը աւելի ծանր կը կշռէ եւ մեր սիրտերը կ'ուռեցնէ խեղդուած մեր երազներով լեցուն ծովով մը: Երանի՛ թէ բանաստեղծը մեզի չյիշեցնէր այս խորհուրդը: Որովհետեւ տխուր, շատ տխուր է ան:

ՏԱԼԱՄԱՆԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՉ

Քանի որ սկսանք խօսիլ սիրոյ կամ կարօտի գոյներուն մասին, մեր ընթերցումները շարունակելէ առաջ պահ մը պիտի դանդաղինք Իգնա Սարըասլանի «Քառամբակ Սէրեր»ուն մէջէն դուրս բերուած բանաստեղծութեան մը վրայ, որ կոչուեր է «Կարօտի գոյն երգ մը Տալամանի վրայ» եւ որ մեզ պիտի յուզէ մարդասիրական սիրոյ քնքուչ պատկերով մը: Այս քերթուածը գրուած է 1992-ի Օգոստոսին: Կ'երեւի գրուած է Տալամանի բանտին տրուած այցելութենէ մը վերջ: Տրամերգութիւն մը կայ այս բանաստեղծութեան տողերուն մէջ: Եւ պէտք է քերթուածը կարդանք գրեթէ ամբողջութեամբ:

Տալամանի բանտին ճաշարանին մէջ
մենք քանի հոգի էինք - չեմ յիշեր
անոնք քանի հոգի էին - չեմ գիտեր
դուրսը անձրեւ մը կը տեղար
բամպակի արտերուն
նարնջի պարտէզներուն վրայ
շեփոքկագոյն անձրեւ մը կը տեղար
Տալամանի բանտի ճաշարանին մէջ
չեմ յիշեր թէ մենք քանի հոգի էինք
անոնք քանի
նստանք - խօսեցանք - ճաշեցինք
հացին վրայ պղպեղ
սոխին վրայ աղ ցանեցինք
նստանք - խօսեցանք - ճաշեցինք

Պահ մը ընդհատենք ու անդրադառնանք որ բանաստեղծութիւնը սկսաւ պատմումի ու շարագրումի անթերի ու տպաւորիչ կատարելութեամբ: Ամուր կառուցուածք մը, լեզուական կատարելութիւն, բառերու

յաջող ընտրութիւն, բանաստեղծական մթնոլորտ: Եւ այս բոլորին վրայ, բանտարկութեան դատապարտուած մարդոց տրամերգութիւն մը.

Ամէն մէկը իր աշխարհը - իր վէպը պատմեց
իմը ամիս եւս ունիմ
տասներուք ամիս կամ երկու տարի եւս
նստանմ- խօսեցանմ - մաշեցինմ
Ահմէտ Արիֆ մը արտասանեցինմ
մենմ քանի հոգի էինմ - անոնմ քանի
դուրսը թաց կպրուդիին վրայ
բեռնակառքեր հեւ ի հեւ
բամպակ կը կրէին

Անդրադառնանք որ բանաստեղծութիւնը կը շարունակուի նոյն կատարելութեամբ, լեզուական գնացքով մը որ բնաւ չի կաղար, զգացական իրապաշտութեամբ մը որ յուզիչ ըլլալու չափ բնական է: Եւ արդէն յուզիչ յանկերգի մը վերածուեցաւ սա «անոնք քանի հոգի էին, մենք քանի» հարցումը: Իգնա Սարըասլանի ամենայայնող բանաստեղծութիւններէն մէկն է այս.

Ժամերն անցան - գիշերը վրայ հասաւ
Տալամանի բանտին մէջ սէկեահ երգ մը
սէկեահ երգ մը արձագանգեց
նարնջենիներու եւ մոնենիներու
ծաղիկներուն վրայ
երկչոտ անձրեւ մը տեղաց
պահ մը ոմամմ գգացին թէ
երկնակամարին վրայ
աստղ մը
սահեցաւ

իսկ ոմամք կարծեցին թէ
հեռուն
օդակայանը
սաւառնակ մը
վայրէջք կատարեց

Որքան գուսպ է բանաստեղծը: Մեզի բնաւ չի խօսիր բանտարկուած մարդոց տխուր զգացումներուն մասին, չի պատմեր թէ զէպի դուրսի աշխարհը ինչպիսի կարօտ մը ունին սա պահուն այդ արգելափակուած մարդիկը: Չի խօսիր, բայց կը թողու որ մենք հասկնանք: Եւ որպէսզի հասկնանք, կը պատմէ թէ դուրսը որքան գեղեցիկ է մթնոլորտը, որքան գեղեցիկ է նարնջենիներու ու նունենիներու վրայ տեղացող անձրեւը, թէ ինչպէս ալիք առ ալիք կը տարածուի սէկեահ երգ մը: Ասողը որ կը սահի երկնակամարին վրայ, կամ սաւառնակը որ քիչ հեռու՝ օդակայանին մէջ վայրէջք կը կատարէ, ի՞նչ կը նշանակէ, եթէ ոչ կարօտ դուրսի ազատութեան նկատմամբ: Բանտարկեալը այցելուները դրկեւէ վերջ, պիտի կանգնի պատուհանին երկաթներուն առջեւ եւ հոնկէ պիտի նայի զէպի դուրս:

Բայց բանաստեղծը վերջին չորս տող մը ունի, որ փառապսակն է ամբողջ բանաստեղծութեան: Փառասպակ մը, որ կը դրուի ազատութեան ու բանտարկութեան սահմանագծին վրայ եւ կուտայ բանտարկեալը միսիթարելու մարդկային պատգամ.

Մինչ մենք

կարօտի գոյմ երգի մը նման

շերտ մը աստղագարդ երկինք եղանք

բանտարկեալի մը պատուհանին առջեւ

Կը հասկնանք ու գլխարկ կը հանենք այս հաստա-

տումին առջեւ: Այո՛, մենք այցելուներս, Տալամանի բանտի ճաշարանին մէջ, քիչ մը գոնէ մխիթարեցինք անբախտ բանտարկեալները, մենք անոնց պատուհանին առջեւ պահ մը եղանք աստեղազարդ այն երկինքը, որուն կարօտն ունէին անոնք:

Տալամանի բանտին մէջ ...

ՈՂԻՄՊՈՍԻ ԵՐԿՆԱԿԱՍԱՐԻՆ ՏԱԿ

Բանաստեղծը արդէն սկիզբէն ըսաւ մեզի.

Մենք լուսոյ ճառագայթներ
Մենք քամաստեղծներ - սիրոյ երկրպագուներ
Պահ մը եթէ գիծ փոխենմ
Փոքորիկներու մէջ կը խեղդուիմք
Կ'այրիմք անապատներու մէջ

Բարեբախտաբար մեր բանաստեղծը գիծ չէ փոխած, այդ պատճառաւ ալ չէ այրած անապատներու մէջ: Ընդհակառակը բախտը զինքն ու իր բանաստեղծական ապրումները վարձատրած է երկուքին ալ առջեւ բանալով անձայրածիր հին ու նոր աշխարհի մը գունագեղ հորիզոնները:

Իգնա Սարըասլանի բանաստեղծութեան մէջ կայ ամբողջ աշխարհագրութիւն մը, ուր կը տողանցեն անունները թաղամասերու, քաղաքներու եւ երկիրներու: Եւ մեր սիրոյ երկրպագուն, սիրոյ պատգամաւորը յանկարծ կը դառնայ զբօսաշրջիկ, երկրէ երկիր այցելող աշուղ, երգիչ: Միայն մեր ժամանակակից աշխարհին մէջ չէ որ կը շրջի ան: Ան կը բանայ նաեւ պատմութեան փապուղիին դռները եւ կը մտնէ անցեալի մէջ:

Տրովադայի իններորդ ֆադաֆին մէջ
ինը գաճաճներ քու իններորդ յոյսդ գողցան
Եփեսոսի Աստուածամօր արձանին առջև
աղօթք մը ուրուագծուեցաւ շրթներուդ վրայ
Ասփէնտոսի թատրոնին մէջ
մարմարիոնի պէս ցուրտ առանձնութիւն մը
զգացիր

Ես այս տողերը կը քաղեմ «Զբօսաշրջիկին յուշատետր»էն, գրուած 1964-ին: Այս առաջին վեց տողերուն պիտի յաջորդեն ուրիշներ ու բանաստեղծը ման պիտի գայ Պէրկամայի սիւներուն տակ, Մէվլանայի թանգարանին մէջ, առողջութեան ծաղիկներ պիտի քաղէ Ակամեմոնի շերմուկներէն, հետզհետէ պիտի մօտենայ մեր օրերուն, էրտէքի ծովուն մէջ նետուած քրքիշներ պիտի հաւաքէ, գաղտնաբար պիտի զիտէ Սափանճայի լճին մէջ մօրէ մերկ լուսինը, պիտի խմէ Մանավիկաթի ջրվէժին շուրերուն տակ սառած թան մը, եւ Ապանդի լճին եզերքը սիրել բայը պիտի խոնարհէ: Լաւ որ անապատներու մէջ չէ այրած մեր սիրելի բանաստեղծը, որովհետեւ ան մեզի ալ բաժին պիտի հանէ զբօսաշրջիկի իր երջանիկ մեղամաղձոտութենէն: Ահա տողեր ու տողեր հոսկէ-հոսկէ.

Պանտըրմայի մաւամատոյցին վրայ
կապոյտ անձրեւ մը կը մաղուի
Շոգեկառճերու սուլիչը աղաւնիներու
երկնակամարը կը պատէ

կամ

էրտէֆի ծովափը մաւակներ կ'օրօրուիմ
Եկուր

Սկուր - մստիմֆ - պտտիմֆ

Սկուր - լոդամֆ դէպի Ջէյթ-ինատա

Սկուր

Սկուր - քարձրամամֆ միմչեւ Ուխտի Բլուրը

Կը սկսինք անդրադառնալ որ բանաստեղծը կը խօսի ո՛չ թէ երեւակայութեամբ, այլ ականատես մարդու փորձառութեամբ: Դրախտային այս վայրերը անձանօթ չեն իրեն: Ան շնչած է այս վայրերուն մթնոլորտը ու հաղորդուած է անոնցմէ իւրաքանչիւրին կախարդական գեղեցկութեան հետ, թէեւ այդ գեղեցկութիւնները երբեմն ունին իրենց տառապալից անցեալը.

Մուտանիայի հրապարակիմ վրայ

Մեղմ հով մը Նահատակներու Յուշարձանը

կը շոյէ

Մարմարայի ալիքները փրփուր փրփուր

կը մահանամ խնամարերու վրայ

Մուտանիայի բոլոր ձիթ-ենիները ծակ ծակ

Տառապամֆ են տեսեր

Պատերազմ- փշաթել - վառօդ - արիւմ են տեսեր

Կեանքը ինչ է

կամ ինչ չէ

ձիթ-ենիմ ձեզի թող պատմէ

Բայց անցեալի պատմութիւնը միայն տառապանքի կամ ողբերգութեան պատմութիւն չէ: Ձիթենիներն ալ արդէն մոռցած են ինչ որ տեսան անցեալի մէջ: Չէ՞ որ անոնք ամէն տարի նոր պտուղ կուտան մեզի: Դարձնենք էջը եւ տեսնենք թէ ուր գնաց եւ ինչ կ'ընէ հիմա մեր զբօսաշրջիկ ու սիրահար բանաստեղծը.

Աթենասի մեհեանիմ մէջ քեզի պիտի սպասեմ
 այս գիշեր
 Ողիմպոսի երկնակամարիմ տակ բոլոր գանգակները
 պիտի դողանջնմ
 Որփէնսի լնարը սիրոյ հիմ հէֆեաթ մը
 պիտի պատմէ
 Յաւերժահարսերու սրինգները քու գալուստդ
 պիտի աւետեն
 Պլպլացող աստղերուն տակ տարփանքի արձանը
 պիտի կերտենք
 Աթենասի մեհեանիմ մէջ քեզի պիտի սպասեմ
 այս գիշեր

Երբ կը կարգաք այս տողերը, արդէն չէ՞ք լսեր զան-
 գակները, որոնք կը դողանջեն Ողիմպոսի երկնա-
 կամարին տակ:

ՍԻՐՈՅ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Իզնա Սարըասլանի առաջին բանաստեղծութիւնները
 իրենց ներշնչումը կ'առնէին այն խորհրդաւոր սիրե-
 լիէն, որ Լօ կը կոչուէր: Լօ անունը կը խորհրդանշէր
 սէր, ապրելու երջանկութիւն, կեանքի յաւերժական
 ընկերուհի, նաեւ երաժշտութիւն ու բանաստեղ-
 ծութիւն: Մեր սիրելի բանաստեղծը իր գրած իւրաքան-
 չիւր տողին ետին «Լօ» մը կ'ուզէր աւելցնել, որպէսզի
 անոր նուիրեր յաւերժական ներկայութիւն մը:

Հիմա ահաւասիկ բանաստեղծութիւն մը, որուն
 խորագիրն իսկ իրարու հետ կ'ամուսնացնէ սէրը, բա-
 նաստեղծութիւնն ու երաժշտութիւնը. «Հորիզոններու
 նման անսահման էինք Լօ»: Այս շատ զեղեցիկ բա-
 նաստեղծութենէն լայն մէջբերումներ պիտի ընենք,
 որպէսզի մենք ալ բանաստեղծին ու իր սիրելի Լօ-ին

հետ միասին ճախրենք պատմութեան ու աշխարհագրութեան հրաշալիքներէն ներս, մէկ ժամանակէն ցտկելով դէպի միւս ժամանակը, մէկ քաղաքէն թռելով դէպի միւս քաղաքը: Որպէսզի մենք ալ ապրինք սիրոյ գեղեցկութիւնը, որպէսզի մենք ալ բաժին մը ստանանք հորիզոններու անսահմանութենէն, եւ որպէսզի մենք ալ ի վերջոյ տխրօրէն անդրադառնանք՝ որ աշխարհները կը մնան, բայց սէրերն ու մարդիկը կը ճզմուին-կ'անհետանան ժամանակ կոչուած հրէշին անխիղճ գլանին տակ:

Հալիֆարնասի քարայրին մէջ - ոչխարի
մորթի մը վրայ
Սիրոյ քեանկանութիւնը սերտեցիմք վանկ - վանկ
Մինչ ածուխ մագերուդ դեռ մկրատ
չէր դպած Լօ
Շրթներէդ խնձորի բոյր մը կը տարածուէր
ալիք ալիք

Աղեքսանդրիոյ մէջ մամիշակագոյն գեփիւտ մը
կը փչէր
Ոսկի քաժակներէն սիրոյ նեկտարը կ'ըմպէիմք Լօ
Մինչ Միջերկրականը մեր ոտներուն տակ
կը մահամար փրփուր փրփուր
Եւ դարերու անհունը կը շոգիանար տարփանքի
բոցերուն մէջ

Իգնա Սարըասլան գիտէ որոշ հմայք մը դնել բոլոր
այն տեղանուններուն, բոլոր այն քաղաքներուն մէջ,
որոնց կ'այցելէ իրեն թեւանցուկ ունենալով իր Լօն:
Քաղաքներուն անունները բանաստեղծութիւն կը
դառնան այս աշխարհագրութեան մէջ:

Աննման գարուն մը կը ծաղկէր կրէտէի
երկնակամարին տակ
Եւ լուսինը մացառներուն մէջէն աչք կը քթէր
Մինչ Քնոսոսի պալատին սիւններուն տակ
Մեր սէրը անթառամ հէքեաթ մըն էր Լօ

Կղէնպատրայի գերիները քար կը կրէին բուրգերուն
Մինչ ես քու գերիդ - մագերուդ կառչած
չէի ձգեր քեզ
Ճակատագիրս մակատագրիդ փակցուած
Սիրտս քեզի համար կը տրոփէր -
արիւնս քեզի համար կ'նոար Լօ

Բայց դարերը ծիծեռնակ եղան թելածեցին -
անհետացան
Վարդի թերթիկ մը դարձան թառամեցան -
ոչնչացան
Դուն անմահութեամ - ես մեմութեան հետ
գլուխ գլխի մնացինք
Մինչդեռ հորիզոններու միման անսահման էինք Լօ

Օր մը անպատիւ մէջ արմաւենիի մը տակ
Պանդուխտ սրինգի մը դալկահար ձայնը երբ լսես
Այս բոլորը գոնէ պահ մը յիշէ - եւ յետոյ
Հորիզոններու միման անսահման երազ մըն է եղեր
- ըսէ Լօ

Ահա որ բանաստեղծը անգամ մը եւս մեզի յիշեցուց
որ Լօ-ն անմահ է, սէրը անմահ է, մինչդեռ մենք դա-
տապարտուած ենք օր մը հրաժեշտ առնելու անկէ եւ
մեր առանձնութեան հետ գլուխ գլխի մնալու: Բա-
նաստեղծը ինքն իրեն պիտի հակասէ՞ արդեօք երբ ուրիշ
բանաստեղծութեան մը մէջ պիտի ազդողակէ.

Երեւակայութիւնը սահմամ չունի
Սէրս ալ վախճամ չունի Լօ՛

Երեւակայութիւնը երազ է
Սէրս սշմարտութիւն Լօ՛

Բայց պահ մը յիշենք որ վերի բանաստեղծութիւնը կարդալու ընթացքին մէկ ուսումնով անցանք պատմութեան հետ նոյնացած քաղաքներէ, Հալիքարնասէ, Աղեքսանդրիայէ, Կրէտէէ, Քնոսոսէ, քաղաքներ որոնք այստեղ վերածուեցան սիրոյ քաղաքներու: Իգնա Սարլասլանի վերջին շրջանի քերթողական արուեստը կը սաւառնի սիրոյ այսպիսի անհամար քաղաքներու մեղամաղձոտ մթնոլորտներուն մէջ: Քաղաքներ ու երկիրներ, հռու կամ մօտիկ: Գաթանկա, Տալաման, Եգէական, Վենետիկ, Փարիզ կամ Մարսէյլ, Երուսաղէմ, Եփեսոս, Պէրկամա, կամ տակաւին Չէնկէլզիւղ, Տիւտէն, Մանապլիաթ, Քուլէտիպի, Օրթագիւղ: Բայց ամէն բանէ առաջ Սիրոյ զբօսաշրջութիւն մըն է այս, որ կը կատարուի ըստ երեւոյթին մէկ հոգիի անցազրով եւ որ սակայն իրեն հետ կը տանի երկու հոգի. բանաստեղծն ու իր «Լօ»ն:

ՅՈՒՇ ԺԱՌԱՆԳ

Իգնա Սարլասլանի համար զգայնութիւններն ու հոգեվիճակները ունին իրենց սեփական գոյները: Մենք չենք տեսներ այդ գոյները, բայց ինք կը տեսնէ: Տեսած էր արդէն «սիրոյ» գոյնը: Տեսած էր «կարօտ»ին գոյնը: Հիմա կը տեսնէ նաեւ «լուսթեան» գոյնը: Մայրամուտի գոյնն ունի ան, այդ լուսթիւնը: Կարդանք ինը տողերէ բաղկացեալ սա սիրուն բանաստեղծութիւնը.

Լուռ մայրամուտ մըն է առանձնութիւնը
կամ
մայրամուտի գոյն լուութիւն մը

թէ ինչու
չեմ գիտեր
բայց միշտ յիշատակի մը վրայ
կը փշրուի փրփուրը ալիքներուն

Վիրաւոր ամպ մը կը տեղայ հիմա
դափնիներու եւ սէրերու վրայ

Պատկերը գեղեցկութեան ու մելամաղձոտութեան
կատարին կը հասնի վերջին երկու տողերով: Վիրաւոր
ամպը: Մենք բնաւ տեսած էինք վիրաւոր ամպ մը:
Ի՞նչպէս կ'ըլլայ վիրաւոր ամպը: Կը թուի թէ վիրաւոր
ամպը այն մէկն է որ չի կրնար պահել իր ամբողջա-
կանութիւնը, չի կրնար մեր վերեւէն անցնիլ երթալ
ճիշդ այնպէս ինչպէս եկած էր: Ան վիրաւոր է եւ մասնիկ
մը վար պիտի թողու իր մարմնէն: Անճրե՞ւն է այդ
մասնիկը: Անպայման: Վիրաւոր ամպը անճրելի մը
պիտի վերածուի եւ պիտի տեղայ դափնիներու ու սէ-
րերու վրայ, այսինքն մեր բանաստեղծին երկու նախա-
սիրութիւններուն վրայ: Դափնի եւ սէր: Երկուքն ալ
պիտի թարմանան այդ անճրելով, երկուքն ալ պիտի
կենդանանան: Վիրաւոր ամպը բան մը պիտի կորսնցնէ
իր մարմնէն, թերեւս ալ ամբողջ իր մարմինը պիտի
կորսնցնէ, բայց ատոր փոխարէն դափնին ու սէրը նոր
աւելչ պիտի ստանան, ապրելու նոր երջանկութիւն եւ
ոյժ պիտի շահին:

Իգնա Սարըասլանի սիրոյ զբօսաշրջութիւնը երբեմն
առաջատու կը բանայ դէպի մեր մօտիկ անցեալի օրերը:
Այն ատեն կը զգանք որ անոր սիրտը պայթելու աս-

տիճան ուռած է կարօտներով:

Եւ այդ օրերում
Պետրոս Գուլումնեան - Ժիրայր Չարժնեան -
Նուրհան Ռուշան
օփերայի բեմին վրայ կ'երգէին

Ահաւասիկ, յանկարծ նոր վարագոյր մը բացուեցաւ
մեր անցեալի կեանքին վրայ: Անձեր, որոնք մոռցուած
էին, յանկարծ շարժեցան, կարծես սիրտ եւ մարմին
առին, եկան լեցնել մեր զգացական աշխարհին մէջ
բացուած մոռացումի փոսերը: Երեք անմոռանալի եր-
գիչներ՝ անակնկալ կերպով բանաստեղծութիւն դար-
ձան: Եւ միայն անո՞նք:

Այդ օրերում
էսաեանի պատերում մէջ
Հերմինէ Գալուստեանի
իշխող ձայնը կ'արձագանգէր
Կեդրոնականի մէջ Ջոհական
իւր «Լուսաւորչի Կանթեղը»
աշակերտներում կը սորվեցնէր
Գուրգէն Թրեմց
Ռումէլիհիսարի քարձումքին վրայ
ծովահայեաց իր տունէն
Վոսփոքի մաւերը կը դիտէր
Եւ Մնձուրին դեռ
կը բնակէր
էշրէֆ էֆէնտի փողոցին վերջին տան մէջ

Պատկերը լայնատարած է եւ ան ամէն անկիւնէ նոր
դէմք մը կը պողթկացնէ դէպի մեր յիշողութեան
պատերը: Նոր սերունդի համար ի՞նչ կը նշանակեն

այս անունները: Թերեւս ոչինչ: Բայց բանաստեղծու-
թիւնը ինքնին կը դառնայ ընտանեկան ալպոմ, յուշա-
տետր, յուշամատեան, նոյնիսկ պատմութեան գիրք:
Առանց դադրելու բանաստեղծութիւն ըլլալէ: Եւ թէ՛
յուզիչ բանաստեղծութիւն: Որովհետեւ մէկ կողմէ կը
յուզուինք այդ անունները յիշելով, մէկ կողմէ ալ մենք
մեզի կը բարկանանք զանոնք մոռցած ըլլալու մեր
ապերախտութեան համար: Բայց կեանքը այս չէ՞:
Կեանքը մոռացում չէ՞: Եւ գրականութեան պարտա-
կանութիւնը ի՞նչ է եթէ ոչ մոռցուածը յիշեցնել
արուեստի ճամբով:

Այդ օրերուն

Անգարայի մէջ Մարթաեան

«Համայնապատկեր»ը կը պատրաստէր

եւ կը յիշէ՞՞ք

սիրոյ սեղաններու խօսնակը Գրիգոր Փափագեան

«Դու անմեղ ես

քո աչերն են մեղաւոր»ը կ'երգէր

Բանաստեղծը դեռ ինչե՛ր կը յիշէ ու կը յիշեցնէ երեք
էջնոց սա յուզիչ բանաստեղծութեան մէջ: Կը յիշեցնէ
որպէսզի վերջաւորութեան աւաղէ.

Այդ օրերէն ինժի

այդ օրերէն մեզի

որքան շատ քան

կամ որքան քիչ քան մնաց

Այդ բոլոր մահացած անուններէն

այդ բոլոր անմահացած անուններէն

տիեզերք մը յուշ ժառանգ մնաց:

Այսպէս՝ Իզնա Սարըասլանի հաղորդական գրիչը մեզ

ալ իրեն հետ կ'առնէ-կը տանի իր մեղամաղձոտ ու վիպապաշտ ապրումներէն ներս:

ՕՐԹԱԳԻՒՂԸ ԹԱՆԿՕ ՄԵՆ ԷՐ

Ըսինք ու կրկնենք. Իգնա Սարըասլանի հաղորդական գրիչը մեզ ալ իրեն հետ կ'առնէ-կը տանի իր մեղամաղձոտ ու վիպապաշտ ապրումներէն ներս: Այդ ապրումները հիմա կը կեդրոնանան հին յուշերու վրայ, որպէս տեղ ու որպէս դէմք: Դէպի այդ հին վայրերն ու դէմքերը կ'առաջնորդէ ան, որովհետեւ, հիմա որ ան արդէն անցած է բանաստեղծական երկարամեայ աշխատանքի մը ընդարձակ տարածութեան վրայէն, չի կրնար ետ չնայիլ եւ չըսել. «Թէ ի՞նչպէս կրնամ մոռնալ»: Ի՞նչպէս կրնար մոռնալ Պէյօղլուի էմէք Շարժանկարի փողոցին մէջ Պապ Գաֆէթէրիան, երբեմնի նշանաւոր սէլֆ-սէրվիս ճաշարանը, այդ ճաշարանին մէջ ապսպրուած շնիցէլի մը վրայ շերտ մը լեմոնը, պուտ մը կարագը, եւ Բուլլինկ Սթոնսի, Էրվէ Վիլարի, լուսահոգի Մարգ Արեանի երգերը որոնք կը սփռուէին այդ ճաշարանին մէջ: Ի՞նչպէս կրնար մոռնալ Եշիլչամի փողոցը, ուր Ուէստ Սայտ Սթորին դիտելու համար պոչի կը մտնէր, մէկ կողմէ վերյիշելով անհետացած սէրերը, միւս կողմէ դնելով ապագայ սէրերու շաղախը: Ի՞նչպէս կրնար մոռնալ երբեմնի նշանաւոր Քլէօպ 12 զբօսարանը, ուր Շաբաթ օրերը կ'երթար ունկնդրելու Շէվքէթ Ուղուրլուէրը կամ Թանժու Օզանը, եւ ուր անպայման կ'ապսպրէր բաժակ մը վէրմուլթ: Բանաստեղծին սիրտը կ'ուռի այս հին տեղանուններով ու հին դէմքերով: Իգնա Սարըասլանի բանաստեղծութիւնները յանկարծ կը շահին այն ինչ որ գրականութեան մէջ «տեղական գոյն» կը կոչուի: Տեղւոյն մասնայատուկ գոյներն են անոնք, գոյներ՝ որոնք տակաւին կը յամե-

նան այդ տեղերուն վրայ ապրած հազարաւոր մարդոց յիշողութեան մէջ: Տեղական այդ գոյնով կը ներկուի նաեւ մեզի այնքան սիրելի Օրթագիւղը որ բանաստեղծին երեւակայութեան մէջ կը դադրի թաղամաս մը ըլլալէ ու կը դառնայ բանաստեղծութիւն, երաժշտութիւն, «հին թանկօ մը»:

Հարսի պէս - կարապի պէս նաւ մըն էր
71 թիւ Հալասը որ կ'անցնէր
Բարձրախօսէն Թիմօ Ռոսի մը կ'արձագանգէր
71 թիւ Հալասն էր որ կ'անցնէր
Այոս Ֆոքաս եկեղեցւոյ զանգակատան վրայ
Ճայ մը աչքերը ձիւանեան դեղարանին յառած
Կիսափուլ պարիսպի մը նման կը յօրանջէր
Մէհմէտաֆիին սրնարանին մէջ
Ծխախոտի բանուորները կը հաւաքուէին
Եւ վերջալոյսին Վասիլի ծաղկանոցէն
Համբոյրի պէս գեղեցիկ
Միմոզայի բոյրեր կը տարածուէին

Տեսէք թէ մեր բանաստեղծը հին թանկոյի մը վերածուած Օրթագիւղին մասին յանկարծ որքան շատ տեղեկութիւն տուաւ սա կարօտաթաթախ 12 բանաստեղծական տողերուն մէջ: 71 թիւ Հալաս չոզենաւ, Այոս Ֆոքաս եկեղեցին, ձիւանեան դեղարանը, Մէհմէտաքիի սրճարանը, ծխախոտի գործարան մը, եւ այդ գործարանին բանուորները, Վասիլի ծաղկանոցը: Ի՞նչ կը կարծէք, ասոնք իր մտքին մէջ կայի՞ն արդէն, թէ ոչ բանաստեղծը, ինքզինք կարօտներու այս ուտումին յանճնելէ առաջ գացած է ու տեղւոյն վրայ ուսումնասիրութիւններ ըրած, պատմութեան էջերը բացած է: Կրնաք վստահ ըլլալ որ իւրաքանչիւր մանրամասնութիւն արդիւնք է տենդազին պրպտումի մը:

Օրթագիւղի մզկիթի շինութեան
Զարօ Աղան քար կը կրէր
Ժամանակին տաճն ու պաղը շալկած
Զարօ Աղան քար կը կրէր թէ դար կը կրէր
- ոչ ոք գիտէր -

Հարսի պէս - կարապի պէս մաւ մըն էր
71 թիւ Հալասը որ կ'անցնէր
Նէմիպ ճէլալ մը - Ֆէհմի էկէ մը կ'արձագանգէր
71 թիւ Հալասն էր որ կ'անցնէր
Եւ Օրթագիւղը հառաչանք մըն էր
Հառաչանք մը որ ձեր ձեռքէն
ձեր սրտէն կը քոնէր
կը քոնէր ու կը տանէր

Ու այդ հառաչանքին մէջ փսփսուքի պէս ահա կ'ար-
տասանուին անուններ հայկական, որոնք յանկարծ
դուրս կուգան ո՛վ գիտէ որ պատմութեան գիրքէն,
ո՛վ գիտէ որ յօդուածէն, յուշագրութեանէն:

Յակոբ Պէյ Պալեաններու ապարանքին մէջ
Տիգրան Զուխանեան Շուպէրթ մը կը մուագէր
«Նորատի աղջիկը եւ մահը»
Թովմաս Թէրզեան - Խրիմեան - Խորէն Նարպէյ
Նստած կ'ունկնդրէին
Փէմպէ հանըմ - Յակոբ Պէյին կողակիցը -
Անհամբեր կը սպասէր
Որպէսզի ինչ վերջ
Մրգանոյ՝ հրամցնէր հիւրերուն

Եւ հիմա այլեւս միայն Օրթագիւղը չէ որ հին թանկոյի
մը կը վերածուի: Ամբողջ բանաստեղծութիւնն է: Եւ
այլեւս յանկերգի իր վերջին կայարանին կը հասնի
հարսի կամ կարապի նման 71 թիւ Հալաս նաւը, որ

կը նոյնանայ Օրթոգիւղի հետ: Եւ այս գեղեցիկ բանաստեղծութիւնը կը վերջանայ սա կարօտալից մթնոլորտին մէջ, որուն վրայ մենք ոչի՛նչ պիտի աւելցնենք, որպէսզի չխանգարենք բանաստեղծական գեղեցկութեան սրբութիւնը.

Հարսի պէս

կարապի պէս մաւ մըն է հիմա Օրթագիւղը
Առագաստները պարգած
պատմութեան եւ վոսփոքի հովերում

Հարսի պէս

կարապի պէս մաւ մըն է հիմա Օրթագիւղը
Որ կ'այցելէ մէկ մէկ
լճուած մաւամտոյցները մեր յիշատակներում

ՄԱՅՐԵՐԸ ՉԵՆ ՄԵՌՆԻՐ

Իգնա Սարըասլանի բանաստեղծութեան մէջ յաճախ չէ որ գրական ցնցիչ գիւտերու հետ դէմ յանդիման կը մնանք: Մեր բանաստեղծը բանաստեղծական տպաւորիչ պատկերներու ու զգայնութիւններու որսորդն է աւելի, քան թէ գրական գիւտերու: Իր նպատակը ձեզ ցնցել չէ անակնկալներով, կամ եթէ ցնցել է՝ ան կ'ուզէ ձեզ ցնցել իր նկարագրած տեսարաններով, իր փոխանցած զգայնութիւններով, նաեւ այն անձնական անուններով, զորս կը յիշատակէ: Այս վերջին կէտը հետաքրքրական է: Բանաստեղծութիւններու մէջ ոչի՛նչ այնքան վտանգաւոր է, քան անձնական անուններու յիշատակութիւնը, որովհետեւ բանաստեղծութիւնը յանկարծ կրնայ կորսնցնել իր բանաստեղծական մթնո-

լորտը եւ կրնայ իյնալ արձակի, հրապարակագրութեան կամ պատմութեան տափակութեան մէջ: Այս վտանգը գոյութիւն չունի Իգնա Սարըասլանի համար: Ան անհամար անձնական անուններ յուշելով հանդերձ, իր քերթողութիւնը գիտէ պահել արուեստի ամենանուրբ հաւասարակշռութեան վրայ: Որովհետեւ ան գիտէ անձնական անուններն ալ տեղաւորել թաղամասի մը, քաղաքի մը կամ պատմական վայրի մը բանաստեղծական խորհուրդին մէջ:

Բայց, որքան ալ ցանցառ ըլլան, ուշադիր ընթերցողները հոս ու հոն պիտի հանդիպին գրական ճարտար գիւտերու, մինչեւ այսօր հաւանաբար ուրիշներու կողմէ չըսուած խօսքերու, կամ ըսելաճեւերու՝ որոնք կրնան առածներու կարգ անցնիլ: Օրինակ, ան յանկարծ, միայն երեք տողերէ բաղկացեալ բանաստեղծութեան մը մէջ մեզի կուտայ «հորիզոն»ին բացատրութիւնը:

Երկինքը ծնրադրեց

Ծովուն հետ համբուրուեցաւ

Համբոյրը հորիզոն կոչեցիմ

Կրնանք արձակով կրկնել. հորիզոնը ծովուն ու երկնքին համբուրուիլն է: Բայց միայն այսքա՞ն: Պիտի խնդրենք որ ուշադիր ըլլաք «ծնրադրեց» բառին: Երկինքն է որ կը ծնրադրէ ծովը համբուրելու համար: Ծովը չէ որ ոստում մը կ'ընէ զէպի երկինք: Սիրողին խոնարհութիւնը չե՞նք կրնար տեսնել այս պատկերին մէջ: Բայց կը տեսնենք ամէն բանէ առաջ գրական գիւտը որ համբոյր մը ստեղծել կուտայ երկնքին ու ծովուն համբուրուելէն:

Ահաւասիկ երկու ուրիշ ինքնատիպ գիւտեր, որոնք «մահ»ուան տեսակները կը նկարագրեն.

Գոյն մը կար ատենօ՞ք
նւ որովհենտնւ
ուրիշ գոյն մը չսիրեց ընաւ
մեռաւ

կամ

Օր մըն ալ
անկիւնը
ձանձրացաւ իր գիծերէն
վնասեց գանձնք
նւ մեռաւ

Կրցա՞նք տեսնել ինքնատիպ այն երկու գիւտերը զորս հոս ըրած է բանաստեղծը: Առաջինը մեզի կը յիշեցնէ թէ բացարձակ առանձնութիւն չկայ ո՛չ մարդուն, ոչ ալ գոյնին համար: Եթէ չէք սիրեր ուրիշ մարդ մը, կամ ուրիշ գոյն մը, մարդ կամ գոյն, չէք կրնար ապրիլ: Երկրորդը շատ աւելի ինքնատիպ գիւտ մըն է: Իւրաքանչիւր առարկայ կամ գոյութիւն ունի իր բաղկացուցիչ կենսատարրերը, կամ սահմանագիծերը, չի կրնար ինքզինք անջատել անոնցմէ: Երկրաչափութեան մէջ կրնա՞նք երեւակայել շրջանակ մը, որ իր շրջագիծը կը մերժէ, քառակուսի մը որ զինքը կազմող չորս գիծերը կը վնասէ:

Ահա ուրիշ գիւտ մը, որ դժուար նշմարելի է, որովհետեւ թաքնուած է բանաստեղծական ու հոգեբանական ուժեղ պատկերի մը ետին:

Երգի մը միւսն պիտի ծաղկիմք մոր գարունով
Սւ առաջին համրոյրին համը պիտի առնենք
Վերջին համրոյրին մէջ անգամ

Եթէ մարդուս հոգիին խորը կայ զգացում մը որ անձանձրոյթ կերպով կը վերակենդանանայ հարիւր անգամ, հարիւր անգամ իսկ մեռնելէ վերջ դարձեալ յարութիւն կ'առնէ, սէ՛րն է այդ, սիրուածը համբուրելու մղումն է: Եւ վերջին համբոյրն անգամ ունի առաջին համբոյրին համը: Քանի՞ հոգի կրնայ հակառակը պնդել:

Մայրերու նուիրուած յուզիչ բանաստեղծութեան մը վերջին տողերուն մէջ ալ Իգնա Սարըասլան ինքզինք կը յանձնէ բանաստեղծական խոյանքի մը, որ իր ուժը կ'առնէ առածի կարգ անցնելու արժանի ասութեանէ մը, գրական ինքնատիպ գիւտէ մը:

Մայրերը չեն մեռնիր - հողիմ տակ չեն մտներ
Ծիր-կաթիմներու մէջ կէտ մը կ'ըլլամ փալփուում
Գիշերը մեր սնարիմ վրայ կը հսկեն
Ծիր-կաթիմներու մէջ աստղ կ'ըլլամ -
գարում կ'ըլլամ
Ծիր-կաթիմներու մէջ թիթեռնիկ մը յաւերժական

Մայրերը չեն մեռնիր: Մայրերը յաւերժօրէն կը հսկեն իրենց գաւակներուն սնարին վրայ: Մայրերը յաւերժօրէն կ'աղօթեն իրենց գաւակներուն համար: Դարձեալ կրնանք հարցնել: Քանի՞ հոգի հակառակը պիտի պնդէ:

ՄԵՌՆԻԼ ԳԱՐՆԱՆ

Կեանքի եւ մահուան խորհուրդը այն սպանիչ թոյնն է որ կը լղրճէ սիրահար մարդուն երջանկութիւնը: Օ՛այդ մահուան զաղափարը: Դամոկլլեան սուրը՝ մեր գլխուն վերեւ:

Մեր բանաստեղծը օր մը իր սիրականին հարց կուտար բանաստեղծութեան մը վերջին երկու տողերուն մէջ.

Արդեօ՞ք օր մը պիտի յիշես
թէ որքան դժուար էր մենմիլ գարնան

Տխուր է այս հարցումը, բայց շատ գեղեցիկ, շատ բանաստեղծական: Մահը սարսափազդու եւ դժուար ընդունելի է: Բայց հապա երբ ան կուգայ գարնա՞ն: Այն պահուն երբ յաւերժական երկիրը կը սկսի ցնծալ նոր կեանք մը ապրելու հեռապատկերով: Երկիրը յաւերժութիւն չէ՞:

Իզնա Սարըասլան քանի մը անգամ իր գրիչը թաթխած է «յաւերժութեան» կաղամարին մէջ: Յաւերժութիւն բառը Իզնա Սարըասլանի սիրելի բառերէն մէկն է: Մեր բանաստեղծը զայն միացուցած է քանի մը նոյնքան սիրելի բառերու, ինչպէս ազատութիւն, խաղաղութիւն: Երբ կը խօսուի ազատութեան, խաղաղութեան մասին, յայտնի կը դառնայ որ այլեւս դուրս եկած ենք անհատական կեանքի նեղ սահմաններէն եւ մուտք գործած ենք ընկերային ու ազգային կեանքի ոլորտներէն ներս: Դեռ 1967ին մեր բանաստեղծը կեանքի դաժան ճշմարտութիւնը մկրտած էր «ազատութիւն» անունով: Արդեօք քիչ մը դժուար հասկնալի է: Թերեւս: Բայց կարդանք.

Կռշկոռ կապած մատներով
Կռշկոռ կապած ուղեղները փշրէ
Ժանգը - փռշիմ - սարդը ոչնչացուր
Տգիտութեան խրտուիլակները մէկ - մէկ քանդէ
Մաքառէ - տմէ - պայթարէ
Ալ յաղթանակը քուկդ է
Ինչու որ
Ճշմարտութեան անունը ազատութիւն դրի

Բանաստեղծը այս մասին բան չ'ըսեր մեզի, բայց

մենք կրնանք դէպի հակառակ շրջել վերջին տողը եւ ըսել. ազատութեան անունը ճշմարտութիւն դրի: Որովհետեւ ազատութեան պսակը ճշմարտութիւններու հաւատացող մարդոց լուսապսակն է: Լոյսի փարոսը: Լոյսի փարոս որ յաւերժական է եւ կը նոյնանայ մեր բանաստեղծին շատ սիրելի բառին՝ Յաւերժութեան հետ: Եկէք կարդանք «Համբոյր յաւերժութեան» անուն բանաստեղծութեան վերջին տողերը.

Սիրտս - ալ դուն գոհը չես
առանձնութեան խաչմերուկներուն
յուսախարութեան գահավէժներուն

Սիրտս - դուն
ցեղերու ստեղնաշարին վրայ
խաղաղութեան երգն եւ վառ

Սիրտս - դուն
ազատութեան բաժակին մէջ
յաւերժութեան համբոյրն եւ բորբ

Բայց թողունք որ բանաստեղծը փնտռէ թէ սա մեր անցողական ու մահկանացու կեանքին մէջ ի՞նչ է յաւերժութիւնը: Բանաստեղծը փնտռած է այս հարցումին պատասխանը եւ հոնկէ մեկնելով գրած է շատ գեղեցիկ բանաստեղծութիւն մը: Այս բանաստեղծութեան մէջ ան արուեստագէտի գեղումներով կը պատմէ թէ ինչպէս սիրահար մարդը եւ իր սիրականը իրենց կեանքը միացուցին, մէկը սպիտակ իր հագուստին մէջ հարս, միւսը սեւերու մէջ փեսայ, թէ ինչպէս անցան կամարի մը տակէն, մինչ վարդի թերթիկներ կը թափէին իրենց վրայ, թէ ինչպէս իրենք այդ երջանիկ հանգրուանին վրայ դարձան երկու տատրակներ,

որոնք սկսան թեւածել դէպի հորիզոն: Բայց ...
Թէեւ

մարգագետիններու կամանչին վրայ
իրերահիւս երկու բաղեղ պիտի ըլլալինմք

Թէեւ

աստեղագարդ երկնակամարներուն վրայ
ոստոստուն կապոյտ երագ պիտի ըլլալինմք

Ձիւնի փաթիլ եղանմ
հալեցանք կեանքի հնոցին մէջ
մաշեցանք թել թել
սպառեցանք կաթիլ կաթիլ
լմնցանք ումպ ումպ

Մեր սրուրը յաւերժութիւն կոչեցին

Քիչ մը տխուր է, բայց հոգ չէ: Ա՛յս է ահաւասիկ
յաւերժութիւնը: Այն մրուրը, որ կը մնայ կեանքի
բաժակին յատակը: Յաւերժութիւնն է ան: Մեզմէ
անկախ: Մեզմէ ազատ: Ա՛ն է որ մեզ պիտի տանի
դէպի յաջորդ սերունդները, այդ յաջորդ սերունդները
գիտնան կամ չգիտնան, այդ մրուրը տեսնեն կամ
չտեսնեն: Որովհետեւ բանաստեղծը կը հաւատայ, եւ
մենք ալ կը հաւատանք, որ չես գիտեր ուրտեղ անպայ-
ման բան մը պիտի մնայ կեանքի մեր օրերէն, մեր
հին երջանկութիւններէն, հարսանեկան հազուատէն,
երգհոններու երգերէն, վարդի թերթիկներէն եւ ամէն
բանէ: Եթէ կայ յաւերժութիւն մը, մենք ալ անպայման
մեր համեստ ու անտեսանելի տեղը պիտի ունենանք
այդ յաւերժութեան մէջ, ինչպէս ունեցան մեր պա-
պերը, մեր նախնիները:

Կը հաւատանք:

ՅԱԽԵՐԺՈՒԹԵԱՆ ԾԱՌ ԵՂԱՆՔ

Իգնա Սարըասլանի բանաստեղծական աշխարհէն չենք կրնար հրաժեշտ առնել, առանց անգամ մըն ալ յիշելու իր բանաստեղծութիւններէն այն մէկը, որ կոչուեցաւ «Մենք յաւերժութեան ծառը եղանք»: 1979 թուականի Օգոստոս ամսուան մէջ երբ կը գրէր այս բանաստեղծութիւնը, անտարակոյս ան չէր երեւակայեր թէ այս բանաստեղծութիւնը յառաջիկայ քանի մը տարիներու ընթացքին ասմունքողներու ու աշակերտներու կողմէ թերեւս հարիւր անգամ պիտի սրտասանուէր բեմերէն: Դժուար չէ հասկնալ թէ Ինչո՞ւ այս բանաստեղծութիւնը կը գատուէր Իգնա Սարըասլանի միւս բանաստեղծութիւններէն ու ոստում մը կ'ընէր դէպի բեմ, հոնկէ ալ դէպի զանգուածներու սիրտը: Մէկուկէս էջնոց այս բանաստեղծութեան մէջ քանի մը դարերու պատմութիւնը կար ամբողջ ժողովուրդի մը: Նաեւ ժողովուրդի մը իւրաքանչիւր զաւկին: Անկասկած մեր բանաստեղծը այս մէկ հատիկ բանաստեղծութենէն շատ աւելի գեղեցիկ, շատ աւելի վիպային, շատ աւելի «բանաստեղծական» բանաստեղծութիւններ ունէր, որոնք եւս պէտք է բեմ բարձրանային, բայց «մենք յաւերժութեան ծառը եղանք»ն էր որ կը դառնար յաւերժութեան ծառ մը Իգնա Սարըասլանի բանաստեղծական վաստակին մէջ: Ինչո՞ւ: Որովհետեւ

տառապանքներ - հալածանքներ - մահեր տեսանք
պատառ մը հացի սիրոյն

պուտ մը երջանկութեան համար պայքարեցանք
կարօտներ - առանձնութիւններ

սէրեր - անժուռ գիշերներ

յուսախարութիւններ տեսանք

դարերու հոսանքն ի վեր

դարերու հոսանքն ի վար մաւարկեցինք
փոթորիկները մեզ նզմեցին ու անցան

Այստեղ բանաստեղծութիւնը իր տեղը թողած է ուրիշ
զգայնութեան մը: Մեր բանաստեղծը պահ մը գետին
դրած է իր քնարը եւ կը նայի դէպի անցեալ: Կը նայի
ու կը տխրի: Որովհետեւ.

պատերազմներ
մահատակներ
մարտիրոսներ տեսնմք
ցուրտ հողը մեր տաք արցունքով թրջեցինք
արհաւիրք
կեղեքում
հեծկլտում - թախիծ տեսնմք
սեպ լեռներն ի վեր մագլցեցանք
մեր ապաւինած ժառերը փուլ եկան
արիւնլուայ գլորեցանք

Կրկնե՛նք: Մեր ապաւինած ժառերը փուլ եկան:
Լեռնազնացի մը նման որ կը վստահի փխրուն հողէն
դուրս ցցուած ժայռի կտորի մը, եւ որ կը տեսնէ թէ
այդ ժայռն ալ կը սահի կ'երթայ իր ձեռքերուն տակէն,
մենք քանի քանի անգամ մեր կեանքին մէջ գլորեցանք
դէպի անդունդ: Բայց չմեռանք: Որովհետեւ.

Բաջասիրտ ուզմիկը - մագելաշում Թամարը
տեսնմք
թմրուկին ձայնով գինովցանք
սրինգին շունչով վերացանք

խոցեր-կոծեր-բոցեր տեսնմք
այրեցանք - փիւնիկ եղանք - վերակենդանացանք

արեւ եղամք -

մայրամուտին կարծեցին թէ մեռամք
արշալոյսով դարձեալ ծագեցամք

Եւ դեռ ինչ: Հնամենի վանք մը եղանք, ճիւղին տակ
կորսուեցանք, բայց երբ ճիւղերը հալեցան, դարձեալ
մէջտեղ ելանք փառքով ու լոյսով: Անմահ երգի մը
վերածուեցանք ու կռունկի մը նման ճախրեցինք դէպի
մէկ հորիզոնէն միւսը: Դիմացանք: Դիմանալու կոչուած
էինք: Որովհետեւ.

մշտադալար ծառ մը եղամք
սրտին մէջ երկրագունտին
մեր արմատները մխրճեցինք
եւ աշխարհի չորս ծագերում
ծիածանի եօթը գոյններով
ծաղկեցամք երակ - երակ

մենք յաւերժութեան ծառը եղամք

Ահա թէ ինչու այս բանաստեղծութիւնը կը գատուի
մեր սիրելի բանաստեղծին միւս բանաստեղծու-
թիւններէն: Որովհետեւ ան մեզի կը բերէ սիրոյ
սիրահար, Լօ-ի սիրահար, սիրոյ դարբին, սիրոյ բանուոր
բանաստեղծին տարբեր մէկ սէրը, որ է սէր՝ իր
ժողովուրդին ու իր պապերուն նկատմամբ:

Աշխարհի բոլոր գրողներուն ու բանաստեղծներուն
կեանքին մէջ կան վայրկեաններ, որոնք կը գատուին
ստեղծագործական ստուար աշխատանքի միւս անհամար
վայրկեաններէն: Ատոնք երջանիկ, նոյնիսկ գերերջանիկ
վայրկեաններ են, որոնք կուզան յանկարծ, առանց
հրաւերի, առանց աչք քթթելու, առանց իրենք զիրենք
զգացնելու, որոնք սակայն յանկարծ ստեղծագործ

մարդուն ներաշխարհին մէջ կը վառեն լոյս մը, որ ալլեւս պիտի չմարի եւ որ զայն պիտի քալեցնէ մեծ յաջողութիւններու ճամբուն վրայ: Ամէն ստեղծագործ մարդ անպայման կ'ունենայ այդ վայրկեաններէն հատ մը:

Իգնա Սարըասլանի համար այդպիսի վայրկեան մըն էր այն, որ, 29 Օգոստոս 1979ին զինքը մղեց, որպէսզի գրիչը վերցնէ ու գրէ յաւերժութեան ծառ դառնալու ճակատագրին մասին: Բանաստեղծութեան հետ միասին յաւերժութեան ծառ կը դառնար նաեւ այդ երջանիկ վայրկեանը:



**ԿԱՐԴԱԼՈՎ
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԸ**

ՆՈՅՆԻՍԿ ԵԹԷ ՄԱՅՐԴ ՄՈՌՆԱՍ...

Սիլվա Կապուտիկեանի անունը գազաթային անուն մըն է թէ՛ Հայաստանի մէջ, թէ՛ Հայաստանէ դուրս: Հայաստանի մէջ անտարակոյս ընթերցողները շատ բան կարդացած են մեծանուն բանաստեղծուհիէն: Բայց Հայաստանէ դուրս գրասէրները մէկ բանաստեղծութիւն միայն կը ճանչնան Սիլվա Կապուտիկեանէն: «*Нова ям որդունն*»:

Մօտաւորապէս վաթսուն տարի առաջ գրուած այս երջանիկ բանաստեղծութիւնը այսօր ալ Սիլվա Կապուտիկեանի համբաւը կ'առնէ ու կը տանի հայկական մէկ հորիզոնէն դէպի միւս հորիզոնը: Մեր աշակերտները բեմերուն վրայ իրենց կոկորդին ամբողջ ուժովը կը պոռան.

Ու տես, որդիս, ո՛ւր էլ լինես,
այս լուսնի տակ ուր էլ գնաս,
թէ մօրդ անգամ մտքիցդ հանես,
քո մայր լեզուն չմոռանաս:

Ազգային քայլերդի տեղ անցած բանաստեղծութիւն մը ահաւասիկ, որ կը յորդորէ չմոռանալ մայր լեզուն եւ որ թերեւս ամէնէն շատ կը ծափահարուի անոնց կողմէ, որոնք արդէն մոռցած են իրենց մայր լեզուն: 1944-ին, երբ կը գրուէր այս բանաստեղծութիւնը, անտարակոյս ունէր իր մասնաւոր նշանակութիւնը: Հայորդիները պէտք է լսէին այս պատգամը: Երիտասարդ բանաստեղծուհի մը ահաւասիկ երիտասարդին կը յանձնէր իր մայրենի լեզուն պաշտպանելու սուրբ պարտականութիւն.

Այսօրուանից յանձնում եմ Քեզ
հայոց լեզուն հագարագանձ:
Կտրել է մա, հանց աստղալոյս,
երկինքները ժամանակի,
եւ Մեսրոպի սուրբ հանճարով
դարձեր է գիր ու մագաղաթ:
Նրանով է մրմնջացել
հայ պանդուխտը վերջն իր սրտի:

Տասնամեակներ շարունակ հայ մանուկը արտասանեց
այս բանաստեղծութիւնը եւ անոնք որոնք այդ
աչակերտներուն դիմաց նստած, հիացումով ականջ
կուտային այս բանաստեղծութեան, չէին անդրադառ-
նար որ այս բանաստեղծութիւնը ամէն տարի նոր
իմաստ մը կը զգենուր, նոր պատգամ մը կը դառնար
իր մայրենի լեզուէն տակաւ հեռացող ամբողջ
ժողովուրդի մը համար:

Սիլվա Կապուտիկեան այդ օրէն մինչեւ այսօր զրեց
հագարաւոր բանաստեղծութիւններ եւ այսօր ան
իրաւամբ շատ պիտի ջղայնանար եթէ անդրադառնար
որ հայ ժողովուրդի ստուար մեծամասնութիւնը միայն
«Պօք իմ որդուն»ը կը հասկնայ, երբ կը տրուի Սիլվա
Կապուտիկեան անունը: Բայց ոչի՛նչ կրնայ ընել այս
հոսանքին դէմ: «Պօք իմ որդուն»ը միշտ քիչ մը շուքի
մէջ պիտի թողու իր միւս բանաստեղծութիւնները եւ
հայ մարդիկ, քանի պիտի մոռանան իրենց մայր լեզուն,
քիչ մը աւելի պիտի փարին այս բանաստեղծութեան,
որովհետեւ անոր արտասանութեան մէջ իսկ քիչ մը
մխիթարութիւն, քիչ մըն ալ ինքնախաբէութիւն պիտի
գտնեն:

Սիլվա Կապուտիկեան:

Եկէ՛ք կարճ ժամանակի մը համար մուտք գործենք
այս հռչակաւոր բանաստեղծուհիին քերթողական էջե-

րէն ներս, եւ ընենք պատահական պտոյտ մը, առանց ուղեցոյցի եւ առանց յայտագրի: Մեր դիմաց ահաւասիկ ունինք հայրենասէր ու ազգասէր բանաստեղծուհի մը, որ կը հաւատայ իր ժողովուրդին իմաստութեան, տաղանդին ու տոկունութեան: Անկասկած, երբ կը գրէր «Պօք իմ որդուն»ը, բնաւ ալ չէր երեւակայեր որ վաթսուն տարի վերջ հայ ժողովուրդը, մանաւանդ Սփիւռքի հայ ժողովուրդը այնքան պէտք պիտի ունենար այդ բանաստեղծութեան: Հայ ժողովուրդը տոկուն ժողովուրդ էր, աշխարհ կոչուած այգիին մէկ ծայրը բուսած ուժեղ ընկուզենի մը: Թէ՛ դարաւոր, թէ՛ նոր: «Պօք իմ որդուն»էն երկու տարի վերջ, 1946-ին, բանաստեղծուհին նոյն հաւատքով բանաստեղծութիւն մը կը նուիրէր «Սփիւռքահայ արուեստագէտներուն» եւ կը գոչէր.

Իմ հա՛յ ժողովուրդ, իմ քաղմաշնորհ,
աշխարհի այգու մի ծայրում քուսած
ընկուզենի ես, դարաւոր թէ մոր:
Ու այնքան փոքր է հողը ոտքիդ տակ,
իսկ դու՝ այնքան հոծ ու միւղատարած,
որ պտուղներդ դարե՛ր շարունակ
քո արեւմր սնուած՝ թափուել են հեռում՝
օտար ցամքէֆիմ օրարի հողում..:

Սա քանի մը տողերուն մէջ ամէն ինչ ըսուած է եւ մենք տրտմութեամբ պիտի ողջունենք պանդուխտ կամ տեղահան հայ ժողովուրդի դառն ճակատագիրը, եթէ այդ տողերուն մէջ գտնենք նաեւ հաստատում մը որ մեզի հպարտութիւն կը պատճառէ, մեր ազգային արժանապատուութիւնը կը շոյէ: Այո՛, հողը փոքր է մեր ոտքին տակ, եւ մենք այնքան լայնատարած ճիւղեր ունինք, որ մեր պտուղները այլեւս կը թափենք

օտարներու ու դրացիներու հողին վրայ: Բայց մէկ բան կայ: Մենք բազմաշնորհ ժողովուրդ ենք, մենք ունինք պտուղներ, որոնք մեր արիւնով սնած են եւ այդ իսկ արդէն կը բաւէ որպէսզի մենք աչքառու լոյս արձակելով բարձրանանք ազգերու ու աստղերու երկնակամարին վրայ:

ԸՆԿՈՒՉԵՆԻՆ ՃԻՒՂԵՐԸ

Սիւլվա Կապուտիկեան 1946-ին համակրանքով կը նայէր Սփիւռքահայ արուեստագէտներուն, նաեւ անոնց մէջէն Սփիւռքահայ պարզ ու անանուն ժողովուրդին, ժողովուրդի այդ զաւակները կը նկատէր օտար հողերու վրայ ինկած պտուղները բազմաշնորհ հայ ժողովուրդին:

Պիտի անցնին 46 տարիներ, շատ ջուր պիտի հոսի հայ ժողովուրդի կամուրջին տակէն եւ մեր ժողովուրդը կրկին ու կրկին պիտի կանգնի նոր փորձութիւններու դիմաց: Բախտորոշ փորձութիւններ: Արտագաղթն է այս: Հայ ժողովուրդը, դարաւոր այս ընկուզենին, որ իր լայնատարած ճիւղերուն պտուղները կը թափէր օտար հողերու վրայ, հիմա միայն պտուղը չէ որ կը թափէ, այլ իր ամբողջ մարմինն է որ կը տանի դէպի դուրս, դէպի օտարութիւն, դէպի օտար ճամբայ: Եւ «Խօսք իմ որդուն»ի հեղինակը, մօտ կէս դար վերջ, Սեպտեմբերի իրիկուն մը պիտի նստի Ծաղկաձորի մէջ ու պիտի նայի արտագաղթող իր հայրենակիցներուն: Ի՞նչ տխուր բան: Կերթան, կը մեկնին, ի՞նչ կրնանք ըսել անոնց, եթէ ոչ տխուր երթաք բարով մը, նաեւ յիշեցնել թէ ինչե՛ր կը թողուն իրենց ետին:

Եկէք երկու շունչով կարդանք «Արտագաղթ» անուն բանաստեղծութեան սա գլխաւոր մասերը.

Գնում է՛ք, մեկնում: Գնացէ՛ք քարով.
միայն թէ Գիւմրու փռշոտ անկիւնում
կիսափուլ մի տում՝ ձեռքերի կարօտ
սուգունել է իր մէջ ու ձայն չի՛ հանում:
Միայն թէ մօտիկ Գեղասար գիւղում
գերեզմանները շատ են իրար կից,
մահերը շատ են, ծնունդները չի՛չ
ու մանուկները տխուր են խաղում:

Գնում է՛ք, մեկնում: Ճանապա՛րհ քարի,
միայն թէ ուշ է գարունը գալու,
միայն, ասում են, ճմեռն այս տարի
սովորականից ցուրտ է լինելու:
Ու սառչելու է գիւնուորը կուում,
իսկ փոխարինող կարծես թէ չկայ:

Ազդու ու տխուր խօսք: Գացէ՛ք, բարի երթաք, բայց
մի՛ մոռնաք որ ձեր ետին կը թողուք երկրաշարժէ փուլ
եկած շէնքեր: Մի՛ մոռնաք որ երկրին մէջ ծնունդները
նուազած են եւ հայրենիքը նորածիններու պէտք ունի:
Մի՛ մոռնաք որ հայրենիքի պաշտպան կանգնած
զինուորը պէտք ունի իր յաջորդներուն, նոր զինուոր-
ներու՝ որոնք պիտի գան պաշտպանելու հայրենիքը:
Գացէ՛ք, բարի ճամպարհ ձեզի, բայց չենք հասկնար
թէ ինչ սրտով կ'երթաք դուք:

Գնում է՛ք, մեկնում...: Բարի ճանապա՛րհ,
միայն թէ խեղուեց երազ մի մաքուր,
միայն տան շէմքին վիրաւոր մի մայր
նստել է մեմակ ու մայում է լուռ:
Գնում է՛ք, դէ ի՞նչ... Բարի ճանապարհ,
մեմք ոչինչ չունենք տալու-առնելու:

Տխուր եւ տխուր: Տխուր է մայրը որ գացողին ետեւէն

առանձին մնացած է տան սեմին վրայ: Գացէք: Մենք ալլեւս առնելիք-տալիք ի՞նչ կրնանք ունենալ ձեզի հետ:

Եւ այս հիանալի բանաստեղծութիւնը կ'աւարտի երկու արտակարգօրէն յուզիչ տողերով.

Սպիտակ մի մաւ մշուշոււմ դամբադ,
մօտեմալու տեղ՝ լռում է հեռու...:

Բոլորս ալ հիմա մշուշոտ այդ պատկերին մէջ այնքան յստակ կերպով կը տեսնենք տխուր տեսարանը: Մենք որ մեր ակնարկները յառած էինք դէպի հորիզոն եւ կը սպասէինք որ սպիտակ նաւ մը տուն բերէ մեր սիրելիները, մեր արեան եղբայրները, հիմա կը տեսնենք որ այդ նաւը մշուշներու մէջ հետզհետէ կ'անհետանայ, ու փոխանակ գալու, կը լողայ դէպի հեռու, դէպի օտար ափեր: Եւ կը տանի մեր սիրելիները, մեր հարազատները: Ի՞նչ կրնանք ըսել անոնց: Բարի ճանապարհ մարդկօրէն: Բայց ո՞վ տէր պիտի կանգնի տարաբախտ այն մայրիկին որ գլուխ գլխի մնացած է իր ճակատագրին եւ իր հայրենիքին հետ:

Մշտաւորապէս յիսուն տարիներ անցած են ահաւասիկ այն օրէն ասդին երբ բանաստեղծուհին խօսք կ'ուղղէր հայ մանուկին ու կ'ըսէր. «Նոյնիսկ եթէ մայրդ միտքէդ հանես, քու մայր լեզուն չմոռանաս»: Մայր լեզու: Արտագաղթի սա ողբերգութեան յանձնուած անբախտները իրենց գրպանին մէջ ստակ չունին, անոնք զրամ չեն տանիր իրենց հետ, կը տանին միայն իրենց այդ մայր լեզուն: Բայց բոլորս ալ գիտենք, շատ լաւ գիտենք թէ, կարճ ժամանակ վերջ օտար այդ ափերուն վրայ գրպանները պիտի լեցուին, ատոր փոխարէն մայր լեզուն փողոց պիտի նետուի, պիտի «մոռացուի»:

Վերի բանաստեղծութիւնը գրուած էր 1992-ին: Տասը

տարիներ եւս անցան այդ թուականին վրայէն եւ հիմա սպիտակ շոգենաւը աւելի շատ գործ ունի, եւ անդուլ անդադար կը լողայ դէպի հեռու, փոխանակ դէպի այս կողմը գալու:

ԻՆՉՊԷՍ ԸՍԵՄ ՈՐ ՀԱՍԿՆԱՆ

Հայաստանէն արտագաղթողները 1992 թուականին սպիտակ շոգենաւով մըն էր որ կը բացուէին դէպի օտար ափեր: Ծով չունեցող երկրի մը համար սպիտակ շոգենաւը խորհրդանշան մըն է, մեկնումի, բաժանումի խորհրդանշան մը, եւ այդ խորհրդանշանն էր որ անտարակոյս բանաստեղծուհին գրել կուտար.

Սպիտակ մի մաւ մշուշում դամբադ,
մօտեմալու տեղ՝ լողում է հեռու...:

Իսկ հիմա բանաստեղծուհին կրնայ խօսիլ սպիտակ օդանաւի մասին: Սպիտակ օդանաւը, որուն սպիտակ մետաղեայ մարմինն վրայ Հայաստան կամ Արմենիա մըն ալ գրուած է հայերէնով ու անգլերէնով, խորհրդանշան մը չէ այլեւս, այլ իրական սնտուկ մը, որ երկրին մարդիկը կ'առնէ ու դէպի օտար ափեր կը տանի մշուշներու ընդմէջէն: Գացողները իրենց հետ կը տանին իրենց մայրենի լեզուն, որովհետեւ անոնք ի վերջոյ մեծ մասամբ իրենց մայրն ու մայրենին «մոռացած» անշորհներ չեն, այլ շորհալի մարդիկ, որոնք կը գաղթեն որովհետեւ հաց կը փնտռեն օտարութեան մէջ: Անոնք թերեւս չեն ալ մոռնար որ մարդը միայն հացով չէ որ կ'ապրի: Կ'ապրի նաեւ «բան»ով, այսինքն մայրենի լեզուով: Եւ այս անգամ անոնք թերեւս պէտք չունին անպայման կարգալու բանաստեղծի մը պատգամը, որպէսզի գիտնան թէ օտարու-

Թեան մէջ եւս պարտաւոր են պահակը դառնալ իրենց մայրենի լեզուին: Անոնք բանաստեղծին պէտք չունին, բայց բանաստեղծուհին չի կրնար չմտահոգուիլ: Որովհետեւ կան մարդիկ, որոնք մոռցած են ազգային սրբութիւնները:

Բանաստեղծուհին տակաւին 1968-ին արտասահմանէն ստացած էր նամակ մը: Նամակին մէջ գրուած էր հետեւեալը. «Պիտի խնդրէինք ձեզմէ մեր Թերթին համար գրէիք քանի մը տող հայոց լեզուի մասին: Կարգ մը ծնողներ չեն ուզեր իրենց զաւակները հայկական վարժարան դրկել, ըսելով որ այդ լեզուէն օգուտ մը չկայ»: Հայոց լեզուէն օգուտ չկայ: Ի՞նչ հայհոյութիւն: Բանաստեղծուհին, ընդվզած, այս նամակին իբր պատասխան գրած էր բանաստեղծութիւն մը, որուն մէջ ինք իսկ կը շուարէր թէ ի՞նչպէս պէտք է փառաբանէր մայրենի լեզուն, մայրենի «բառ»ը:

Ես ի՞նչ բառեր գտնեմ այսօր
մերքողելու ի՛նքն իսկ - բառը,
եւ ի՞նչ լեզուով բարեբանեմ ի՛նքն իսկ - լեզուն:
Ա՛խ, լեզուի մէջ
բառից մի՞նչ բառ, բառից այն կողմ
կայ էութիւն՝
անբռնելի, անհպելի,
որ չես դնի ձուերի մէջ,
որ չես քանտի քուերի մէջ,
որ զգեստի խնդն լաթերով չե՛ս պարուրի:
Արդ, ես ի՞նչպէս տարբաւորեմ անբռնելին,
ի՞նչ մուտքերով հասնեմ արդեօ՞ք
մրանց, որոնց համար լեզուն հացի խնդիր է
սոսկ:
Ի՞նչպէս ասեմ որ հասկանամ,

թէ աշխարհում՝ հացից բացի
կայ Հացեկաց,
տեսնելուց զատ կայ եւ տեսիլք,
որ սեփական մորթուց էլ մօտ, կայ մագաղաթ:

Հրաշագործ խօսքը, բայց կարգ մը ականջներու
դիմաց խօսքին անբաւարարութիւնը: Իսկապէս: Խօս-
քին անբաւարարութիւնը: Ի՞նչպէս բացատրել անոնց
որոնք պիտի չհասկնան, որոնք իրենց կեանքին մէջ
անգամ մը իսկ ձեռք չեն դպցուցած մագաղաթի մը,
ձեռագիր մատեանի մը, եւ ասիկա որպէս զաւակները
այնպիսի ժողովուրդի մը, որ ատեն մը մագաղաթը
աւելի թանկագին նկատած էր քան սեփական մորթը,
այսինքն սեփական կեանքը:

Ի՞նչպէս ասեմ

որ ոսկու կուշտ շարից բացի

կայ շարակա՛մ,

երկինք տանող խօսքի շարոց,

ու կայ Նարեկ.

Ի՞նչպէս ասեմ

որ օգտաշատ, աղիւսաճեւ քարից բացի

կայ եւ Խաչքար,

Ի՞նչպէս ասեմ

որ մեր շնչած անգոյն օդում

թթուածնից զատ կայ եւ ոգի -

Դեռ Եղեգան փողի՛ց ելած՝ ծուխ կայ ու բոց,

կայ մեր քառից, գրից, քարից բաղադրուած

մեր հին արեանը համակազմ մի մթնոլորտ

որից եթէ պոկուենք յանկարծ,

պիտի պոկուենք ձգողական ուժից երկրի...

Ի՞նչպէս ասեմ,

Ի՞նչպէս ասեմ, որ հասկնան...:

Յուսահատական ճիչ մը սա «Ի՞նչպէս ասեմ որ հասկնան»ը, ճիչ մը զոր ամէն բանիմաց հայ մարդ արդէն կ'արձակէ տասնամեակներէ ի վեր: Ի՞նչպէս ըսենք որ հասկնան: Բայց գիտենք որ հասկնալ կամ չհասկնալը ըսելու ձեւին հետ կապ չունի: Ասիկա մեր բառերուն անբաւարարութեան հետ կապ չունի: Որքան ալ վարպետօրէն ըսենք, որքան ալ գործածենք ամէնէն ճարտար բառերն ու ասացուածքները, որքան ալ անոնց աչքին առջեւ փռենք մեր ազգային ժառանգութեան ամէնէն ճոխ գանձերը, անոնք պիտի չհասկնան, որովհետեւ օդը լաւ հաղորդիչ չէ այլեւս անոնց ու մեր միջեւ: Օդը այլեւս ոչի՛նչ կը թրթռացնէ անոնց եւ մեր միջեւ, ո՛չ ձայն, ո՛չ զգացում, ո՛չ շունչ, ո՛չ բառ, ոչինչ:

ՃԻՒՂԸ ՈՐ ՏԱԿԱԻՆ ՉԷ ՉՈՐՅԱԾ

«Ինչպէս ըսեմ որ հասկնան» կ'ըսէր Սիլվա Կապուտիկեան, ակնարկելով հոս կամ հոն ուժացած, իրենց ազգային ժառանգութեան գիտակցութիւնը կորսնցուցած, օտար բարքերու կողմէ կլանուած, մանաւանդ իրենց մայրենի լեզուէն հեռացած հայ մարդոց: Հայաշխարհը լեցուն է այսպիսի մարդոցմով եւ օրէ օր կը բարձրանայ անոնց թիւը: Բայց բանաստեղծուհին այս աղաղակը կ'արձակէր տակաւին 1960ական թուականներուն: Այդքան կանուխէն:

Գիտենք որ չափահաս մարդոց վրայ այլեւս ընելիք մեծ բան չունինք: Մարդը եթէ սա հասուն տարիքին, սա յիսունական, վաթսունական տարիքներուն կորսընցուցած է իր ինքնութեան մայր գիծերը, Սիլվա Կապուտիկեան մը անզօր կը մնայ, կամ տասը Սիլվա Կապուտիկեաններ անզօր կը մնան այդ մարդուն հոգիին մէջ բան մը փոխելու համար: Ծիւղը չորցած է անգամ մը

եւ այլեւս նոր ձեւ չի կրնար ստանալ ան: Եթէ մենք
չենք կրցեր արգիլել որ այդ ճիւղը չորնայ, եթէ ատենին
չենք կրցեր անոր մէջ պահել իր ցեղին ու պատկա-
նելիութեան թարմութիւնը, հիմա ընելիք մեծ բան
չունինք: Եւ այդ չորցած ճիւղին նայելով, պիտի մտա-
ծենք որ մեր ուշադրութիւնը պէտք է գոնէ կեդրո-
նացնենք մատղաչ սերունդին վրայ, թարմ ճիւղին,
որ տակաւին չէ կորսնցուցած իր կենսունակութիւնն
ու դէպի ցանկալի ուղղութիւն անելու իր ընդունա-
կութիւնը: Պիտի կարենա՞նք հայ պատանին, հայ երի-
տասարդը պահել իր մայրենի լեզուին ու մշակոյթին
հունին մէջ: Ա՛յս խկ է հարցը: Պիտի կարենա՞նք հրա-
ւիրել որ հայ պատանին հանդիսաւորապէս երդում ընէ
իր մայրենի լեզուին հաւատարիմ մնալու: Երդումին
պատճէնը դարձեալ իրմէ է, մեր բանաստեղծուհիէն.

Ժամանակի ակումբներից ես գալիս դու, իմ հա՛յ
լեզու,

դարերի լեռնապարերի վրայով:

Հայկեան մետի սոյլ ու շառաչը կայ թո մէջ,

Աւարայրի վրայ կանգնած աղօթք-աղաղակի

սաստկութիւնը:

Դու՛ փիղ ու բարանի գարհուրամբին դիմադիր

կանգնած՝

անկործանելի պարիսպ,

Չուարթնոց տաճարի չեղծուած, չաւերակուած

սկզբնապատկեր,

Երդում եմ՝

ծնունդովս կամուրջ դառնալ թո դարէդար

անցումին,

բար դառնալ թո պարսպացեալ ամրութեանը,

աղօթարար լիմել թո սրբազնագոյն տաճարին:

Երդում եմ:

Իւրաքանչիւր սերունդ քանի՞ միլիոն քար կրնար աւելցնել «անկործանելի» նկատուած, բայց հիմա այնքան փխրուն դարձած այս պարիսպին վրայ, եթէ հայաշխարհի մէջ իր աչքերը բացած ամէն նորածին ուշ կամ կանուխ արտասանէր այս երգումը ու հաւատարիմ մնար անոր: «Հայ պատանիին երգումը մայրենի լեզուին» անուաներ է Սիլվա Կապուտիկեան իր այս բանաստեղծութիւնը, զոր գրեր է 1966-ին: Մայրենի լեզու: Դեռ ի՞նչ: Ամէնէն թանկագինը պապերէդ քեզի ժառանգուած հարստութիւններու մէջ: Ամէնէն թանկագինը՝ որ կը հասնի «Գողթան կրակուած գուսաններէն», ամէնէն թանկագին «ոսկին որ ժամանակի ժանգը չի բռներ»:

Դաւիթի իմաստուն պայծառութիւն,
Սւ Մհերի իմաստնագոյն խռովք,
Նարեկացու տիեզերածաւալ ալեկոծում,
Սւ Քուչակի վարդաշաղախ սիրերգութիւն,
Սղիշէից Սղիշէ ձգուող անհուն մաքառումի
գորաւոր սրինգ,
Երդուում եմ՝
շուրթներովս բորբոք պահել ին վահագմարոց կրակը,
շքանշանի պէս կրել ին ոսկին,
գրահաւորել հոգիս ին արի գեղեցկութիւններով:
Սրդուում եմ:

Երգում մը, Ուխտ մը՝ որուն պատճէնին մէջ հայ ժողովուրդին ամբողջ անցեալը, ամբողջ մշակոյթը կայ: Բայց ո՞վ է որ այդ մշակոյթը պիտի փոխանցէ գալիք սերունդներուն, ո՞վ է որ կամուրջ պիտի դառնայ որպէսզի հայոց լեզուն դարէ դար անցնի: Ո՞վ, եթէ ոչ անոր տէրը: Ամբողջ հայ ժողովուրդը: Մեծով-պղտիկով: Բայց մանաւանդ հասնող նոր սերունդը: Մա-

նուկը, ապա պատանին ու երիտասարդը: Ան է որ պիտի նայի հայոց լեզուին ու անոր պիտի ըսէ. կ'երդնում՝

պահպանել ինձ որպէս սերունդէ սերունդ
փոխանցուած
եւ ինձ վստահուած տոհմական սրբութիւն,
նորոգել ինձ մագաղաթեայ ազնուականութիւնը
նոր ժամանակներու հիւթով ու աւիշով,
ինձնով արտասանել միայն արդարութեան խօսքեր:
Երդում եմ կրել ինձ շնչովս, արիւնովս,
այրումովս,
եւ ինձնով տանել-հաղորդել՝ գաւակներիս
ինձ յաւերժական կենդանութիւնը:
Երդում եմ:

Այսօր ի՞նչ կը մնայ Ուխտի այս պատճէնէն, որ պէտք է մասունքի նման կախուած ըլլար իւրաքանչիւր հայ մանուկի սնարին վերեւ:

Կարժէ որ հարցնենք: Առանց անտես առնելու այս բանաստեղծութեան ուժականութիւնն ու գեղարուեստական գեղեցկութիւնը:

ԵԹԷ ԱՂԲԻԻՐԸ ԾՈՎ ՉԹԱՓԻ...

Եթէ աշակերտը իր գրականութեան ուսուցչին հարցնէ թէ ի՞նչն է որ կը կազմէ Սիլվա Կապուտիկեանի բանաստեղծութեան հիմնական գիծը, անկասկած ուսուցիչը պիտի պատասխանէ.

- Հայրենասիրութիւնը:

Հայրենասիրութեան կըռոյթն է որ կը զարնէ Սիլվա Կապուտիկեանի բանաստեղծութիւններուն մէջ իբրեւ մայր թէմա եւ իբրեւ մայր զգայնութիւն: Եւ անտա-

րակոյս երբ «Հայրենասիրութիւն» կ'ըսենք, չենք հասկնար միայն հողը, Արարատը, Մասիսը, Սեւանը, Երեւանը, Արազածը, Չանգուն, ո՛չ ալ միայն զինուորը, հայրենական պատերազմը, Աւարայրը, այլ կը հասկնանք նաեւ հայոց լեզուն, հայոց մշակոյթը, բոլոր այն սուրբ դէմքերը, որոնք հայոց անցեալի պատմութեան փայլ մը կուտան, նաեւ հայ մարդուն աղուոր դէմքը, հայ կնոջ աղուոր աչքերը: Հայրենիքի հետ կապուած ամէն բանի սիրահար հոգին այսպէ՛ս է որ գրիչը ձեռք պիտի առնէ ու պիտի գրէ.

Ուր էլ լիմէ՛ք, ինչ դէմքի վրայ՝
խորշումած մի մօր, թէ մանկան մի թուխ,
յոգնած հարսների դէմքին արեւհար,
հայկակա՛ն աչքեր, գեղեցի՛կ է՛ք դուք:
Դու՛ք, տեսած այդքան լաց ու արհաւիրք,
ի՞նչպէս կարեցա՛ք դարերից այն հին
մնալ այսքան մեղմ, այսքան գեղեցի՛կ,
այսքան գեղեցիկ մայել աշխարհին..

Սա ահաւասիկ հայրենասիրութիւն է: Սիրել իր հայրենիքը այդ հայրենիքին մարդուն դէմքին ընդմէջէն: Հայրենասիրութիւն՝ թերեւս իր ամէնէն թաքուն տարազին մէջ, հազիւ նշմարելի չափերով: Բայց այս ալ հայրենասիրութիւն մըն է: Անտարակոյս բանաստեղծին ստեղծագործութիւնները պիտի պողովան հայրենասիրական աւելի ցնցիչ ու բարձրադադակ անհամար տողերով, բայց միշտ չէ որ հայրենասէրը այդքան բարձր պիտի պողայ իր հայրենասիրութիւնը: Ան իր հայրենասիրական զգացումները երբեմն մեղմօրէն պիտի փսփոսայ նաեւ իր որդւոյն ականջէն վար «մայր լեզու»ի քարոզութիւն ընելով, երբեմն առուակի մը հոսքին զիմաց արտասուելով, երբեմն դաշտերը զարդա-

րող ծաղիկները շոյելով, մինչեւ իսկ երբեմն ցաւելով
աղբիւրներու ու առուակներու ջուրերուն համար, որոնք
ծով կը թափին ու կ'անհետանան:

- Այ աղբիւր, ո՞ւր ես գնում,
Ծովերում, ծովերի մէջ
կը կորչես, գուր ես գնում:

Ահա երեք տողեր որոնք կը մատնեն բանաստեղծին
հայրենասիրութիւնը, աղբիւրի ջուրէն կաթիլ մը իսկ
չկորսնցնելու անձկութեամբ արտայայտուած: Բայց
նոյնքան հայրենասիրական պատասխան մըն է որ
կուգայ աղբիւրէն:

- Դաշտերում պապակ ու կէզ,
ծաղիկներն ինձ են մնում,
դաշտերին տանում եմ ես,
հով ու գով ջուր եմ տանում:
Թող գնամ, ծովը գնամ,
թող կորչեմ ծովերի մէջ,
մեմակ թէ ծաղկած մնամ
հայրենի դաշտերը պերմ..:

Վերի բանաստեղծութեան մէջ բնութեան շատ գեղե-
ցիկ պատկեր մը կայ ահաւասիկ, ամենապարզ բառերով
եւ պատկերներով նկարուած: Բայց կրնանք խորացնել
այդ պատկերը ու մտածել թէ աղբիւրը ուրիշ մէկը չէ
եթէ ոչ հայրենասէր բանաստեղծը, կամ հայրենասէր
գիտնականը, կամ հայրենասէր զինուորը, որ պատրաստ
է ինքզինք զոհելու որպէսզի «ծաղկած մնան հայրենի
դաշտերը»: Պահ մը պիտի խորհէինք թերեւս որ մեղք
է զոհել այդ մէկ բանաստեղծը, այդ մէկ զինուորը,
այդ մէկ գիտնականը, բայց յետոյ պիտի անդրադառ-

նանք որ հայրենի դաշտերը ծաղկուն պահելու միակ միջոցն է ունենալ այդ զոհաբերուողները եւ պաղարիւն կերպով ընկալել այդ զոհաբերութեան գաղափարը:

է՛հ, այո՛, Սիլվա Կապուտիկեանի քերթողական արուեստը իր սնունդը կ'առնէ փսիսուքի ձեւով ըսուած կամ աղաղակի ուժգնութեամբ արձակուած հայրենասիրութենէ մը.

Ա՛խ այս քարերը
այս խեղճ քարերը,
որ ամէն Քայլիս ոտքիս եմ դպչում
լքուած որբի պէս կախում փէշիցս,
եկէ՛ք սրբեմ՝ ձեր խանձուած այտերի լացախառն
փռշիւն:

Ա՛խ այս գիրերը,
Ժառիւն, խաչքարիւն, մագաղաթնային,
սրբորէն խաչուած
անժէն գիրերը:

Ա՛խ, այս ձայները
Գողթան լարերից ալիքներ առած
եկած, ինձ հասած այս հիւն ձայները.
լացի համ ունեն,
սիրող շող ու շող
եւ խունկի բուրմունք.

Ա՛խ այս կարօտը,
հայի կարօտը, անթարգմանելիւն,
ես ի՞նչպէս մեղքեմ այս թանձրութիւնը:

Դժուար չէ կռահել թէ ինչն է որ այնքան կը տագնապեցնէ բանաստեղծուհին, տեսնել թէ ինչ կայ այդ քարերուն, այդ ձայներուն, այդ գիրերուն, այդ կարօտներուն ետին:

ՄԵՐ ՓՈՔՐ ՊԱՆԹԷՈՆԸ

Հայրենասիրութիւնը տառապանք դարձած է բանաստեղծուհիին համար, մորմոք կայ անոր սրտին մէջ, գիշեր-ցերեկ ցաւ կայ: Հերիք է, հերիք է, կ'աղաղակէ բանաստեղծուհին: Ան ալ պիտի ուզէր ըլլալ պայծառ բանաստեղծ, ծիածանի պէս ժպտիլ շարունակ, վայելել Մարմարա ծովու վճիտ կապոյտը, աշխարհի բոլոր մարդոց ժպտիլ բարեկամութեամբ, ո՛չ մէկու նկատմամբ ոխ ու ատելութիւն ունենալ, լայն կշռոյթով չափել տիեզերքին անհունութիւնը, երթալ աստղազնացներու հետքերով եւ երբեք չյիշել որ աստղերու պէս ցանուցիր ենք մենք եւ թէ միջաստղային ո՛չ մէկ երթուղի մեզ չի միացներ իրարու, մեզ չի՛ բերեր քով քովի...: Ինք ալ պիտի ուզէր...

Հերիք է, հերիք, հերիք՝ այս ցաւը.
ես ինձնից պարպուել,
իմքս ինձնից փրկուել,
հեռանալ, գնալ, մեկնել եւ ուզում:

Բայց ա՛խ սա քարերը, ա՛խ սա գիրերը, ա՛խ սա ձայները, ա՛խ սա կարօտները: Ա՛խ սա մայրաքաղաքը՝ որուն մէջ կ'ապրի.

Եւ Երեւանը,
այս Երեւանը,
իմձ կեանք պարգեւած,
իմ կեանքը առած,
իմ մայրը, որդիւն, իմ ապաւէնը:
Ուրիշ ո՞րտեղ է
յարութեան հրաշքն այսպէս միութեամբ,
էար ու գոյն դարձած եւ կոթողացած

յայտնուել մարդուն:
Եւ վերջապէս նա,
իմքը՝ Մասիսը.
Քէ մէկ բարձրացած,
մի եօթն այնքան էլ գետնի խորքն իջած,
բազմաշերտ, խրթիմ մեր էութիւնը,
յաւերժ Մասիսը:

Երկարաշունչ բանաստեղծուիւն մըն է այս, որուն
մէջ բանաստեղծուհին նոյնիսկ ինքզինք յանցաւոր կը
զգայ իր խռովքին ու տառապանքին համար:

Մեղայ ձեզ, մեղայ,
սրբազան իմ լեռ, իմ ծանր արիւն, իմ մեկատագիր
խռովքիս համար ու ընդվզումիս
բիւր անգամ մեղայ:

Բայց ի՞նչպէս պիտի փրկուի ան այդ խռովքէն:

Երկիր Հայաստան,
դու դժուար իմ սէր, իմ սուրբ կապ ու գիր,
քէ մէկ հեռանում՝
հազար մամբայով ետ եմ գալիս քեզ:
Թէ մի պահ պոկուում՝
անկումի ահից հազար ձեռքերով քե՛զ եմ պլլում,
քէ մի հեղ լոում՝
հազար մեղքերից մորից քո գովքն է
դուրս ժայթփում թղթիս:
Երկիր Հայաստան,
քեզմից պարպուելը՝ առաւել է ծանր,
քեզմից ազատուելն՝ անազատութիւն..

Վերջին հաշուով բանաստեղծուհին մեղաւոր չրթներով

պիտի մըմնջէ ու օրհնութիւն, միայն օրհնութիւն պիտի տեղացնէ այն ամէն ինչի համար, զոր իր երկիրը տուած է իրեն, մորմոք, ընդվզում, վէրք, բայց նաեւ վերացում, վեհացում, ու երգի անսպառ ակունք:

Եկէք Սիլվա Կապուտիկեանի վերի երկարաշունչ բանաստեղծութիւնը կապենք մօտաւորապէս նոյն հայրենասիրական զգայնութիւններով պոռթկացող ուրիշ բանաստեղծութեան մը, որ վերնագիր չունի, բայց զգացական հարուստ բովանդակութիւն ունի:

Հայո՛ց աշխարհ, հայո՛ց երկիր, հայո՛ց հող,
լայն աշխարհում է՞ն գրկի մէ՛ջ ապրեմ թող:

Դու ժայտակուռ մի ամբոց ես հնաւանդ,
աշտարակներդ՝ Արագած ու Արարատ:

Թող ես լիմեմ աշտարակիդ աղաւնիմ,
շուքդ մնայ իմ ապաւէն հովանիմ:

Ուր էլ թռչեմ, ինչ աշխարհ էլ թափառեմ,
մտրից ետ գամ, է՞ն տանիքում ծուարեմ:

Ու թէ մեռնեմ, է՞ն գրկի մէջ մեռնեմ թող,
Հայո՛ց աշխարհ, հայո՛ց երկիր, հայո՛ց հող:

Գրուած է 1945-ին: Պէտք կա՞յ աւելորդ մեկնաբանութիւններու: Ասիկա այն թուականն է երբ վերջ կը գտնէր Բ. Աշխարհամարտը, որ հայոց համար եղած էր նաեւ «հայրենասիրական պատերազմ»: Հայաստան կը պատրաստուէր ներգաղթի ճամբայ մը բանալու Սփիւռքահայ մարդոց առջեւ, զանոնք իրենց բնաշխարհը հրաւիրել: Բանաստեղծի բերնով անոնց յիշեցնել՝ թէ ուր ալ երթաս, ուր ալ ապրիս, նորէն ետ պէտք է

գաս, պէտք է ապրիս հայրենի երկրի տանիքին տակ:
Բանաստեղծը ի՞նչպէս չտառապի հիմա տեսնելով որ
մարդիկ շարան շարան կը լքեն իրենց հայրենի տանիքը
եւ կ'երթան մեռնելու ուրիշ հողերու վրայ:

ԳՆԱՄ ՄԵՌԻՐ ՀԵՌԱԻՈՐ ԱՓԵՐՈՒ ՎՐԱՅ, ԵԿՈՒՐ ՍԻՐԵՄ

Կրկնե՛նք: Բանաստեղծը ի՞նչպէս չտառապի հիմա
տեսնելով որ մարդիկ շարան շարան կը լքեն իրենց
հայրենի տանիքը եւ կ'երթան մեռնելու ուրիշ հողերու
վրայ: Բոլորս ալ գիտենք թէ արտագաղթը այսօր Հա-
յաստանի համար թիւ մէկ հարց դարձած է: Հայաստանի
մարդիկը, պարզապէս ապրուստի հոգով, կրկնե՛նք,
պարզապէս ապրուստի հոգով կը հեռանան իրենց մայր
հողէն ու հաց կը փնտռեն օտար ափերու վրայ: Հաց՝
ո՛չ թէ միայն իրենց սեփական անձին համար, այլ
ետին մնացած, հայրենիքի մէջ մնացած ամբողջ ընտա-
նիքին համար, վերջին հաշուով ամբողջ ժողովուրդին
համար: Որքան ալ անհանգստանանք այս արտագաղ-
թէն, կրնանք քիչ մը մխիթարուիլ այդ արտագաղթին
դրական մէկ երեսակէն, որ է խնդրին տնտեսական
կողմը: Արտագաղթողները, օտար ափերու վրայ
տարուած իրենց չարքաշ աշխատանքով տնտեսապէս
կ'օգնեն իրենց երկրի մարդոց: Անոնցմէ շատեր գիտեն
որ մնայուն կերպով չէ որ արտագաղթած են, օր մը
անպայման պիտի վերադառնան ու պիտի միանան
իրենց ընտանիքին: Անոնք աշխարհի ամենագեղեցիկ
քաղաքին մէջ իսկ իրենց «գեղեցիկ Երեւան»ը կ'երազեն:
Բայց ընդունի՛նք որ ամէնէն անկեղծ ու ամէնէն
տաքուկ զգացումներն իսկ ժամանակի ընթացքին քիչ
մը կը մաշին, իրենց փայլը կը կորսնցնեն ու կը

խաթարուին ուրիշ գոյներու մէջ խառնուելով: Այսպէս՝ այսօր արտագաղթողներէն ոմանք թերեւս երբեք տուն պիտի չվերադառնան, որովհետեւ ժամանակի ընթացքին պիտի կորսնցնեն իրենց առաջին օրերու զգայնութիւնները: Եւ անոնք վերջին հաշուով թուական կորուստ, թիւի կորուստ մը պիտի ըլլան իրենց հայրենիքին համար: Այս պայմաններու մէջ կարելի էր մաղթել որ արտագաղթը կայանար միայն մարմնական ու բազուկի աշխատանքի մակարդակին վրայ, այլ ո՛չ թէ մտաւորական ու գիտական աշխատանքի: Այլ խօսքով՝ գոնէ մտաւորականները, արուեստագէտները, գիտնականները չփորձէին արտագաղթել, որովհետեւ չվերադառնալու հաւանականութիւնը աւելի զօրաւոր է անոնց պարագային եւ անոնցմով գոյացած կորուստը աւելի ճակատագրական պիտի ըլլայ երկրին համար:

Յիրուցան ըլլալու, երկրին լաւագոյն գաւակները կորսնցնելու այս նոր ցաւը պիտի գայ աւելնալ արդէն առկայ հին ցաւին վրայ, որովհետեւ ցիրուցան ըլլալու ճակատագիրը Հայաստանի միայն վերջին տասը տարիներուն ստեղծուած երեւոյթ է: Հին ու պատմական երեւոյթ է: Հայ ժողովուրդի լաւագոյն գաւակներէն ոմանք կ'ապրին ու կը մեռնին հեռաւոր ափերու վրայ: Անոնցմէ ոմանք, որոնք արժանի էին թաղուելու Երեւանի հայոց պանթէոնին մէջ, օտար ափերու մէջ կը մահանան առանց արժանավայել դամբարան մը ունենալու, նոյնիսկ երբեմն առանց դամբարան մը ունենալու:

Եւ հիմա, որպէսզի վերադառնանք Սիլվա Կապուտիկեանի բանաստեղծութեան պարտէզին, եկէ՛ք կարդանք ուրիշ բանաստեղծութիւն մը, որ նախորդներուն չափ հայրենասիրական է, որ սակայն կը հոսի տարբեր հունի մը մէջ: Յիրուցան ըլլալու, օտար ափերու մէջ ապրելու ու մեռնելու վերոյիշեալ ճակատագիրն է այդ:

Բանաստեղծն ալ կ'ըսէ այն ինչ որ ըսինք. Ինչ արժէ-
քաւոր գաւակներ իրենց կեանքը կորսնցուցին արտա-
սահմանի հողերուն վրայ եւ իրենց տեղը չունեցան
հայոց պանթէոնին մէջ: Ահա «Երեւանի հին պան-
թէոնը» խորագրեալ բանաստեղծութիւնը:

Մեր պանթէոնը փոքր է ու տխուր,
իբար հաւաքած մի քանի շիրիմ.
Օ՛, մեծ մահերով հարուստ ժողովուրդ,
ն՞ուր եմ քո որդոց շիրիմները հիմ:
Դարեր՝ ամուստամ ու անհայրենիք
քո որդիներին մեծագործ ու զոհ՝
ապրելիս՝ չեղաւ հայրենի տանիք,
մեռնելիս՝ չեղաւ հայրենական հող:
Ու հիմա օտար շիրմատուններում
որք ու մամոռտած հանգչում եմ նրանք:
Մէկը Սեմայի փերիմ հեռու,
մէկն՝ ամերիկեան խուլ երկմէի տակ.
... Մեր պանթէոնը, նա խուռն ու անշուք
աշխարհովը մէկ փռուած է լոխն.
Օրհնամք ու արցունք, օրհնամք ու արցունք
հեռու, հեռաւոր մեր շիրիմներին...:

Շատ զեղեցիկ, բայց նոյնքան տխուր բանաստեղ-
ծութիւն մը ահաւասիկ, ուրկէ վերցնենք քանի մը
նախադասութիւններ ինչպէս՝ «մեծ մահերով հարուստ
ժողովուրդ» կամ «մեր պանթէոնը հիմա փռուած է
ամբողջ աշխարհի վրայ»: Ուրիշ ազգ մըն ալ կա՞յ
արդեօք որուն պանթէոնը այնքան տարածուած ըլլայ
ամբողջ աշխարհի վրայ, որքան է՝ հայոց Պանթէոնը:
Մեծ մահերով հարուստ այս ժողովուրդը...:

Քաղենք նաեւ սա նախադասութիւնը՝
Ապրելու ընթացքին՝ չունեցան հայրենի տանիք,

Մեռնելու ընթացքին՝ չունեցան հայրենական հող:
է՛հ, եկէք բանաստեղծը մխիթարենք յիշեցումով մը:
Չէ՞ որ օտար ափերու վրայ թաղուած քանի մը մեծ
զաւակներու աճիւններուն մէկ մասը տասնամեակներ
վերջ փոխադրուեցան Երեւան: Եւ չէ՞ որ այդ աճիւնները
յարգանքով դիմաւորուեցան մեծամեծներու կողմէ,
որոնք շատ կը սիրեն իրենց ժողովուրդին ասացուածքը.
«գնա՛ մեռիր, եկո՛ւր սիրեմ»:

ՊԱՏԵՐԱԶՄԸ...

Միլվա Կապուտիկեանի բանաստեղծութեան պարտէզին մէջ մեր պտոյտը հիմա պիտի շարունակենք սեղանին վրայ դնելով շատ ինքնատիպ, եւ նոյնքան յուզիչ բանաստեղծութիւն մը, որուն վերնագիրն է «Պատերազմը»: Այս վերնագիրը ոչի՛նչ կը յուշէ բանաստեղծութեան անսովոր բովանդակութեան մասին: Մինչդեռ բանաստեղծութեան մէջ մեզ կը ցնցէ ընկերային կեանքի ամենամեծ ողբերգութիւններէն մէկը: Թերեւս ո՛չ մէկ բանաստեղծ մտածած է այն հարցին մասին, որ այստեղ բանաստեղծութեան նիւթ կը դառնայ: Որպէսզի չխանգարենք անակնկալին համը, պիտի չաճապարենք յայտնելու թէ ինչ է ան: Եւ նախ պիտի կարդանք բանաստեղծութեան առաջին ութ տողերը.

Որդեկորոյս մայրերիմ փառքեր ու երգ եմ ձօնում,
Խոնարհ մամբայ եմ տալիս այրում գոհուած
գիմուռքիմ,
Մամուկներիմ որբացած ամէնքը գիրկ եմ բանում,
Գուրգուրում եմ հօր մմամ՝ դարձած
գթոտ ու քարի:
Իսկ դուք, կեանքի եզերքիմ կանգնած լուռ ու
աննկատ,

Ձեռքսնացած, չսիրուած, չմայրացած աղջիկներ.
Ի՞նչպէս չափէ՞ք կորուստը, երբ կորցրի՞ք՝ չգտած,
Եւ ում անումը սգա՞ք, երբ անումներ

չեղան դեռ:

Կրցա՞նք հասկնալ թէ յանկարծ ինչպիսի հարց մը
դրուեցաւ մեր ուշադրութեան առջեւ: Ահաւասիկ ողբեր-
գութիւնը այն աղջիկներուն, որոնք չկրցան հարս ըլ-
լալ, որոնք չունեցան զիրենք սիրող մը, որոնք զա-
ւակներու մայր չկրցան դառնալ, որովհետեւ պատերազ-
մը առաւ տարաւ այն երիտասարդները, որոնք եթէ
չգոհուէին, եթէ պատերազմէն վերադառնային, հաւա-
նաբար իրենց դիմաց պիտի ելլէին օր մը, կեանքի
ընկեր պիտի դառնային անոնց: Անոնք իրենց կեանքի
սիրելիին կորսնցուցին տակաւին զայն գտնելէ առաջ
իսկ: Ի՞նչպէս պիտի սգան իրենց չունեցած այդ սիրե-
լիին մահը, երբ տակաւին անոր անունն անգամ յայտնի
չէ դարձած:

Ընդհանրապէս կը կարծուի որ ռազմադաշտին վրայ
գոհուած իւրաքանչիւր զինուոր բան մը կը փոխէ իր
ընտանիքին կեանքին մէջ, իր մօրը, հօրը, եղբօր կամ
քրոջ, կամ բարեկամի մը կեանքին մէջ: Չենք մտածեր
որ այդ զինուորին մահը կը փոխէ նաեւ կեանքը անա-
նուն կնոջ մը որուն պիտի սիրահարէր, որուն հետ
ընտանիք պիտի կազմէր: Չենք մտածեր որ այդ
զինուորին մահը բան մը կը փոխէ այն անանուն զակիին
կեանքին մէջ՝ որ չկրցաւ աշխարհ գալ իր հայրը ըլլալու
թեկնածու երիտասարդի մը կանխահաս մահուան հետե-
ւանքով: Խորին յարգանքով կը խոնարհինք գոհուած
զինուորին յիշատակին առջեւ, կը յարգենք իր որդին
կորսնցուցած մօր կամ հօր կսկիծը, կը գուրգուրանք
նահատակ զինուորներու որբերուն վրայ, բայց ո՛չ մէկը
կը մտածէ կեանքի եզրին մնացած սա աղջիկներուն

մասին, որոնք ուրիշի մը մահով ապրեցան նաեւ իրենց սեփական մահը:

Աւա՛ղ, կարօտ անձրեւի, դու՛ք թօշմեցիք
գունաթափ,
ձեր կրծքի տակ ցամափեց թմբուքեան ծով
մի ալիք.
ձեր կարծրացող կողերը չփափկեցիմ մայրութեամբ,
ու չտուիք կեանքիմ այն, ինչ միայն դու՛ք ունէիք:

Անպայման պիտի ձայնակցինք բանաստեղծին ու մենք ալ պիտի հասկնանք ողբերգութիւնը չամուսնացած, չմայրացած այն աղջիկներուն, որոնց երջանկութեան ճամբան գոցուեցաւ հեռաւոր ռազմազաշտերու վրայ ինկած անձանօթ երիտասարդներու կորուստով:
Եւ հիմա ցատկենք մէկ երկու հատուածներու վրայէն ու կարդանք բանաստեղծութեան ամէնէն իմաստալից վերջին տողերը.

Պատերա՛գվը...: Նա վերջիմ ռումբի հետ
չի աւարտում,
ակամի պէս դեռ յետոյ մա պայթում է
հոգու մէջ,
ու մինչ մահուան մօտեցող մօր հիմ կսկիծը
թմբում,
մխիթարում է այրիմ որդիներով՝ արդէն մեծ:
Ո՛չ, ժամանակը անցնող ձեր սիրտը չի ողորում,
դէմքիմ դառնում է կմնիռ, մագերի մէջ՝
մերմակ թել,
ձեր մէջ ամէն գարնան հետ պատերազմը
մորոգում,
եւ աւերներ է գործում տարէցտարի առաւել...

Դարձեալ պիտի ձայնակցինք բանաստեղծին: Պատե-
րազմը շատերու համար վերջացաւ, մարդիկ տօնական
մթնոլորտի մէջ են, նոր երիտասարդներ ռազմաճա-
կատներու վրայ պիտի չմեռնին այլեւս, ռումբեր պիտի
չտեղան երկինքէն, վերջացան գիշերային մղձաւանջ-
ները: Այո՛, կան սգաւորներ, իրենց որդին կամ
ամուսինը կորսնցուցածներ, բայց անոնք ալ տակաւ
պիտի վարժուին իրենց ողբերգութեան: Բայց ի՞նչպէս
պիտի մխիթարուին այն «չհարսնացած» աղջիկները,
որոնք պատերազմին պատճառաւ չկրցան գտնել իրենց
սպազայ կեանքի ընկերները: Պատերազմը անոնց
համար կը շարունակուի ահաւասիկ եւ ամէն գարնան
հետ, անոնց հոգիին մէջ ականներ կը պայթին: Եւ
ասիկա մինչեւ անոնց կեանքին վախճանը:

Հայրենական մեծ պատերազմի աւարտէն 13 տարի
վերջ գրուած այս բանաստեղծութեամբ Սիլվա Կապու-
տիկեան թերեւս նոր գլուխ մը կը բանայ պատերազմի
ընկերաբանութեան ու պատերազմի մը անհաշուելի
հետեւանքներուն մասին: Այս բանաստեղծութիւնը կը
լարէ մեր երեւակայութիւնը եւ մեր երեւակայութիւնը
թուիչք կ'առնէ դէպի կեանքի այն խորհուրդը, որ մեզի
կը խօսի ո՛չ թէ պատահածներուն մասին, այլ այն
դէպքերուն մասին որոնք կրնային պատահիլ եւ չկրցան
պատահիլ:

ՍԻՐՈՅ ԽՕՍՔԵՐ

Եւ հիմա սիրոյ խօսքեր: Որովհետեւ Սիլվա Կապու-
տիկեան ունի սիրոյ խօսքեր ալ: Թէեւ ընդհանրապէս
երջանիկ խօսքեր չեն անոնք, յուսախաբութիւններ,
դառնութիւններ, ակնկալութիւններ արտայայտող
խօսքեր են, բայց ի վերջոյ հիւսուած են սիրոյ թէմային
վրայ եւ մենք արդէն չենք կրնար երեւակայել բանաս-

տեղծ մը որ իր խօսքը չունի սիրոյ մասին, սիրելիի մը մասին:

Սիլվա Կապուտիկեանի սիրոյ տողերը դիմացիներն նկատմամբ անվերապահ հաղորդումով բացուած տողեր չեն: Վերապահութիւններ կան: Բայց սկզբնական շրջաններուն թերեւս մեր բանաստեղծն ալ կը հաւատար սիրոյ եւ կը հաւատար նաեւ որ սէրը ամբողջովին կը կերպարանափոխէ բնութիւնը, թէ բնութիւնն անգամ կը ցնծայ երկու սիրականներու միջեւ փոխանակուած զգացումներով:

Թէ ես չեմ սիրում, չեմ սիրում թեզ,
իմչո՞ւ է ձմեռն այսօր գարն՛ւն,
ձմրան արեւը այսօր այրում
անխօս երկինքը այսօր անհուն,
թէ ես չեմ սիրում, չեմ սիրում թեզ:
Թէ դուն չես սիրում, չես սիրում ինձ,
հապա իմչո՞ւ եմ ձեր փողոցում
այդքան սիրով ինձ ցամաքայ քացում
անցորդներ, տներ, մայքեր ու ձիւն,
թէ դուն չես սիրում, չես սիրում ինձ:
Ու թէ չեմք սիրում մեմք իրարու,
իմչո՞ւ եմ աստղերն այսօր անթիւ,
այսօր գեղեցի՛կ գիշեր ու տիւ,
աշխարհը՝ այսօր հաշտ ու ազնիւ,
նթէ չեմք սիրում մեմք իրարու:

Սիրոյ խօսք ահաւասիկ, եւ թէ սիրոյ գեղեցիկ խօսք:
Բայց ընդունինք որ միայն բանաստեղծներն որ պիտի հարցնեն. «Եթէ մենք զիրար չենք սիրեր, ինչո՞ւ աստղերը այսքան անթիւ են երկնակամարին վրայ»:

Մենք ալ մեր կողմէն աւելցնենք որ Մայր Բնութիւնը իր երկնակամարին վրայ անպայման քանի մը աստղ

եւս պիտի աւելցնէ եթէ տեսնէ որ երկու անմեղ հոգիներ սկսած են սիրել զիրար: Եւ այդ երկու անմեղ հոգիները պէտք պիտի ունենան՝ բարձրաճայն յայտարարելու իրենց սէրը: Իրենց շուրջ ամէն բան արդէն պիտի չմատնէ՞ անոնց սէրը:

Սիրոյ ուրիշ խօսք մը ահաւասիկ.

Ոչ, ես ոչ ոքի չեմ ասել երբեք, որ սիրում եմ
քեզ..

բայց մրա՞ համար արդեօք որ արթուն
լուսնի շողիկը՝

մութ սննեակներին հետամուտ այնպէս՝
արցումք է տեսել իմ անժում քարձին.-

թէ՛ թերթերն իմ դէմ քաց արած գիրքը՝
իր հանդէպ եղած իմ սառնութիւնից խոցուած,

խանդից մատնել է մտքերիս հումը,
կամ թէ հայելիս՝ խօսակցի կարօտ

տեսնելով՝ իր հետ իմ այս անսովոր մտերմութիւնը
գլխի է ընկել եւ շողակրատել ուրիշների մօտ

թէ՛ ընկեր դարձած իմ գաղտնիքներին՝
իմձ ձեր տուն բերող մութ փողոցներն են

բերանբացութիւն արել իմ մասին .-
կամ հայեացքիդ դէմ անգոր խոնարհուող

աչքերս են եղել իմ մատնիչները.-
հիմա բոլորը, բոլորը գիտեն, որ սիրում եմ

քեզ..

Սիրահար հոգիի հիանալի վերլուծում մըն է այս, եւ կ'արժէ որ մի առ մի կանգ առնենք մարդուս սէրը ուրիշներուն մատնող բոլոր սա գործօններուն վրայ: Եթէ գիշերը արցունքով կը թրջես բարձր, եթէ ուշադրութիւն չես կրնար կեդրոնացնել քու առջեւ բացուած գիրքին վրայ, եթէ սկսած ես քիչ մը շատ

նայիլ հայելիին, կը նշանակէ որ սիրել սկսած ես: Իրականութիւն է. մարդ չի կրնար զաղտնի պահել իր սէրը, մարդ չի կրնար միայն իրեն վերապահել իր սէրը:

Բայց միշտ չէ որ սէրը արեւի պէս պիտի փայլի: Սէրն ալ պիտի ունենայ իր իրիկնային ժամերը: Կամ մութին մէջ թաղուելու իր ժամերը: Դիմացինէն փոխադարձութիւն չտեսնելու ժամերը:

Մի՛ լացացնի, շատ եմ լացել, սիրելիս,
դու մի կարծիր՝ պաղ եմ այսպէս ու գոռոզ,
սիրտս շա՛տ է լցուած եղել վէրքերով,
սպիների՛ց է կարծրացել, սիրելիս:

Յոգնել եմ ես ցաւոտ, դաւոտ սէրերից,
ամէնքի դէմ սիրտս՝ րացած, աչքս՝ փակ,
Քար է եղել նրանց շքեղ կրծքի տակ,
իսկ ես, աւաղ, սի՛րտ եմ կարծել, սիրելիս:
Յոգնել եմ ես.. Թող որ ընեմ ես հանգիստ,
մանկան նման՝ ծնկիդ գլուխս դրած,
իմձ խնայիր ու գուրգուրա՛ իմձ վրայ,
ժա՛մս է արդէն իրիկնացել, սիրելիս:

Սիւլփա Կապուտիկեանի բանաստեղծութիւններուն միջեւ ցանցառ եւն այսքան քնարաչունչ, այսքան երաժշտահամ բանաստեղծութիւնները: Բայց կան: Ահա ուրիշ մը.

Զպահեցիր իմձ, չպահեցիր,
իմ փխրած սիրտը չփայեցիր,
իմ գլխի վերել չշողացիր,
իմ սիրոյ վրայ չդողացիր,
փոթորկի գոյժից չսքափեցիր,
վտանգի ուժը չչափեցիր:

Մի՛ կանչիր, արդէն հեռու եմ ես,
Քո ափիմ էի, չկապեցիր:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Սիւլվա Կապուտիկեանի բանաստեղծութեան պարտէզէն հրաժեշտ պիտի առնենք զինքը գլուխ գլխի ձգելով իր մարդկային հոգերուն, կարօտներուն ու փիլիսոփայութեան հետ: Հանրային աշխատանքի նուիրուած ամէն անձ երբեմն կը զգայ որ ինքն իրմէ հեռացած է եւ կարօտն ունի իր սեփական ինքնութեան: Աշխատանքի յորձանքը առած-տարած է զինքը: Բայց կուզայ պահ մը, երբ յանկարծ կը սթափի ան եւ կ'ըսէ Սիւլվա Կապուտիկեանին նման.

կարօտում եմ,
իմֆս՝ իմ մէջ, ինձ հետ մնալ - կարօտում եմ
գարթնել անհոգ,
մանուկ օրուան հետ մանկամալ- կարօտում եմ.
դուրս գալ տնից ու անճամաչ գնա՛լ, գնա՛լ,
կարօտում եմ.
Հագար տեսակ հոգս ու հարցում՝
մէկը մէկից առաջ ընկած՝
իմձ առել եմ իրենց տեղդուտ հրմշտոցում,
իմձ՝ իմձանից հեռացնում եմ, անջատում եմ,
եւ զգում եմ մէկ էլ յանկարծ,
որ իմֆս՝ իմձ կարօտում եմ..

Հանրային մարդոց յաւերժական անհանգստութիւնն է այս եւ միայն Հանրային մարդն է որ կը հասկնայ զայն: Եւ մարդուս սիրտը բզբտող հակասութիւն մը կայ այս հոգեվիճակին մէջ: «Դուրս գալ տունէն ու անճանաչ երթա՛լ, երթա՛լ»: Նշանաւոր մարդ եղած ըլլալու ճնշումէն ազատի՛լ: Ասիկա կարօտ մըն է, այո՛: Բայց քանի՞ վայրկեանի համար: Կա՞յ աւելի երջանիկ

զգացում քան զգալ որ մարդիկ կը ճանչնան քեզ, կը յարգեն քեզ, իրարու ցոյց կուտան քեզ: Որովհետեւ դուն մէկն ես որ միայն քու սեփական կեանքը չէ որ կ'ապրիս: Դուն կը բաժնես ուրիշներուն կեանքն ալ: Կամ ուրիշներուն ալ լայն բաժին կը հանես քու սեփական կեանքէն:

Փոքրիկ ոստում մը ընենք ու կարգանք ուրիշ բանաստեղծութիւն մըն ալ.

Շարուել եմք լարուած, կողք կողքի -
շախմատի ֆարերի մման.

Ուզում եմք յաղթել մէկմէկի -
շախմատի ֆարերի մման.

Բայց մէ'կ է, զինուոր թէ արքայ'
յաղթեմք էլ, իջնելու եմք ցած.

Տախտակիմ նորերմ եմ շարքի -
շախմատի ֆարերի մման:

Իսկապէս իմաստութիւն կայ այս բանաստեղծութեան մէջ, իմաստութիւն որ թաթխուած է որոշ երաժշտականութեան մը մէջ: Ճատրակի քարերու նման, քով քովի շարուած, որքան ալ պայքարինք յաղթանակի մը համար, զինուորը ըլլանք կամ արքայ, նոյնն է, օր մը վար պիտի իջնենք ու ճատրակի տախտակին վրայ տեղ պիտի բանանք նոր քարերու: Կեանքի ամէնէն հասարակ ու տխուր ճշմարտութիւնը՝ ըսուած բանաստեղծական գեղեցկութեամբ: Եւ այնուհետեւ հարց պիտի տանք թերեւս. կ'արժէ՞ր որ այսքան տքնէինք ու զոհաբերուէինք: Մարդիկ բաւականաչափ երախտապա՞րտ են մեզի, կը գնահատե՞ն մեր զոհաբերութիւնը: Յոյց տուէք հանրային գործիչ մը որ իր կեանքին մէջ քանի մը անգամ այս հարցումը ուղղած չըլլայ ինքն իրեն:

Մահից յետոյ՝ գովժ ու գիր,
ապրելիս՝ մի տառ չկայ.
պարսաւում ենք ու խոցում,
բարեգութ մի բառ չկայ.
ժայլում ենք լուռ, գղջալով,
դագադների ետեւից,
Յետոյ .. Նոյնն ենք կրկնում,
չենք խրատում, մար չկայ:

է՛հ, կը թուի թէ բանաստեղծուհին կը մոռնայ թէ
որքան շատ ու որքան լաւ բան գրուած է իր մասին,
թէ որքան հանրածանօթ է Հայաշխարհի մէջ, թէ որքան
կը յարգուի ամենուրեք: Կը մոռնա՞յ: Թէ ոչ պարզապէս
նժարներու մէջ կը դնէ այն ինչ որ շահած է եւ այն
ինչ որ կորսնցուցած է եւ հաշուեկշիռ մը կ'ընէ: Ահա
իրմէ կարդանք վերջին բանաստեղծութիւն մըն ալ,
որ մեր բանաստեղծներէն շատերուն շրթներէն ար-
ձակուած տրտունջքի կը նմանի:

Իմ չեղեա՛լ աստուած, գուցէ կա՞ս իրօք,
հեշտ է աշխարհում քեզ ապաւինել,
ինչ էլ որ անես, ես դեռ վաղօրօք
անըզնչել եմ ինձ՝ քեզից գոհ լինել:

Դու տուել ես ինձ ձիրքեր ու կորով,
փառք ու համբաւ ես տուել անկասկած,
բայց ինչ-որ գաղտնի մի պայմանագրով
հակակշռել ես տուածդ, աստուած՝:

Ես դեռ չծնուած՝ գրկել ես հօրից,
ինձ բաժիմ հանել մի խեղճ մանկութիւն,
գրկել հարսնութեան գուլալ յուշերից
ու տեղը թողել տառապանք ու թոյն:

Ես չեմ տրտնջում, բայց այնուհանդերձ
կ'ուզեմայի քեզ յիշեցնել կամաց՝

*Քո խլածները՝ տուածիդ հանդէպ
շատ չեղա՞ն արդեօ՛ք, իմ արդա՛ր աստուած...*

*Թերեւս իրաւունք ունի բանաստեղծը, բայց վստահ
ենք որ ան երբեմն իր տան պատուհանէն ականջ կուտայ
անջրպետէն հասնող ձայներու ու կը լսէ թէ ամէն օր
հոս կամ հոն աշակերտ մը կ'արտասանէ անոր «Խօսք
իմ որդուն»ը: Ասիկա մաս կը կազմէ արդար Աստուծոյ
կողմէ տրուած բարիքներուն:*

**ԿԱՐԴԱԼՈՎ
ՍԻՊԻԼԻ ՄՈՌՅՈՒԱԾ ԷՋԵՐԸ**



ՈՂՁՈՒ ՅՆ, ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ

Ընդամէնը 230 էջերէ բաղկացեալ գիրք մը լեցնելու չափ բանաստեղծութիւն: Այս է քերթողական վաստակը Սիպիլի, որուն անունը մեր մէջ տակաւին կը յամենայ որպէս փափուկ սեռի զգայուն ներկայացուցիչ: Բայց եթէ հարցուի թէ սա 230 էջերը լեցնող բանաստեղծութիւններուն մէջ քանի՞ բանաստեղծութիւն կայ որ կը շարունակէ ապրիլ բեմերու ու շրթներու վրայ, դժուար է պատասխանել: Հազիւ երկու, կամ երեք: Հազիւ երկու կամ երեք բանաստեղծութիւններ տակաւին կը հնչեն մեր բեմերուն վրայ: Եւ ասոնցմէ ամէնէն նշանաւորն ալ, ամէնէն տոկունն ալ «Հայ լեզուին»ն է, Սիպիլի ամէնէն բախտաւոր բանաստեղծութիւնը: Ի՞նչ լաւ որ գոնէ այս բանաստեղծութիւնը կ'ապրի ու կը պատահի որ բեմերուն վրայ յանկարծ աշակերտուհի մը սկսի մեզ յուզել արտասանելով բանաստեղծութեան այնքան ծանօթ առաջին տողը.

Դու՛ն առաջին վանկ շրթու՛մքիս,
առաջին վանկ իմ հոգւոյս....

Հապա միւսնե՞րը:

Եթէ աշակերտ մը իր գրականութեան ուսուցչին հարցնէ թէ ո՞րն է Սիպիլի ամէնէն երկարակեաց ու գեղեցիկ երկրորդ բանաստեղծութիւնը, ուսուցիչը պիտի չվարանի ու պիտի սկսի արտասանել.

Աստուածուժեամբը բարի հոգւոյդ անծայր
ու անծիր,
եթէ դու՛ն մայր ըլլայիր ...

Սիպիլի անմոռանալի «Խօսք ընդ Աստուծոյ»

խորագրեալ բանաստեղծութիւնն է այս, երջանիկ բանաստեղծութիւն մը եւս, որ դարձած է Սիպիլի անցագիրը՝ անոր դէպի յաւերժութիւն գացող ճամբորդութեան մէջ:

Երրորդ մը:

Ուսուցիչը այս անգամ պիտի սկսի դարձնել գիրքին էջերը: Պիտի սկսի փնտռել: Յիշելու աշխատիլ: Որովհետեւ Սիպիլի միւս բանաստեղծութիւնները այսօր չուրի մէջ մնացած են: Մինչդեռ անոնց մէջ ալ կան բանաստեղծութիւններ որոնք կրնային դառնալ Սիպիլի յաւերժական անցագրին մէկ-երկու միւս էջերը:

Եկէ՛ք մենք ալ դառնանք գրականութեան ուսուցիչ եւ քիչ մը ման գանք Սիպիլի բանաստեղծութեան պարտէզին մէջ, որպէսզի մեր աշակերտներուն ցոյց տանք թէ Սիպիլի ամբողջական գործին մէջ իսկապէս կան ուրիշ քանի մը բանաստեղծութիւններ եւս, որոնք կը գանազանուին որպէս յաջող եւ գեղեցիկ կտորներ:

Բայց չենք կրնար ցատկել առաջին երկու անմահ բանաստեղծութիւններուն վրայէն: Սիպիլի բանաստեղծութեան պարտէզին դուռը բանանք ողջունելով անոր Հայ Լեզուի համար գրուած գեղահիւս բանաստեղծութեան որոշ հատուածները: Ողջունենք այդ սքանչելի բանաստեղծութիւնը, խոնարհինք հայ Լեզուի նկատմամբ բանաստեղծին ունեցած պաշտամունքին առջեւ եւ քիչ մըն ալ ուրախանանք որ ան մեզի հետ չէ այլեւս եւ չի տեսներ այն անփառունակ վիճակը, որուն մատնուած է այսօր հայոց Լեզուն:

Դուն առաջին վանկ շրթումքիս, առաջին վանկ
իմ հոգւոյս,
Ախիկիմ հնչիւմ իմ մանկակամ լեզուիս հեզ,
որով լացի ու երգեցի միշտ յուզումներս,
իդն ու յոյս,

իմ մայրենի քաղցրի՛կ բարբառ, ողջո՛յն քեզ:

Իսկապէս ողջո՛յն մեր մայրենի քաղցրիկ բարբառին:
Սա առաջին չորս տողերով իսկ Սիպիլ իր բանաստեղծութեան տակ դրած է հիմ մը, մեկնակէտ մը, որուն նմանը գիւրիին չէ գտնել իր միւս բանաստեղծութիւններուն մէջ:

Քու բառերէդ արեւէն վառ ու բիրեղէն ալ վնիտ՝
իմ հոգւոյս մէջ բոց մը կաթեց մշտակէզ,
հուր ծարաւ մը անհունութեան, բարւոյն,
մեծիմ նշմարիտ,
ո՛վ մանկութեանս ազնիւ լեզոււն, կ'օրհնեմ քեզ:

Քիչ առաջուան ողջոյնին վրայ աւելցաւ օրհնութիւնը:
Օրհնութիւն՝ զոր բանաստեղծը կ'իջեցնէ իր մանկութեանը ազնիւ լեզուին վրայ:
Եւ շարունակենք.

Տարիներով թափառական օտար երկիր ու վայրեր,
զուրկ մնացի ընտանիքէս, տնակէս,
այլ քու կարօտդ անդարման ցաւն եղաւ
սրտիս կարեւլէր,
ո՛վ իմ լեզուս, ամէն իդձ գո՛հ ըլլայ քեզ:

Շարունակելէ առաջ ընթերցումը այս երջանիկ բանաստեղծութեան, ուշադրութիւն պիտի ընենք այն հիւանալի գուգահեռականութեան, որ կայ իւրաքանչիւր տունին վերջին տողերուն միջեւ, որոնք սկիզբէն մինչեւ երկարաշունչ բանաստեղծութեան վերջին տունը, եթէ միւս տողերէն անջատուին ու իրարու տակ գրուին, տարբեր բանաստեղծութիւն մը կը ստեղծեն, ինչպէս՝

իմ մայրենի քաղցրիկ քարքառ, ողջո՛յն քեզ,
ո՛վ մանկութեանս ազնիւ լեզուն, կ'օրհնեմ քեզ,
ո՛վ իմ լեզուս, ամէն իդձ գո՛հ ըլլայ քեզ:

ԵՐԿՈՒ ՆԺԱՐՆԵՐՈՒ ՄԷՉ

Յետագայ տարիներուն Սիպիլ գիտցա՞ւ արդեօք թէ
իր մուսան յանկարծ արտակարգօրէն ինչպիսի փայլուն
լոյս մը բռնած էր իր վրայ երբ ան կը սկսէր գրի առնել
«Հայ լեզու» բանաստեղծութիւնը: Եթէ գիտնար, եթէ
գիտնար թէ այս բանաստեղծութիւնը իր անցագիրը
պիտի դառնար դէպի յաւերժութիւն, թերեւս այսքան
պարզունակ ու անշուք խորագիր մը պիտի չտար այս
բանաստեղծութեան եւ դայն պիտի մկրտէր աւելի
փառաւոր, աւելի շողչողուն անունով մը:

Ջարմանահրաշ վսեմ թարգման դուն սրբութեանց
անմատոյց,
դուն արձագանգ հայ անցեալին, կեանքին վէս,
տիտաններու, քերթողներու անմահ փառքին
ապացոյց,
ո՛վ վեհ քարքառ իմ հայրերուս, պատի՛ւ քեզ:

Դուն Մեսրոպին ու Սահակին շունչին թրթռումը
նսկի,
որ հայրենի յուշերն անդուլ կ'նդերգես.
իր պաշտելի աւանդութեանց, նշխարներում սուրբ
ըսկի,
ո՛վ անմամ չճնաղ լեզու, բուրվա՛ն քեզ:

Հետզհետէ կ'անդրադառնանք որ Սիպիլ այլեւս ինք-
զինք յանձնած է չորսական տողերէ բաղկացեալ տու-

ներու վերջին տողերու արբեցումին: Այդ չորրորդ տողերուն իւրաքանչիւրը ուժեղ աղիւս մը կը դնէ շէնքին վրայ եւ բանաստեղծը այլեւս վերի երեք տողերը կը հիւսէ պարզապէս ճամբայ բանալու համար չորրորդ տողին, անոր մէջ դնելով միշտ ողջոյն մը, օրհնութիւն մը, համբոյր մը, պատիւ մը, բուրվառ մը եւ տակաւին ինչե՛ր:

Դուն թրթռացիր անտռոններու սօսիներում տակ
ստէպ,
հայ աշուղիմ թնարիմ պարծամթն եղար վէս,
հիմա կ'ներգես զաւակներուդ մժդեհ կեանքը
երաշխէպ,
թերթողներու անմահ քարքառ, քի՛ւր փառք թեզ:

Թերեւս աշակերտը հարց պիտի տայ թէ՛ այստեղ ի՞նչ կը նշանակէ նժդեհ, ի՞նչ կը նշանակէ երաշխէպ: Ուսուցիչը պիտի ժպտի, ներքին ժպիտ մը պիտի ունենայ որպէս հիացում մեր հարուստ ու հիանալի լեզուին նկատմամբ եւ պիտի ըսէ. սիրելի զաւակս, նժդեհ կը նշանակէ պանդուխտ, օտարութեան մէջ ապրող, իսկ երաշխէպ՝ կը նշանակէ վիրաւոր, վէրք, տառապանք, հալածեալ: Բանաստեղծը ահա հայոց լեզուին երգել կուտայ իր պանդուխտ զաւակներուն վշտահար ու տառապակոծ կեանքը: Եւ եթէ՛ այս գեղեցիկ բառերը նոր բանաստեղծականութիւն մը կը շահեցնեն մեր լեզուին, ահաւասիկ բանաստեղծը չի մոռնար նաեւ բիւր փառք հիւսել քերթողներու այդ անմահ լեզուին համար:

Եւ հիմա մէկ շունչով պիտի կարդանք բանաստեղծութեան վերջին երեք տուները, որոնք օրհնութիւնը կ'առնեն ու կը տանին մինչեւ մեր պապերը, մինչեւ երանելի մեծերը:

Օրհնեա՛լ ըլլամ մեր հայրերը, որոնք թէև
 ցիր ու ցամ,
 մութ օրերուն՝ մոլորած չոր շիւղիմ պէս,
 մոռցան իրենց տունն ու տեղը, գաւակներմին
 ուրացան,
 իրենց անձն ալ, բայց չմոռցան երբեք ինք:

Օրհնեա՛լ ըլլամ մեր մայրերը, որոնք զինք սնուցին
 իրենց շունչովն ու աղօթքով սրտակէզ,
 խարխուլ, փլած կտուրին տակ, կարօտ
 պատառ մը հացին,
 գուրգուրանքով պահպանեցին միշտ զինք:

Թող որ ես ալ, մեր հայրերու յետին գաւակը
 թշուառ,
 սուրբ տաճարիդ ոտքը բերեմ ողջակէզ
 միշտ տառապած, երբեք շիջած սիրտէս կայծ մը
 խանդավառ
 հոգւով պաշտեմ ու քնարովս օրհնեմ ինք:

Կարելոր է նշել որ այս բանաստեղծութիւնը գրուած է 1912 թուականին: Եւ յուզիչ է յիշել թէ մեր հայրերը երբեմն ստիպուեցան ուրանալ իրենց գաւակներն ու նոյնիսկ իրենց անձը, բայց չմոռցան իրենց մայրենի լեզուն: Եւ յուզիչ է յիշել որ մեր մայրերը պատառ մը հացի կարօտ մնացին, բայց նորէն ալ սնուցին իրենց մայրենի լեզուն իրենց հոգեհատորին նման եւ գուրգուրանքով պահպանեցին զայն:

Այս տողերը ինչպիսի տխուր, սիրտ բզկտող հառաչ մը արձակել պիտի տային մեզի, եթէ դրուէին մեր օրերու այն հայ մարդոց առջեւ, որոնք ամէն բան ունին, շքեղ բնակարան, հանգստաւէտ կեանք, ճոխ ճաշասեղան, զաւակներով շրջապատուած բոյն, բար-

գաւաճ գործ, բայց չունին իրենց մայրենի լեզուն: Սիպիլի սիրտն ալ, որ «միշտ տառապած էր, բայց երբեք չէր շիջած», պիտի կարենա՞ր որպէս մատաղ իրմէ խանդավառ կայծ մը բերել մեր մայրենիի սուրբ տաճարին:

Այս բանաստեղծութիւնն ալ, ինչպէս մեր գրականութեան մէջ ուրիշ հազարաւոր հիանալի էջեր, կը դառնայ կշիռ մը, որ իր երկու նժարներուն մէջ իրարու հետ կը բաղդատէ երէկն ու այսօրը:

ԵԹԷ ԴՈՒՆ ՄԱՅՐ ԸԼԼԱՅԻՐ ...

Անցնելէ առաջ Սիպիլի նուազ ծանօթ կամ մոռցուած քանի մը ուշագրաւ բանաստեղծութիւններուն, կանգ պիտի առնենք այս բանաստեղծին երկրորդ, կամ թերեւս ալ առաջին ամենակարեւոր գործին վրայ, որ է «Սօսք ընդ Աստուծոյ» բանաստեղծութիւնը: Այս բանաստեղծութեան գոնէ առաջին չորս տողերը քանդակուած են յիշողութեանը մէջ բոլոր անոնց, որոնք քառասուն, յիսուն տարի առաջուան մեր իրաւ դպրոցներուն բովէն անցած են եւ որոնք իրենց դպրոցէն բաժնուելու ընթացքին անսպասման մեր գրականութեան քանի մը ընտիր էջերը իրենց հետ տարած են որպէս կեանքի անմոռանալի ու անգիր ընկեր: Երբ Սիպիլ ըսուի, անոնք կրնան անմիջապէս արտասանել գոնէ սա չորս տողերը.

Աստուածուծեամբը քարի հոգւոյդ
անժայր ու անծիր,
Եթէ դուռ մայր ըլլայիր,
Փոխանակ հայր ըլլալու,
Աշխարհ արդեօք չէ՞ր թաւալեր առանց
արցունք մը լալու:

1924 թուականին գրուած այս հրաշալի տողերը աւետաբերը կրնան նկատուիլ կնոջական ազատագրում կամ Ֆէմինիզմ կոչուած այն շարժումին, որ նոր ծայր կուտար տակաւին: Այնուհանդերձ բաւական խիզախ փորձ էր Աստուծոյ պատկերին մէջ մայր մը տեսնելու նախընտրութիւնը, փոխանակ հայր մը տեսնելու: Սիպիլէն վերջ 25 տարի եւս պէտք է անցնէր որպէսզի Արեւմտեան աշխարհի Ֆէմինիսթները հարց տային թէ ինչո՞ւ մարդիկ անպայման արական դիմագծութեան մէջ է որ կը պատկերացնեն Աստուածը, այլ ոչ թէ իգական:

Բայց ցնցիչ է Սիպիլին գիւտը եւ կնոջական դատի պաշտպանութեան համար գրուած կամ չգրուած հազարաւոր էջերէ շատ աւելի իմաստալից պատգամ կը բերէ մեզի, մտածելու կ'առաջնորդէ մեզ: Աշխարհի գործերը վատէն դէպի լաւ չէի՞ն փոխուեր եթէ Աստուած մայր մը ըլլար, փոխանակ հայր ըլլալու: Աշխարհի վրայէն արդեօք չէ՞ր դադրեր արցունքը: Դաշտերու մէջ նորածիլ ծաղիկները այնքան կանուխէն կը մեռնէի՞ն նախիրներու, անասուններու սմբակներուն տակ ճգմուելով: Աշխարհի վրայ գութը անփառունակ պարտութեան չէ՞ր մատներ ոյժն ու բրտութիւնը: Մայր մը կ'արտօնէ՞ր որ պատահին այն դժբախտութիւնները, որոնք ամէն վայրկեան կը պատահին երկրագունտին վրայ:

Դեռ մտրածիլ՝ կը մեռնէ՞ր դաշտին
ծաղիկն առաքուր

Նախիրներու կաշմբուն
Սմբակին տակ ոգեսպառ,
Աստուածային հոգիդ գթած եթէ գրգար մայրաբար:

Անշուշտ խուժին կը յաղթէր գութը՝
ուժն ալ արի

Թփուտներու կամ սարի
Թռչնիկն անգէն ու տկար՝
Արիւնախանձ ուրուրներու միրանին տակ
չէր տֆար:

Եթէ դուռ մայր ըլլայիր, մարդը կ'ըլլար
անձին տէր,
Ազատ, անկեղծ, անվեհեր,
Երախտի՛քի բեռան տակ,
Հոգին երբեք չէր կորանար անարգ միւթին
մահատակ:

«Ա՛հ, եթէ մայր ըլլայիր», կը գոչէ բանաստեղծուհին,
այսպէս՝ իգական սեռի բոլոր բարի յատկութիւնները
դնելով մարդկային արժէքներու ամենաբարձր
աստիճաններուն վրայ: Այս բարի ցանկութիւնը թէեւ
պատիւ չի բերեր այրերուն, բայց կը կարծենք թէ
այրերն ալ արդէն կը խոնարհին բոլոր այն առաքի-
նութիւններուն առջեւ, որոնք խտացած են «մայր»
բառին, կամ մայրութեան վսեմ առաքելութեան մէջ:

Ո՛հ, եթէ մայր ըլլայիր, հանդուրժէի՞ր
պիտի լուռ՝
Երբ գեղարդին մերժել սուր՝
Կողէն արիւն կը պռոթկար
Յիսուսիդ որ կը պաղատէր. «Գթա՛, մարմինս է
տկար»

Ո՛հ, կ'ըղձայի, կ'ըղձայի մայր ըլլայիր
պահ մը լոկ
Հանդէպ կեանքին անողոք
Օրէնքներուն անասամ,

Եւ զգայիր թէ մեծ սրտէդ մարդիկ ի՛նչ սէր
կը յուսան:

Սիպիլ, անգամ մը հարցումի մը պատասխանելով ջանացած էր բացատրել թէ ինք ինչպէս կ'ըմբռնէր բանաստեղծութիւնը: «Քանի մը տողէ բաղկացած ոտանաւորներ կան, զորս հարիւր անգամ կը կարդայ մարդ, գոց կը սորվի, եւ սակայն չի յագենար: Ինչո՞ւ. որովհետեւ բանաստեղծը դրած է անոր մէջ իր հոգիին գոյնը, իր նկարագրին ցուքը եւ իր ճաշակին հմայքը», ըսած էր ան:

Անկասկած Սիպիլ իր այս բանաստեղծութեան մէջ դրած է իր կանացի հոգիին բոլոր գոյները: Կնոջական նուրբ զգայնութիւնը, փխրուն սիրտը, զաւկի նկատմամբ սէրը, մարդոց նկատմամբ գուլթը, բնութեան եւ անասուններու մանրաշխարհին նկատմամբ գուրգուրանքը, եւ այսպիսի զգայնութիւններ երբեմն կրնան կին գրողները տանիլ դէպի չափէն աւելի վերերը, դէպի ամպերը, ու հողէն կը կտրեն անոնց ոտքերը, բայց այս բանաստեղծութեան մէջ Սիպիլ ամուր կը կոխէ հողին վրայ եւ Աստուածն ալ կը կանչէ վար, իրեն միանալու: Ահա թէ ինչո՞ւ այս բանաստեղծութիւնը կը շարունակէ ապրիլ ու դեռ ալ պիտի ապրի երկար ժամանակ:

ՈՂՋՈՒ ՅՆ ԿՆՈՋԱԿԱՆ ՀՄԱՅՔԻՆ

Անցնող 90, 80 կամ 70 տարիներու ընթացքին Սիպիլի բանաստեղծական վաստակը թերեւս որոշ փայլ մը կորսնցուց, բայց իր շրջանին Սիպիլի բանաստեղծութիւնները կը կարդացուէին հեւ ի հեւ ու շրջանի երեւելի գրողները գրախօսութիւններ կը հրատարակէին Սիպիլի բանաստեղծութիւններուն մասին: Տպաւորիչ կին էր, լաւ հոետոր, լաւ մտածող, գաւառացի հայ աղջիկներու կրթութեան համար աշխոյժ աշխատանքի նուիրուած: Իր տան կերակուրները կ'եփէր, ժանեակներով ձեռագործներ կը հիւսէր, բայց դուրս կ'ելլէր ու տուն տուն կը պտըտէր գաւառացի աղջիկներու ի նպաստ սարքուած պարահանդէսի մը տոմսակները ծախելու համար: Իր վրայ հաւաքած էր հայ իգական սեռի բազմաթիւ շնորհները:

Այսպիսի կին մըն էր այն՝ որ օր մը խօսք ուղղած էր Աստուծոյ եւ ըսած էր. Տէր, եթէ մայր ըլլայիր, փոխանակ հայր ըլլալու, աշխարհը գրախօսի մը կը վերածուէր, աշխարհի վրայէն կը վերնային բոլոր չարիքները: Այսպիսի հաւատք մը ունէր կիներու ու մայրերու բարի հոգիին հանդէպ:

Ըսինք արդէն որ «Պօք ընդ Աստուծոյ» բանաստեղծութիւնը Սիպիլի ամէնէն յաջող բանաստեղծութիւններէն մէկն էր: Եւ հիմա այդ բանաստեղծութենէն ուստում մը պիտի ընենք դէպի ուրիշ բանաստեղծութիւն մը, որ նմանապէս գովաբանութիւնն է իգական սեռի բարի շնորհներուն: Այս մէկը կը կոչուի «Ինչո՞ւ, ինչո՞ւ»: Արդարեւ ինչո՞ւներու շարք մըն է այս, որ դարձեալ ուղղուած է Աստուծոյ: Սիպիլ, որ «Պօք ընդ Աստուծոյ» խորագրեալ բանաստեղծութեամբ ուղած էր Աստուծոյ պատկերացումին մէջ տեսնել մայրական անհունօրէն գթասիրտ ու բարի դէմք մը, կը

սկսի հաւատալ որ կնոջական շնորհներն ու գեղեցկու-
թիւնները արդէն այնքան տիրական ու լայնատարած
էին, այնքան ամենահաս ու բաւարար, որ բնութեան
մէջ այլեւս ուրիշ գեղեցկութեան եւ բարիքի պէտք
չէր մնացած: Ասիկա ըսելու ձեւ մըն էր անշուշտ,
բանաստեղծական համեմատութիւն մը, որուն նպա-
տակն էր ամէն բանէ վեր դասել կնոջական շնորհները:

Տէ՛ր, եթէ հուր վառքով լոյսէն անթափանց
յօրինեցիր կիմն այնքան բարձր, այնքան վեր,
իմչո՞ւ արեւն ալ վառեցիր լուսապանծ.
ի՞ր մայուածքը կեանք սփռելու չէ՞ր բաւեր..
Եթէ վարդիմ բուրմունքներովմ օծեցիր
կնոջ ժպիտն, ի՞ր պերճամբներն ու ցաւեր,
ծաղիկներով իմչո՞ւ պննել դաշտն անծիր.
ի՞ր խումկն աշխարհ հմայելու չէ՞ր բաւեր:

Ահաւասիկ բանաստեղծուհին հարցը դրաւ Աստուծոյ
դատաստանին առջեւ: Նոյնիսկ սկսաւ հաշիւ պահանջել
Աստուծամէ: Քանի որ Տէրը այնքան բարձր, այնքան
վեհ ստեղծած էր կիներ, այնքան բազմակողմանի շնորհ-
ներով օժտած էր զայն, այլեւս ի՞նչ պէտք կար նաեւ
վառելու արեւուն լոյսը: Կնոջ նայուածքը կը բաւէր
կեանք սփռելու ամբողջ աշխարհին: Եւ քանի որ Տէրը
վարդի բուրմունքներով օժտեց կնոջ ժպիտը, այլեւս
ինչո՞ւ անձայրածիր դաշտերը զարդարել ծաղիկներով:
Կնոջ խունկը չէ՞ր բաւեր հմայելու ամբողջ աշխարհը:
Ցատկելով չափազանցութիւններու վրայէն, հասկը-
նանք թէ բանաստեղծուհին որքա՞ն վեհ ու հմայիչ
պատկեր մը ստեղծել կ'ուզէ կնոջական դէմքի վրայ:
Ուրիշ ի՞նչպէս պիտի բացատրէ ան մեզի թէ կնոջական
գեղեցկութեան, կնոջական բարութեան, կնոջական
ժպիտին ու հմայքին քով աշխարհի ու բնութեան բոլոր

միւս բարիքները անշուք կը մնան, երկրորդական կը մնան, նոյնիսկ աւելորդ կը մնան:

Սիպիլ գաղափարական ինքնատիպ գիւտի մը վրայ հիմնած է իր այս բանաստեղծութիւնը եւ այդ գիւտն է որ բանաստեղծութիւնը կը դարձնէ Սիպիլի գրական ժառանգութեան քանի մը թանկագին կտորներէն մէկը: Կարգանք բանաստեղծութեան վերջին երեք տուներն ալ, որպէսզի անգամ մը եւս մտնենք բանաստեղծին հոգեբանութենէն ներս:

Ինչո՞ւ կռիակն, ինչո՞ւ անտառն ու վտակ,
Ինչո՞ւ երկինքն ստեղծեցիր ու ծովեր,
Եթէ կնոջ պիտի տայիր օր մը կեանք.

Աչքն իր հոգւոյն խորհուրդներուդ չէ՞ր քաւեր:

Եթէ կիմը հակադրութիւն մ'ըրիր պերմ
բարւոյն, չարիւն, որ փոթորկէր ու թովէր,
Ինչո՞ւ պատրանք տուիր կեանքին, յոյսին վերջ.

Իր հմայքը մարդ տանջելու չէ՞ր քաւեր:

Եթէ վսեմ հմայքներով երկնածիր

սիրտ մը տուիր իրեն, պատիժ կամ մուէր,

Ինչո՞ւ սիրով աշխարհն ամբողջ լեցուցիր.

Իր սէրն անհուն տիեզերքիդ չէ՞ր քաւեր:

Այստեղ վերջ կը գտնէ «ինչու»ներու շարքը, «ինչու»-ներ՝ որոնք իրականութեան մէջ պատասխանի չեն սպասեր: Դարձեալ ցատկելով չափազանցութիւններու վրայէն, նաեւ լեզուական կամ կառուցուածքային մէկ երկու տկարութիւններու վրայէն, ողջունենք այս երջանիկ բանաստեղծութեան ընդհանուր գաղափարախօսութիւնը, մանաւանդ վերջին տողէն ցլացող պատգամը, որ հարցումի ձեւով տրուելով հանդերձ, հաստատում է ու վաւերացում.

Կնոջ սէրը չէ՞ր բաւեր անհուն տիեզերքին:

ԻՆՏԻ ԿԸՍԵՆ

Սիպիլի բանաստեղծութիւններուն մէջ շատ գործածուած բառ է «ինչո՞ւ»ն: Բայց «ինչո՞ւ, ինչո՞ւ»էն վերջ «ինչո՞ւ» խորագրով բանաստեղծութիւն մը եւս կայ, որ զարմանալի հանգիտութեամբ մը յանկարծ մեզ կը կայէ Պետրոս Դուրեանի շատ նշանաւոր մէկ բանաստեղծութեան: Տարբախտ Դուրեանի շատ ծանօթ, յաճախ արտասանուած մէկ բանաստեղծութիւնն է այդ:

Ինձի կ'ըսեմ.- «Ինչո՞ւ լուռ ես»,
- Ո՛հ, միթէ բառ կամ խօսք ունի՞
արշալոյսը որ կը բռնկի,
գի անհուճ է ամ ալ ինձ պէս:

Հիմա սկսինք կարգալ Սիպիլի «Ինչո՞ւ»ն:

Ինչո՞ւ կը խօսիս, ինձ կը հարցնեմ,
քու շուրջդ ամէն մարդ երբ լուռ է կեցեր,
սրտէն եկածը դուրս չի տար բերնէն.
Ինչո՞ւ կը խօսիս՝ ինձ կը հարցնեմ:

Կրցա՞նք նշմարել զուգահեռականութիւն մը, միջնուորտի նմանութիւն մը, որ սակայն հիմնուած է հակադիր տրամադրութիւններու վրայ: Արդարեւ, Դուրեանին կը հարցնեն. «Ինչո՞ւ լուռ ես»: Իսկ Սիպիլին կը հարցնեն. «Ինչո՞ւ կը խօսիս»:

Դուրեան հարցումին պատասխանը գիտէ: Լուռ է որովհետեւ ինք ալ արշալոյսին նման անհուն է: Իսկ Սիպիլ չի գիտեր հարցումին պատասխանը.

-Ինչո՞ւ .. բայց ինչու ես ալ չեմ գիտեր,
ամպրոպը գիտե՞ կը գոռայ ինչու,
ինչո՞ւ կը հոսին, կը սուրամ գետեր,
կամ կը սլանայ թռչնիկն օդայնու.
Ինչո՞ւ ... բայց, ինչու, ես ալ չեմ գիտեր:

Տարաբախտ Դուրեան կը շարունակէ.

Ինժի կ'ըսեն. «Միշտ տխուր ես»,
- Ի՞նչպէս չըլլամ, մէկիկ մէկիկ
թօթափեցան գլխուս աստղիկք,
արշալոյս մը չանցաւ սրտէս:

Իսկ Սիպիլ դարձեալ նմանութեան մէջ հակառակ
լարի վրայ է.

Ինչո՞ւ գուարթ ես կ'ըսեն ինձ շատեր.
Կեանքն հրապոյր չունի եւ աշխարհն է սուտ,
չե՞ս տեսներ սրտիդ համոյքն է հատեր
եւ շուքն ու պերմամբ ուրումներ են գուտ.
Ինչո՞ւ գուարթ ես կ'ըսեն ինձ շատեր:
- Գիտե՞ լմակը ինչու կը ցոլայ
երբ արեւն իր մէջ կ'արձակէ ցաւանդ.
երբ այգն իր ցօղը կաթէ արծաթեայ,
ինչո՞ւ կը ժպտին ակերը կանանդ.
Գիտե՞ լմակը ինչու կը ցոլայ:

Եթէ ողջունած էինք Պետրոս Դուրեանի տխուր
համակերպումը, այստեղ պիտի ողջունենք նաեւ Սիպիլի
լաւատեսութիւնն ու բնութեան ինչ ինչ գեղեցկու-
թիւններէն ներչնչուած հաւատքը՝ կեանքի նկատմամբ:
Անդին տարաբախտ Դուրեան կը շարունակէ.

Ինձի կ'ըսեն. «Կրակոտ չես.
լնակի մը պէս նս մեռած.
դալկահար՝ դէմքդ ու հայեցուած:
- Ո՛հ, յատակն եմ իմ փրփուրներս:

Իսկ հոս Սիպիլ դարձեալ հակառակ լարի վրայ է.

Ինձ կը հարցնեն. ինչո՞ւ կը սիրես
երբ կեանքէն ինկան այնքան թարմ թերթեր,
երբ որ խոյս տուաւ ինչ սիրոյդ երագ.
Ինձ կը հարցնեն. ինչո՞ւ կը սիրես:
- Հարցուցէ՛ք շիւղիմ հողիմ մէջ յուռթի
ինչո՞ւ չի ցամքիք անձրեւներէն վերջ,
հարցուցէ՛ք աղբիւրն ինչո՞ւ կը յորդի,
երբ որ սահանքներ կը հոսին իր մէջ:
Հարցուցէ՛ք շիւղիմ հողիմ մէջ յուռթի:

Այս կէտէն անդին ամէն կերպով վերջ կը գտնէ
նմանութիւնը, որովհետեւ տարաբախտ Դուրեան արդէն
գիտէ թէ իր «Ժամը հասած է» եւ պիտի մտնէ «իր
երկրորդ մօր գիրկը», այսինքն հողին տակ: Իսկ Սիպիլ
պիտի շարունակէ վայելել կեանքի բոլոր գեղեց-
կութիւնները, առանց կարենալ քակելու բնութեան
հազարաւոր խորհուրդներուն գաղտնիքը:

Կարգանք այս գեղեցիկ բանաստեղծութեան վերջին
հատուածը, առանց անտես առնելու բանաստեղծական
գեղեցկութիւնն ու յանգերու երաժշտականութիւնը.

Հարցուցէ՛ք դաշտիմ հասկերում դողդոջ
ինչո՞ւ կ'օրօրուիմ ու կը վէտվէտիմ,
ինչո՞ւ ծառերը կ'արձակեն բողբոջ
սօս եղևիմէն միմչ պտերն յետիմ.
հարցուցէ՛ք դաշտիմ հասկերում դողդոջ:

Ինչո՞ւ, ա՛հ, ինչո՞ւ ես ալ չեմ գիտեր:
Բայց կ'ուզեմ խօսիլ, երգել անխնայ,
յորդ, անդուլ ինչպէս կը գլեմ գետեր,
եւ խնդալ կեանքի անուրջիմ վրայ.
Ինչո՞ւ, ո՛հ ինչո՞ւ, ես ալ չեմ գիտեր:

Եկէ՛ք Սիպիլի այս կեանքոտ ու լաւատես բանաստեղծութեան մէջջէն պահ մը խոնարհինք Պետրոս Դուրեանի դառն ճակատագրին առջեւ:

ԵՐԿՆՔԻՆ ՍՈՒՐՔԵՐԸ

1892-ին երբ Գրիգոր Զօհրայ եւ իր գրչի ընկերները սկսան կրկին հրատարակել «Մասիս»ը, որ պիտի դառնար այդ շրջանի բազմաթիւ գրողներու հիւրանոցը, Սիպիլ առաջին թիւին համար գրեց բանաստեղծութիւն մը, որ կը կոչուէր «Մենաստանին Կոյսը»: Ուշագիւր ընթերցողին համար այս բանաստեղծութիւնը յանդուգն գիծ մը ունէր, որովհետեւ բանաստեղծուհին այստեղ նախընտրութիւն կուտար աշխարհիկ բարիքներուն ու վայելքներուն եւ բանաստեղծական զեղումով մը կ'ըսէր որ ինք այս վայելքները չէր ստորագասեր հանդերձեալ աշխարհի, հոգեւոր աշխարհի աննիւթական վայելքներուն: Ասիկա բողոք մըն էր ընդդէմ այն ուրուականներուն, ստուերներուն, դէմքերուն, որոնք երկրաւոր կեանքին տեղ երկնաւոր կեանքը ցոյց կուտային իրեն: Սիպիլ այս բանաստեղծութեան հրատարակութեանէն վերջ գլխացաւ մը պիտի ունենար, պիտի քննադատուէր, բանավէճ պիտի ստեղծուէր, բայց նետը արձակուած էր: Մենք այսօր այս բանաստեղծութիւնը պիտի կարդանք գնահատելով Սիպիլի խիզախ եւ տրամաբանական կեցուածքը: Ի՞նչ կը գրէր Սիպիլ.

Կէս գիշեր է. սեմեակիս մէջ միայնակ՝
Կանթեղ չունիմ, ոչ ալ երկիմքն ունի շող.
Իր լոյսն յետին մարեց դարպասն ու տնակ.
Սւ մնացի իմ խոհերուս հետ մաշող:

Կը թափառիմ շուրջս ստուերներ թանձրահոծ
Մերձեմալով հեռամալով յամրաբար,
Սւ կը լսեմ իրենց վայիմնն ողբակոծ
Նրբ կանգ առնել կուգան յոգնած ու մոլար:
Ջի միմակ եմ հոս դէմքերու հետ տրտում,
Կոյսերու հետ, որոնք չունին իդձ ու խանդ,
Որոնց ձայնին վանկերն՝ աղօթք անպատում
Կը խորտակեն երագս ու յոյսս մանաւանդ:
Ապրիլ կ'ուզեմ. անոնք երկիմք ցոյց կուտան,
Սիրել կ'ըղձամ. կը գոչեն. «Սէր է Աստուած»:
Սւ կը պատմեն Դաւիթը, Յոբն ու Յուդան.
Կ'ըսեն. «Միայն մահուան համար ենք հաստուած»:

Ահաւասիկ բանաստեղծուհին արդէն ժանեակներով
ու քաղքենի գեղեցկութիւններով զարդարուն իր սեղա-
նին վրայ դրաւ կարեւոր հարց մը, որ իր ներշնչումը
կ'առնէ կեանքը կուշտ ու կուռ ապրելու անմեղ
ցանկութենէ մը: Գիշեր է, մարած են բոլոր լոյսերը,
եւ բանաստեղծուհին շուրջ կը պտըտկին ուրուական-
ներ, ստուերներ, դէմքեր, որոնց սրտին մէջ մարած
են բոլոր իղձերն ու ուրախութիւնները, որոնց սրտին
մէջ շիջած են երկրաւոր բոլոր յոյսերն ու երազները,
որոնք միայն կ'աղօթեն, որոնք երկինքը ցոյց կուտան
երբ բանաստեղծը կ'ըսէ. «Ես ապրիլ կ'ուզեմ»: Իրա՞ւ,
մենք միայն մահուա՞ն համար հաստուած, միայն
մահուա՞ն համար ստեղծուած ենք: Հապա երկրաւոր
գեղեցկութիւնները: Հապա երկնքի արե՞ւը, լուսի՞նը,
ծաղի՞կը, դա՞շտը:

Ջո՛ւր կը վառէ երկինք արեւն ու լուսին,
Ձօճելով կեանք ծաղկին, դաշտին ու մարդուն
Ես կը դառնամ մորէն համեստ այն լոյսին
Որուն մերքեւ լուռ կը հսկէ աչք մ'արթուն:
Բոցեղ շունչ մը կը խնդրեմ ես, սիրտ մը տա՛մ
Որ խառնուի տեմդոտ հոգւոյս յորձանքին,
Եւ Սաղմոս մը կը դնեն, ա՛հ, բարձիս տակ,
Խաչ մ'ալ փայտէ ընդդէմ սրտի փորձանքին:

Ընդվզումը չափէն աւելի յստակ է: Կրկին կարդանք վերի տողերը, որպէսզի աւելի լաւ հասկնանք այդ բողոքը: Բանաստեղծուհին քիչ մը բոց, քիչ մը շունչ, քիչ մը սիրտ կը խնդրէ եւ ատոր փոխարէն իր բարձին տակ Սաղմոս մը միայն կը դնեն, փայտեայ խաչ մըն ալ կուտան իրեն որպէսզի պաշտպանուի աշխարհի բոլոր փորձանքներէն: Բայց բանաստեղծուհին ուզածը, խնդրածը այդ չէ: Գիտէ որ կեանքի մէջ փոքրիկ ու համեստ բաժին մը ունի, եւ այդ բաժինն է որ ստանձնել, ապրիլ կ'ուզէ:

Սիպիլին այս գեղեցիկ բանաստեղծութեան մէջ բառերն ու նախադասութիւնները թերեւս այնքան ամուր ու յստակ չեն, որքան պէտք է ըլլային եթէ այդ բանաստեղծութիւնը գրուէր այսօր: Այնուհանդերձ բանաստեղծը գիտէ թէ ինչ կ'ըսէ ու այս բանաստեղծութեան վերջին չորս տողերէն չորրորդին մէջ կը պայթեցնէ իր շատ յստակ պատգամը.

Այդ փորձանքներն ես կ'երագեմ անդադար,
Կեանքի բոլոր մեծ պայքարներն, հուրն անհուն,
Աշխարհի մէջ չնչին բաժինս իմ արդար,
Եւ կը թողում երկինքն իրեն սուրբերուն:

Իրեն վերապահել երկրաւոր բոլոր բարիքներն ու

փորձանքները, ատոր փոխարէն երկնքին թողուլ անոր բոլոր սուրբերը: Ուժեղ նախադասութիւն մըն է ասիկա ահաւասիկ. «Եւ կը թողում երկինքն իր սուրբերուն»: Ասիկա հայհոյե՞լ է երկնքին, հայհոյե՞լ է սուրբերուն, երկնաւոր արժէքներուն: Բանիմաց ընթերցողը պիտի գտնէ որ հայհոյութիւն չկայ այստեղ: Հաւասարակշռութեան կոչ մըն է թերեւս: Հաւասարակշռութիւն երկնքին ու երկրին միջեւ: Հաւասարակշռութիւն երկնաւոր արժէքներու ու երկրաւոր վայելքներու միջեւ: Սիպիլ չըսեր, բայց մենք կը զգանք որ ըսել կ'ուզէ հետեւեալը: Տէրը ինչո՞ւ պիտի ստեղծէր երկրաւոր գեղեցկութիւնները, եթէ չուզէր որ վայելենք զանոնք: Կը խորհինք որ «Մենաստանին կոյսը» խորագրեալ այս բանաստեղծութիւնն ալ իր արժանի տեղը կրնայ ունենալ դէպի յաւերժութիւն՝ Սիպիլի անցազրին մէջ:

ԼՔԵԱԼ ՏԱՃԱՐԸ

Սիպիլ մեռաւ 1934-ին: Իսկ այն բանաստեղծութիւնը զոր պիտի կարդանք, գրուած է 1921-ին, Սիպիլի մահէն 13 տարի առաջ: Բանաստեղծուհին արդէն մօտեցած էր վաթսուներեւ եւ իր կնոջական զգայուն ներաշխարհին մէջ կ'երեւի թէ այլեւս աւելի շատ տեղ ունէր հին յիշատակներու ու վերյիշումներու, քան թէ նոր զգայնութիւններու: Իր կենսագիրները կ'ըսեն թէ եղած էր կեանքով լեցուն կին մը, զուարթ, պերճախօս, այրերու վրայ լաւ տպաւորութիւն գործող կին մը որ գիտցած էր իր բնակարանը դարձնել մտաւորականներու «սալօն»: Այս բոլորին կողքին եղած էր ընկերային գործիչ, լաւ տանտիրուհի, նաեւ լաւ խոհարարուհի: Իր ամուսնին շրանդ Ասատուրի հետ կազմած էր լաւ ընտանիք մը: Այս բոլորէն վերջ արդեօք այլեւս

կանխահասօրէն յողնա՞ծ էր, երբ մօտեցած էր իր վաթսուներին: Այլեւս իր անցեալը՞ վ էր որ կ'ապրէր ան: Հաւանաբար այսպիսի հողեվիճակի մը կը պարտինք «Լքեալ տաճարը» խորագրեալ բանաստեղծութիւնը, որ, ըստ մեզի, հակառակ լեզուական զանազան անբաւարարութիւններու կամ գործին ընթերցումը դժուարացնող նախադասութիւններու, իբր ներաշխարհի վերլուծում ու բանաստեղծական պատկեր, կրնայ մեր ուշադրութիւնը գրաւել որպէս Սիպիլի միւս գործերուն մէջէն զանազանուող գործ: Լքեալ տաճարը բանաստեղծուհիին հոգին է, ներաշխարհն է, մեկուսացած, առանձնացած, ուրկէ ներս այլեւս մնայուն կանթեղ մը չի վառիր, եւ որ կը լուսաւորուի միայն հին յիշատակներու զարթնումով:

Հոգւոյս լքեալ տաճարիմ մէջ մեմաւոր,
Անպարագիր աստուծոյ մը մուրհուստ,
Աղօտ կանթեղ մ'իսկ չի հեւար ամէն օր.
Բայց արեւ մը կը հրդեհի փողփողում,
Յիշատակներս իրենց ինքնէն երբ գարթնում
Ամէն առտու իրիկում:

Պահ մը հարցնենք թէ ո՞րն է որ «նուիրուած է անպարագիր աստուծոյ մը», լքեալ տաճարը, թէ աղօտ կանթեղը: Մէջտեղ մնացած նախադասութիւն մը, որ վերինին ալ կ'երթայ, վարինին ալ, բայց մէկուն կամ միւսին երթալով կրնայ իմաստներ փոխել: Ստորակէտը որ դրուած է «նուիրուած» բառին ետին, մեզ կը հրաւիրէ մտածելու որ նախադասութիւնը պէտք է երթայ վերինին: Այն ատեն պիտի հասկնանք որ բանաստեղծը իր հոգին կը նմանցնէ անպարագիր (անսահման) աստուծոյ մը նուիրուած տաճարի մը, որ այլեւս լքուած է, եւ ուր կանթեղ մը իսկ չի վառիր:

Լքեալ այդ տաճարին մէջ միայն հին յիշատակներու
զարթնումն է որ արեւի պէս պիտի լուսաւորէ
մթնոլորտը:

Իր դուռները ամուր փակուած են արդէն.
Ուխտաւոր մը, ժամուոր մը մերս չի մտներ.
Բայց աղօթքով կը լեցուի ժամն համօրէն,
Երբ հիմ յոյսերու արցումքներով պատարում
Սաղմոսերգել գամ իրենց լացը անհուն
Այնտեղ, առտու՝ իրիկուն:

Բանաստեղծական շատ գեղեցիկ պատկեր մը ան-
ւասիկ: Բայց լեզուական տեսակէտէ կարծես բան մը
կը կաղայ: Եթէ չվախնայինք որ այստեղ տպագրա-
կան սխալ մը սպրդած է, պիտի ըսէինք. Երանի՛ թէ
բանաստեղծուհին աւելի բծախնդիր ըլլար իր
նախադասութիւնները կազմելու ընթացքին եւ մենք
աւելի յստակ կերպով հասկնայինք թէ որո՞նք են որ
իրենց անհուն լացը սաղմոսերգելու պիտի գան եւ
աղօթքով պիտի լեցնեն տաճարը: Բայց գրեթէ վստահ
ենք որ այստեղ տպագրական սխալ մը սպրդած է եւ
չորրորդ տողին վրայ տպուած «յոյսերու» բառը պէտք
է ըլլայ «յոյսերս»: Այն ատեն է որ աւելի յստակ իմաստ
մը կը գրսեւորուի եւ այս տունին ալ կառուցուածքը
զուգահեռ կը դառնայ միւս տուններուն կառուցուածքին:
Եւ կը հասկնանք որ բանաստեղծին հին յոյսերն են
որ կուգան սաղմոսերգել իրենց անհուն լացը: Հին
յուշերն են որ կուլան իրենց անցեալին վրայ եւ
աղօթքով կը լեցնեն տաճարը:

Այցելուներ, երգեր մարած են բոլոր.
Ծնծդամերու արծաթ ծափերն են լուեր.
Ա՛լ չի լսուիր երգեհոմը դաշմաւոր.

Բայց պատարագ մը կը սկսի վեհագոյն,
Հիմ հաւատքներս երբ ծնրադրել գամ գարթում
Այնտեղ, առտու իրիկուն:

Ձանց կ'առնենք այս բանաստեղծութեան վերջին
տունը ու պահ մը կը յուզուինք բանաստեղծուհին
հոգին ցոլացնող այս լքեալ տաճարին առջեւ, ուր
ծնծղաները լուսած են այլեւս, երգեհոնը չի լսուիր եւ
ուր վեհագոյն պատարագ մը պիտի սկսի այն ատեն
միայն, երբ հին հաւատքները պիտի գան ծնրադրել:
Առտու-իրիկուն:

Անշուշտ չենք գիտեր թէ որքա՞ն անկեղծ էր բա-
նաստեղծուհին երբ կը գրէր այս տողերը, բայց արդէն
իրաւունք չունինք այսպիսի հարցում մը ուղղելու,
որովհետեւ մեզի համար պատկերն է կարեւորը:
Յղացումը: Երեւակայութիւնը: Չգայնութիւնը: Եւ
Սիպիլի նման բանաստեղծուհի մը, որ Աստուծոյ մէջ
իսկ փնտռած էր մայրական գորովալի ու սիրակէզ տրա-
մադրութիւններ, այլ ո՛չ թէ հայրական խստութիւն
ու կարծրութիւն, հակամէտ պիտի ըլլար ճգմունելու
նոյն այդ կնոջական յուսախաբութիւններու եւ
դառնութիւններու տակ, իր հոգին պիտի գոցէր նոր
զգայնութիւններու առջեւ, եւ խորանին վարագոյրը
պիտի բանար միայն հինէն յամեցող յիշատակներու
համար:

ԹՈՂ ԸՆԹԵՐՅՈՂԸ ՈՐՈՇԷ

Շատ փայլուն ու տպաւորիչ բանաստեղծութիւն մը չէ, բայց Սիպիլի յաջողագոյն գործերուն նուիրուած մեր այս պտոյտին մէջ համեստ տեղ մը պիտի բանանք նաեւ այն բանաստեղծութեան, որ կը կրէ «Մի՛ ըսէք» խորագիրը: Այս քերթուածին մէջ բանաստեղծը կ'ուզէ կեանքի բոլոր անհաճոյ ճշմարտութիւններուն դիմաց պահպանել ու պաշտպանել իր երազներն ու հաւատքը:

Սկսելէ առաջ բանաստեղծութիւնը կարգալ, պահ մը պիտի ուզենք կանգ առնել բանաստեղծութեան առաջին տողին վրայ, որպէսզի անդրադառնանք թէ իմաստներու ինչպիսի փոփոխութիւններ կը ստեղծուին երբ բռները, բանաստեղծական կառուցումի մտահոգութիւններով իրենց ճիշդ տեղերը չեն դրուիր, ինչպէս կը դրուին արձակին մէջ: Ահա սա առաջին տողը.

Մի՛ ըսէ՛ք թէ քարուքիւնն է լոկ կեղծիք,

Ի՞նչ ըսել կ'ուզէ բանաստեղծը: Այստեղ «լոկ» բառը, որ «միայն» կը նշանակէ, ո՞ր բառին կը պատկանի: Բարութեա՞ն, թէ կեղծիքին: Մէկուն կամ միւսին համաձայն, պիտի ունենանք իրարմէ տարբեր սա երկու նախադասութիւնները.

Մի՛ ըսէ՛ք թէ բարութիւնը (միայն կեղծիք է):

Կամ.

Մի՛ ըսէ՛ք թէ (միայն բարութիւնը) կեղծիք է:

Առաջինին մէջ բանաստեղծը կ'ըսէ հետեւեալը. «Մի՛ ըսէ՛ք որ բարութիւնը պարզապէս կեղծիք է: Ոչ, թէեւ բարութիւնը երբեմն կրնայ կեղծիք ըլլալ, բայց բարութեան մէջ շատ գեղեցիկ ուրիշ բաներ ալ կան, անկեղծութիւն կայ, սէր կայ, մարդասիրութիւն կայ»:

Երկրորդին մէջ բանաստեղծը կ'ըսէ հետեւեալը. «Մի՛ ըսէք թէ բարութիւնը միակ կեղծիքն է աշխարհի վրայ: Այո՛, ճիշդ է որ բարութիւնը կեղծիք է, բայց ուրիշ բաներ՝ ալ կան որոնք կեղծիք են»:

Կը կարծենք որ կրցանք տեսնել տարբերութիւնը: Առաջինին մէջ բարութիւնը կեղծիք չէ, երկրորդին մէջ բարութիւնը կեղծիք է: Յայտնի է բնականաբար որ Սիպիլ այս նախադասութիւնը գործածած է առաջին իմաստով: Այսինքն լոկ բառը կը պատկանի կեղծիք բառին: Բանաստեղծուհին կ'ընդվզի երբ իրեն կ'ըսեն թէ բարութիւնը միայն ու միայն կեղծիք է:

Յայտնի է, բայց ընթերցումը առաջին տողէն իսկ կրնայ շփոթութիւն ստեղծել, պահ մը կաղացնել նոր բանաստեղծութիւն մը կարգալ սկսելու վայելքը: Ասիկա պէտք է յիշեցնէ մեր բոլոր բանաստեղծներուն, թէ երբ կ'ուզեն հեռանալ արձակունակ շարադրութենէ, պէտք է լաւ հակակշռեն բառերու տեղադրութիւնը: Սիպիլ այստեղ, արձակունակ շարադրութենէ խուսափելու, մանաւանդ յանգեր կազմելու մտահոգութեամբ ուզած է «կեղծիք» բառը ամէնէն ետեւ տեղաւորել եւ «է» բայը դրած է տեղ մը, ուր պէտք չէ ըլլար:

Եւ հիմա, որ չէզոքացուցինք շփոթը, սկսինք կարգալ բանաստեղծութիւնը.

Մի՛ ըսէ՛ք թէ քարութիւնն է լոկ կեղծիք,
Թէ ժպիտը կնճիռ մըն է սնգուրուած,
Թէ ոչինչ կայ ազնիւ, ոչինչ գեղեցիկ,
Թէ պատրանք են սէրը, ծաղիկն ու քնքուած:
Մի՛ ըսէ՛ք ինձ, թոյ՛մ է բուրումը գարնան,
Ախտի սերմեր ջուրերն ունին խաժ ակին
Թէ լուսագեղ ցօղերն ամպրոպ կը դառնան,
Նգերձն է լոկ մեղրը կեանքի քաժակին:
Ո՛հ, մի՛ ըսէ՛ք, շրթումքները կը ստեն,

Երբ կը գեղում հրայրժներ, գուժ ու կորով,
Թէ յոյզն ու խանդ չեն ցայտեր միշտ մեր սրտէն,
Թէ կայծեր են անոնք մտքի մ'անխոռով:

Բողոք կայ բանաստեղծին այս տողերուն մէջ, նաեւ պաղատանք: Օ՛ր բարեկամներ, մի՛ վարկաբեկէք բնութեան ու մարդկութեան գեղեցիկ արժէքները, մի՛ ուրանաք ազնուութիւնը, գարնան բուրմունքը, գութն ու կորովը, մի՛ ըսէք որ ձայները միայն խաբելու համար են, մի՛ ըսէք որ աշխարհը լեցուն է միայն ստորին շահադիտութիւններով ու կեղծաւորութեամբ:

Ո՛հ, մի՛ ըսէ՛ք որ ձայները կը խաբեն
Իրենց անկեղծ հնչիւններովը ծալ ծալ.
Մի՛ սթափէ՛ք սիրտս իր անուշ տագնապէն,
Թողէ՛ք ինձի երազներովս պանծալ.

Այս չորս տողերուն մէջ պիտի կարենա՞նք անդրադառնալ որ բանաստեղծուհին իր բողոքին ու դիմացիներուն ըսածը ժխտելու իր վճռակամութեան վրայ աւելցուց նաեւ փոքրիկ վարանում մը, որ կը նոյնանայ «երազ» բառին հետ: «Թողէ՛ք ինձի երազներովս պանծալ»: Բանաստեղծուհին թերեւս արդէն սկսաւ կասկածիլ թէ իր հաւատքը, իր համոզումը կրնայ կեանքի ճշմարտութիւններուն հակասող երազ մը եղած ըլլալ: Եւ կը յաջորդեն բանաստեղծութեան վերջին չորս տողերը, որոնք մեզի յստակ կերպով պիտի բացատրեն թէ ինչու գրուած է այս բանաստեղծութիւնը.

Մի՛, մի՛ ըսէ՛ք, խաւար է ծայրը կեանքին.
Անմահութեամ յոյսն աղուոր տենդ մ'է փարթամ,
Թէ հող, մոխիր պիտի դառնայ մեր հոգին...
Ո՛հ, թողէ՛ք որ ցնորժներուս հաւատամ:

Գեղեցիկ ակարտատող: Թողէ՛ք որ հաւատամ ցնորք-
ներուս: Թողէ՛ք որ հաւատամ իմ սին երեւակայութիւն-
ներուս: Պարտութեան մը խոստովանութի՛ւնն է ասիկա
վերջին տողին մէջ, թէ անկարելիին հաւատալու
վճռակամութիւն եւ կամք: Թող ընթերցողը որոշէ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՕՐՕՐ ՄԸ ՄԵՐ ՄԱՆԿԻԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Սիպիլի բանաստեղծութիւնները ընդհանրապէս
գրուած են երկար տողերով եւ շատ ալ տեղ տուած
չեն երաժշտական խաղերու կամ կշռոյթներու: Միակ
երաժշտականութիւնը որ կը յայտնուի, կուգայ յան-
գաւոր բանաստեղծութիւն գրելու մտահոգութենէ մը,
որ այդ չըջանի քերթողական արուեստի անզանցառելի
պայմաններէն մէկն էր: Սիպիլէն տասնամեակներ վերջ
է որ պիտի յայտնուին ուրիշ բանաստեղծներ, որոնք
յանգաւոր բանաստեղծութեան հաւատարիմ մնալով
հանդերձ, կարճ տողերու միջեւ բառերու ու ձայներու
նմանողութիւններ տեղաւորելով պիտի գտնեն տարբեր
երաժշտականութիւն մը եւս ստեղծելու ձեւերը:

Բայց Սիպիլի բանաստեղծութիւններուն մէջ կայ
հատ մը որ կարճ տողերով գրուած է եւ որ մեր
ականջներուն մէջ կը ստեղծէ երաժշտական ձայներ:
Ասիկա օրօր մըն է եւ զարմանալի չէ որ Սիպիլի նման
իգական զգայնութեան ջատագով բանաստեղծ մը
քերթողական տարբեր ոճ մը ստեղծէր մանկիկի մը
վրայ օրօր երգելու ընթացքին:

Օրօ՛ր, օրօ՛ր.

Մանկի՛կս աղուոր.

Արծաթ ցօղի մոր գգուամբով

Կուգայ լուսնակն օրրամիդ ֆով.
Քեզ շողերով կը փայփայէ:
Իր ցովքին տակ միրհէ՛ անդորր:
Օրօ՛ր, օրօ՛ր:

Կրցա՞նք անդրադառնալ յանգային նմանողութիւն-
ներով ստեղծուած այն երաժշտութեան, որ իսկապէս
օրօրի մը պէս գեղաճայն կը հնչէ մեր ականջներուն
մէջ: Կարճ տողերու վերջաւորութեան գործածուած
բառերը՝ «օրօր», «աղուոր», «անդորր», «գզուանքով»,
«քով» արդէն սա եօթը տողերուն մէջ կը սարքեն
ճայներու խնջոյք մը որուն նմանը դիւրին չէ գտնել
Սիպիլի միւս բանաստեղծութիւններուն մէջ:

Օրօ՛ր, օրօ՛ր.
Ծաղի՛կս աղուոր.
Լոյս թիթեռներ ձիւն թելերով
Քեզ հովանի կը շինեն գով
Համբոյրին դէմ արեւուն հուր,
Նիրհէ՛ անուշ, միրհէ՛ անդորր:

Օրօ՛ր, օրօ՛ր:
Օրօ՛ր, օրօ՛ր.
Հրեշտա՛կս աղուոր.
Կուգայ աշուղն օրրամիդ ֆով
Իր անուշիկ գեղգեղամֆով:
Բոց տաղերով զ՛քեզ կ'օրրէ.
Դուն երգիմ տակ միրհէ՛ անոր:

Օրօ՛ր, օրօ՛ր:
Օրօ՛ր, օրօ՛ր.
Աղջի՛կս աղուոր.
Պերմ ոսկեփայլ գարդարամֆով
Կուգայ պարիկն օրրամիդ ֆով,
Հարսի թելով կը պարուրէ

Քեզ, մի՛ բանար աչուկդ աղուոր:
Օրո՛ր, օրո՛ր:

Բանաստեղծուհին իր ամբողջ սիրտը բացած է այն հրաշալի էակին, որուն համար օրօր կ'երգէ: Ի՞նչերու չի նմանցներ զայն: «Մանկիկա աղուոր», «Ծաղիկա աղուոր», «Թռչնիկա աղուոր», «Հրեշտակա աղուոր», «Աղջիկա աղուոր», «Հուրի աղուոր» եւ վերջապէս «Հոգեակա աղուոր»: Եւ ի՞նչեր չի նախատեսեր անոր ապագային համար: Լուսնակը իր շողերով պիտի փայփայէ այդ աղուոր մանկիկը, լոյս թիթեռները իրենց ձիւն թեւերով արեւին կրակոտ համբոյրին զէմ հովանի պիտի ընեն անոր վրայ, աշուղը իր քաղցր երգերով պիտի օրըէ այդ փոքրիկ հրեշտակը, պարիկը պիտի գայ ու այժմէն հարսի թելերով պիտի պարուրէ այդ աղուոր աղջնակը եւ վերջապէս սէրը պիտի գայ անհուն խանդով տաքցնելու այդ աղուոր հոգեակին սիրտը: «Բայց հիմա քնացիր, հոգեակ, եւ աչքերդ մի բանար մինչեւ որ արթննալու ժամանակը գայ եւ դադրին աշխարհի բոլոր օրօրները»:

Օրո՛ր, օրօր.

Հոգեա՛կա աղուոր.

Մէրը կուգայ օրբանիդ մօտ,

Անհուն խանդով սրտիդ կարօտ,

Հիմա գարթի՛ր, հուրի՛ս աղուոր.

Ա՛լ չեմ երգեր քեզի օրօր:


Մենք այս շարքին մէջ Սիպիլին լեզուին վրայ որպէս վերջին խօսք՝ դրինք այս սիրուն օրօրը, որպէսզի միշտ յիշենք որ այս կիներ իր արուեստին մէջ ամէն բանէ առաջ ուզեց մարմնաւորել հայ առաքինի կնոջ եւ հայ առաքինի մօր յատկութիւնները գովաբանող մտաւորա-

կանը: Իր ամուսինը, նշանաւոր գրագէտ Հրանդ Ասատուր, «Դիմաստուերներ»ուն մէջ հետեւեալը գրած էր իր կողակցին համար.

«Ընտանեկան կեանքին մէջ Սիպիլ տիպարն է անձնուիրութեան: Իր կեանքին երազը եղած է իր երկու աղջիկներուն՝ Ատրինէին ու Էմմային երջանկութիւնը: Ան անոնց ուրախութիւնը, անոնց ժպիտը կը փնտռէ միշտ եւ անոնց պղտիկ մէկ ցաւը կ'արիւնէ անոր սիրտը»:

Ո՞ր հայ մայրը չի նմանիր Հրանդ Ասատուրի նկարագրած Սիպիլին:

**ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻՆ ՀԵՏ
ԳԼՈՒԽ ԳԼԽԻ**



ՆԱՐԻՆՁԻ ՄԸ ԿԵՂԵԻԻՆ ՏԱԿ

Այժմ բաւական ընդարձակ պտոյտ մը պիտի ընենք բանաստեղծ Պարոյր Սեւակի աշխարհին մէջ: Բայց անկէ առաջ եկէ՛ք անգամ մը եւս գլխարկ հանենք բանաստեղծութիւն կոչուած արուեստին դիմաց: Մեր գրականութիւնը շատ բան կը պարտի մեր բանաստեղծներուն: Միայն թէ ասիկա միակողմանի չէ: Մարդկային գեղեցիկ զգացումներն ալ շատ բան կը պարտին բանաստեղծներուն: Բանաստեղծներն են որ մարդկային հոգին ազնուացնող, մարդկային հոգին տառապեցնող, մարդկային հոգին լուսաւորող ինչ ինչ զգայնութիւններու ու գեղեցիկ ապրումներու փառաւորումը կ'ընեն յուզիչ ու առինքնող պատկերներով: Միլիառաւոր մարդիկ, օրինակ, սէր կոչուած վսեմ զգացումը կ'ապրին խոտի պէս, ջուր խմելու կամ հաց ուտելու պէս, առանց լրիւ անդրադառնալու թէ ինչպիսի խորհուրդներ կան սիրոյ մէջ: Բանաստեղծներն են որ պիտի գան յիշեցնելու այդ խորհուրդները, պիտի փառաւորեն այդ խորհուրդները եւ մենք այն ատեն սիրոյ մէջ պիտի տեսնենք նոր փայլ մը եւս զոր թերեւս պիտի չտեսնէինք, եթէ աշխարհի վրայ բանաստեղծութիւնը հնարուած չըլլար:

Հեռացած, հեռու մեկնած իր սիրելիին դարձեալ միանալու ու այնուհետեւ անոր հետ մէկ մարմին կազմելու խորհուրդը անգամ մը այնպէս մը մտրակած է Հայաստանի ամէնէն տաղանդաւոր բանաստեղծներէն Պարոյր Սեւակի հոգին, որ ան ստեղծած է շատ գեղեցիկ պատկեր մը: Կը կարդամ գայն, կրկին կը կարդամ:

Քեզամից հեռու

ես ապրում էի

կարծես թէ իմֆս էլ իմձամից հեռու:

... Իսկ հիմա
 երբ մե՞նք մէկտեղ եմք արդէն,
 կարծես թէ մորից շերտ-շերտ միացանք,
 որ ամբողջանամք՝ մարմնջի մմամ՝ մի կեդեւի մէջ
 եւ հիւքաւորուեմք՝
 հողի աւշայիմ չորս քաժիմ խառնած
 չորս քաժիմ աւիւն արեգնակայիմ,
 ու երջանկօրէն
 քարքառեմք անխօս.
 «Այս է մեր մարմին, առէ՛ք ու կերէք»:

Երկար բանաստեղծութեան մէջէն սա վերի հատուածն է որ կ'առանձնանայ մեր մտքին մէջ եւ կ'ուզէ քանդակուիլ հոն որպէս սիրային արտայայտութեան գեղեցկագոյն նմոյշ: Այսքանը կը բաւէր: Երանի՛ թէ յաջորդող տողերը գրուած չըլլային:

«Շերտ շերտ իրարու միանալ նարնջի նման մէկ կեղեւի մէջ»:

Կարժէ որ այս նախադասութիւնը արձանագրենք մեր տետրակին մէջ եւ զայն կարդանք բոլոր անոնց, որոնք սիրոյ գիւտը կ'ընեն առանց լրիւ հասկնալու թէ ինչ է սէրը: Մարդ ի՞նչ կը զգայ երբ կը սիրահարի դիմացի սեռէն մէկու մը եւ իր հոգիին խորերուն մէջէն կը տենչայ անոր միանալ, անոր հետ մէկ մարմին դառնալ:

Ես որ այնքան կը սիրեմ նարինջը, տարօրինակ փորձառութիւն մը կ'ապրիմ ամէն անգամ որ նարինջ կ'ուտեմ: Այդ փորձառութիւնը կուզայ նարինջին շերտերը իրարմէ գատելու գործողութենէն: Ինչե՛ր չեմ խորհիր, ինչե՛ր չեմ զգար երբ այդ շերտերը իրարմէ կը գատեմ մի առ մի: Շատ բան կախեալ է նարինջին տեսակէն: Կայ նարինջ, որուն շերտերը շատ դիւրութեամբ կ'անջատուին իրարմէ: Կայ նաեւ նարինջ, որուն շերտերը կարծես չեն ուզեր անջատուիլ իրարմէ,

կը դիմադրեն մատներուդ: Կայ նարինջ որ չոր է եւ որուն շերտերը իրարմէ կ'անջատուին առանց նոյնիսկ մատներդ թրջելու: Բայց կայ նաեւ նարինջ, որ այնքան հիւթեղ ու ջրոտ է, որ մատներդ նարնջի հիւթով կը թրջուին ամէն անգամ որ շերտ մը հազար դժուարութեամբ կ'անջատես հոնկէ:

Բայց մէկ բան ստոյգ է եւ անփոփոխ: Նարինջին շերտերը հիանալի միասնականութեամբ մը փակած են իրարու եւ նոյն կեղեւին մէջ ամբողջութիւն մը կազմած են: Մէկ միլիոն նարինջ ստկեցէք, պիտի չգտնէք նարինջ մը, որուն շերտերը անհաւասար ըլլան իրարու, նոյն ձեւով փակած չըլլան իրարու, որուն շերտերը նոյն մաշկը, նոյն լայնքը, նոյն կորութիւնը, նոյն համբ չունենան:

Ահաւասիկ բանաստեղծը իր սիրածին կ'առաջարկէ նմանիլ նարինջի այդ շերտերուն: Նոյն կեղեւին տակ միանալ իրարու, հիւթաւորուիլ քաղելով ու մարսելով հողին ու արեւին ինչ ինչ բարիքները:

Գեղեցիկ պատկեր: Միայն մէկ կէտ մտածել կուտայ: Նարինջին շերտերը արդէն իրարու հետ միացած են երբ ծնունդ կ'առնեն երկրագունտին վրայ: Մարդն է որ իրարմէ պիտի բաժնէ այդ շերտերը: Իսկ իրարու սիրահարած մարդիկը, առանձին ու իրարմէ հեռու աշխարհ եկած են եւ վերջն է որ զիրար պիտի գտնեն ու մէկ կեղեւի տակ պիտի միանան իրարու:

Հոգ չէ: Խորհուրդը նոյնն է: Մանաւանդ որ բանաստեղծը ուրիշ խորհուրդ մըն ալ կը դնէ իր սիրածին հետ երկու շերտերու ձեւով միանալու մէջ: Պատարագի հացին նման սրբանալ եւ բաժնուիլ մարդոց միջեւ: Ըսել «Այս է մեր մարմին, առէք ու կերէք»:

Այս խորհուրդը չէ՞ որ կեանք պիտի տայ ուրիշ կեանքերու ալ, որոնք օր մը իրենց կարգին շերտ-շերտ իրարու պիտի միանան մէկ կեղեւի տակ:

ՅԱՆՈՒՆ ՎԱՂՈՒԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Ապագան ի՞նչ անակնկալներ, ի՞նչ վտանգներ պիտի ունենայ մեզի համար, յայտնի չէ: Բոլորս ալ գիտենք որ պատրաստ պէտք է ըլլանք, հաճելի անակնկալներու կողքին, նաեւ անհաճոյ անակնկալներու: Պէտք է այժմէն զինուի ենք անոնց դէմ, պէտք է այժմէն պայքարինք որպէսզի կարելի չափով մեկուսացնենք անհաճոն:

Մարդիկ իրենց սեփական ապագային մասին կը մտահոգուին, բայց իրաւ հայր մը, իրաւ մայր մը նոյնքան եւ աւելի կը մտահոգուի իր զաւկին ապագայով: Երբ հայր կամ մայր կը դառնաս, քու սեփական ապագայէդ աւելի, զաւկիդ ապագան է որ կը յուզէ քեզ, քու զաւկիդ ապագան է որ դուն կ'ուզես փրկել անհաճոյ պատահարներէ:

Չեմ կարծեր որ աշխարհի վրայ գտնուի հայր մը որ պարբերաբար խրատներ չտայ իր զաւկին, զայն չզգուշացնէ ապագայ վտանգներէ, որոնք կրնան պատահիլ դժբախտաբար կամ կրնան չպատահիլ բարեբախտաբար: Բայց հարց մը կայ: Խրատականը շատ արժէքաւոր է ընողին համար, մինչդեռ նոյնքան արժէքաւոր չէ զայն ընդունողին համար: Երիտասարդները կէս ականջով մտիկ կ'ընեն մեծերուն խրատականները, թերեւս կը հաւատան ըստածներուն, բայց կարեւորութիւն չեն տար: Իրենց համար այսօրուան իրականութիւնները աւելի ծանր կը կշռեն, քան վաղուան հաւանականութիւնները:

Պարոյր Սեւակն ալ օր մը պահանջքը զգաց խրատական մը ընելու: Բայց եթէ խրատականը կուզայ բանաստեղծէ մը, այդ խրատականը կրնայ դառնալ գրական հոյակապ վայելք մը: Պայմանաւ որ օր մը

հրատարակուի ու զոհ չերթայ մոռացութեան: Իսկ Պարոյր Սեւակի խրատականը պիտի կորսուէր, պիտի անհետանար, եթէ ան վերջերս պատահամար աղբանոցի մը մէջէն գտնուած չըլլար ուրիշ բազմաթիւ ձեռագիրներու կողքին:

Սեւակ խօսքը կ'ողողէ իր փոքր տղուն եւ կ'ըսէ.

Դու փոքր ես դեռ: Ինձ հետ լինի, թէ առանց
իմ օգնութեամբ, թէ առանց ինձ, մեծանաս,
իմ օգնութեամբ, թէ առանց ինձ, միեւնոյնն է,
կը հասկնաս
թէ ոնց պիտի ապրել կեանքում, թէ ոնց կեանքի
պիտի նայել,
Դու փոքր ես դեռ: Երբ մեծանաս, դառնաս արդէն
հասուն ջահել,
Խորհուրդներն իմ ե՛ւ հնացած, ե՛ւ անխորթ թուան
գուցէ,
կեանքում այնժամ էլ չլինեն նման քացեր,
նման խոցեր:
է՛հ, տայ Աստուած: Ես էլ կեանքում ուրիշ ոչինչ
չեմ երագում:
Կոյրը, տղաս, ինքն գիտես, երկու աչք է
միայն ուզում:
Խորհուրդներն իմ թող հիմանան: Ծաղիկն է
լոկ այսպէս մեռնում
երբ ամբանը ծառի վրայ հասուն միբոց է
արդէն դառնում:
Յանուն գալի՞ք վառ խարոյկի ես պատրաստ եմ
այսօր ծխալ,
Յանուն վաղուայ մշմարտութեան, թող որ այսօր
լինեմ սխալ..

Պէտք ունի՞մ ընդգծելու թէ այս հոյակապ խրատ

տականին վերջին տողը ինքնին գլուխ-գործոց մըն է: Երջանիկ գիւտ մը: Հիանալի պատգամ մը: Բայց այդ վերջին տողէն առաջ ալ բանաստեղծը արդէն յուզած է մեզ այն իմաստուն ձեւով, որով ան կը նայի դէպի ապագայ: Չաւակները պիտի մեծնան, հասուն պիտի դառնան իրենց ծնողներուն հետ, կամ առանց իրենց ծնողներուն, ծնողներու օգնութեամբ, կամ առանց այդ օգնութեան: Բայց ծնողներուն գերագոյն պարտականութիւնն է փրկել իրենց զաւկին ապագան: Եւ ծաղիկներու նման, իրենք պիտի մեռնին որպէսզի ծառերուն վրայ հասուն պտուղի կեանք տան: Գեղեցիկ են այս տողերը: Բայց եկէք կանգ առնենք, եւ թէ երկար կանգ առնենք վերջին տողին վրայ:

Յանոււմ վաղուայ ճշմարտութեամ, թող որ այսօր
լինեմ սխալ:

Ասիկա իր զաւկին խրատական մը փոխանցող ազնիւ հօր մը պատգամը չէ՛ միայն: Ասիկա պատգամն է բոլոր այն լուսաւորեալներուն, որոնք ապագան կը տեսնեն եւ որոնք սակայն չեն հասկցուիր իրենց ժամանակակիցներուն կողմէ: Ժամանակակիցներուն կողմէ սխալ նկատուելու գնով տեսնել վաղը եւ խօսիլ վաղուան ճշմարտութեան մասին: Հոգ չէ, այսօր սխալ կարծուիլ, չհասկցուիլ, նոյնիսկ հալածանքի ենթարկուիլ, խաչուիլ, բայց չհրաժարիլ խօսելէ վաղուան ճշմարտութեան մասին, կամ մնայունին մասին, յաւերժական արժէքներու մասին:

Օ՛ որքան դիւրին, որքան լաւ, որքան ալ օգտակար է մարդոց խօսիլ այնպէս ինչպէս որ անոնք կ'ուզեն որ խօսիս: Գուցէ սխալ ըլլայ ըսուածը, գուցէ անիմաստ ու տխմար, գուցէ անբովանդակ, հոգ չէ, խօսի՛լ այնպէս ինչպէս որ անոնք կ'ուզեն որ խօսիս: Թերեւս կարմիր

գորգեր կը փռեն ոտքերուդ տակ, ոսկիներով կ'ողողեն քեզ: Ա՛յս է անոնց ուզածը: Եւ անոնք այնքան աւելի երջանիկ են, որքան շրջապատուած են իրենց ուզած ձեւով խօսողներէ:

Բայց կեանքի հրաշքներէն մէկն ալ այն է որ պիտի գտնուին մարդիկ, որոնք պիտի չյօժարին այդ համակերպումին, եւ բանաստեղծին նման պիտի ըսեն.

Ես յօժար եմ այսօր սխալելու, բայց արտօնեցէք որ ձեզի խօսիմ վաղուան ճշմարտութեան մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ ՉԷ

Յանոււմ վաղուայ ճշմարտութեան թող որ
այսօր լինեմ սխալ..

Եթէ մեր մտքին մէջ արձանագրեցինք բանաստեղծ Պարոյր Սեւակի այս հրաշալի պատգամը, զայն պիտի կարենանք գործածել ամէն անգամ որ պիտի մտահոգուինք վաղուան ճշմարտութիւններուն մասին: Ըսինք արդէն որ աւելի լաւ է որ մարդիկ մեզ սխալ կարծեն, կամ սխալ հասկնան, կը բաւէ որ մենք խօսինք վաղուան ու յաւերժական ճշմարտութեանց մասին:

Եւ եթէ հարց տանք անգուգական Պարոյր Սեւակին, ան պիտի պատասխանէ որ գրականութիւնը այն առաջնահերթ գետինն է որու վրայ մարդիկ պիտի խօսին ճշմարտութեան մասին, միայն ճշմարտութեան մասին, եւ ո՛չ միայն այսօրուան, այլ առաւել եւս վաղուան ճշմարտութեան մասին:

Կը կարդամ մեծ բանաստեղծին «Իմ կտակը» անուն շարքին ութերորդը: Այստեղ բանաստեղծը որքան հեռու է բանաստեղծական պատկերներ գործածելէ: Կարծես

արձակ գրականութիւն կ'ընէ: Բայց այդ պատկերները
յանկարծ որքան բանաստեղծական կը դառնան Սեւակ-
եան անօրինակ վարպետութեան տակ:

Այն ինչ կոչուում է գրականութիւն
դեպքումատում չէ,
որ զգաս - խորհես - մտածես մի բան
եւ այլ բան ասես:
Իսկ դու դեպքում չես,
այլ պատգամաւոր:
Ու եթէ մոյմիսկ դեպքում ես՝
այա
դեպքում ես կեանքի՛ -
որքան այսօրուայ,
առաւել, վաղուայ:

Քիչ բանաստեղծներ պիտի կարենային այսքան ար-
ձակունակ մտածում մը այսքան արձակունակ տողերով
մեզի հրամցնել որպէս ցնցիչ բանաստեղծութիւն:
Իրականութեան մէջ սովորական պատգամ մըն է որ
կը տրուի ցնցիչ տարագի մը տակ: Գրականութիւնը
դեպքանատուն չէ, քաղաքականութեան վայր չէ,
դիւանագիտական խաղի տեղ չէ, որպէսզի դուն քեզի
պահես քու զգացումներն ու մտածումները եւ խօսիս
հակադիր ուղղութեամբ: Եթէ գրագէտ ես, աշխատա-
տեղիդ դեպքանատուն չէ: Դուն ալ դեպքան չես
ամենեւին: Բայց, ո՛չ, իրականութեան մէջ դուն ալ
դեպքան մըն ես: Բայց դեպքանն ես ո՛չ թէ երկրի
մը, պետութեան մը, հողամասի մը, այլ դեպքանն
ես նոյնինքն կեանքին: Այսօրուան կեանքին: Առաւել
եւս վաղուան կեանքին:

Աւելցնեմ որ վերի տողերը բանաստեղծին կողմէ
գրուած էին 1959-ին, այսինքն այնպիսի թուականի

մը եւ այնպիսի վարչակարգի մը տակ, ուր զանազան ճշմարտախօսութիւններ եօթը գիւղերէ կը վճռատուէին եւ ուր գրականութիւնը իրականութեան մէջ կը նկատուէր քաղաքական պատգամներու դեսպանատուն մը, ուր գրագէտները, որպէս խորհրդային մարդասիրական տեսիլքները պաշտպանելու կոչուած դեսպաններ, պարտաւոր էին խօսիլ ո՛չ թէ այնպէս ինչպէս կը զգային, այլ այնպէս ինչպէս կը սպասուէր որ զգային:

Բայց եկէք այս բանաստեղծութեան մէջ դարձեալ ողջունենք վերջին տողը: «Առաւել վաղուայ»:

Դեսպանն եւ կեանքի - որքան այսօրուայ - առաւել վաղուայ»

Գրագէտը այսօրուան կեանքին դեսպանն է: Բայց առաւել եւս դեսպանն է վաղուան կեանքին: Մարդոց կեանքին մէջ ապագան աւելի՞ կարեւոր է քան թէ այսօրը: Անտարակոյս նպարավաճառի մը համար, խանութպանի մը համար, առեւտրականի մը համար, պետական մարդու մը համար, եւ դեռ շատերու համար այսօրուան կեանքն է որ կարեւոր է: Բայց ընկերութեան մէջ կան լուսաւորեալներ, առանձնաշնորհեալ մարդիկ, որոնք մեզի պատգամներ կը բերեն վաղուան կեանքի ճշմարտութիւններէն: Կրնանք ըսել որ այդ բացառիկ մարդիկը, մեզի ժամանակակից ըլլալով հանդերձ, կ'ապրին գալիք ժամանակներուն մէջ: Նոյն հողին վրայ կը կոխենք, բայց տարբեր ժամանակներու օդը կը շնչենք: Մայր Բնութիւնը, Պարոյր Սեւակէն ալ առաջ փսփսացած է անոնց ականջներէն վար եւ ըսած է. «Դուք դեսպաններն էք այն հրաշալի կեանքին, զոր ես ստեղծեցի մարդոց համար: Բայց ո՛չ թէ այն դեսպաններէն՝ որոնք այսպէս կը մտածեն ու այնպէս

կը խօսին, ո՛չ թէ այն դեսպաններէն որոնք կը խօսին բան մը չըսելու համար, ո՛չ թէ այն դեսպաններէն որոնց «այո»ն ոչ է շատ անգամ եւ որոնց «ոչ»ն ալ յաճախ կը նշանակէ «այո»: Դուք ճշմարտախօս դեսպաններն էք այսօրուան ու վաղուան կեանքին: Այն ինչ որ կը կոչուի գրականութիւն, ճշմարտախօսութիւն է, անկեղծ խօսք է, սիրահար մարդու սիրոյ խոստովանութիւն է»:

Մայր Բնութիւնը նոյնը փսփսացած չէ՞ր Պարոյր Սեւակի ականջներէն վար:

ԾԱՌԷՆ ԻՆԿԱԻ ԵՐԵՔ ԽՆՉՈՐ

Ինչպէս բիւրաւոր մարդիկ, ես ալ մանկութեանս չըջանին մեծ երջանկութիւն գտայ մանկական հէքեաթներու, աւելի վերջ ալ՝ գծիկով ժապաւէններու մէջ: Մնացած էր մանկական նշանաւոր հէքեաթներու գիրք մը զոր կարգացած չըլլայի, ամէն գիշեր գայն դնելով բարձիս տակ: Այդ չըջանին ինծի համար կա՞ր աւելի գուարճալի գրագում, քան դիտել Միքի Մաուսեան աշխարհի հրաշալիքները:

Այսօր ալ շատ կը սիրեմ անիրական պատմումներու այդ աշխարհը, մանաւանդ երբ ան կը ներկայացուի գծիկով ժապաւէնի ձեւով: Կը հիանամ այդ ժապաւէնները պատրաստելու թէքնիքին վրայ, կը հիանամ ժապաւէնին հերոսներուն ուշիմութեան եւ ճարպիկութեան վրայ, կը հիանամ ժապաւէնը պատրաստողներու հիանալի գիւտերուն ու սրամտութիւններուն վրայ, կը հիանամ գծագրական ու նկարչական գեղեցկութիւններու վրայ, եւ դեռ շատ բան:

Բայց երբեմն չեմ կրնար հարց չտալ ես ինծի. «Որքա՞ն օգտակար են այս հէքեաթներն ու ժապա-

ւէնները: Այս բոլորը մեր մանուկները չե՞ն պատ-
րաստեր արդեօք հրաշալիքներով լեցուն աշխարհի մը,
որ գոյութիւն չունի: Հէքեաթները մեզի չե՞ն խօսի
անկարելի աշխարհներու մասին, որոնք երբեք գոյու-
թիւն չեն ունեցած: Հէքեաթները մեզ խաբելով ու
յուսադրելով չէ՞ որ կ'երջանկացնեն վաղանցուկ կեր-
պով»:

Բանաստեղծ Պարոյր Սեւակն ալ յուսախաբութեան
գերագոյն պահու մ'ը գոչեց.

Անկեղծ ասած, հէքեաթներից ես յոգնել եմ ..

Հիանալի բանաստեղծութիւն մըն ալ այս մէկը, աւելի
փիլիսոփայական, քան բանաստեղծական, ինչպէս Սե-
ւակի գրեթէ բոլոր բանաստեղծութիւնները: Ձեմ
գիտեր թէ ան որո՞ւ կ'ուղղէ խօսքը: Բայց դիմացինը
մէկն է որ յուսախաբ ըրած է բանաստեղծը:

Անկեղծ ասած՝ այս ամէնից յոգնել եմ ես,
ես, որ երբ դու մեղմ ես ընկել, Քեզ օգնել եմ,
ձեռք եմ պարզել, յոյս եմ տուել,
... սակայն ի՞նչ եմ ստացել
այս ամէնիմ ի տրիտուր:
Անկեղծ ասած՝ ոչինչ չկայ: Եւ ոչ էլ կար:

Յուսախաբ է բանաստեղծը, որովհետեւ դիմացինը
երբեք չէ եղած այն, զոր բանաստեղծը կարծած էր որ
էր: Դիմացինը ի՞նչով փոխադարձած է իր բարիք-
ներուն: Ոչինչով: Միշտ ընթացեր է սխալ ճամբէ,
սուտ խոստումներով լուրդեր է, մանկան նման համոզեր
է զինքը, կեղծ ժպիտով խաբեր է, խոստացեր է եւ չէ
տուեր:

Ի՞նչ յուսախաբութիւն:

Ինքդ գիտես՝ որքա՛նն ձգտել ու տքնել եմ
որ դու .. որ դու մե՛սն լինես իմ երագրին:
Իսկ դու գիտե՞ս՝ ի՛նչ դուրս եկաւ.
«Տղամ հասաւ իր մուրագին,
դուք էլ հասնէ՛ք ձեր մուրագին»:
Հէ՛քեաթն, այո, միտքս ընկաւ:
Հէ՛քեաթում շատ, կեանքում սակաւ:
Երագներում՝ հրաշք աղջիկ,
կեանքում միայն .. ինչ որ չղջիկ,
որ ոչ թոչում, ոչ էլ մուկ է:

Հէքեաթներու հրաշք աղջիկը կեանքի մէջ չղջի՞կ մըն
է իսկապէս: Ամէն պարագայի մեր բանաստեղծը յու-
սախար է, եւ ձանձրացած է սպասելէ հէքեաթներու
հրաշք աղջկան: Եւ հիմա ան կ'ուզէ փոխել աշխարհի
բոլոր հէքեաթներու վերջին տողերը.

Անկեղծ կ'ասեմ հէ՛քեաթն ինչով է վերջանում.
Յած է ընկնում երեք խնձոր,
Մէկ՝ ասողին,
Մէկ՝ լսողին,
Մէկ էլ .. ինձ պէս գիշեր ու գոր
Յիմարարար սպասողին:

Անկեղծ ասած՝ հէ՛քեաթներից ես յոգնել եմ..

Խորիմաստ պատգամ, որ իր պարզութեան մէջ իսկ
շատ բան կ'ըսէ մեզի:

Բայց կ'արժէ հարց տալ: Կրնայի՞նք արդեօք վերջնա-
կանապէս հրաժարիլ հէքեաթներու հրաշալի աշխարհէն:
Կրնայի՞նք մեր մանուկներուն ու մեր շափահասներուն
սիրտը պարպել հէքեաթներու հրաշալի խոստումներէն
եւ լոյսերէն: Ի՞նչ կը մնար մեզի, եթէ մի անգամ

ընդամիշտ փակէինք հէքեաթներու գիրքերը եւ մեր երախաներու բարձերուն տակ դնէիք կեանքի դաժանութիւններն ու մարդոց գազանութիւնները պատմող գիրքեր ու պատմումներ: Մենք ալ, «անկեղծ ասած», պիտի կարենայի՞նք փուռ նետել այն մոզական լոյսը, որով լուսաւորուեցան մեր մանկութեան «հազարումէկ գիշերներու» երկնակամարը:

Ես կը կարծեմ որ մեր մեծ բանաստեղծը, եթէ այսօր վերադառնար մեր մէջ, դարձեալ պիտի տարուէր հէքեաթներու անդիմադրելի գեղեցկութենէն, մինչեւ իսկ թերեւս ետ պիտի առնէր իր պատգամը եւ պիտի ըսէր.

Անկեղծ ասած՝ կարօտել եմ հէքեաթներու...

«ԽԵԼՔ ՉՈՒՆԻՄ»

Ամէն անգամ որ անյաջողութեան մը մատնուին, մարդիկ կը զանգատին իրենց բախտէն:

- Բախտ չունիմ:

Տեսա՞՞ծ էք մէկը որ ըսէ.

- Խելք չունիմ:

Ո՛չ:

Ձէք տեսած: Ձէք ալ տեսներ: Ամէն մարդ խելք ունի: Բախտ է որ չունի:

Մինչդեռ թերեւս անյաջողութեան պատճառը խելքի բացակայութիւնն է, եւ ո՛չ թէ բախտի: Ճիշդ է, բախտ ըսուածը գոյութիւն ունի կեանքի մէջ, այդ մասին կասկած չկայ, բայց բախտն է որ մեզ պիտի առաջնորդէ կեանքի անհաւոր ու անհամար դժուարութիւններուն մէջէն, թէ ոչ խելքը: Պիտի ըսենք որ բանիմաց ամէն մարդ առաջնութիւնը խելքին պիտի տայ: Բախտն

ալ թող ետեւէն դայ, աւելի լաւ: Բայց մենք առաջ-
նութիւնը խելքին պիտի տանք: Խելքն է որ պիտի
ըլլայ մեր նաւապետը՝ կեանք կոչուած սա վտանգաւոր
նաւարկումի ընթացքին, որովհետեւ այդ վտանգաւոր
նաւարկումի ընթացքին եթէ սխալներ պիտի գործենք,
այդ սխալները պիտի գործենք ո՛չ թէ անոր համար
որ բախտ չունեցանք, այլ անոր համար որ մեր խելքը
անբաւարար մնաց, մեր խելքը իր պարտականութիւնը
չկրցաւ լաւ կատարել, կամ պարզապէս անոր համար
որ խելք չունէինք:

Գիտէինք այս ճշմարտութիւնը եւ հիմա անգամ մըն
ալ կը յիշենք զայն, երբ կը կարդանք Պարոյր Սեւակի
ըստ երեւոյթին շատ պարզունակ մէկ բանաստեղ-
ծութեան սա տողերը.

Ամէնքը իրենց
բախտից են դժգոհ
եւ ոչ թէ խելքից:
Իսկ ես Տէր Աստուած,
կրակն եմ ընկել
իմ խելքի ձեռից:

Ահաւասիկ մէկը, որ բաւականաչափ իմաստուն է
ընդունելու համար որ իր խելքն է որ զինքը նետած է
կրակի մէջ: Աստուած մեզի բախտ տուած է, չէ՞ տուած,
չենք գիտեր, բայց գիտենք որ տուած է խելք, մտա-
ծելու կարողութիւն: Կեանքի մէջ այդ խելքն է որ
մեր ձեռքէն պիտի բռնէ ու պիտի տանի: Թէեւ Աստուած
ամէնուն տուած չէ հաւասար խելք, հաւասար իմաս-
տութիւն, բայց վերջապէս անպայման տուած է քիչ
մը խելք մը, որ ամէնէն համեստ մակարդակի վրայ
իսկ կրնայ շատ աւելի լաւ ընկեր դառնալ մեզի, քան
թէ կարծեցեալ բախտը, որ կայ-չկայ, յայտնի չէ:

Չկայ մէկը որ խելք չունենայ: Բայց խելացիին այն է որ լաւագոյնս կը գործածէ այդ խելքը: Իսկ այն որ զայն լաւ չի գործածեր, անոր համար պիտի ըսենք. «խելք չունի»:

Խելք ունենայի՝
վաղուց էի ես
կարգիմ մարդ դարձել -

Եթէ խելք ունենայի, ես վաղուց կարգին մարդ դարձած կ'ըլլայի, կ'ըսէ բանաստեղծը, այն բանաստեղծը որ խորունկ փիլիսոփայութեամբ, հանճարեղ մտածումներով, խելացի վերլուծումներով լեցուն իր բանաստեղծութեամբ ամէն օր կը հմայէ մեզ: Իր ո՞ր չունեցած խելքով է որ ան գրած է այս բոլորը: Կարժէ որ հարց տանք:

Եւ պատասխանենք:

Ուրեմն մարդուս խելքն ալ կը բաղկանայ զանազան բաժիններէ, որոնցմէ մէկը կամ միւսը տարբեր բնագաւառի մը համար կ'աշխատի: Այն խելքը զոր մեր գլխուն մէջ կը գործածենք բանաստեղծութիւն գրելու համար, թերեւս այն խելքը չէ որուն պէտք ունինք կեանքի մէջ կարգին մարդ մը դառնալու համար: Այս երկրորդին համար ուրիշ խելքի մը պէտք ունինք: Մեր կեանքի փորձառութիւններէն օգտուելու համար թերեւս երրորդ խելքի մը պէտք ունինք: Եւ թերեւս չորրորդ խելք մըն է որ մեզ կ'առաջնորդէ մեր սէրերուն, մեր բարեկամութիւններուն մէջ: Որքա՛ն բախտաւոր պէտք է ըլլանք որպէսզի բոլոր այս խելքերը հաւասարապէս լաւ աշխատին եւ ամէն մարդէ ներս մեզ առաջնորդեն դէպի յաջողութիւն:

Բայց ի՞նչ: «Որքա՛ն բախտաւոր պէտք է ըլլանք...» ըսի անգիտակցաբար: Որքա՛ն բախտաւոր պէտք է ըլ-

լանք՝ որ մեր խելքի տեսակները բարեյաջող աշխատանք տանին: Գործը դարձեալ բախտի՞ն մնաց:

Այո՛, ճիշդ է, բախտէն աւելի՛ խելքի պէտք ունինք, բայց խելք ունենալու համա՛ր ալ բախտի պէտք ունինք:

Մեր սիրելի բանաստեղծն ալ ինկած է այս հակասութեան մէջ: Ան թուելէ վերջ թէ ինչ յաջողութիւններ կ'արձանագրէր եթէ խելք ունենար, իր բանաստեղծութիւնը կ'աւարտէ սա տողերով.

Անաստուած աստուած,

իմչո՞ւ ես տուել

անխելքի քախտ ինձ:

Եկէք գլխարկ հանենք կեանքի խորհուրդին առջեւ, պահ մը մեր կոճակները կոճկենք բախտի ու խելքի շփոթ եղբայրութեան դիմաց: Եւ խօսինք վերապահութեամբ: Որովհետեւ ինչ որ խելք կը կոչենք, թերեւս բախտն իսկ է, եւ ինչ որ բախտ կը կոչենք, ուրիշ բան չէ եթէ ոչ մեր խելքը:

ԲԱՆԱԼԻԻ ՓՈՔՐԻԿ ՇԱՐԺՈՒՄ

Գրասէրները գիտեն որ հայ բանաստեղծութեան հսկաներէն Պարոյր Սեւակ 1971-ին ինքնաշարժի անիծեալ արկածի մը հետեւանքով բաժնուեցաւ կեանքէն: Իր մահը չչմեցուց հայաշխարհը, զանազան վարկածներ առաջ քշուեցան, պնդուեցաւ որ արկածը արդիւնք էր խափանարարութեան, թէ իրականութեան մէջ Սեւակ սպաննուած էր դաւադիր ձեռքերու կարգադրութեամբ, կարգ մը շրջանակներ ուզած էին փրկուիլ խորհրդային կարգերու այս անառակ որդիէն: Ձենք գիտեր: Եւ այլեւս կարծես թէ այդ հարցը երկրորդական կը մնայ: Որով-

հետեւ Սեւակ արդէն, ինքնաշարժի արկածի մը հետեւանքով մեզմէ հրաժեշտ առնելէ առաջ, թողած էր պատկառելի վաստակ մը: «Եղիցի լոյս» ըսած էր եւ ստեղծած էր այն լոյսը, որմէ թերեւս ինք չկրցաւ լայն բաժին մը ստանալ կեանքի ժամանակի չգոյութեան հետեւանքով:

Բայց Սեւակ, 1965-ին, այսինքն իր եղերական մահէն վեց տարի առաջ, գրեց երկարաչունչ բանաստեղծութիւն մը, որ կը կոչուի «Ֆրանչեսքա տա Րիմինի»: Այս բանաստեղծութեան մէջ տեղերը զարմանքով կրնանք կարդալ սա տողերը.

Մեքեմական դարում ապրել
եւ խեղճօրէն չկարենա՞լ փախչել հեռու:
Որոշել եմ, քանի՛ անգամ,
նստել ինչ որ մի մեքեմայ
եւ ... ազատել քեզ ինձանից - ինձ քեզանից:
Բայց միթէ դու չե՞ս նկատել,
թէ ինչպէս եմ մեքեմաներն ընկնում գործի:
Բանալիի փոքրիկ շարժում,
վառելիքի չնչին հոսանք,
եւ մեքեման կենդանանալ է սկսում,
սկսում է խայտալ ինչպէս
ինչպէս ... կիմը անկողնի մէջ իր սիրածի:
Ինքդ ասա.
Ես ի՞նչ տեսակ մեքեմայով
եւ ո՞ւր փախչեմ
պատկերաւոր այս աշխարհից...

Վաստակաչատ ամէն գրողի ու բանաստեղծի ամբողջական գործին մէջ անպայման կը գտնուին տողեր ու հատուածներ, որոնք յանկարծ խորունկ իմաստի մը մէջ կը թափխուին հեղինակին մահէն վերջ, որոնք

արժանի կը դառնան որ նոյնիսկ քանդակուին հեղինակին դամբարանին վրայ: Վերի տողերը թերեւս այնքան ալ մեծ նշանակութիւն չունէին այն թուակահին երբ կը գրուէին, որովհետեւ անոնք որեւէ կերպով չէին կապուեր ապագային հետ: Ընթերցող մը, որ Սեւակին վերի տողերը պիտի կարդար անոր մահէն առաջ, այդ տողերը պարզապէս պիտի ողջունէր որպէս խոյանալ ցանկացող, դէպի անհուն թռիչք առնել ուզող բանաստեղծ հոգիի մը գեղումը: Այդքա՛ն: Մինչդեռ, այն վայրկեանէն վերջ, երբ Սեւակ պիտի մահանար ինքնաշարժի արկածի մը հետեւանքով, վերի տողերը ուրիշ զգայնութիւն մը, ուրիշ յուզում մը պիտի խաղցնէին ընթերցողին սրտին մէջ: Անոնք կարծել պիտի տային թէ բանաստեղծը թերեւս ունեցած էր նախզգացումներ, կանխագուշակած էր իր ապագան:

Ի՞նչ, ապրի՛լ մեքենական այս դարուն, եւ խեղճօրէն չկարենալ փախչիլ հեռու: Ի՞նչպիսի նիւթական կամ աննիւթական բանտի մը մէջ կը զգար արդեօք Սեւակ ինքզինք, որ կ'ուզէր փախչիլ եւ դիմացինը ազատել իրմէ, կամ ինքզինք ազատել դիմացինէն: Է՛հ, որքան դիւրին էր իրականացնել այդ երազը: Բանալիի փոքրիկ շարժում մը: Վառելանիւթի փոքրիկ հոսանք մը, եւ արդէն անհասիկ մեքենան վերակենդանանալ կը սկսէր ու կը խայտար: Ու կը նետուէր դէպի յառաջ, կարծես գայն քոյղին մտքին մէջ ստեղծելու համար դէպի հեռու, դէպի անհուն ընթանալու տպաւորութիւն:

Անկասկած այդպէս ըրաւ օր մը Սեւակ: Անցաւ ինքնաշարժին ուղղիչին առջեւ, դարձուց կառքին բանալին, զգաց որ վառելանիւթը կը սկսէր հոսիլ մեքենային ընդերքին մէջ, լսեց շարժակին դզրդիւնը եւ կոխեց կազի կոխանին վրայ: Ի՞նչ երջանկութիւն: Գիտէ՛ր այդ վայրկեանին արդեօք, որ իրականացնելու վրայ էր այն ինչ որ գրած էր վեց տարի առաջ եւ կը

սկսէր խոյս տալ «պատկերաւոր այս աշխարհէն»:

Մարդիկ ապագան չեն կրնար կարգալ: Բախտագուշակներն իսկ ապագան չեն կրնար կարգալ, պարզապէս կարգալ կը կարծեն, կամ կարգալ կը ձեւացնեն: Մարդիկ ապագան չեն կրնար կարգալ, որովհետեւ ապագան երբեք գրուած չէ ընթեռնելի գիրերով, թերեւս բնաւ ալ գրուած չէ, թերեւս բնաւ ալ առաջուց ստեղծուած չէ եւ կը ստեղծուի վայրկեան առ վայրկեան: Ուրեմն ո՞վ պիտի կարենայ կարգալ այն ինչ որ չէ գրուած, դեռ չէ ստեղծուած:

Մարդիկ չեն կրնար կարգալ իրենց ապագան, բայց իրենք չեն արդեօք որ քիչ մըն ալ կը ստեղծեն այդ ապագան: Երբ Սեւակ հարց կուտար թէ «ես ի՞նչ տեսակ մեքենայով - եւ ո՞ւր փխսչեմ - պատկերաւոր այս աշխարհից...», քիչ մըն ալ իր ապագան չէ՞ր շիներ արդեօք, փնտռելով այն խենդ կառքը, այն խենդ մեքենան որ զինքը պիտի թուցնէր հեռու այս պատկերաւոր աշխարհէն:

Վերի բանաստեղծութիւնը սովորական բանաստեղծութիւն էր մինչեւ 17 Յունիս 1971, մինչեւ Սեւակի մահուան օրը: Այդ օր կործանեցաւ Պարոյր Սեւակի աշխարհը: Իսկ բանաստեղծութիւնը յանկարծ բան մը շահեցաւ:

ԵԹԷ ՄԵՌՆԻԼ

Ինքնաշարժի մը արկածի զոհ երթալէն 14 տարի առաջ, անգամ մը Սեւակ դարձեալ կը խորհրդածէր մեռնելու ու ապրելու մասին: Իր միտքը հաւանաբար կ'եռեւեփէր խառն ի խուռն մտածումներով: Ան որ մասնակցած էր հայրենական պատերազմին, ռազմաճակատին վրայ կռուած էր գերմաններու եւ միւս ուժերուն դէմ, ան որ հերոսութեան պատմուճանը հազնելու անհամբեր էր, հիմա, տարիներ վերջ, կը ցանկար որ օր մը իր մահն ալ ըլլար իր գաղափարական կեցուածքին ու մարդասէր ապրումին յարմար մահ մը: Մահուան ինչ տեսակներ կան, որոնք բնաւ ալ վայել չեն այն մարդոց որոնց կեանքին վերջ կուտան: Հերոսը պէտք է մեռնի հերոսական մահուամբ, փառքով, թերեւս ոտքի: Կամ գոնէ արտասովոր մահով մը, լուսաճաճանչ եւ իմաստալից մահով մը:

Ո՛չ մէկը գիտէ թէ ինչպէս պիտի մեռնի: Ասիկա կեանքի մեծ խորհուրդներէն մէկն է: Բայց ոմանք պիտի ըսեն. ի՞նչ կարեւորութիւն ունի թէ ինչպիսի մահով պիտի մեռնիմ: Մահը մահ է եւ ամէն ինչի վախճան: Հերոսական մահով կամ սովորական մահով: Ռազմաճակատի վրայ ինկեր ես կամ ինքնաշարժի արկածի զոհ գացեր ես: Նոյնը չէ՞: Եթէ պիտի մեռնիմ կանխահասօրէն, եթէ պիտի մեռնիմ անիրաւօրէն, կամ մինչեւ իսկ եթէ պիտի մեռնիմ արժանաւոր ծերութեան մէջ եւ իմաստուն մարդու համակերպումով, մահը մահ է: Այսպէս կամ այնպէս: Խաւարի ու ոչնչութեան նոյն վարագոյրն է որ պիտի իջնէ մարդուն վրայ:

Այդպէ՞ս է:

Կրնանք վարանիլ: Կրնանք մաղթել որ մահն ալ ունենայ իր փայլուն ու մինչեւ իսկ մարդոց նախանձը

գրգռող փառաւորութիւն մը: Իր մահէն 14 տարի առաջ
նոյնպէս կը մտածէր նաեւ Սեւակ: Եթէ մեռնիլ պէտք
է, ի՞նչպէս մեռնիլ.

Եթէ մեննե՛լ ..

թող որ մեննեմ
հուր-կայծակից՝

միանգամից,

մի վայրկեանում,
յանկարծակի,

այնքան արդար,

խղճիս ձայնիմ միշտ ունկնդիր,

որ՝ համաձայն պիպլիական հիմ լեկենդիմ՝

հանգիստ անցնեմ ե՛ւ ասեղի մեղիկ ծակից...

Եթէ մեննե՛լ ...

թող սպաննուեմ,

թող կործանուեմ

այնպէս ապրած ու բան արած,

որ մորածիմ մանուկների տեսնով մորից

վերածնուեմ:

Եթէ գամուել՝

փարոսի պէս:

արնաբամուել՝

հերոսի պէս

ու քրքրուել՝

դրօշի պէս...

Եթէ մեննե՛լ

Բայց առայժմ ապրե՛լ է պէտք:

Ահաւասիկ բանաստեղծութիւն մը որուն մէջ Սեւակ
հաւատարիմ կը մնայ իր ոճին եւ տեսիլքին: Եթէ հարկ
է որ մեռնիմ, գոնէ մեռնիմ հուր-կայծակով, յան-
կարծակի, մէկ երկվայրկեանի մէջ: Կամ եթէ հարկ է

որ մեռնիմ, սպաննուիմ, կործանիմ: Կամ եթէ հարկ է որ մեռնիմ, այնպէս մը մեռնիմ որ իմ հոգիս վերստին աշխարհ գայ նորածիններու մարմնին մէջ: Բանաստեղծական իր զեղումներուն մէջ մեր սիրելի բանաստեղծը տակաւին մահուան փառաւոր ու յանգաւոր տեսակներ կը գտնէ փարոսին, հերոսին, զրօշին մէջ: Եւ դեռ ո՛վ գիտէ տակաւին մահուան ինչ փառաւոր տեսակներ կան կեանքի մէջ:

Բայց բանաստեղծը յանկարծ կը սթափի: Կը յիշէ որ զուր տեղ կը մտածէ մահուան մասին: Կը սթափի ու իր բանաստեղծութեան վերջին տողին մէջ ան յանկարծ մէկ անգամէն կը ջրէ վերը իր ըսածները:

Եթէ մեռնե՛լ...

Բայց առայժմ ապրել է պէտք:

Սա արդէն կեանքի ու տրամաբանութեան հրամայականն է: Առ այժմ՝ ապրիլ պէտք է: Ամէն բանէ առաջ՝ ապրիլ պէտք է: Հերոսական մահը կրնայ սպասել: Եւ արդէն պէտք է սպասէ: Այո՛, բնաւ կասկած չկայ, մեր բոլորին պարտքն է սպասցնել մահը, հերոսական կամ ոչ: Մեր բոլորին պարտքն է ապրիլ հերոսաբար, կամ սովորական մարդու առօրեայով: Գիտենք որ օր մը մութ ոյժ մը պիտի կոտրէ ապրելու մեր կամքը, բայց առայժմ ապրիլ պէտք է:

Եւ բանաստեղծը կրնար նոր տողեր աւելցնել այս բանաստեղծութեան վրայ եւ ըսել.

Եթէ ապրի՛լ պէտք է, թող որ ապրիմ գիրով-սուրով, թող որ ապրիմ լոյս սփռելով փարոսի պէս, թող որ ապրիմ մաքառելով հերոսի պէս, թող որ իմ ժողովուրդիս երկնակամարին վրայ ծածանիմ զրօշի պէս.....:

Բայց բանաստեղծը չէ ուզած աւելցնել այսպիսի տողեր: Որովհետեւ վերջին խօսքը պէտք է մնայ վերջին

խօսք: Որովհետեւ արդէն ամբողջ բանաստեղծութիւնը
գրի առնուած է այդ վերջին խօսքին համար:

Առայժմ պէտք է սպրիւ...

ՊԻՏԻ ԻՄ ...

ԲՆԱԿԱՆ ՄԱՀՈՎ ՄԵՌՆԵՄ..

Պարոյր Սեւակի անհամար բանաստեղծութիւններուն միջեւ կայ ուրիշ բանաստեղծութիւն մըն ալ, որ մեզի անմիջապէս մտածել կուտայ Սեւակի ողբերգական վախճանին մասին: Հո՞ն ալ նախազգացում մը կայ արդեօք, հո՞ն ալ մեծ բանաստեղծը կը զգայ թէ իրեն կը սպասէ ինչպիսի անբնական ու անողոք ճակատագիր մը:

Բանաստեղծական շքեղ պատկերներով հիւսուած կարճ բերթուած մըն է այս, մէկը՝ Սեւակի այն սակաւաթիւ բանաստեղծութիւններէն, որոնց մէջ բանաստեղծը -միշտ հաւատարիմ մնալով իր անսովոր ոճին- ինքզինք յանձնած է իրիկնային բնանկարէ մը հասնող զգայնութեան եւ բնանկարի վարպետ նկարագրութեան:

Այդ շատ գեղեցիկ նկարագրականի աւարտին, յանկարծ կը պայթին երեք տողեր, վերջին երեք տողեր, որոնք դարձեալ մեզի յանկարծ պիտի յիշեցնեն թէ ինչպիսի անբնական մահով էր որ բանաստեղծը հրաժեշտ առած էր մեզմէ:

Երբ վերջալույսն է միտքուում ամպերի մէջ՝

սամտրի մմամ,

ու հոտոտող քարակ Բամիմ, շմիկի պէս, կանգ է առնում

ամէն քփի, ծառի, գուղձի և ամէն մի

մարդու առաջ,

Բայց ինչ որ կը ցնցէ մեզ այս բանաստեղծութեան մէջ, այդ վերջին անողոք նախադասութիւնն է, զոր կրնանք բանալի մը նկատել Սեւակի ներաշխարհէն ներս բաներ մը տեսնելու համար: Այդ տողով Սեւակ մեզի անուղղակիօրէն կ'ըսէ թէ ինք արդէն գիտէ թէ իր բնական մահով չէ՛ որ պիտի մեռնի, պիտի մեռնի տարբեր կերպով, կանխահաս աղէտով մը, թերեւս արկածով մը, հպատակելով անարդար ճակատագրի մը տնօրինութեան: Գիտէ: Բայց ահա սա տեսարանին դիմաց դարձեալ միամիտ կը դառնայ ու պահ մը կը մտածէ թէ թերեւս ալ իր վախցածը չէ՛ որ պիտի իրականանայ, թէ թերեւս ալ իր բնական մահով է որ պիտի մեռնի:

Վերջալուսային տեսարանին ստեղծած տպաւորութիւնը չկրցաւ փոխել Սեւակին ճակատագիրը:

*

Պարոյր Սեւակի սիրտը, որ նախկին դատախազի մը կողմէ պահուած էր խնամքով, այս տարի յանձնուեցաւ ցեղասպանութեան թանգարանին: Թերեւս անհաւատալի բան: Բայց հապա Սեւակին աչքե՞րը: Մահուան պահուն, բա՞ց էին անոր աչքերը:

Նոյն երկարաչունչ բանաստեղծութեան մէջ պատահական հրաշալի վեց տողեր եւս ունի Սեւակ.

Ժպիտներից լաւագոյնը
փակ աչքերովն է երեւի:
Քոնն է հասցէն:
Եւ լաւագոյն երազանքը
բաց աչքերովն է անկասկած:
Նոյնն է հասցէն:

Ո՞ր անանուն սիրելիին հասցէին ուղղուած էր այս պատգամը, չեմ գիտեր: Բայց գիտեմ որ այն ժպիտն

ու երազանքը, զոր բանաստեղծը կը փնտռէր դիմացինին փակ կամ բաց աչքերուն մէջ, նոյնինքն բոլոր բանաստեղծներու երկու հոգեվիճակներն են, որոնք իրենց ամենագեղեցիկ ձեւերուն մէջ կը սառին ու տասնամեակներ շարունակ կը փոխանցուին ընթերցողներու: Բանաստեղծներուն աչքերը կը փակուին, բայց անոնց սիրտը միշտ բաց կը մնայ:

Եղբրական մահը ոչի՛նչ կը փոխէ:

Եւ թերեւս քիչ մըն ալ սխալ է մտածել թէ լաւագոյն ժպիտը կուգայ փակ աչքերէն:

ԼԱԻԱԳՈՅՆԸ

Թերեւս քիչ մըն ալ սխալ է մտածել թէ լաւագոյն ժպիտը կուգայ փակ աչքերէն: Բայց դիւրին պիտի չըլլայ Պարոյր Սեւակը հրաժարեցնել իր համոզումէն: Պարոյր Սեւակ երկու անգամ - թերեւս ալ երրորդ անգամ մըն ալ - օգտագործած է այս թէման տարբեր բանաստեղծութիւններու մէջ, տարբեր թուականներով:

Ժպիտներից լաւագոյնը - փակ աչքերովն է երեւի:
Քոնն է հասցէն:

Եւ լաւագոյն երազանքը - բաց աչքերովն է
անկասկած:

Նոյնն է հասցէն:

1965ին երկարաչունչ պոէմի մը մէջ գրուած այս տողերը, զոր արդէն յիշեցինք վերջին անգամ, դարձեալ մեր դիմաց կ'ելլեն 1967-ին գրուած ուրիշ կարճ բանաստեղծութեան մը մէջ, ուր մեր սիրելի ու փիլիսոփայ բանաստեղծը կը փնտռէ բազմաթիւ զգայ-

նութիւններու եւ արտայայտութիւններու լաւագոյնները:

Պարտաւոր ենք կարգալ երկար հատուած մը, որ կը սկսի սա չորս տողերով, որոնք նոյն թէման կը յիշեցնեն.

Լաւագոյն ժպիտ ասուածը, անշո՛ւշտ,
Փակ աչքերովն է:
Իսկ լաւագոյնը երագամբների՝
բաց աչքերովը:

Այս չորս տողերէն վերջ Սեւակ կը սկսի փնտռել ուրիշ «լաւագոյն»ներ.

Լաւագոյն երգը՝
բաց պատուհանից - հեռուից լսուածն է:
Լաւագոյն խօսքը՝
լռութեան խորքում լռին ասածն է:
Լաւագոյն ազգը այն է, երեւի,
որ չի ունենում հսկայ կայսրութիւն:
Լաւագոյն դիմակն այն է, անկասկած,
որ կոչւում է դէմք:
Լաւագոյն սէրը՝
կիսատ թողածը:
Լաւագոյն կապիկն աշխարհում (էլի՛)
մարդն է երեւի:
Լաւագոյն մարդն էլ (ո՛չ մի երեւի)
մերեցէ՛ք ... ես եմ....:

Բանաստեղծական ուժեղ պատկերներ գրեթէ չկան այս տողերուն մէջ, ինչպէս Պարոյր Սեւակի բանաստեղծութիւններէն շատերուն մէջ: Այստեղ եւս բանաստեղծը կը քալէ փիլիսոփայական մտածումներու լարին

վրայ, վերջին տողին մէջ պայթեցնելով անակնկալ սրամտութիւն մը: Ինչո՞ւ համախոհ պիտի չըլլանք այս սրամտութեան: Չէ՞ որ աշխարհի մարդոց ջախջախիչ մեծամասնութիւնը կը հաւատայ որ լաւագոյն մարդը ինքն իսկ է, նոյնիսկ կատակով: Բայց այս սրամտութեանէն առաջ, Սեւակ քանի մը բանալիներ կուտայ որպէսզի բանանք բանաստեղծի իր խենդ հոգիին դռները: Եւ այդ խենդ հոգիին մէջ կը գտնենք յուսախաբութիւններէ ու ընկալուած սովորութիւններէ ծնունդ առած դառնութիւններ: Ինչո՞ւ արդեօք լաւագոյն երգը բաց պատուհանէն ու հեռուէն եկած երգն էր իրեն համար: Որովհետեւ ան հեռաւոր արեւմուտ ու հորիզոններու կարօտն ունէր: Ինչո՞ւ լաւագոյն խօսքը լռութեան մէջ լռին ըսուածը ըլլար: Որովհետեւ ձանձրացած էր զինքը շրջապատող սովորամոլութիւններէ ու գոհակութիւններէ եւ ան մեծագոյն իմաստութիւնը կը գտնէր սակաւախօսութեան ու լռութեան մէջ, հակառակ որ Սեւակեան բանաստեղծութիւնը ընդհանրապէս հիմնուած է որոշ «չատախօսութեան» մը վրայ: Թէեւ շատ գործածուած պատկեր մըն է զոր Սեւակ մեզի կուտայ երբ կ'ըսէ թէ լաւագոյն դիմակը մարդուն դէմքն է, բայց այս նախադասութեան մէջ ալ կը գտնենք որոշ յուսախաբութիւն մը այն կեղծաւոր ու անվստահելի մարդոց նկատմամբ, որոնք թերեւս կը շրջապատէին զինքը: Եթէ ան հիմա մեզի հետ ըլլար, պիտի յիշեցնէինք որ երբեմն ալ հակառակը ճիշդ է: Երբեմն ալ մարդոց դէմքը երբեք ու երբեք չի կրնար դիմակի մը դերը կատարել, որովհետեւ այդ դէմքը այն պատահուն է որուն վրայ կը կարդանք մարդոց ներաշխարհը, մարդոց ներքին գաղտնիքները:

Իսկ լաւագոյն սէրը իսկապէս կիսատ թողուած սէ՞րն է:

Բայց այս տողերուն մէջ կայ «լաւագոյն» մը որ ամէն

բանով կը գատուի միւսներէն:

Լաւագոյն ազգը այն է, երեւի,
որ չի ունենում հսկայ կայսրութիւն:

Ահաւասիկ ամբողջ բանաստեղծութեան երկու հիմնական ու կարեւորագոյն տողերը, որոնք մեզ կը հրաւիրեն մտածելու ազգային ու քաղաքական ինչ ինչ հարցերու մասին: Հայ ժողովուրդի հայրենասէր ու հարազատ զաւկին վճիռն է այս: Անգլիացիներուն, ամերիկացիներուն, հոլանտացիներուն, փորթուկալցիներուն եւ տակաւին չեմ գիտեր ինչ ազգութիւններու բանաստեղծը չէ՛ որ պիտի գրէ այս տողերը: Հայ ժողովուրդին բանաստեղծն է, որ ձանձրացեր է մեծ կայսրութիւններու եւ աշխարհակալ ազգերու եսասէր ու այլամերժ քաղաքականութիւններէն, ձանձրացեր է այդպիսի մեծութիւններով շփացած ժողովուրդի մը անմարդկային վերաբերումէն՝ փոքրիկ ժողովուրդներու նկատմամբ: Անկասկած, Սեւակն էր որ պիտի գոչէր որ լաւագոյն ազգը այն է որ չունի ու պիտի չունենայ հսկայ կայսրութիւն:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՎԱԽԸ

Ամէն անգամ որ մնացած եմ շատ գեղեցիկ տեսարանի մը զիմաց, եւ զգացած եմ սա գեղեցիկ բնութեան մէջ ապրելու երջանկութիւնը, անմիջապէս մտածած եմ մահուան մասին: Կարծես ո՛չ մէկ բան ինձի այնքան մահը կը յիշեցնէ, որքան բնութեան գեղեցկութիւնը: Մահը այս բոլորէն բաժնուիլ կը նշանակէ: Մեռնիլը ո՛չինչ է, եթէ մարդ չմտածէ թէ իր մահէն վերջ այս գեղեցկութիւնները պիտի մնան ու պիտի գոյատեւեն,

եւ ինք այլեւս երբեք պիտի չկարենայ վայելել զանոնք: Մահը ո՛չ ինչ է, եթէ մարդ մտածէ թէ կը բաժնուի աշխարհէ մը որ լեցուն է միայն տգեղութիւններով ու գարշանքով: Բայց մահը տառապեցուցիչ հեռանկար է, որովհետեւ աշխարհ գեղեցկութիւններով լեցուն է եւ անոնց բոլորն ալ պիտի մնան ուրիշներու:

Բայց բանաստեղծ Պարոյր Սեւակի կարծիքով մեռնիլը դժուար է ո՛չ թէ անոր համար որ ինք պիտի բաժնուի աշխարհի գեղեցկութիւններէն, այլ անոր համար որ կը վախնայ թէ ինք իրեն հետ կը տանի այդ գեղեցկութիւնները, իր կեանքին հետ կը վերջանան նաեւ կեանքի գեղեցկութիւնները:

Ահա բանաստեղծին վախը: Ան իր կեանքին համար չէ՛ որ կը վախնայ: Կը վախնայ ջուրին համար, կը վախնայ հողին համար, կը վախնայ աստղերու ցոլքին համար, կաքաւներու ձայնին համար, որովհետեւ կը վախնայ որ «մի գուցէ իրեն հետ կը տանի նաեւ զանոնք»: Այս է սոսկալին: Այլապէս, եթէ կ'ուզէք, ան հիմա իսկ կ'իյնայ ու կը մեռնի:

Ահաւասիկ քանի մը տող այդ հրաշալի բանաստեղծութենէն.

Ես ինձ համար չեմ վախենում,
կ'ուզե՞՞ք՝ վաղն էլ ընկնեմ - մեռնեմ:
Վախենում եմ ջրի համար
եւ ջրի հետ խնամկար այն քարերի
որոնք ցոլանք են տալիս ջրին:
Վախենում եմ մրանց համար
որ մի գուցէ հետս նաեւ իրեմց տանեմ...
Վախենում եմ նաեւ հողի, հողի՛ համար՝
մեմախօսող այն մեծագոյն ողբերգակի՛
ում «լիմել քէ չլիմելը» այսօր արդէն
բարձր է հնչում

..Քանի ես կամ՝

թւում է թէ հողը դեռ չի կործանուելու:

Թէ չէ՝ կ'ուզէ՞ք ... այս վայրկեանիս ընկնեմ -
մեռնեմ:

Եւ դեռ քանի մը տող.

Վախենում եմ, որ գնալիս՝ հետս աստղերի
ցոլքը տանեմ
Եւ աչքերի գիշերական ու ծովական խորքը տանեմ,
կախալենքի «կղա»ն, երգի «լօ-լօ»ն տանեմ,
հեռախօսի կարօտ ցրող «ալօ»ն տանեմ:
Վախենում եմ սրա՝ համար, թէ չէ կ'ուզէ՞ք,
ձեր աչքի դէմ ընկնեմ - մեռնեմ այս վայրկեանիս...

Պիտի տարուիմ ամսոսալու: Եւ պիտի ըսեմ.

Խեղճ Սեւակ: Ինք գնաց ու աշխարհի բիւր գեղեցկու-
թիւններէն ո՛չ իսկ մէկը յօժարեցաւ երթալ իրեն
հետ: Ջուրը, հողը, աստղերու ցոլքը, կաքաներու երգը,
հեռաձայնի ընկալուչներէն այնքան զուարթօրէն հնչող
«ալօ»ն, եւ դեռ ինչեր, այսօր կը լեցնեն ու կ'երջան-
կացնեն մարդոց կեանքը, առանց նոյնիսկ յիշեցնելու
թէ Պարոյր Սեւակ մը կար, բանաստեղծ մը կար այս
աշխարհին վրայ:

Պիտի տարուիմ ամսոսալու:

Բայց բանաստեղծը իսկապէս սխալա՞ծ էր արդեօք,
երբ գրած էր վերի տողերը եւ երբ մտածած էր որ
մեռնիլը բան մը չէ, այս գեղեցկութիւնները հետը
տանելէ վախնալն է սարսափելին: Սխալա՞ծ էր: Վստա՞հ
ենք որ ան իրեն հետ չտարաւ բոլոր այն գեղեցկու-
թիւնները որոնցմէ ո՛չ միայն բաժնուիլ չէր ուզեր,
որոնցմէ նաեւ մնացեալ ժողովուրդը զրկել չէր ուզեր:

Պիտի փոխեմ կարծիքս ու պիտի ըսեմ.

Իրաւունք ունէր բանաստեղծը: Ան ահա անակնկալօրէն բաժնուեցաւ մեզմէ եւ իրեն հետ տարաւ բոլոր այն գեղեցկութիւնները, որոնց մասին երգ կը հիւսէր անդադար: Իրեն հետ տարաւ ջուրը: Ջուր այսօր ալ կայ, եւ գեղեցիկ ու կենարար: Բայց այս ջուրը բանաստեղծ Սեւակին գովերգած ջուրը չէ: Սեւակին գովերգած ջուրը գնաց անոր հետ միասին: Հող այսօր ալ կայ, բայց Սեւակին գովերգածը այս մէկը չէր: Այդ հողը չկայ: Կաքաւնները այսօր ալ «կղա» կ'ըսեն, մեր երգերուն մէջ այսօր ալ «լօ-լօ»ն կը հնչէ, եւ աշխարհի բոլոր անլուելի զանգակատուներու զանգակները կը զօղանջեն շարունակ, բայց ասոնցմէ ո՛չ մէկը Պարոյր Սեւակին գովերգածն է, ո՛չ մէկը պահ մը Պարոյր Սեւակին սիրտն ու աչքը լեցնելէ վերջ մեզի ժառանգ մնացած է, ո՛չ մէկուն վրայ մեծ բանաստեղծին աչքն ու արցունքը մնացած է: Սեւակ իրենները իրեն հետ տարաւ: Իր վախն էր որ իրականացաւ, որովհետեւ սա դաժան ճշմարտութիւն է: Աշխարհի բոլոր բանաստեղծները, աշխարհի բոլոր արուեստագէտները, աշխարհի բոլոր զգայուն հոգիները անպայման իրենց հետ կը տանին իրենց աշխարհին գեղեցկութիւնները, իրենց մահով կը կործանեն, գետնին կը հաւասարեցնեն բոլոր այն գեղեցկութիւնները որոնցմով լեցուն էր իրենց սիրտը, իրենց միտքը:

ԳՈՒԼՊԱՆ

Ի՞նչ պիտի անուանենք ութ տողերէ բաղկացեալ սա կարճ գրուած թիւնը. բանաստեղծութի՞ւն, ոտանաւորի ձեւով գրուած պատմուածք, սրամիտ գրուած թիւն, սեւ երգիծա՞նք: Ի՞նչ:

Վերջերս աղբանոցի մը մէջէն գտնուած էին Պարոյր Սեւակին ձեռագիրները բովանդակող տետրակներ, որոնք հրատարակուեցան «Անկեղծ ասած» անուան տակ: Հոնկէ է որ կը քաղեմ այդ ութ տողերը: Ութ տողերուն խորագիրն է «գուլպան»: Գուլպայ բառը բնաւ ալ բանաստեղծական չէ: Բայց կարգանք.

Արկը սառնասիրտ շառաչեց օդում
նի պայթեց մօտիկ՝ լերկ հողի վրայ:
Արկի բեկորը սրի պէս հատու
կտրեց ու տարաւ ռոբերը մրա:

Իսկ այդ մոյճ պահիմ, մայրն՝ աչքում արցունք,
պահելով մրա գալուստի ճամբան,
համբուրում էր ու արցունքով թրջում
իր որդու համար մոր գործած գուլպան...

Ողբերգական պատմութիւն մը ահաւասիկ ութ տողով: Մայրը իր զինուոր տղուն վերադարձին կը սպասէ, ձեռքին մէջ պահելով այն նոր գուլպան, զոր հիւսած է անոր համար: Բայց լուր չունի որ այդ պահուն ռազմադաշտին վրայ ռումբ մը կտրած- տարած է իր որդւոյն ոտքերը: Այդ սիրելի տղան, նոյնիսկ եթէ պիտի կարենայ վերադառնալ, գուլպայի պէտք պիտի չունենայ այլեւս:

Եկէք այս փոքրիկ բայց շատ տխուր բանաստեղ-

ծուլթեան մէջէն անջատենք սա երկու բառերը. ոտք եւ գուլպայ: Եւ այս երկու ոչ-բանաստեղծական բառերը ընդունինք որպէս խորհրդանշանը երջանկութեան մը, որ ծնունդ կ'առնէ իրարու համար ստեղծուած երկու բաներու միասնութենէն: Ոտք եւ գուլպայ: Այս երկուքին միասնութիւնը: Իրարմէ չբաժնուիլը: Որովհետեւ ոտքը գուլպայի պէտք ունի, գուլպան ալ ոտքի մը պէտք ունի: Մէկը առանց միւսին՝ անկատար է, անհանգստացնող է, կիսատ մնացած ըլլալու տպաւորութիւնը կը թողու: Ոտքին ու գուլպային միասնութիւնը կը ստեղծէ մէկը այն անհամար երջանկութիւններէն, որոնցմով պէտք է լեցուի մարդուս կեանքը:

Անտարակոյս ոտքի ու գուլպայի միասնութեան խախտումը, որ ծնունդ կ'առնէ մէկուն բացակայութեան հետեւանքով, կը խախտէ նաեւ հաւասարակշռութիւն մը, բայց ասիկա վերջին հաշուով այնքան ալ մեծ ողբերգութիւն մը չէ: Աշխարհի վրայ բոլորիկ մնացած շատ մարդ կայ, խանութներն ալ լեցուն են գուլպաներով որոնք դարակներու մէջ կը սպասեն որ մէկու մը ոտքերը գան ու տէր կանգնին անոնց: Եթէ այդ ժամադրութիւնը չիրականանայ, տխուր է, բայց աշխարհը չի կործանիր:

Բայց այն ինչ որ կը պատմուի մեր բանաստեղծին ութ տողերուն մէջ, իսկապէս մեծ ողբերգութիւն է: Երեւակայենք թէ ի՞նչ պիտի զգայ այդ տարաբախտ մայրը, երբ պիտի իմանայ որ իր զաւակը այլեւս պէտք պիտի չունենայ իր ձեռքերով հիւսուած գուլպային:

Այս պատմութիւնը մեզի անգամ մըն ալ կը յիշեցնէ զաւելտախառն այն ողբերգութիւնը որ ծնունդ կ'առնէ երբ իրարու համար ստեղծուած երկու բաներ զիրար չեն գտներ կոյր պատահարի մը բերումով: Այդպիսի կոյր պատահարի մը բերումով էր որ զիրար չէին կրցած

գտնել Ռոմէօն եւ Ժիւլիէթը, մինչ ամէն ինչ այնպէս մը կարգադրուած էր որ երկու սիրելիները վերջնականապէս միանային իրարու եւ այնուհետեւ ասորէին երջանիկ կեանք մը: Դիտելով այդ ողբերգութիւնը, արցունք կրնանք հոսեցնել, բայց իրականութեան մէջ խնդալիք բան է: Մէկը քունէն չէ արթնցած, միւսը զայն մեռած կարծած է եւ յուսահատօրէն դիմած է անձնասպանութեան: Եւ երբ միւսը արթնցած է, իր սիրածին դիակը իր քով տեսնելով իր կարգին վերջ տուած է իր կեանքին: Մեր կեանքը լեցուն է նմանօրինակ զաւեշտական ողբերգութիւններով: Ռօմէօ-Ժիւլիէթի պատմութիւն մը չէ՞ք տեսներ այն մարդուն մէջ, որ երիտասարդ ու առողջ վիճակին մէջ ուտելիք հաց չունի, եւ իր չափահասութեան շրջանին ալ հարստացած է, բայց չի կրնար ուտել առողջական պատճառներով: Նոյն զաւեշտախառն պատմութիւնը չէ՞ք տեսներ այն սիրահար աղջկան մէջ, որ իր սիրածին հետ ամուսնանալու համար տասը տարի սպասելէ վերջ ճիշդ ամուսնանալու թուականին յանկարծ կը նշմարէ որ այլեւս դադրած է իր խօսեցեալը սիրելէ, կամ հիւանդացած է ու չի կրնար ամուսնանալ, կամ իր խօսեցեալը յանկարծ զոհ գացած է արկածի մը: Նոյն ողբերգութիւնը չէ՞ք տեսներ այն մանկամարդ կնոջ մէջ, որ իր առաջին զաւակը աշխարհ բերելէ վերջ յանկարծ իր կեանքը կը կորսնցնէ ծննդաբերութեան անկողնին մէջ:

Պարոյր Սեւակի ութ տողնոց բանաստեղծութեան մէջ երկու պատահարներ կան: Առաջինը կտրուած ոտքերուն պատմութիւնն է: Երկրորդը նոր հիւսուած գուլպան է: Խեղճ մայրը պէտք չունէր գուլպայ հիւսած ըլլալու, որպէսզի արդէն մահուան չափ տառապէր իր զաւակին ոտքերուն համար: Բայց գուլպան բան մը եւս, եւ թէ զաւեշտական բան մը եւս կ'աւելցնէ անոր

մահացու տառապանքին վրայ:

Ո՞ր հրէջն է որ այսպէս գաւեշտ մըն ալ կ'աւելցնէ մարդոց ապրած ծանր ողբերգութիւններուն վրայ:

ՉՈՒՐԸ ՀՈՍՈՒՄ Է, ՉՈՒՐԸ ԽՕՍՈՒՄ Է...

Իրիկուան դէմ օդը փոխուեցաւ: Երկիրնքը ծածկուեցաւ գորշ ամպերով եւ այն պահուն երբ այլեւս մութը կ'իջնէր, զգացի որ յորդահոս անձրեւ մը պիտի իջնէր քանի մը վայրկեանէն: Լռութեան մէջ յանկարծ երկիրնքը լուսաւորուեցաւ ուժեղ փայլատակումով մը, մէկ երկվայրկեան վերջ լսուեցաւ ահաւոր որոտում մը: Յետոյ երկրորդ մը, յետոյ երրորդ մը: Որոտումը ահաւոր էր: Կարծես պարտէզիս մէջ էր որ կ'իջնէր կայծակը: Պատշգամէն ներս փախայ: Ու յանկարծ յիշեցի այն ինչ որ ես ինծի հարցուցած էի տակաւին մէկ ժամ առաջ, երբ կը կարդայի Պարոյր Սեւակի բանաստեղծութիւններէն մէկը: «Բնութիւնը իր իսկ ճայները կը լսէ»: Բնութիւնը հիմա լսե՞ց սա ահաւոր որոտումը, որ աշխարհը տեղէն կը խաղցնէր կարծես: Ո՛չ: Բնութիւնը իր ճայնը չի լսեր:

«Ազմկում եմ» խորագրով բանաստեղծութեան մէջ Պարոյր Սեւակ իր անձին ու ընկերային կեանքի խորհուրդներուն մասին հարցումներ կ'ուղղէր, հարցումներուն պատասխանները կը փնտռէր: Բայց յետոյ կ'անդրադառնար որ այդ հարցումներուն պատասխանը միայն ժամանակն է որ պիտի տար: Ու կը շարունակէր սա տողերով.

Իսկ առ այժմ աղմկում եմ,
իմչպէս ջուրը,
որը ի՞նչ է,
ծռով է,
լի՞ն է,
թէ ֆախիմ է:
Տա՞ժ է,
պղտռ՞ր,
պաղ ու ջի՞նջ -
վերջին հաշուով ջրի համար
միեւնոյնն է կամ ոչինչ է.
նա հոսում է
ու խօսում է՝
իր սեփական ձայնը բնաւ չլսելով:
Ոչ ցաւ զգում,
ո՛չ էլ սգում՝
իր գեղեցիկ մահը բնաւ չափստաւով...

Բանաստեղծութեան այս հատուածն էր որ զիս
հրաւիրած էր հարց տալու, կամ պարզապէս հաստա-
տելու. «Իրաւ է, ջուրը կը հոսի, ջուրը կը խօսի, բայց
իր սեփական ձայնը չի լսեր»: Բնութիւնը իր սեփական
ձայնը չի լսեր: Մենք կը սոսկանք, մեր տեղերէն կը
ցատկենք երբ ահաւոր որոտում մը կը պայթի, բայց
որոտումը ինքզինք չի լսեր: Բնութեան աղմուկները
միայն կենդանի արարածներու համար են, մարդ կամ
անասուն:

Վերի բանաստեղծութեան մէջ ուրիշ հաստատում մըն
ալ ունի բանաստեղծը: Ջուրը ո՛չ ցաւ կը զգայ, ոչ ալ
սուգ կը պահէ իր գեղեցիկ մահուան համար: Ջուրը
կը մեռնի առանց իր մահուան համար արիստաւով:
Զգայնութիւններն ալ կենդանի արարածներու համար
են:

Այս տողերը զիս կը զրկեն Պարոյր Սեւակի ուրիշ մէկ բանաստեղծութեան, որ թերեւս նոյն գուգահեռին վրայ գրուած է.

Զիւնը ի՞նչ է իմանում
թէ աղջատը փայտ չունի:
Ճամբան ի՞նչ է իմանում
թէ ձիւն ռտփիւն պայտ չունի:

Այո՛, նոյնը պիտի հաստատենք այս չորս տողերը կարդալէ վերջ ալ: Բնութիւնը զգայնութիւն, կարեկցութիւն, խղճահարութիւն, գուրգուրանք չունի: Զիւնը եթէ պիտի տեղայ, պիտի տեղայ հոգ չէ թէ աղքատը փայտ չունի, կամ հոգ չէ թէ գիւղացին բաց ճամբուն վրայ պիտի սառի, կամ մեր տուններուն երգիքներէն ներս ջուր պիտի կաթէ: Զիւնը պիտի տեղայ, որովհետեւ Փիզիքական օրէնքները կը պայմանաւորեն որ տեղայ: Զիւնը մարդ չէ, որպէսզի պահ մը մտածէ թէ այդպէս տեղալով թերեւս աղքատ մարդու մը տունը պիտի քանդէ:

Զիւնը մարդ չէ, բայց մարդը ի՞նչ է:

Մեր բանաստեղծը վերի չորս տողերուն վրայ կ'աւելցնէ չորս տող մը եւս:

Բայց ես գիտեմ. ով երէկ
շէն տուներ է աւերել.
Ինչքան գղջման խօսք ասի՝
մէկ է, խղճի խայթ չունի:

Այո՛, հարցը կը փոխուի երբ կը խօսինք մարդուն մասին: Զիւնը խղճի խայթ չունի երբ կ'աւերէ աղքատին տնակը, բայց ի՞նչ պիտի ըսենք այն մարդուն, որ նմանապէս խղճի խայթ պիտի չունենայ երբ պիտի

աւերէ մէկու մը երջանկութեան տանիքը: Մենք ալ բանաստեղծին նման պիտի ըսենք որ տեսած ենք այդպիսի մարդիկ: Այդ մարդիկը շէն տուններ աւերած են, ասոր կամ անոր իրաւունքները յափշտակած են, սէրերու ու բարեկամութիւններու դաւաճանած են, բայց խղճի խայթ չեն ունեցած բնաւ, իրենց ըրած չարագործութեան նկատմամբ անտարբեր մնացած են այնպէս ինչպէս բնութեան օրէնքով անտարբեր պիտի մնային ձիւնը, երկինքը, ծովը, հողը, աստղերը, ծառերը...:

Ո՛վ գիտէ ամէն ինչ որքան տարբեր կ'ըլլար եթէ հրաչքով մը տիեզերքը այնպէս ստեղծուած ըլլար, որ կարենար լսել իր սեփական ձայնը...:

ՎԵՐՉՆԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՄԵՐԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Չարերու եւ բարիներու յաւիտենական պայքարին մասին է խօսքը: Ո՛չ թէ միայն չարերու ու բարիներու, այլ նաեւ դրական կամ ժխտական ամէն ինչի միջեւ: Պայքար լոյսին ու խաւարին միջեւ, պայքար օգտակարին ու վնասակարին միջեւ, պայքար բարեկամութեան ու թշնամութեան միջեւ, պայքար զգայնութեան եւ անզգամութեան միջեւ: Ինչ որ կ'ուզէք երեւակայեցէք: Վերջին հաշուով ո՞ր մէկը պիտի յաղթանակէ այս երկուքէն: Դրականը, թէ ժխտականը: Աշխարհի բոլոր բարեացակամ մարդիկը կը հաւատան որ վերջնական յաղթանակը բարիինն է, բարեկամութեանն է, լոյսինն է: Դրականին: Որքան ալ գիտնանք թէ բարեացակամ այս մարդոց մարգարէութիւնը միշտ չէ որ կ'իրականանայ, թէ յաճախ վերջին հաշուով չարն ու անզգամն է որ կը յաղթանակէ այս աշխարհին մէջ,

հարց չէ, բոլորս ալ կը հաւատանք բարիին վերջնական
յաղթանակին .. եթէ անշուշտ մենք ալ մաս կը կազ-
մենք բարիներու խմբաւորումին:

Բայց Պարոյր Սեւակ, որ մէկ կողմէ կը դատապարտէ
այն վատահամբաւ ու անխիղճ գործիչները, որոնք կը
թունաւորեն մարդոց կեանքը, մէկ կողմէ ալ հիանալի
իրատեսութեամբ մը կը գրէ որ անոնք ալ իրենց
կեանքին մէջ մէկ անգամ գոնէ յաղթելու իրաւունք
ունին: Չէ՞ որ վերջնական յաղթանակը դարձեալ մերը
պիտի ըլլայ: Եւ փառք կուտայ որ գոյութիւն ունին
այդ չար ուժերը եւ մենք պէտք է շնորհակալ ըլլանք
որ անոնք գոյութիւն ունին: «Ի՞նչ ապաքինում, թէ
չի եղել ցաւ»: Ի՞նչ ապաքինում կրնաք ունենալ, եթէ
ցաւը գոյութիւն չէ ունեցած, կ'ըսէ բանաստեղծը:

Բարեկամ մը ունէի որ բնաւ թշնամի չունէր: Թշնամի
չունէր ո՛չ թէ անոր համար որ անսահմանօրէն բարի
ու այլասէր մարդ մըն էր: Ո՛չ, սովորական հայրենակից
մըն էր՝ ոչ շատ փայլուն յատկութիւններով: Բայց
մարդը այնքան հաճոյասէր ու ծառայասէր էր բոլորին
նկատմամբ, որ կ'անդրադառնայի թէ բնաւ թշնամի
չունէր: Օր մըն ալ մտածեցի որ այս մարդը չէր կրնար
գիտնալ բարեկամին արժէքը, որովհետեւ բնաւ թշնամի
չունէր:

Ականջ տանք Սեւակին.

Ախր ամէն մէկն ունի իրաւունք
գոնէ մի անգամ իր կեանքում յաղթելու .
հերթը մրանցն է - թող յաղթեն այսօր
Բայց չէ՞ որ վաղը դու ես յաղթելու .

Եւ այս տողերէն վերջ բանաստեղծը կուտայ քանի
մը տողեր, որոնք պէտք է քանդակուին մեր միտքերուն
մէջ.

Եւ միշդ եմ, միշդ եմ բռնորմ աշխարհում...
Քսոււմ, տխմարը, խեղճը, սրիկամ:
Կեանքում ամէ՛ն մարդ
Կեանքում ամէն ինչ
ունի իրաւում
արդարացնելու իր գոյութիւնը:
Եւ ո՞րտեղից բերք՝
եթէ պարարտամիւթ չպիտի լինի:
Ի՛նչ ապաքինում,
թէ չի եղել ցաւ,
թէ ախտ չի եղել:
Եւ ի՛նչ վերածնունդ,
եթէ չի եղել մահացու դադար:
Երջանկութիւնն էլ չէ՞ որ հենց այն է,
որ չկար երէկ եւ այսօր հասաւ...

Նոր բան չէ որ կ'ըսէ Սեւակ այս տողերով: Բռնորս
ալ գիտենք, կամ բռնորս ալ երբեմն պէտք է յիշենք,
որ ամէն ինչի արժէքը կը գնահատուի միայն ու միայն
հակառակին գոյութեամբը: Բարին ի՞նչ արժէք
կ'ունենար եթէ աշխարհի վրայ չըլլար չարը: Երջան-
կութիւնը ի՞նչ արժէք կը ներկայացնէր, կամ որքան
երջանկութիւն կը նկատուէր, եթէ աշխարհի վրայ
չըլլար դժբախտութիւնը: Յիշենք վերի հիանալի վեր-
ջին երկու տողերը: «Երջանկութիւնն ալ ճիշդ այն
մէկն է որ երէկ չկար եւ այսօր եկաւ յանկարծ»: Ես
ի՞նչպէս մորթիս վրայ պիտի զգայի երջանկութեան
անհուն բարիքը, եթէ ծնած օրէս ի վեր միշտ ու
անդադար երջանիկ եղած էի:

Եկէք միանանք Պարոյր Սեւակին ու նայինք աշխարհի
բռնոր ժխտական ուժերուն ու ժխտական մարդոց
աչքերուն մէջ եւ ըսենք.

Դո՛ւք: Դուք քսոււներ, տխմարներ, խեղճեր, սրիկա-

ներ, դուք՝ անխիղճներ ու ապիկարներ, ստախօսներ ու զրպարտիչներ, ապերախտներ ու ուրացողներ, դուք՝ բարի մարդոց արգանդէն ծնունդ առած ճիւղներ ու վրիպածներ, դուք ալ ճիշդ էք: Դուք ալ իրաւունք ունիք ձեր գոյութիւնը արդարացնելու: Որովհետեւ ձեր գոյութեան շնորհիւ է որ մենք պիտի ճանչնանք աշխարհի բոլոր լաւ բաները եւ ձեր գոյութեան շնորհիւ է որ մենք պիտի գիտնանք մեր ունեցած երջանկութիւններուն արժէքը: Ծնորհակալ ենք որ գոյութիւն ունիք:

Բայց մի՛ յոխորտաք:

Վերջնական յաղթանակը մե՛րը պիտի ըլլայ:

Դուք ստեղծուած էք որպէսզի մե՛նք յաղթանակենք:

ԱՇԽԱՐՀԻ ՇԱԼԱԿԸ

Մեր բոլորին արդէն շատ ծանօթ ճշմարտութեան մը մասին կը խօսի բանաստեղծ Սեւակ, երբ աշխարհի մարդիկը երկու տեսակի կը բաժնէ: Առաջին տեսակը այն մարդն է որ աշխարհի բեռ դարձած է, աշխարհի շալակին վրայ ելած է: Երկրորդ տեսակն ալ այն մարդն է որ աշխարհը իր կունակին, իր շալակին առած է ու կը տանի անոր ամբողջ ծանրութիւնը.

Մարդ կայ՝ ելել է շալակն աշխարհի,
մարդ կայ՝ աշխարհն է շալակած տանում:

Տողերու վրայէն ցատկելով պիտի տեսնենք թէ Սեւակ ինչպէս իր սիրտը կը բանայ երկրորդ տեսակէ մարդուն, ան որ աշխարհը կը տանի իր շալակին վրայ.

Դու, որ սխալուել, սակայն չես ստել,
կորցրել ես յամախ, բայց նորից գտել,
դու, որ սայթափել ու վայր ես ընկել,
ընկել ես, սակայն երբեք չես ծնկել,
այլ մագլցել ես կատարից կատար,
ելել ես անվերջ, բարձրացել ես վեր՝
քո ահեղ դարից առնելով թեւեր...:
Նլել ես որ ողջ աշխարհը տեսնես,
բոլոր կերպերով դու նրան զգաս,
շահածով խնդաս, կորուստը սգաս:
Նլեր ես իբրեւ նրա մուննետիկ,
որ նրա հեռուն զգաս ինչ մօտիկ,
որ նշարտութեան ասիերը տեսնես,
ծպտուած ստի խարելը տեսնես:
Ահա թէ ինչու դու այսօր տարի
ժայլում ես անդուլ, առաջ ընթանում,
ժայլում ես այնպէս ծանր ու վիթխարի,
ասես աշխարհն ես շալակած տանում...:

*Բանաստեղծը տակաւին շատ բան ունի ըսելիք այն
ազնիւ մարդուն, որ այսպէս, շալկած աշխարհի բոլոր
բարի յատկութիւնները, շալկած է նաեւ ամբողջ
աշխարհը, ամբողջ մարդկութիւնը եւ զայն կը տանի
իր ուսերուն վրայ:*

*Բայց կայ նաեւ երկրորդը, այն միւս մարդը, կամ
խրտուելիակ մարդը, որ ի՛նք է բեռ դարձած աշխարհի
շալակին, ի՛նք է որ կը կեղեքէ ամբողջ աշխարհը:*

Նա որ ելել է շալակն աշխարհի,
աշխարհում երբեք թաց տեղ չի բնում,
գիտի, թէ ում հետ եւ ուր է գնում,
ու՛մ մեռելին անարցունք է լալիս,
ու՛մ խօսքի վրայ ստից ծիծաղում,

վերից է մայում ցածրում կանգնածին,
չի մայում երբեք մերժել ընկածին:
Ամէն ինչից շատ, ամէն ինչից վեր,
հարագատ մօրից ու որդուց աւել,
աշխարհում, մա իր աշխարհն է սիրում,
սուտ է: Նա այնտեղ իր շահն է սիրում:
Ամէն ինչից շատ, ամէն ինչից վեր
սիրում է կեանքում մա իր աթոռը:
Աթոռն է սիրում,
ու մրան տիրում
ամվերջ սողալով առաջ է գնում,
գնում է այսպէս եւ տարէց տարի
ելնում է այսպէս շալակն աշխարհի:

Բանաստեղծը այս երկրորդ տեսակէ մարդուն ալ շատ բան ունի ըսելիք, բայց կը ցատկենք այդ տողերուն վրայէն եւ կը գոհանանք այսքանով, քաջ արդէն գիտնալով թէ մեր կեանքի ամենօրեայ երթեւեկին մէջ, մեր կեանքի ամենօրեայ հանդիպումներուն մէջ արդէն մեր մէկ կողմն ունինք աշխարհը իր շալակին վրայ վերցուցած մաքուր մարդը եւ մեր միւս կողմը ունինք աշխարհի շալակին ելած մակաբոյծ մարդը, այն տգրուկը որ աշխարհի արիւնը կը քամէ: Մենք լաւ կը ճանչնանք երկուքն ալ եւ երբեմն երկուքին ալ ուղղակի կը նայինք աչքերուն մէջ: Առաջինը, աշխարհը իր շալակին առած մարդը, յաճախ համեստ ու ամօթխած է, մինչեւ իսկ կը խպնի մեր նայուածքէն եւ իր աչքերը կը խոնարհեցնէ: Իսկ երկրորդը երբեք իր աչքերը չի փախցներ մեր աչքերէն, ան մերինէն ալ աւելի հատու, աւելի ծակող նայուածքով կը նայի մեր աչքերուն մէջ, որպէսզի մեզի ասպարէզ կարգայ կամ պարզապէս մեզ վախցնէ: Ճիշդ է, վերջին հաշուով կրնանք վախնալ անկէ, որովհետեւ.

հեշտ զրպարտում է՝ երբ տեղն է գալիս,
Առյժ հեշտութեամբ էլ իր մեղքն է լալիս...

Երկու պարագային ալ՝ վտանգաւոր: Երբ կը զրպարտէ,
արդէն քու մուխդ կը մարէ: Իսկ երբ իր մեղքը կուլայ,
ա՛լ աւելի վտանգաւոր կը դառնայ, որովհետեւ կը
հաւատաս իրեն, կը խղճահարիս, իր կեղծ ապաշխա-
րումին մէջ զղջում, նոյնիսկ մեծութիւն կը տեսնես:
Մինչդեռ ամէն ինչ կեղծիք է եւ այդ կեղծիքը այն
աթոռն է որուն վրայ կոխելով կ'ելլէ քու ալ շալակիդ
վրայ:

Աշխարհը արդէն շատ ծանր է բոլոր այն բարի ու
նուիրեալ մարդոց համար, որոնք զայն կը կրեն իրենց
ուսերուն վրայ: Բայց աշխարհի շալակին ելած անպէտ
մարդիկը անպէտ ծանրութիւն մըն ալ կ'աւելցնեն ատոր
վրայ:

Եւ մեր սիրելի աշխարհը այսպէս կը բաժնուի այս
երկու տեսակ մարդոց միջեւ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Պարոյր Սեւակի բանաստեղծութիւններուն մէջ յա-
ճախ չէ որ կը հանդիպինք քնարաշունչ կամ երաժշտա-
հունչ նախադասութիւններու, նմանաձայն բառերով
հիւսուած տողերու, վերջապէս հոսուն ու հաճելի քնա-
րերգութեան մը, այնպէս ինչպէս յաճախ կը հանդի-
պինք Համօ Սահեանի, Յովհաննէս Շիրազի, Մարօ Մար-
գարեանի նման բանաստեղծներու մօտ: Սեւակ կը
նախընտրէ ձայն տալ խորունկ մտածումին ու բարդ
նախադասութիւններով կազմուած խորհրդածութիւն-
ներու:

Բայց 1956-ին իրերայաջորդ կերպով գրեր է իւրա-

քանչիւրը ութ տողերէ բաղկացեալ փոքրիկ «ութ-
նեակ»ներ, որոնք Շիրազին «Քառեակ»ները կը յիշեց-
նեն: Սեւակ ասոնց մէջ ալ չէ դադրած բարդ մտա-
ծումներու բանաստեղծը ըլլալէ, բայց այս անգամ
զիջանած է իր բանաստեղծութիւնները թեթեւցնելու՝
քնարաչունչ բառախաղերով ու նմանաձայն բառերով:

Ի՞նչ անեմք,
թէ առում քարակել է,
բայց չէ՞ որ
նա մի օր ռոռգել է,
բայց չէ՞ որ
աւերուած այս դաշտերը
նա մի օր
մեռնելով նորոգել է:

Այս «ութնեակ»ին մէջ Սեւակ, թէեւ հաճելի երաժըշ-
տականութիւն մը ստեղծած է գործածելով «բարակել»,
«ռոռգել» եւ «նորոգել» բառերը, բայց այդ հաճելի
մէկտեղումին մէջ դրած է ուժեղ մտածում մը, որ բուն
իսկ նպատակն է բանաստեղծութեան: Յիշեցումը սա
է. Մի՛ նայիք որ առուն այսօր ջուրերը կորսնցուցեր
է, բարակցեր է, ան ատենին առատօրէն ոռոգած էր
այս դաշտերը: Ան ինքզինք չորցնելով, ինքզինք սպա-
ռելով կեանք տուած էր շուրջբոլորի դաշտերուն:

Ուրիշ «ութնեակ» մը ահա:

Սարն ի՞նչ գիտէ
տուժն ինչ է:
Զշտապողը՝
ուշն ինչ է:
Թէ դատարկ է
անցեալդ,

Ի՞նչ իմանա
յուզն ինչ է:

Թերեւս քիչ մը բռնազբօսիկ թուի այստեղ «տուժ», «ուշ» եւ «յուշ» բառերու միասնութիւնը, որովհետեւ շատ ալ յստակ չէ թէ ի՞նչ կը նշանակէ «տուժ» բառը, թէ այդպիսի բառ մը կա՞յ մեր լեզուին մէջ, տուժել բային արմատն է: Բայց անտես առնենք այս հարցումը եւ կանգ առնենք վերջին չորս տողերուն վրայ, որոնց համար է որ գրուած է բանաստեղծութիւնը: Արդարեւ, եթէ կեանքդ անբովանդակ անցեր է, եթէ անցեալդ պարսպ է, ի՞նչ պիտի գիտնաս թէ ինչ կը նշանակէ յուշը, յիշատակը:

Նմանահնչիւն բառերու օգտագործումով ուրիշ ութնեակ մը ահաւասիկ, նոյն շարքէն.

Տաքն ի՞նչ իմանայ
թէ պաղը ի՞նչ է:
Վէրքը կ'իմանա՞յ
թէ աղը ինչ է:
Նա, ով շատերիմ
կսկիծ է տուել,
ի՞նչպէս իմանայ
թէ դաղը ի՞նչ է:

Այս բանաստեղծութեան մէջ ալ մեր բանաստեղծը գիմած է «պաղ», «աղ» եւ «դաղ» բառերուն: Հոս եւս քիչ մը բռնազբօսիկ միասնութիւն մը կայ այս երեք բառերուն միջեւ, որովհետեւ «դաղ» բառը, եթէ չենք սխալիր, շատ ալ գործածելի բառ չէ: Կը նշանակէ վիշտ, ցաւ: Բանաստեղծը իրաւունք ունի: Ան որ շատերուն կսկիծ ու տառապանք պատճառած է, չի գիտեր թէ ի՞նչ է ցաւը: Եթէ գիտնար, պիտի դադրէ՞ր


ուրիշին կսկիծ պատճառելէ: Չենք գիտեր: Կամ եթէ ուրիշ մէկն ալ իրեն կսկիծ պատճառելու շարժում մը ընէր, պիտի հասկնա՞ր թէ ինչ է ցաւը: Այդ ալ չենք գիտեր: Ամէն ինչ մարդուն խառնուածքէն կախեալ է: Բայց Տէրը մեզ հեռու պահէ՝ այն անզգամներէն, այն անխիղճներէն, որոնք գիտակցաբար կը տառապեցնեն մեզ առանց մտածելու թէ այդ տառապանքը որքան ծանր է մեզի համար: Բայց նաեւ հարց տանք Տիրոջ, թէ ինչո՞ւ երբեմն աշխարհ կը դրկէ այդքան անխիղճ ու անզգամ մարդիկ, որոնք պիտի թունաւորեն զգայուն ու խղճամիտ մարդոց կեանքը:

Վերջին ութնեակ» մը, ուր բառերը կարծես նստած են ճիշդ իրենց տեղերը.

Հեշտ քան չէ, ջանս, ցիշդ ժամանակին
գարկել տագնապի սուր ահագանգը:
Զէ՞ որ երբ չկայ դեռ ժողովածուն,
չես կարող կազմել դու մրա ցանկը:
Թանկարժակի է պայթում վտանգը,
բայց մա ուռչում է դանդաղ, աննկատ,
դանդաղ, աննկատ՝ մետաղից ծնւում
ու մոյմ մետաղն է կրծոտում ժանգը:

«Ահագանգ», «ցանկ», վտանգ» եւ «ժանգ»: Առարկութիւն չունինք: Եւ լաւ կը հասկնանք բանաստեղծը: Նոյն մետաղէն է որ ծագի այն ժանգը որ ի վերջոյ պիտի կրծէ այդ մետաղը: Բայց կրնա՞ս տեսնել այն երկվայրկեանը ուր ժանգը ծագիլ կը սկսի: Եւ արդէն շատ ուշ չէ՞, երբ ի վերջոյ կը նշմարես այդ ժանգը:

**ԿԱՐԴԱԼՈՎ
ՍԻԱՄԱՆԹՕՆ**



ԴՈՒՌ ՄԸ ԲԱՆԱՆՔ ՍԻԱՍԱՆԹՈՅԻ ԷՁԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Այլեւս բոլորովին մոռցուած բանաստեղծ մըն է արդեօք Սիամանթօն, Ատոմ Եարճանեանը, ան որ գրեց «Դիւցազնօրէն»ը, «Հայորդիներ»ը, «Հոգեվարքի եւ յոյսի ջահեր»ը, «Կարմիր լուրեր բարեկամէս»ը, «Սուրբ Մեսրոպ»ը: Այսօր շրթներու վրայ յաճախակի կերպով չի հնչեր Սիամանթոյի անունը, հակառակ որ անոր անունը միշտ կը յիշուէր Դանիէլ Վարուժանի ու շրջանի ամէնէն տաղանդաւոր քանի մը գրողներուն ու բանաստեղծներուն կարգին: Սիամանթօն նոյնքան տաղանդաւոր բանաստեղծ էր, մէկը՝ որ մարտաշունչ բանաստեղծութիւններով ալեկոծեց իր շրջանի ընթերցողներուն սիրտը, փոթորկեց անոնց հոգին, խանդավառեց, հրդեհեց, պոռթկացուց: Իր բանաստեղծութիւնները այդ շրջանին թերեւս ձեռքէ ձեռք կը խլուէին: Բայց այսօր Սիամանթօն բացակայ է արտասանութիւններու մեր բեմերէն: Թերեւս միայն «Սուրբ Մեսրոպ»ն է որ երբեմն կը բարձրանայ բեմ ու ձայն կը գտնէ ասմունքողի մը շրթներուն վրայ:

Սիամանթոյի բանաստեղծական արուեստը տարբեր ճակատագիր մը կ'ունենա՞ր արդեօք եթէ ան իր տաղանդը գործածէր քնարերգական ու սիրերգական բանաստեղծութիւններ գրելու համար, փոխանակ այդ տաղանդը պոռթկացնելու յեղափոխական կրակոտ բանաստեղծութիւններով, որոնք հիմնական միջնորդը կը կազմեն Սիամանթոյի գրականութեան: Սիամանթոյի ամբողջ գրականութիւնը, տարբեր թէմաներու ցանցառ փայլատակումներով, հիմնուած է յեղափոխական գրականութեան մը վրայ եւ կազմուած է 19րդ դարու վերջին տարիներու քաղաքական ահաւոր պատա-

հարներու ազդեցութեան տակ զրի առնուած կրակոտ ու մարտունակ տողերով, որոնք շարունակ կը խօսին արեան ու կռիւի մասին: Այսպիսի բանաստեղծութիւն մը կը պարտէր հեռու մնալ քնարերգական գեղումներէ, գեղեցիկ խօսքի որսորդութենէ, զրական գիւտերու հետապնդումէ, ատոր փոխարէն հաւատարիմ մնալ արձակունակ բանաստեղծութեան մը, որուն նպատակը չէր բանաստեղծական յուզումներ զարգացնել ընթերցողին մօտ: Եթէ այդպէս չընէր, եթէ Սիամանթօն ալ հետեւէր շրջանի բանաստեղծական դպրոցին, եւ ազգային գաղափարախօսութիւնը թաքցնէր զրական ու ստեղծագործական նուրբ ոճի մը մէջ, թերեւս այսօր կ'ունենայինք տարբեր Սիամանթօ մը, որուն բանաստեղծութիւններէն ոմանք կրնային մրցիլ Դանիէլ Վարուժանով ստեղծուած դպրոցի ամենագեղեցիկ արտադրութիւններուն հետ: Սիամանթօ ունէ՞ր այդ խմորը: Պիտի կարենա՞ր աւելի քան 500 էջերէ բաղկացեալ ամբողջական գործ մը լեցնել գեղահիւս ծաղիկներով, երազներով, լոյսով ու ստուերով, սիրոյ տառապանքներով ու երջանկութիւններով, ազգային գրականութեան աւելի նուրբ, խորհրդապաշտ ու ոճապաշտ խոյանքներով, այս բոլորը թրծուած ստեղծագործական գրականութեան շնորհով: Չենք գիտեր: Այս հարցումին պատասխանը պիտի չկարենանք ունենալ: Թերեւս պիտի մտածենք որ Սիամանթօն չէր կրնար տարբեր կերպ գրել, չէր կրնար ընտիր գրականութիւն մը ստեղծել տարբեր թէմաներու վրայ: Թերեւս ալ պիտի մտածենք, որ, ընդհակառակը, Սիամանթօ կրնար մագլցիլ բանաստեղծական ստեղծագործութեան մինչեւ ամենաբարձր կատարները: Արդէն ունի քանի մը բանաստեղծութիւններ, որոնք բացառաբար յուզիչ են եւ նոյնքան եւս գեղարուեստական: Մենք կարգաւ կանգ պիտի առնենք այդ մէկ քանի բանաստեղծութիւն-

ներուն վրայ: Բայց անկէ առաջ պիտի ափսոսանք այն ճակատագրին համար, որ եղաւ Սիամանթօ բանաստեղծին ճակատագիրը եւ որու հետեւանքով անոր գրականութիւնը դատապարտուեցաւ մնալու որպէս որոշ շրջանի մը համար ստեղծուած գրականութիւն: Այդ գրականութիւնը իր ուժականութիւնը պիտի կորսնցնէր անցնող ժամանակներու ու պատահած աննախատեսելի վերիվայրումներու ընդմէջէն եւ պիտի չկարենար դասուիլ հայ գրականութեան մնայուն գանձարանին ամէնէն ընտիր էջերուն կարգին: Սիամանթօ ինք ալ հաւանաբար կը զգար թէ ընտրած էր անսովոր ուղի մը: Անոր հոգին ալ անպայման երբեմն կը ցանկար թուիչք առնել դէպի այն զգայնութիւններն ու յուզումները, որոնք ընդհանրապէս կը լեցնեն բանաստեղծական ապրումներու երկնակամարը: Բայց չէր հաշտուեր այդ երկնակամարին յանձնուելու եւ քնարաշունչ բանաստեղծութիւններ գրող բանաստեղծ մը դառնալու գաղափարին հետ: Անոր հոգին ալ թերեւս կը պատռուէր մէկուն եւ միւսին միջեւ, բայց, ինչպէս պիտի խոստովանէր իր մէկ բանաստեղծութեան վերջին տողին մէջ, «իւր աչքերը միայն արիւն, արիւն, արիւն կը տեսնէին»: Ինչպէս պիտի ըսէր նոյն բանաստեղծութեան մէջ, ան մոռացումներու մոխիրին մէջ պատանքած էր Սէր կոչուածը, Սէր կոչուած այդ «երկբայելի, եսանուէր ու սնոտի» զգացումը:

Եկէք պահ մը դանդաղինք այս եզակի բանաստեղծութեան վրայ, որ բանալի մըն է Սիամանթոյի բանաստեղծութեան դուռը բանալու համար: Պահ մը դանդաղինք այդ բանաստեղծութեան վրայ, որպէսզի աւելի վերջ դուռը բանանք ու հոնկէ դուրս բերենք քանի մը շատ յուզիչ բանաստեղծութիւններ, որոնք մեզի պիտի յիշեցնեն մարդկային ու ընտանեկան ողբերգութիւններու Վարուժանեան ցնցող մթնոլորտը:

Թերեւս նոյնիսկ չէ տեսած իր միւս որդին որ իր քով
կանգնած է որպէս պահապան հրեշտակ, որովհետեւ
իր սիրտը կ'այրի իր պանդուխտ ու բացակայ որդւոյն
կարօտով: Եւ հիմա իր քով մնացած որդին է որ կը
ստիպուի փակել անոր աչքերը դէպի մահ...:

Իր աչքերը մայրամուտին լոյսերովը թաթաւուն,
Քեզ տեսնելով, քեզ յուսալով, քեզ օրհնելով
Խաւարեցան ...

Եւ ես թշուառս՝ ես եղբայրդ՝ իբր գաւակ,
Ես ինչ տեղդ, խելահորոյս, այդ աչքերն փակեցի...
Եւ սնարին վրայ դրի
Գառնուկներուս ներմակ նարպէն
Իր ձեռքերովն անցեալ տարի պատրաստուած
Երկու մոմեր, ե՛ւ դաւաճան, ե՛ւ դողահար,
Եւ խնկամանը որով Ծնունդը կը տօնէինք,
Իր արծաթէ մագերուն դէմ, գլխուն վրայ,
Ահաւասիկ որ կը ծխայ...

Երկու մոմեր, եւ խնկաման: Յստակ կերպով կը
տեսնենք գաւառաչունչ պատկերը, սուգով ու խունկով
օծուն: Մահացած մօր սնարին վրայ կը պլպլան տան
գառնուկներու ճարպէն իր իսկ ձեռքով շինուած երկու
մոմերը: Եւ անոր որդին ինքզինք կը զգայ թշուառ
ու անօգնական, որովհետեւ իր քով չէ իր միւս եղբայրը:

Ա՛հ, կը խեղդուի՛մ, կը խեղդուի՛մ,
Տունն ամբողջ մահուան տիեզերք մ'է մեռելական
Ուր միմիայն իմ հոգիս կայ կենդանի,
Որ դիակի մը վրայ ինկած,
Բարձունքներու մրրկին պէս կը հեծեծէ...:
Միմակ եմ ես .. տունն ամբողջ ամպոտած է
մահուան բոյրովն գարեուրելի...

Շարունակենք կարգալ.

Կէս գիշեր է եւ սոսկումիս մէջ կը գրեմ,
Երբ դրացի, սեւ լաչակով սգաւոր,
Քանի մը կիմ լացի եկան...
Անոնցմէ միմ, այրի կիմ մը դառնադէմ,
Մեր մեռեալ մօրն անշունչ մարմնոյն վրայ ինկած՝
Կտաւի մը կտորէն, լոյսովն երկու մոմերուն,
Անոր պատանքը կը չափէ...
Եւ ժրաջան երկու հարսներ տրտմօրէն,
Մեր մօրկանը վերջիմ լոգանքը տալու համար,
Շտապելով՝ մեր աղբիւրէն ջուր կը կրեն...

Կրնանք հարց տալ թէ քանի քանի մայրեր ապրեցան
այս ճակատագիրը, իրենց աչքերը փակելով պանդուխտ
որդիէն հեռու, կամ կռուի մեկնած իրենց որդիէն հեռու:
Լաչակաւոր կիները լացի եկած են, եւ մենք կը
հետեւինք շարժանկարի մը զոր տեսած ենք ո՛վ գիտէ
քանի անգամ:

Շարժանկարը պիտի վերջանայ սա սեւ տողերով.

Վաղն առաւօտ ուռնեմիէն որ ին անոքէն է քուսեր,
Երկու միւղեր պիտի կտրեմ...
Արտասուքիդ իբր յիշատակ՝ հողակոյտիմ տանելու:
Եւ ես թշուառս՝ գերեզմանոցէն վաղն առաւօտ
պիտի դառնամ
Հիմ օրերու մեր այս թափուր տնակիմ:
Երկու դռներն իբր դագաղ,
Ես իմ վրա՛ս, ես իմ վրա՛ս խենդի մը պէս
փակելու...

Սիամանթոյի այս բանաստեղծութիւնը, որ իբր
բառամթերք ու կարօտի զգացում որոշապէս կը յիշեցնէ

վարուժանեան մ'թնտլորտ մը, մեզ կը յուզէ, մեր սիրտը կ'ուռեցնէ տառապանքով մը որ եղաւ անցեալ դարասկիզբի բազմաթիւ հայ մայրերու ճակատագիրը: Քիչ մը զգացական չափազանցութիւն կա՞յ վերջին երկու տողերուն մէջ: Թերեւս կայ: Բայց պէտք է մտածենք թէ սգաւոր թշուառ որդին միայն իր մայրը կորսնցուցած ըլլալու տառապանքով չէ որ իր տան երկու դռները իր վրայ կ'ուզէ գոցել որպէս դագաղ: Ան այդ դռներուն ետին ինքզինք պիտի թաղէ իրենց զաւակներուն կարօտով մահացած հարիւրաւոր, հազարաւոր մայրերու տառապանքին ի յարգանս: Եւ մենք ալ այդ յարգանքով է որ կը կարդանք այս բացառիկ բանաստեղծութիւնը, որ կը զատուի բանաստեղծին միւս գործերէն:

ՄԵՌԵԼՈՅԻ ԵՐԱԶ

Սիամանթոյի գրականութեան մէջէն պիտի ընտրենք ուրիշ եզակի ու յուզիչ էջ մը, որ դարձեալ իր ներշնչումը կ'առնէ ընտանեկան ողբերգութենէ մը: Մեր ընտրած նախորդ բանաստեղծութեան մէջ եղբայր մըն էր որ իր պանդուխտ կամ կռուի մեկնած եղբոր կը գուժէր իրենց մօր մահը: Իսկ այս բանաստեղծութեան մէջ ունինք մայր մը, որ կը պատմէ մեւեղոցի կէս գիշերին իր տեսած երազը: Իր այս երազին մէջ ան լսած է պանդխտութեան կամ կռուի ընթացքին մահացած իր չորս զաւակներուն ձայնը, որոնք իրենց գերեզմաններուն խորերէն եկած են ու խօսք կ'ուղղեն իրենց մօրը: Չորսն ալ հրաշալի որակումներ ունին իրենց մօրը մասին եւ կ'ուզեն բաժնել այն տխուր կեանքը զոր իրենց մայրը տակաւին կը շարունակէ ապրիլ:

քաղցրութի՛ւն, հին օրերու հերոսական արիութի՛ւն,
հին օրերու դու աննման գեղեցկութի՛ւն, եւ տակաւին
յաջորդ տողերուն մէջ՝ հին օրերու առատութի՛ւն, հին
օրերու գուրգուրանք:

Եօթը տարի, եօթն անգամ տանդ դռնակը ծեծեցինք,
Բայց այս գիշեր միայն քաց էր .. Ո՞ր մամբռողին
կը սպասես...:
Տե՛ս, հիւղակդ դագաղներու կոյտի մը պէս
կը շարժի,
Տերեւները, տե՛ս, կը թափին ծառերն ի վար
մրրկէն,
Առուակին մէջ աղաւնիներն անմեղուքեամբ
կը մեռնին,
Պարտէզիդ մէջ ո՛չ կանաչ կայ, ո՛չ պտուղ կայ,
ո՛չ տատակ,
Զորսերնիս մէկ ամբողջ տնակը ժուռ եկանք,
Մտանն արդէն դատարկ էր .. եւ գոմին մէջ
Ճերմակ գառնուկ մը մայելով իր կնիակները
կը կրծէր...
Մայրիկ, մայրիկ .. հին օրերու առատութի՛ւն,
Ի՞նչպէս կ'ապրիս տնակիդ մէջը թափուր

Այն ատեն է որ մայրը կը խօսի իր չորս գաւակներուն
եւ կը պատասխանէ.

Բայց ձեր եղբայրը դեռ ողջ է .. ան որ
ձեր փոքր եղբայրը դեռ ողջ է, անոր համար
միայն կ'ապրիմ:

Ա՛խ, հիմա անոնք ուրեմն հինգերորդ եղբայր մը
ունէին եւ չէին գիտեր: Այս խօսքերը երբ կը լսեն,

չորս եղբայրները մեռելներու իրենց սեւ արցունքը
իրենց մօրը աչքերուն մէջ հոսեցնելով կը գոչեն.

- Եղբա՛յր մ'ունիմք, եղբա՛յր մ'ունիմք,
մեմք կեամքիմ մէջ եղբայր մ'ունիմք.
Մայրիկ, մայրիկ.. Ընդ օրերու, Ընդ յոյսերու
թշուառութի՛ւն,
Ինչպէ՛ս այլեւս մեմք մեր հողիմ վերադառնամք,
ինչպէ՛ս դառնամք..:

Բանաստեղծութիւնը, որ կը վերջանայ այս տողերով,
պատգամներ ունի անշուշտ եւ կ'արժէր որ երկար
խորհրդածէինք այդ պատգամներուն վրայ: Բայց այդ
գործը թողունք ընթերցողներուն եւ գոհանանք
մատնանշելով այն առաջին պատգամը, որ կուգայ չորս
մահացած եղբայրներէն. հիմա, որ անոնք լսած են
թէ փոքրիկ եղբայր մըն ալ ունին, ունին նաեւ նոր
պատճառ մը ապրելու: Ի՞նչպէս վերադառնալ գերեզ-
ման: Անոնք որքա՛ն պիտի ուզէին ապրիլ իրենց մօր
եւ իրենց փոքրիկ եղբօր հետ, վայելելու համար այդ
երկուքին միասնութիւնը եւ զանոնք պաշտպանելու
համար նոր օրերու ու յոյսերու թշուառութիւններուն
դիմաց: Եւ այդ չորս եղբայրները, վերածնունդի մը
պատկերն ալ չե՞ն տեսներ արդէն իրենց հինգերորդ
փոքրիկ եղբօր վտիտ մարմնին մէջ:

ՄԻՆՉԵՒ ՈՐ ՆԵՐՍ ՉՍՏՆԵՍ ԱՅՍ ՍԵՄԷՆ

Հիմա Սիամանթոյի գրականութենէն պիտի քաղենք դարձեալ ընտանեկան ողբերգութիւն ցոլացնող էջ մը: Բանաստեղծը այս քերթուածն ալ գրած է իր ժողովուրդին անհուն ցաւերուն դիմաց իր զգացած վիշտին ու բողոքին լոյսին տակ եւ ատով թուղթին յանձնած է տառապանքը այն մայրերուն, որոնք իրենց տարագիր զաւկին կարօտով ապրեցան ու կենդանի մնացին միայն իրենց զաւակներուն վերադարձը տեսնելու յոյսով:

Այս մէկն ալ նամակ մըն է, այս անգամ գրուած մօր մը կողմէ՝ իր որդւոյն: Գրուած մօր մը կողմէ, որ կը յիշէ թէ ինչպիսի զոհողութիւններով ու խանդաղատանքով է որ ան մեծցուցած է իր զաւակը.

Մաճուր սիրոյս եւ մարմնիս դո՛ւն պտուղը
անդրանիկ,
Ե՛ս էի որ կողերուս մէջ սրբութեամ պէս
Քեզ կրեցի,
Էութեմէս թայլ առաւ ինչ գոյութիւնդ տարագիր,
Եւ ստիճմներս՝ երկու գարուն իրենց կաթովը
մարգարտէ
Երիտասարդ այդ հասակիդ կտրիճ տեսիլք տուիճ:
Ես էի որ իմ կեանքս բերրի պարտէզ մը ըրի
Ուր ինչ կեանքդ ամենդօրէն անցաւ...:
Իմ արցունքս Քեզ ռոճեց, ժպիտներս
իբրեւ արեւ,
Իմ համբոյրս իբր օծում, շրթումներս իբր շուշան,
Եւ օրօրներս՝ երգիս մէջէն իբր զեփիւռ...:
Այս բոլորն ես անխտիր եւ լիուլի Քե՛զ ջամբեցի:

Այս առաջին տողերուն մէջ արդէն կը զգանք տխրութիւնը մօր մը, որ կը յիշէ թէ ինչ արժած է իր զաւակը իրեն համար: Կը զգանք մօր մը յուսախաբութիւնը, որ առկայ է այդ տողերուն մէջ, ի տես այն դառն ճակատագրին որ իր զաւակը առած ու հեռու տարած է իրմէ: Մեր բանաստեղծը շատ դիպուկ պատկերներով պատրաստած է արդէն մթնոլորտը, ուր մայրը կը յիշեցնէ թէ իր ժպիտը արեւ դարձուց զաւակին համար, իր համբոյրը՝ օծում, իր շրթները շուշան, իր օրօրները՝ մէկմէկ զեփիւռ: Նստած անոր օրօրոցին դիմաց, արթուն, գորովագութ, ան հեռու վանեց զիշերներու չար ոգիները իր զաւակին վարդագոյն երազներուն մէջէն, իր միամիտ աղօթքներովը հալածեց այդ չար ոգիները եւ առաջին անգամ ըլլալով արեւին դէմ բացաւ անոր նայուածքը եւ այդ նայուածքին մէջ տեսաւ Աստուծոյ դրոշմը:

Ա՛հ, դեռ կը յիշեմ մեկնած օրուանդ այն աշունը
 անձրեւոտ,
 Երբ տերեւները ծառերէն, արցունքներուս հետ
 կ'իյնային:
 Եւ տարիները դեռ տարիներու ետեւէն դագաղներու
 պէս կ'անցնին:
 Բայց ո՛չ արցունքս դադրեցաւ, ոչ տերեւներն
 իրենց մահէն:
 Յիշատակէս ես կը սուկամ .. երբ դրանը
 կը մայիմ,
 Զորս սեւադէմ մեռելակիր մադ մը
 իրենց ուսերուն՝
 Հօրդ մարմինը միմչեւ այսօր դեռ կարծես
 Շտապաբալ իր տնակէն դուրս կը հանեն:
 Ու դուն այսպէս դեռ տարագիր,
 Այդ դռնակէն միմչեւ այսօր ներս չմտար:

Սիամանթոյի արձակունակ լեզուն, որ երբեմն կը դաւէ մեր այդ շրջանի Արեւմտահայերէնի կատարելութեան, այստեղ բնաւ դժուարութիւն չի կրեր ստեղծելու բանաստեղծական այն մթնոլորտը, որուն մէջ յստակ պատկերի կը վերածուի տառապակոծ մօր ապրած տրամերգութիւնը: Այդ խեղճ մայրը որքա՞ն երկար սպասած էր, որ օր մը կրկին բացուէր այն դուռը ուրկէ՞ դուրս հանած էին իր ամուսնին դազազը եւ հոնկէ ներս մտնէր հեռու մեկնած իր զաւակը: Դեռ չէ բացուած այդ դուռը, դեռ չէ վերադարձած սիրելի զաւակը: Բայց...

Կարգանք այս տխուր բանաստեղծութեան վերջին տողերը.

Բայց ես կամֆիս կրակներովը Աստծուս դէմ
պիտի կռուիմ..
Կեանքի՛ն փարած, յոյսիմ փարած, եւ արեւի՛ս
եւ արեւի՛դ,
Մահուանս դէմ, մօր մը ուժովը պիտի կռուիմ:
Ես կեանք կ'ուզեմ, զաւակս, ապրի՛լ կ'ուզեմ,
ապրիլ կ'ուզեմ ..
Իմ մարմինս այս տնակէն գերեզմանոց
պիտի չերթայ,
Միմչեւ որ դուռ առաւօտ մը մոյմ սեմերէն
մերս չմտնես:

Սիամանթոյի բանաստեղծութիւններէն շատեր այսօր իրենց բանաստեղծական արժէքն ու յուզականութիւնը կորսնցուցած են անտարակոյս, բայց մեզի կը մնան սա վերի տողերուն նմանները, որոնք երբեք պիտի չկորսնցնեն իրենց յուզականութիւնը, որոնք երբեք պիտի չդադրին քնարաչունչ արտայայտութեամբ վկայել այն տխուր շրջանին մասին, երբ տասնեակ հազա-

րաւոր մայրեր, առանձին, լքուած, արտասուլաթոր աչքերով իրենց աչքերը սեւեռուն պահեցին զրան սեմին կամ պարտէզի հորիզոնին վրայ, տեսնելու համար թէ ե՞րբ պիտի վերադառնային իրենց որդիները:

Մենք այսօր մեր գլուխը յարգանքով պիտի չհակէի՞նք անոնց այլեւս անցեալի մէջ մնացած այդ տառապանքին դիմաց:

ԴԵՌ ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ

Եւ հիմա Սիամանթոյէն պիտի կարդանք ուրիշ էջ մը, որ մեզի արձագանգներ պիտի բերէ Դանիէլ Վարուժանի քերթողութեան մթնոլորտէն: Ասիկա դարձեալ նամակ մըն է, որ գրուած է զաւկի մը կողմէ՝ իր հօրը:

Բայց եկէք նախ յիշենք Դանիէլ Վարուժանի նշանաւոր «Կարօտի նամակը»: Ահա առաջին չորս տողերը.

Կը գրէ մայրս.- «Ո՛վ իմ որդեակս պանդուխտ, Դեռ միմչեւ ե՞րբ պիտ' անծամօթ լուսնի տակ Օրենդ անցնին, դեռ միմչեւ ե՞րբ հէգ գլուխդ ես չսեղմեմ լանջքիս տակ:

Հիմա անցնինք Սիամանթոյին ու կարդանք «Որդին իր հօրը» խորագրեալ բանաստեղծութեան առաջին երկու տողերը.

Հայր իմ, դեռ միմչեւ ո՞ր արեգակ ես՝ ինչ որդիդ՝
Բեզ անծամօթ

Եւ դուն, իբրեւ օտարական պիտի ապրիմք.:

«Մինչեւ ե՞րբ»ը հաւասարապէս կիզիչ հարցում է երկու բանաստեղծութիւններուն մէջ ալ եւ մենք չենք

զարմանար այդ զուգահեռականութեան դիմաց: Տխուր
ժամանակաշրջանի մղձաւանջային հարցումն է այդ:
Եւ ահա Սիամանթօ կը խօսեցնէ զաւակ մը, որ չէ
տեսած իր պանդուխտ հօրը երեսը եւ որ հարց կուտայ
թէ տակաւին ո՞րքան ժամանակ ինք եւ իր հայրը հեռա-
ւոր հորիզոններու տակ պիտի ապրին որպէս օտարա-
կաններ:

Քու արիւնդ երակներուս մէջ թող եռայ,
Թող աչքերուս մէջ ես՝ միմչեւ այսօր ցոլացնեմ
Յիշատակն աչքերուդ,
Թող երազներս ղեզմով լեցուիմ,
Թող իմ միտքս իր թելերովն, վայրապար,
Թռիչք առնէ իր ստեղծիչը որոնելու...
(Բայց) Այս ամէնը ցմորքներ են ինծի համար
Միմչեւ որ էու շրթումքներդ հայրական՝
Զմօտեման, իրենց հուրովն, այս մակատս սպիտակ,
Զմօտեման այս մակատս երազիս մէջ համրուրելու:

Ողբը յուզիչ է, բայց տողերը, որոնք պիտի յաջորդեն,
ուսին կրկնապէս ցնցիչ ու յուզիչ գեղեցկութիւն թէ՛
զգացական, թէ՛ բանաստեղծական պատկերացումի
տեսակէտէ: Կարդանք թէ որդին ինչպէս ինքզինք կը
բնորոշէ իր հօրը նկատմամբ.

Հայր իմ, ես այն միւղն եմ գօրաւոր, դալարագեղ
այն ծառիմ,
Որ յոգնութեանդ օրերում՝ էու մեցուկդ
պիտի ըլլայ:
Ես այն ջուրն եմ, հպարտութեան ապառաժէն
դո՛ւրս ցայտող,
Որ ծարաւիդ ժամանակ՝
Բաժակներուդ աղամանդէն պիտի յորդի:

Ես փնթակիդ այն ժիրաժիր մեղում եմ
Որ դառնութեան օրերուդ՝
Պնակիդ մէջ՝ իր ոսկեղէն մեղրը պիտի հիւթէ:
Ես դալարիքդ եմ, ծաղկաստանդ եմ, բու

այգիդ եմ,

Ես այն վայրն եմ, ուր յոգնած հայր մը
պէտք է հանգչի:

Ես ռվասիսդ եմ, հովանիդ եմ արեւին տակ,
Ես արեգակդ եմ բու յոյզերու կամ մրրկի օրերուդ
Ես էութիւնդ եմ, ես սկիզբն եմ բու վախճանիդ,
Իմ մէջն է որ դուն ինքդ՝ կեանքէդ յետոյ՝ պիտի
ապրիս:

Մեր բանաստեղծը թափ տուած է իր երեւակա-
յուլթեան եւ ահա կը շարայարէ բոլոր այն գեղեցիկ
պատկերները, զորս ամէն հայր կ'ուզէ տեսնել իր որդիին
դիմագծուլթեան ներքեւ: Չէ՞ որ ամէն հայր հովանի
մը պիտի գտնէ իր որդիին շուքին տակ եւ իր կեանքը
պիտի շարունակէ անոր կեանքին մէջ:

Եւ ահա որդին, որ չէ տեսած իր հօրը երեսը, իր
աղերսանքը կը վերջացնէ նոյնքան յուզիչ սա տողերով.

Ի՛նչ առհաւութիւն, ի՛նչ խորհուրդ,
ի՛նչ գաղտնիք...

Ինձի ըսիմ թէ աչքերուս մէջ բու կերպարանքդ
կ'արտացոլայ ..

Եւ թիրերուս մէջը ես բու դէմքդ
նշխարներու պէս կը պահեմ,

Բայց չեմ ուզեր, իմ կարօտէս, արցունքներովս
պղտորելի գայն

Մինչեւ որ քեզ գրկելով իմ սարսուռէս
չարտասուեմ....:

Իսկապէս ինչ առհասարակ թիւն, գործածելու համար բանաստեղծին բառը, որ կը նշանակէ ժառանգականութիւն: Որդին միայն ուրիշներու վկայութեամբ է որ կը լսէ թէ կը նմանի իր հօրը: Ուրիշներէ՛ն է որ կը լսէ թէ իր բիւրեւուն մէջ հօրը աչքերուն պատկերը կայ: Եւ ան հիմա ինչպէ՛ս արտասուէ, իր արցունքներովը ինչպէ՛ս խաթարէ իր հօրը պատկերը իր աչքերուն մէջ:

Այս բանաստեղծութիւնն ալ, որ հիւսուած է ժամանակաշրջանի ընտանեկան տառապանքներու թելով, մեզի համար կը մնայ Սիամանթոն անմահացնող բանաստեղծութիւններու շարքին մէջ:

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

Սիամանթոյի ամբողջական գործին մէջ կայ հայ գիրերու գիւտին ու գիւտի փառքին նուիրուած երկարաշունչ բանաստեղծութիւն մը, «Սուրբ Մեսրոպ», որ միւսներէն շատ յստակ կերպով կը զատորոշուի եւ կրնայ մտնել անմահանալու արժանի գործերու դասակարգին մէջ: Այս բանաստեղծութիւնը կը բաղկանայ իրերայաջորդ չորս մասերէ, որոնք են՝ «Ներբողական», «Սուրբին աղօթքը», «Տեսիլքը», «Գիւտին փառքը»: Այս շարքին մէջ մենք կը գտնենք տարբեր Սիամանթօ մը, կամ Սիամանթոյի գրականութեան մէջ տարբեր տեսանկիւնէ գիտուած ազգասիրութիւն մը, տարբեր խմորով շաղախուած ստեղծագործութիւն մը՝ որ մեր աչքերուն առջեւ աւելի յստակ կերպով կրնայ նկարել բանաստեղծին պատկերը՝ որպէս մեր լեզուին ու մեր մշակոյթին հաւատարիմ մէկ պաշտպանը: Օչականի Սուրբին վճարուած պարտք մըն է այս, զոր այսօր ոեւէ աչակերտ կրնայ բեմերու վրայ արտասանել, միա-

նալով այն ներբողականին, զոր Սիամանթօ հիւսած է Մաշտոցին համար, ամէնէն առաջ խոնարհելով անոր սուրբ գերեզմանին առջեւ.

Օշականի ամենասուրբ գերեզման,
Հանճարի հող՝ ուրկէց այսօր,
Տասնեւհինգ մրրիկեան դարերու
Պատմութիւն մը պերճաշուէ,
Արեւելէն Արեւմուտք, նրկու Հայքն բովանդակ,
Դէպի գճեզ, ազատօրէն աղօթելու կը շարժէ...

Եւ աղօթքը հիմա կ'ուղղուի դէպի Անոր՝ որ կը ննջէ
այդ գերեզմանին մէջ.

Օշականի անհուն մեռեալ,
Դուն քիւրաւոր միւղերով
Ոսկեհոս գե՛տ գիտութեան,
Մտքի Փրկիչ, յոյսի Հսկայ, կեանքի կեդրոն,
Դուն անվախեա՛ն փոշիացեալ,
Դուն ջահերու ամմարելի շտեմարան,
Ուրկէց ուղեղս, մանկութեանս օրերուն,
Ես՝ աղքատօրէն եկայ վառելի..:

Սիամանթօ հոս եւս թափ կուտայ հռետորաչունչ
խոյանքի մը, բայց հռետորական այդ շունչը այս անգամ
չ'անհանգստացներ մեզ՝ ինչպէս պիտի անհանգստացնէր
անոր ուրիշ բազմաթիւ բանաստեղծութիւններուն մէջ:
Եւ արդէն կը տեսնենք թէ հետզհետէ աւելի կը գեղեց-
կանան գործածուած պատկերներն ու կաղապարները.

Օշականի վսեմական վարդապետ,
Դուն վեհիմաստ վանական եւ Աստծոյ քաժակ,
Դուն Յիսուսի բազմարուրեան պատմուսնան,

Խօսի՛ աղբիւր, բանի՛ քարձումբ,
Կարողութեանց անվե՛րջ կատար,
Դու՛ն իմաստի աւագան եւ աղօթ՛քի կապոյտ անձրեւ
Ափ մը հողէդ ամբողջ երկինք մը դեռ կը բուրէ

Կրնա՞նք զգալ արդէն որ տակաւ կը մօտենանք
Նարեկեան շունչի մը, Նարեկեան բառամ/թերքի մը,
նոյնիսկ Նարեկեան աղօթքի մը, որ աւելի զգալի պիտի
դառնայ միւս բաժիններուն մէջ: Անտարակոյս կրնանք:
Բայց դեռ պէտք է համբերենք եւ ականջ տանք այն
ներբողականներուն, զոր բանաստեղծը իրերայաջորդ
կերպով կը հիւսէ մեծ Վարդապետին համար: Պիտի
կարգանք ցատկելով տողերու վրայէն.

Օշականի դու՛ն անկորուստ կրօնական,
Անպատիւ մէջ մխրճուող նգնաւոր,
Խունկի՛ ամտառ, կնդրուկներո՛ւ բուրաստան,
Քրիստոսի ազնիւ խօսի՛ն դու՛ն տիրական քարոզիչ,
Դո՛ւն շնորհքի աշնանային շատրուան,
Քու հաւատքէ՛դ հաւատացեալ՝ ե՛ս լացի:

Օշականի մէջ անմահօրէն մահացեալ
Անճառելի եւ անդրանիկ դաստիարակ,
Օշականի հանճարանիստ հողակոյտ,
Եկեղեցւոյ խորանին ինչ անշուքօրէն մրափող
Ոսկեդարու ադամանդեայ բանալի,
Դու՛ն լեզուի կանառ, գեղեցկութեան իջեւան,
Դու՛ն նեմարան մարմարայի՛ն մտածումի,
Ներէ՛ որ ինչ աշակերտդ այս արբեցեալ
Տասնըեւհինգ դարեր յետոյ զքե՛զ պաշտէ:

«Սուրբ Մեսրոպ»ի նուիրուած այս առաջին բաժինը
իր աւարտին պիտի հասնի ցնցիչ կտակով մը, որ կրնայ
մեր մտքի մէջ բանալ մտածումներու ու երեւակա-

յուրթեանց ահաւոր խորհուրդ մը:

Օշականէն ի մեզ հսկող Մտֆի Աստուած,
Դուն հասողութեան հիմնաքար,
Աստղերէն մեզ լոյս լեցնող ոսկեհասակ աշտարակ,
Դուն մտածման ծարաւներու արծաթեայ ծով,
Թող իմ գանկս, վերջալոյսիս,
Քնարիս հետ, մոխիրովս առլցուն,
Յուղարկաւորներս՝ խնկատուփի մը փոխարէն
Հողակոյտիդ վրայ վառեն...

Տխուր կտակ, որ պիտի չիրագործուէր: Բայց ո՛վ կրնայ
այնդեւ թէ Մերոպ Մաշտոցի բոլոր հաւատարիմ աշա-
կերտներուն նման, Սիամանթոյի սիրտն ալ անտե-
սանելի ճամբորդութեամբ մը չզնաց թաղուիլ մեծ
վարդապետին գերեզմանին քովիկը:

ՄԵՍՐՈՊԻՆ ԱՂՕԹՔԸ Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ

Եւ հիմա եկէք անցնինք Սիամանթոյի «Սուրբ Մե-
րոպ» քերթողաշարքի երկրորդ բաժնին, որ կոչուած
է «Սուրբին աղօթքը»: Այս բաժնին մէջ մեր բանաս-
տեղծը կը խօսեցնէ Մերոպը, որ Աստուծոյ օժան-
դակութիւնը կը խնդրէ հայոց գիրերը ստեղծելու իր
աշխատանքի ու երազի նախօրեակին: Մերոպ կ'աղօթէ
ջերմեռանդօրէն եւ այդ աղօթքը Սիամանթոյի գրչին
տակ կը դառնայ գրական ընտիր էջ: Այստեղ Մերոպի
կողմէ Աստուծոյ մասին գործածուած որակականներն
ու պատկերները անսահման հիացումի ու պաշտամունքի
մը արձագանգները կը բերեն: Սիամանթօ այս երկա-
րաչունչ քերթուածին մէջ գաղափարի փայլատակում-

ներ, գրական ինքնատիպ գիւտեր չի հրամցներ մեզի, այլ մեզի կը հրամցնէ Աստուծոյ մասին ստորագելիներու, բառերու, որակականներու անսահման ճոխութիւն մը, որ կը բխի Մեսրոպի խոնարհ մարդու սրտի խորերէն, որպէս ուրիշ Նարեկացի մը: Ոճը ուղղակի մեզի կը յիշեցնէ Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան»-ի ոճը եւ դժուար չէ ենթադրել որ Սիամանթօ այս եւ, ինչպէս պիտի տեսնենք, յետազայ բաժնին մէջ խորապէս ազդուած է Նարեկի շունչէն: Տեսնենք: Ահաւասիկ Մեսրոպ կը սկսի աղօթել Սիամանթոյի գրչով.

Լոյս տուր ինձի, Աստուած անհերքելի,
Տիեզերքի ամմեկնելի ճարտարապետ,
Ճակատագրի եւ ճանաչման ստեղծիչ,
Շունչի մրրիկ, կեդրոնական կարողութիւն,
Սուրբ Սեղանիդ սարկուազն Մեսրոպ՝
Իր մշուշապատ մեծ երագին
Քու ձեռքերէդ յստակութի՛ւն կ'աղերսէ...:
Օգնէ ինձի մեծապարգե՛ւ իմաստութիւն,
Ես՝ անցուպ հովիւ մեծ քարոզիդ,
Ես՝ եղկելի մահկանացու, ես տժգոյն անտես՝
Հայկազնեան ահեղ ցեղին ...
Ես՝ տգէտ դպիր եւ անվաւեր վարդապետ,
Ես՝ անժածամ դրօշ հաւատացեալ ամբոխներուդ:

Կարծես Նարեկացին է որ կ'աղերսէ Աստուծոյ, գործածելով իր անգերազանցելի բառապաշարը, որմէ յիշենք պատահական քանի մը տող.

Աստուած բոլորի, անճառ մեծութիւն,
Անբաւ բնութիւն, իսկութիւն անհաս,
Հգօր գօրութիւն, անհատ լիութիւն,
Բարերարութիւն ամենակարող...

Նարեկացի ներում կը խնդրէ բոլոր այն մեղքերուն համար զորս գործած է կամ չէ գործած: Իսկ Մեսրոպ Հայոց գիրերու գիւտի իր երազին համար յստակութիւն ու յաջողութիւն կ'աղերսէ Սիամանթոյի գրչով:

Օգնէ ինծի Աստուած բիւրեղ ..

Ես՝ ողորմելի որոնիչ եւ անհետեւաճ խուզարկու,

Ես՝ անճամճար իննիչ եւ անբերրի հիւլէ,

Ես՝ անաստիճան ձգնաւոր եւ անթոիչ հոռտոր..

Ինքզինք խոնարհեցնելու ու նսեմացնելու այս պատրաստակամութիւնը, որ դարձեալ կը ներչնչուի Նարեկացիէն, կը շարունակուի երկար ու պատկերալից տողերով: Իրականութեան մէջ կ'արժէր որ ընթերցողը մի առ մի կանգ առնէր այդ տողերէն իւրաքանչիւրին վրայ եւ չափէր Սիամանթոյի երեւակայութիւնը՝ ինքզինք Մեսրոպին ու Նարեկացիին մորթին մէջ տեղաւորելու խոյանքի մը մէջ:

Ես՝ անհիրընկալ օթեւան եւ անբազմոց մահամերձ,
Լապտերիդ լոյսը մի՛ մերժեր ինձ ...

Սիամանթօ կը խոնարհեցնէ մեր մեծ Վարդայետը, եւ մենք կը ձայնակցինք բանաստեղծին, որովհետեւ մենք ալ Մեսրոպը կ'երեւակայենք այդպիսի խոնարհութեան մը մէջ: «Ես՝ անկարկաջ առուակ, խափանեալ ջրվէժ, ուսուցիչ անուս, վարանեալ վարդայետ, դպրութեան անպսակ տնօրէն, որմ՝ մ'թաչէն, գեհնեական բանտարկեալ, շիւղ կորուսեալ, հունտ անպարգեւ» եւ դեռ ի՞նչ պատկերներ խոնարհութեան ու ինքնազատումի, որոնք մեր սիրտը կը տաքցնեն, մեզի մտածել տալով հանդերձ թէ Մեսրոպ այն չէ՛ր որ կը նկարագրուի վերի տողերուն: մէջ:

«Սուրբին աղօթքը» պիտի վերջանայ նոյն շեշտով ու նոյն աղերսանքով: Եւ արդէն պիտի երեւակայենք թէ Մեսրոպ այն զինուորն է, որ, քառասուն գիշեր աղօթելէ վերջ կուուի պիտի մեկնի հայոց տառերը գտնելու համար եւ մեկնելէ առաջ կը խնդրէ իր Տիրոջ օրհնութիւնը, Տէրը նկատելով բոլոր գիւտարարներու ու հնարիչներու Առաջինը.

Օգնէ ինձի, անծայրածիր Ծանօթութիւն,
Գերագոր Տէր, անհուն հնարիչ,
Լոյսի զէնիթ, անանջրպետ հոգի,
Անհաշիւ բաշխող, երազներու սահամբ,
Ճանաչումի ինչ ծածկոցդ լուսեղէն
Իմ կործանեալ ուսիս վրան թող ծածանի,
Եւ՝ հսկումներու, հեծեծամբի, աղօթքներու
Այս իրիկուան բառասներորդ գիշերիմ՝
Արարչագործ ձեռքդ իմ ուղեղիս երկարէ,
Հոն իմ գիւտս խմորելու ...

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԻՆ ՍԱՆԴՈՒԽԸ

Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» շարքին երրորդ մասը, որ կը կոչուի «Տեսիլքը», 11 տողերէ բաղկացեալ փոքրիկ բաժին մըն է: Հոն կը պատմուի որ Քերովբէ մը պատին վրայ Հայկազնեան Այբուբենը կը գծագրէ, երբ Մեսրոպ կը մրափէր: Սուրբը կ'արթննայ եւ տեսնելով հրաշքը, կը սկսի արտասուել, կը ծնրադրէ Հայոց Այբուբենին առջեւ: Այսքան:

Եւ կը բացուի շարքին չորրորդ ու վերջին բաժինը, «Գիւտին փառքը», որ բաւական երկար բաժին մըն է եւ որուն մէջ Սիամանթօ այլեւս իր խօսքը կ'ուղղէ Մեսրոպին ու զայն կը փառաբանէ բանաստեղծական

անվերջանալի պատկերներով ու գիւտերով: Այստեղ է որ մենք դարձեալ կը գտնենք Նարեկեան շունչ մը եւ Մեսրոպի անուան շուրջ Սիամանթոյի կողմէ հիւսուած փառաբանութեան մէջ կը տեսնենք Աստուծոյ փառքին համար Նարեկացիի կողմէ հիւսուած փառաբանութեան մէկ նմանը:

Մեսրոպ, հայ դարերու դիմաց կեցող՝
Դու՛ն աղամանդեայ ապառաժ,
Դու՛ն մանուկներու մերկ ուղեղէն
Մի՛նչեւ հանճարը ցոլ՛ներ ցանոյ
Գիտակցութեանց անգիւտ փարոս:
Դու՛ն աննիճջ հսկող, դու՛ն տիտանեան Տեսանոյ,
Դու՛ն օրօրոցէն մի՛նչեւ գերեզման,
Մեր մէն մի խօսքի՛ն, մէն մի շունչի՛ն
Գեղեցկագոյն քացատրիչ:
Դու՛ն քարքառի արարիչ, Բարի իշխան,
Դու՛ն անբաւ բաւիղ տելոդութեան,
Դու՛ն գոյացութեան արգա՛ւանդ հայր,
Դու՛ն լոյսի անիւ, դու՛ն հաւատքի հրաւեր ...

Դե՛ռ երկար պիտի շարունակուի «Դուն»երու փառաբանումը: Պիտի շարունակենք կարգալ եւ պիտի զգանք որ բանաստեղծը այլեւս զօրաշարժի ենթարկած է ամբողջ իր երեւակայութիւնն ու բառամթերքը, որ պէսզի նորանոր պատկերներ հնարէ ու գծէ Մեսրոպի պայծառ դէմքին համար:

Դու՛ն անվատնելի ցորեանի դաշտ, դու՛ն՝ ձրի հաց,
Դու՛ն հունձ՛ք հարուստ, եւ դու՛ն հնձան հրաշէկ,
Դու՛ն արքեցութեանց եւ գինիի աւազան,
Որո՛ւն մէջ ե՛ս ալ ոսկի սափորս եմ մխրճեր...

Ոեւէ գրասէր, որ բաւականաչափ ծանօթ է Սիւ-
մանթոյի բանաստեղծական մթնոլորտին, այստեղ
տարբեր տեսակէ Հայրենասիրութիւն մը պիտի գտնէ,
կամ ըսենք՝ պիտի գտնէ տարբեր տեսակէ Հայրենասէր
Սիւմանթօ մը: Զարմանալի բան չկայ: Հայոց
գիրերուն սիրահար ամէն Հայ գրագէտ արդէն ինքզինք
կը նկատէ Մեսրոպի աշակերտ եւ անպայման «իր ոսկի
սպիրորը կը մխրձէ Մեսրոպեան արբեցութեանց ու
գինիի աւազանին մէջ»: Բայց Սիւմանթոյի պարա-
գային, աշակերտին այս զեղումը նշանակալից է,
որովհետեւ ան միշտ կը խուսափէր իր սրինգը հնչեցնելէ
իր ժողովուրդին տառապանքներէն, իր ժողովուրդին
մահաշունչ ճակատագրէն տարբեր նիւթերու մասին,
իսկ այստեղ իր թոքերուն ամբողջ ուժովը կը փչէ իր
սրինգին մէջ եւ քնարաշունչ երգեր կը յօրինէ իր
վարպետին մասին.

Դուն երկրորդ Աստուած,
Եւ մտածման Դուն առաջին արարիչ...
Դուն քեղուց քարիք, սրտի աղբիւր,
Գոյներու գանձ, գթութեանց գահ ..

Եւ արդէն բանաստեղծը կ'երեւակայէ թէ ինչպիսի
«գալարումէ գալարում, վարանքէ վարանք, վարկածէ
վարկած, եւ ծովային ծփանքներէ ի ծփանք», Մեսրոպ
առաջնորդուեցաւ դէպի իր տեսիլքին իրականացումը:
Եւ հիմա բանաստեղծը կը սկսի աղերսել, աղերս՝ որ
արդէն բանաստեղծութեան մայր նպատակն է.

Դուն մեծ կրքերու կրօնաւոր,
Այր Աստուած, մտքի եղբայր, թնայի թոյր,
Քու քաժակէդ թոյլ տուր որ ես ալ ըմպեմ...

Ուշադրութիւն՝ գործածուած պատկերներուն գեղեցկութեան եւ ինքնատպուլթեան: Այր Աստուած, մտքի եղբայր, քնարի քոյր:

Սիամանթոյի արբեցումը իր աւարտին պիտի հասնի գերազոյն աղերսանքով մը, որ իրականութեան մէջ խոստում ու կտակ կը դառնայ մեզի համար: Եւ կը կարդանք այդ վերջին տողերը.

Եւ թոյլ տուր այսօր, ո՛վ Մեսրոպ,
Որ՝ Հայոց հողէն միմչեւ աստղերը հասնող
Քու ռսկիէ սանդուխէդ վեր քարձրանամ,
Եւ հաստատաբայլ, աստիճանէ աստիճան
Ու պսակէ ի պսակ եւ լոյսէ ի լոյս,
Իրր գաւակ մը մտածումիդ,
Եւ ի քե՛զ գամ, իմ այս երգս երգելու:

Երգը երգուած է արդէն Մեսրոպի թոյլտուութեամբ, կամ առանց Մեսրոպի թոյլտուութեան: Սիամանթօ առանձին չէ: Աւելի քան 1500 տարիներէ ի վեր հազարաւորներ, տասնեակ հազարաւորներ, գրականութեան սափոր մը ի ձեռին, հայոց հողէն բարձրացան զէպի աստղերը, մագլցելով Մեսրոպին նետած սանդուխին վրայէն: Մեսրոպ լսեց բոլորն ալ ու հրճուեցաւ: Կրցա՞ծ էր երեւակայել թէ այսքան շատ երկրպագուներ պիտի ունենար...

ԱՐՅՈՒՆՔՆԵՐ

Սիամանթօ մեր բանաստեղծութեան պարտէզին մէջ
իւրապատուկ դէմք մըն է ո՛չ միայն իր մշակած նիւ-
թերով եւ մթնոլորտով, այլ նաեւ իր լեզուով: Սիա-
մանթոյի լեզուն նաեւ անոր ստորագրութիւնն է: Քիչ
չատ գրական փորձառութիւն եւ հոտառութիւն ունեցող
մէկը առանց ստորագրութիւնը կարդալու արդէն կրնայ
ճանչնալ Սիամանթոյի տողերը: Նախ ըսենք որ Սիա-
մանթոյի լեզուն շատ ալ բանաստեղծական չէ: Մեր
բանաստեղծը կը գործածէ արձականման ոճ մը, որ
թէեւ փայլուն, գեղեցիկ, շունդալից, շողշողուն բառերով
յագեցած է, որ սակայն նախադասութիւններու կերտու-
մի տեսակէտէ հեռու կը մնայ շրջանի միւս բանաստեղծ-
ներուն բանաստեղծական ոճէն: Ատկէ զատ Սիաման-
թոյի լեզուն տեղ տեղ կը տառապի լեզուական մեղան-
չումներէ, որոնք ցոյց կուտան թէ ան տակաւին չէր
կրցած բոլորովին քայլ յարմարցնել Արեւմտահայերէնը
ռամկերէնէն անջատելու ու մաքրագործելու շարժու-
մին: Յանկարծ կրնաք տեսնել որ Սիամանթօ կը գրէ
սապէս.

Կուրծճերնիդ քաց՝ պէտժ է պարէժ:

«Կուրծքերնիդ» փոխանակ՝ «Ձեր կուրծքերը»ի:
Կամ յանկարծ պիտի կարենաք տեսնել որ ան կը գրէ
սապէս.

Օ, չըլլայ որ երբեժ այս գիշեր իմին վրաս
մտածէ՛ք...

«Իմին վրաս», փոխանակ «իմ վրաս»ի կամ «իմ
վրայ»ի:

Բայց ըսելակերպ մը կայ, որ Սիամանթոյին ստորագրութեան համագոր կը դառնայ: «Օրէն» յետադաս մասնիկի գործածութիւնը: Սիամանթօ շատ կը սիրէ այս մասնիկը եւ զայն կը գործածէ տեղի կամ անտեղի կերպով, շատ յաճախ: Օրինակ՝ Յուսահատօրէն, պանդխտօրէն, երկարօրէն, մահագութօրէն, եւայլն: Ահա քանի մը տողեր հոսկէ հոնկէ.

Յուսահատօրէն ու պանդխտօրէն անտառ
վերադարձայ

Բոլոր մահագանգերը նուիրակամ - երկարօրէն,
մահագութօրէն ու քարեպաշտօրէն - ամայի գիշերին
մէջ ըսին թէ

Տժգումօրէն յոյսին բոլոր շուշանները թափեցամ

Առաւօտը քաղցրօրէն քաղցր է ...

Աղքատօրէն եկայ վառել

Անտարակոյս Սիամանթօն ալ ո՛վ գիտէ իր լեզուն տակաւին որքան պիտի բիւրեղացնէր եթէ աւելի երկար ապրէր: Ո՛վ գիտէ որքան գեղեցիկ տարբեր նիւթեր պիտի մշակէր, եթէ իր ժողովուրդին բախտը իրեն չստիպէր որ ան շարունակ խօսի արցունքի, արեան ու կռիւի մասին:

Արցունքներ...:

Սիամանթոյի նուիրուած այս շարքը պիտի փակենք այստեղ արձանագրելով անոր «Արցունքներ» խորագրեալ բանաստեղծութեան մը վերջին չորս տողերը: Այս բանաստեղծութեան մէջ ալ Սիամանթօ կը ջանայ միշտ ինքզինք հեռու պահել բանաստեղծական քնա-

ըմբռստացումի աղաղակ մը, հերոսաշունչ խոյանքներու ճիչ մը, մահերգութեան ողբ մը, որ թէեւ ուժեղ արձագանգեց իր ժամանակին, բայց յետոյ մարեցաւ, եւ դատապարտուեցաւ դառնալու գրչի աշխատանք մը որ բացի իր տուած քանի մը բախտաւոր ստեղծագործութիւններէն, իր ընդհանուրին մէջ չկրցաւ հասնիլ հայ գրականութեան ապագայ սերունդներուն:



**ԵԿԷՔ ԲԱԺՆԵՆՔ
ՄԵԾԱՐԵՆՑԻ ՅՈՒՉՈՒՄՆԵՐԸ**

ՔՍԱՆԵՐԿՈՒ ՏԱՐՈՒԱՆ ԿԵԱՆՔ ՄԸ

Եկէ՛ք բաժնե՛նք մեր բանաստեղծութեան անզուգական վարպետներէն տարաբախտ Միսաք Մեծարենցին յուզումները: Մեր սիրտը բւանա՛նք անոր տառապանքներուն, կամ եկէ՛ք բանանք անոր սիրտը ու տեսնենք թէ ի՛նչեր կան հոն:

Պիտի ըսենք որ մենք հոն ամէն բանէ առաջ պիտի տեսնենք իր ժամանակակիցներէն չհասկցուելու տառապանքը: Ան որ մեր բանաստեղծութեան կատարներէն մէկը պիտի դառնար իր մահէն վերջ, իր շատ կարճատեւ կեանքին վերջին մէկուկէս տարին անցուց տառապելով իր վրայ կատարուած յարձակումներէն եւ իր ստեղծած նոր բանաստեղծութեան նկատմամբ ցուցաբերուած թշնամանքէն ու անհասկացողութենէն: Երեւակայենք անգամ մը թէ ինչպիսի տխուր ճակատագիր մը նախասահմանուած էր խեղճ Մեծարենցին: 21 տարեկան էր տակաւին երբ 1907-ին կը հրատարակէր իր առաջին երկու գիրքերը: Եւ այդ երկու գիրքերուն մէջ արդէն կային այն գործերը, որոնք Մեծարենցին ամէնէն անկորնչելի ու անմոռանալի բանաստեղծութիւնները պիտի դառնային: Մինչդեռ բանաստեղծը կը տեսնէր որ իր ժամանակակից ու հեղինակաւոր մարդիկը չէին հասկցած զինքը, չէին սիրած իր բանաստեղծութիւնը եւ, շարունակ կը խժքժէին: Այդ հակառակորդները կը պնդէին թէ Մեծարենց զարտուղի ու «զառանցական» մէկ հետեւորդն էր օտարներու «սէնյոլիզմ» կոչուած խորհրդապաշտ գրական նորաձեւութեան, թէ «մոլար կապկող» մըն էր ան պարզապէս եւ այսպիսի բանաստեղծութիւն մը վնաս կը պատճառէր մեր գրականութեան: Կային քանի մը բանիմաց գրչի մարդիկ, որոնք

կը պաշտպանէին Մեծարենցը, բայց ատիկա բաւարար չէր: Մեծարենց կը ստիպուէր անձամբ պաշտպանել ինքզինք: Ան կը պատասխանէր որ ինք բնաւ հետամուտ չէ եղած օտար որեւէ դպրոցի, կը ջանար «ինքզինք» ըլլալ, խօսիլ իր սեփական յոյզերուն ու զգայնութիւններուն մասին:

Բայց Մեծարենց արդէն հիւանդ էր: Ամէն իրիկուն իր ակնարկները կ'ողողէր դէպի Մայր Բնութիւն կամ Երկինք՝ որպէսզի առողջութիւն շնորհուէր իրեն: Ամէն իրիկուն կ'աղօթէր Աստուծոյ ու քիչ մը արեւ կը խնդրէր, քանզի հիւանդ էր:

Շոդա, շոդա, քարի արեւ, հիւանդ եմ...:

Ինչ օգուտ: Ճակատագիրը անիրաւօրէն կեանքի շատ կարճ շերտ մը սահմանած էր իրեն: Մեծարենց մէկ տարի վերջ իր մահկանացուն պիտի կնքէր 22 տարեկան հասակի մէջ, առանց գիտնալու որ կարճ ժամանակ վերջ պիտի դառնար հայ բանաստեղծութեան կատարներէն մէկը: Գոնէ եթէ գիտնա՛ր թէ ինչպիսի տեղ մը պիտի ունենար մեր մայրենի մշակոյթին ու գրականութեան մէջ: Չկրցաւ գիտնալ: Մեզի թողուց իր գլուխ-գործոցները, եւ գնաց իրեն հետ տանելով համամարդկային սէր, բնութեան գեղեցկութիւններուն նկատմամբ պաշտամունք, գաւառի դպրոցներէն ստացուած սքանչելի ու անկրկնելի Մայրենի մը:

Բոլոր անոնց համար որոնք մեր մայրենի մշակոյթն ու գրականութիւնը կը սիրեն, այսօր ուսանելի շատ բան կայ Մեծարենցին ո՛չ միայն ստեղծագործութիւններուն, այլ նաեւ կենսագրութեան մէջ:

Ծնաւ 1886-ին Ակն Բինկեան գիւղին մէջ: Յաճախեց Մեսրոպեան նախակրթարանը: Դպրոցին տնօրէնը եւ ուսուցիչները կը նայէին այս մեղամաղձոտ ու

ներամփոփ տղուն ու կը մտածէին որ ան ծոյլ եւ անընդունակ տղայ մըն էր: Բայց անոնք կ'երեւի չէին գիտեր թէ այդ անընդունակ տղան արդէն ութ տարեկանին գիւղի մուտքին սպասած էր նախիրներու դարձին, ականջ տուած էր հովիւներուն սրինգին, ինք ալ սրինգ նուագել սորված էր ու այդ երաժշտական մեղեդիները թուղթի փոխանցած էր՝ զանոնք գաղտնօրէն վերածելով գրական մեղեդիներու: 10 տարեկանին ընտանիքին հետ փոխադրուեցաւ Սերաստիա, քիչ ժամանակ յաճախեց Արամեան վարժարան: Ժամանակները տխուր ժամանակներ էին: Ընտանիքը զինքը դրկեց Մարգոլան, ուր պիտի ուսանէր «Անատոլու» գոլէճի մէջ: Թուաբանութենէ բան չէր հասկնար, բայց լեզուի մէջ ու գրական գիտութիւններու մէջ միշտ առաջին էր: Ո՛վ գիտէ Մայրենի լեզուի ինչպիսի պաշար մը հաւաքած էր երբ Պոլիս եկաւ, տարի մը աշակերտեց Կեդրոնական Ազգային Վարժարանին: Բայց արդէն իր մէջ յայտնուած էր հիւանդութիւնը եւ հազիւ 5-6 տարուան կեանք մը ունէր իր առջեւ:

22 տարուան կարճատեւ կեանք մը ահաւասիկ, որուն կէսը անցած էր գաւառի մէջ: Բայց այդ գաւառի դպրոցներէն էր որ Մեծարենց կուտակած էր մայրենի այն սքանչելի բառապաշարը, որով ան պիտի պայթեցնէր իր գրականութիւնը: Եւ ինչ որ այսօր հայ գրականութեան մէջ կը մնայ որպէս անկորնչելի ու հիւանալի ժառանգութիւն, այդ շատ կարճատեւ կեանքին տուածն է: Ալ պէտք չունինք հաշուելու թէ Մեծարենց ո՛ր կը հասնէր եթէ առնուազն քսան տարի մը եւս կարենար ապրիլ: Եւ մեր գրականութեան բազմաթիւ երեւելի վարպետներն ալ լաւ կ'ընեն եթէ հարց տան թէ իրենք տակաւին ի՞նչ եւ որքա՞ն բան տուած էին երբ քսան տարեկան էին:

ԳԵՌԻ Ի՞ՆՉ ՊԻՏԻ ՈՒՉԷԻՆ ԿԱՐԴԱԼ...

Ըսինք արդէն ու հիմա պիտի կրկնենք: Երբ իր մահէն տարի մը առաջ Մեծարենց իրերայաջորդ կերպով հրատարակեց իր երկու ժողովածուները, «Ծիածան» եւ «Նոր տաղեր», անոնց մէջ արդէն տուած էր իր բոլոր այն գլուխ գործոցները, որոնք այսօր մէկմէկ մասունք դարձած են մեր բանաստեղծական աշխարհին մէջ: «Ծիածան»ի առաջին էջերուն վրայ տեղ գտած էր Մեծարենցի զգլխիչ «Սիրերգ»ը՝ անմոռանալի սա առաջին երկու տողերով.

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛մ,
հաշիշով օծուի ու քալասանով.

Կամ արդէն առաջին էջերուն վրայ իսկ հրատարակուած էր հմայիչ «Ձմրան պարզ գիշեր»ը՝ անմոռանալի սա առաջին տողերով.

Համբոյրիդ, գիշե՛ր, պատուհանս է քաց,
թո՛ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագիմ
կաթը մեղմահոս լոյսիդ տարփանքիմ՝

Կամ արդէն տուած էր հրաշալի ու անկրկնելի «Կիրակնամուտք»ը՝ անմոռանալի սա առաջին տողով.

Յուշիկ փախչող իրիկուամ ծիրամի լոյսն է
գուարթ...

Ինչո՞ւ այդ շրջանի գրասէրները չէին մագնիսանար այս բանաստեղծութեան սա առաջին չորս տողերէն.

հովմ հերարձակ աշունիմ.

Երկու գիրքերուն մէջ էր դարձեալ որ Մեծարենց իր բանաստեղծութիւններէն մէկուն համար կը գործածէր խորագիր մը, որ պիտի նոյնանար Մեծարենցի անուան հետ: «Ի՛նչ արբեցութեամբ»: Բնութեան գեղեցկութիւններու իւրօրինակ փառաբանում մը ահաւասիկ, գրուած, իրաւ ալ, ի՛նչ արբեցութեամբ.

Ի՛նչ արբեցութեամբ ծաղիկներ շաղիմ,
ծաղիկներ լոյսիմ, մտերիմ՝ ձեռքիմ,
սպասումներում մէջ կը մուաղիմ...:

Եւ այս երկու գիրքերէն դուրս մնացած ըլլար կամ չըլլար, ո՛վ գիտէ մամուլի ո՞ր անկիւնը հրատարակուած չէ՞ր Մեծարենցի ամէնէն յուզիչ, ամէնէն մարդկային այն բանաստեղծութիւնը որ ապագայ գրասէրներուն լեզուին վրայ պիտի գամուէր ոսկեայ գամով մը,

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնակամ.
Ծաղիկներու պէս գայն ժողովեմ՝ ճամբուս վրան՝
նայումս թմերում մէջ ամէնում եւ ամէն օր:

Մեծարենց արդէն պաշտելի բանաստեղծ պիտի դառնար եթէ գրած ըլլար միայն այս բանաստեղծութիւնները: Անշուշտ որ ան հարիւրաւոր ուրիշ բանաստեղծութիւններ ալ գրած ըլլալու էր, որպէսզի անոնց մէջէն կարենար առանձնացնել երջանիկ վայրկեաններու սա քանի մը գլուխ-գործոցները: Գրականութեան անշեղ օրէնքն է այս: Բայց այսքանը արդէն չէ՞ր բաւեր որպէս ողջունելի առաջին վաստակ 20 տարեկան երիտասարդէ մը: Դեռ ուրիշ ի՛նչ կ'ուզէին Մեծարենցէն կարգալ իր ժամանակակից հակա-

ուակորդները, որպէսզի անոնք խոնարհէին մեծ բանաստեղծի մը երեւումին առջեւ եւ արտօնէին որ ան տարի մը վերջ այս աշխարհէն մեկնէր գնահատուած արուեստագէտի անդորր հոգեբանութեամբ:

ՄԻՐԵՐԳ(ՆԵՐ) - 1

Մեծարենցի ամբողջական գործերուն նուիրուած հատորին մէջ թէ՛ էջակարգի, թէ՛ արժէքի տեսակէտէ առաջին գծի վրայ կուգայ իր բանաստեղծութիւններէն մէկը, որ գրականութեան ճաշակ ունեցող ամէն մարդու համար բացառիկ ստեղծագործութիւն է: Մեծարենցի սիրահարները արդէն պիտի հասկնան թէ այստեղ կը խօսինք անոր նշանաւոր «Միրերգ»ին մասին: Այն անմահ բանաստեղծութիւնը որ կը սկսի «Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին» տողով ու կը վերջանայ «բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի» տողով: Կրնայինք մոռնալ միւս տասը տողերը, որոնք մնացած են այս առաջին ու վերջին տողերուն միջեւ եւ կրնայինք ամբողջական բանաստեղծութիւն մը կազմել միայն այդ երկու տողերով:

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն,
բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի:

Ահաւասիկ ամբողջական բանաստեղծութիւն մը երկու տողով, եթէ պիտի արտօնուի որ այսպէս ըսենք: Ամբողջական՝ որովհետեւ այս երկու տողերուն մէջ արդէն կայ այն ամէն ինչը զոր Մեծարենց ըսել կ'ուզէր այս բանաստեղծութիւնը գրելով: Բնութիւնը որքա՛ն անուշ է, բայց որքա՛ն տխուր է որ իր հիւանդ հոգին քիչ քիչ կը մաշի: Այսքա՛ն: Մնացեալը ընտիր գրականութիւն է:

Մեծարենց անմահացած է «Սիրերգ» կոչուած այս բանաստեղծութեամբ, բայց ինչ որ թերեւս չեն նշմարած Մեծարենցի սիրահարները, այն է թէ Մեծարենցի ամբողջական գործին մէջ կրնանք համրել ճիշդ հինգ «Սիրերգ»ներ: Այո՛, Մեծարենց հինգ անգամ գործածած է այս խորագիրը, առանց գիտնալու անշուշտ որ անոնցմէ միայն մէկ հատն է որ պիտի անմահանայ ու պիտի անմահացնէ զինքը: Կը նշանակէ որ շատ կը սիրէր այս բառը:

Մենք ամէնէն վերջն է որ պիտի ուզենք դանդաղիլ նշանաւոր դարձած «Սիրերգ»ին վրայ եւ անկէ առաջ քիչ մը պիտի պտըտկինք միւս չորս սիրերգ»ներուն շուրջ, որոնք դժբախտաբար կամ բարեբախտաբար չունին առաջինին գեղեցկութիւնն ու վեհութիւնը:

Մեծարենցի երկրորդ «Սիրերգ»ը 12 գողտրիկ տողերէ բաղկացեալ եւ համեստ արժէքով բանաստեղծութիւն մըն է: Անծանօթ սիրելիի մը մասին է խօսքը.

Ճառագայթի պէս ոսկեվարս ու նրբիմ,
երբ որ մամբէմ կ'անցնի հպարտ, լուսարագ,
բան մը սրտէս կ'ըլլայ բոցիմ պատարագ
իր աչքերուն՝ ուր կը մոռնամ ես արփիմ:
Երագայիմ, ծաղիկի պէս նրբաւոր,
երբ կը ժպտի պատուհանիմ ետեւէմ,
թռիչներ հոգւոյս մէջ լուսարադ՝ կը թեւեմ
խօլ անուրջով կապոյտներու հեռաւոր:
Ու երբ կ'երգէ ջութակիմ հետ սարսուռն
մեղմածաւալ հեշտերգն իրեմ ցայգայիմ,
կարծես աչքերն իր լուսափաղփ կը նայիմ
տեւնդոտ պահիմ՝ մէջն իմ հոգւոյս ւլփերուն:

Պահ մը ընդգծենք գեղեցկութիւնը երրորդ տողին, ուր ըսուած է. «Բան մը սրտէս կ'ըլլայ բոցին պատարագ

... իր աչքերուն»։ Գեղեցկութիւն մը ահաւաստիկ, որ քիչ մը զոհուած է բանաստեղծութեան կարծր օրէնքներուն։ Արդարեւ որքա՛ն աւելի լաւ պիտի ըլլար եթէ ըսուէր արձակունակ իր ձեւով. «Սրտիս մէջէն բան մը պատարագ կ'ըլլայ իր աչքերուն բոցին»։

Սիրերգ մը, այո՛, որ չի հաւասարիր անշուշտ Մեծարենցի առաջին «Սիրերգ»ին։

Անցնինք երրորդ «Սիրերգ»ին։ Այս մէկը կրնար գրասէրներու սէրն ու ուշադրութիւնը աւելի լայն չափով իր վրայ հրաւիրել, եթէ չըլլար առաջինը, Մեծարենցիին գլուխ գործոցը։ Սկսի՛նք կարգալ գայն ուշադրութեամբ.

Տրցակ մը հուսամ ու տրցակ մը ուրց
բե՛ր, ձեռքերովդ դիր գոյգ թունֆերուս,
խուցիս մէջ ցամէ իւղեր հիմաւուրց։

Դափը ձեռքս առնեմ մորէն այս գիշեր,
ու ձիւն լոյսիմ հետ հոգւոյս ցրցմէ
բամբիռի ծափեր, վարդի թերթ ու շեր։
Բամբիռի ծափեր, վարդի թերթ ու շեր,
բուրեան շոգիներ համպար ու մուշկի,
որ կ'երփնագօծեն երէկուան յուշեր։

Քիչ մը թեփարիկ, քիչ մը վարդի ջուր,
արեւ ծիծաղի, ծաղիկ ծամերու,
գարդոսկիներու բազմաճաճանչ հուր։

Կրնանք հիանալ այն բառերուն վրայ զորս բանաստեղծը այստեղ գործածած է շոայլօրէն, մինչեւ իսկ դժուարացնելով բանաստեղծութեան ընթերցումը։ Այնուհանդերձ սա առաջին տողերուն մէջ կարեւոր մագլցում մը չկայ դէպի բանաստեղծական արուեստի կատար։ Բայց պիտի տեսնենք որ հոս ալ էջք մը կայ բնութեան գեղեցկութիւններէն դէպի բանաստեղծին

հիւանդ ու դժգոհ ներաշխարհը, ինչպէս կար առաջին
«Սիրերգ»ին մէջ: Կարդանք վերջին վեց տողերը եւ
տեսնենք թէ մթնոլորտը ինչպէս պիտի փոխուի
յանկարծ.

Անուրջի ցայտփեր, ըղձակաթ գիծեր,
դո՛ւ՛ք, շարժուձեւեր կա՛քաւ ու պարի՛
հոգիս բանտեցի՛ք դղեակիմ մէջ ձեր:
Հոգիս բանտեցի՛ք դղեակիմ մէջ ձեր,
Ֆերմակ ստեղմեր հուր դաշմամուրիմ,
պղիմձի թռչներ, ռսկեցու կայծե՛ր...:

Կը հասկնանք բանաստեղծին հոգեվիճակը ու կ'անց-
նինք: Կ'անցնինք որովհետեւ Մեծարենց ունի երկու
«Սիրերգ»ներ եւս:

ՍԻՐԵՐԳ(ՆԵՐ) - 2

Հիմա եկէք միասնաբար կարդանք Միսաք Մեծարենցի
չորրորդ ու հինգերորդ «Սիրերգ»ները:

Չորրորդը գողտրիկ, սիրուն բանաստեղծութիւն մըն
է, ուր Մեծարենց կարծես նոր մարզանք մը կ'ընէ
յանգային նամուտթիւններու վրայ հիմնուած
երաժշտականութիւն մը, կամ երաժշտական բանաս-
տեղծութիւն մը ստեղծելու համար: Փողոց նետուելիք
բանաստեղծութիւն մը չէ, եւ նոյնիսկ կրնայինք մեր
գլխուն վրայ տեղ տալ անոր, եթէ չըլլար սա առաջին,
նշանաւոր, անմոռանալի «Սիրերգ»ը:

Մէկ շունչով կարդանք ամբողջ բանաստեղծութիւնը,
որ կը բաղկանայ 12 տողերէ:

Ձիւնիմ վրայէն կ'երթաս, արե՛ւ ձիւնածաղիկ,
Քայլիդ չափն է կոչմակիմ ձայնը ժամուն,

շուրջդ է ծիածան, ո՛հ, առտուամ այս ժամուն,
սիրտդ՝ ուխտադիր սրբութեամ մը խաղալիկ.

Ձիւնին վրայէն կ'երթաս, արե՛ւ ձիւնածաղիկ,
մնջելով ունկն ի վար աղօթքդ անծանօթ,
ու շփելով շուրթիս սիւժ մը միւռոնհոտ:
Հիմա կ'երգեն, ո՛հ, «Ջարթի՛ք, փառք իմ,
գարթի՛ք..»

Ձիւնին վրայէն կ'երթաս, արե՛ւ ձիւնածաղիկ,
կ'երթաս, ո՛վ կոյս, ձիւնին վրայէն իմ սրտիս,
յօրինելով գունեան կայծեր ու աստղիկ.

իմ տաղարանս՝ ուր դուն կ'երգես, կը ժպտիս:

Սիրերգ մը, առանց սիրոյ պոռոտ ու աղաղակող
արտայայտութիւններու: Բայց երեք տուներուն մէջ
կրկնուող սա առաջին տողը, «Ձիւնին վրայէն կ'երթաս,
արե՛ւ ձիւնածաղիկ»ը, կրնայ քիչ մը մեր սիրտը
տաքցնել սիրոյ կրակով: Ի՞նչ պիտի հասկնանք այս
բանաստեղծութենէն: Հերոսուհին ձիւնին վրայէն
կ'երթայ դէպի եկեղեցի, իր քայլերը յարմարցնելով
եկեղեցւոյ զանգակին կշռոյթին: Կ'երթայ, շուրջը
ծիածան է, ու սիրտն ալ խաղալիկ դարձած է ուխտի
մը արբութեան: Կ'երթայ մրմնջելով իր անծանօթ
աղօթքը: Կ'երթայ քայլելով ձիւնին վրայէն: Բայց միա-
ժամանակ քայլելով բանաստեղծի սրտին ձիւններուն
վրայէն:

Ուրեմն միայն փողոցները չեն որ ծածկուած են
ձիւնով: Բանաստեղծին սիրտն ալ ձիւնածածկ է եւ
կոյսը անոր վրայ կոխելով կ'երթայ դէպի ժամ, դէպի
եկեղեցի, դէպի իր ուխտը:

Բանաստեղծական ապրումի կարճ պատկեր մըն է
այս, որ իր համեստ տեղը գրաւած է Մեծարենցի
ամբողջական գործին ու սիրոյ յայտարարութիւններուն
մէջ:

Բայց մթնոլորտը յանկարծ պիտի փոխուի հինգերորդ «Սիրերգ»ին մէջ, ուր բանաստեղծը մահուան գնով կը հետեւի իր սիրածին եւ կ'արտօնէ որ իր սրտին վտիտ առուն թափի ու անհետանայ սիրելիի հոգւոյն յորդահոս գետին մէջ: Կարգանք դարձեալ ամբողջութեամբ, դարձեալ 12 տողերէ բաղկացեալ բանաստեղծութիւնը.

Երբ կը մեկնիմ ես ինչ ինչէդ,
կ'ըլլամ շիկմոտ ու թրվոռւմ՝
իմչպէս կ'ըլլայ՝ քուքումնաւէտ
վարդենիճէն անցնող առում:
Եւ ջուրիմ պէս այն թրվոռւմ,
ինչ մախրմծայ գրկամբիդ հետ,
մոլորելով կ'ըլլայ անհետ՝
գետ հոգւոյդ մէջ սրտիս առում:
Ու գետիմ պէս՝ սրտիս առում
կը տանիս ինչ մահուան ճամբէդ,
զարմելով զայն մերթ ծաղկաւէտ
ափումքներում, մերթ փարերում:

Համեստ բանաստեղծութիւն մըն ալ այս մէկն է ահա-
լասիկ, ուր մեր աչքերուն առջեւ կը պարզուի իր սիրա-
ծին մէջ կորսուելու, իր սիրածին կողմէ քաշքշուելու
ճակատագրին յանձնուած հէք սիրահարի մը պատկերը:
Այստեղ թերեւս կրնանք յուզումով ողջունել երրորդ
տունը, ուր պատկերը քիչ մը աւելի ցնցող կը դառնայ:
Խորհրդաւոր սիրելին, որպէս յորդահոս ու արագընթաց
գետ մը, իր մահուան ճամբէն պիտի տանի իր սիրածը
եւ մինչեւ որ հասնի մահուան այդ վերջնական
հանգրուանին, ան իր սիրածը մերթ պիտի երջանկացնէ
զինք զարնելով ծաղկաւէտ երջանիկ ափունքներու,
մերթ ալ պիտի տառապեցնէ զինքը զարնելով իր ջուրե-
րուն մէջէն ցցուող կարծր քարերու: Իրական սիրոյ

պատմութիւնը նմանօրինակ վերելքներու ու անկումներու պատմութիւն մը չէ՞ արդէն:

Մեծարենց անպատեհութիւն չէ տեսեր զանազան շրջաններու գրուած իր հինգ բանաստեղծութիւնները «սիրերգ» կոչելու մէջ: Արդէն իր միւս բանաստեղծութիւններն ալ մեծ մասամբ «սիրերգ»ներ են: Կամ պարզապէս «երգ»եր: Յիշենք «երգ» բառով շինուած խորագիրներ Մեծարենցեան քերթողութեան մէջ. «Այգերգ», «Վերադարձի երգ», դարձեալ ուրիշ «Այգերգ» մը, «Երգը», «Կեանքի երգը», դարձեալ «Երգը», «Ցայգերգ», եւայլն: Երջանի բանաստեղծները կը սիրեն երգի նմանցնել իրենց բանաստեղծութիւնները: Այսօր ալ բանաստեղծները հեռացած չեն այդ սովորութենէն: Եւ զարմանալու բան չկայ: Բանաստեղծութիւնը գրականութեան երաժշտական սեռն է, երաժշտական ձեւն է: Եւ եթէ երաժշտութիւնը կը սկսի ամէն բանէ առաջ երգով, մեր բանաստեղծները ինչո՞ւ երգ պիտի չնկատէին իրենց բանաստեղծութիւնները:

ՄԻՐԵՐԳ(ՆԵՐ) - 3

Ըսինք որ մենք Մեծարենցի ամբողջական գործին մէջ կրցած էինք հանդիպիլ հինգ «Սիրերգ»ներու, որոնցմէ միայն առաջինը շատ նշանաւոր է, իսկ միւսները մնացած են անծանօթ: Կանգ առինք անծանօթ մնացած չորս «Սիրերգ»ներուն վրայ եւ զանոնք եւս ողջունեցինք որպէս Մեծարենցէ մեզի փոխանցուած թանկագին ժառանգութիւն: Բայց այս հինգ նոյնանուն բանաստեղծութիւններէն առաջինը, նշանաւորը, մեր մօտ կը շարունակէ մնալ Մեծարենցը խորհրդանշող քանի մը անմահ գործերէն մէկը: Ինչո՞ւ: Արդեօք միայն անոր համար որ այդ բանաստեղծութիւնը Իս-

Թանպուլահայ նշանաւոր ասմունքողին կողմէ հիանալի մեկնաբանութեամբ մը առնուազն հարիւր անգամ արտասանուած ըլլալու բա՛խտը ունեցած է: Այդ մէկը մեծ բախտաւորութիւն է, կասկած չկայ: Բայց այդքան չէ՛ անշուշտ: Մեծարենցի այս առաջին «Սիրերգ»ը ստեղծագործական բացառիկ վայրկեանի մը պտուղն է, հիանալի երաժշտականութեամբ մը օժտուած եւ իւրաքանչիւր տողը անջատ գեղեցկութեամբ մը լիացած: Ինչպէս Մեծարենցի բազմաթիւ բանաստեղծութիւնները, այս մէկն ալ կը բաղկանայ ընդամէնը 12 տողերէ: Քիչ է: Բայց լաւ որ մէկ տող իսկ աւելի չէ: Բանաստեղծութիւնը այնպէս մը յագեցած ու իր լրումին հասած է, որ թերեւս ստորակէտ մ'իսկ աւելի պիտի գար:

Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագի՛ն,
հաշիշով օծուց ու քալասանով.
լուսեղէն մամբէն ես կ'անցնիմ գիճով՝
գիշերն անոյշ է, գիշերն հեշտագի՛ն...

Այսքան պարզ ու այսքան գեղեցիկ: Չորս գեղեցիկ տողե՛ր, երկուքը կրկնութիւն: Կրկնութիւն, որ երաժշտութեան մայր կշռոյթն է: Եւ այդ կշռոյթը պիտի կրկնուի յաջորդող երկու տուներուն մէջ ալ:

Համբոյրներ կուգան հովէն ու ծովէն,
համբոյր լոյսէն՝ որ չորս դիս կը ծաղկի.
այս գիշեր Տօն է հոգւոյս՝ Կիրակի,
համբոյրներ կուգան հովէն ու ծովէն:

Կրնանք հարիւր անգամ կրկնել սա չորս տողերէն երկուքը. «Համբոյրներ կուգան հովէն ու ծովէն», եւ «Այս գիշեր Տօն է հոգւոյս՝ Կիրակի»:

Ի՞նչ մեղք որ բանաստեղծին հոգևոյն այս տօնական
Կիրակին տխուր պատկեր մը ունի իր ետին: Պիտի
կարդանք այդ պատկերին մասին եւ պիտի զգանք, որ
մենք այս հրաշալի բանաստեղծութիւնը կը պարտինք
բանաստեղծութեան սա վերջին չորս տողերէն
ներչնչուած ահաւոր տխրութեան:

Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի՛,
շրթումքս եմ ծարաւ միակ համբոյրիմ...:
Յնծագիմ գիշերն է լոյս ու լուսիմ՝
քայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի...

Մեծարենցին համար գիշերները միշտ եղած են
«հեշտագին»: Ան անհուն հեշտանք ու գեղեցկութիւն
գտած է գիշերային ժամերուն մէջ: Մենք աւելի վերջ
պիտի դանդաղինք բանաստեղծին այդ տրամադրու-
թեան վրայ: Հոս ալ նոյն տրամադրութիւնը կ'իշխէ:
Գիշերը հեշտագին է, հաշիշով ու բալասանով օծուն
է: Բանաստեղծը գիտով է այդ գեղեցկութեան զիմաց
եւ իր կուրծքն ու երեսները կը բանայ հովէն ու ծովէն
հասնող համբոյրներու: «Համբոյրներ կուզան հովէն
ու ծովէն»: Քիչ մը տարբեր գետնի մը վրայ նոյնը
զգացած էր Մեծարենցի ժամանակակից միւս հսկան,
Դանիէլ Վարուժանը, որ ցորեաններուն կը նայէր ու
կը գոչէր. «Հովեր կ'անցնին, ծովեր կ'անցնին»: Մեծարենց
ցորեանի հետ գործ չունի: Հովերէն ու
ծովերէն հասնող համբոյրներն ալ, որքան գեղեցիկ
ըլլան, մէկ բանի կը ծառայեն: Իրեն կը յիշեցնեն
թէ այդ համբոյրները իրական չեն, թէ իր շրթները
ծարաւ են իրական համբոյրի մը: Եւ այդ իրական համ-
բոյրը պիտի չգայ, որովհետեւ հիւանդ բանաստեղծին
հոգւոյն լոյսը քիչ քիչ կը մաշի:

Բնաւ կասկած չունենանք որ այս սքանչելի բանաս-

տեղծութիւնը երբեք գրուած պիտի չըլլար, եթէ Մեծարենց այդ երիտասարդ հասակին հիւանդացած ու մահուան դատապարտուած չըլլար: Մեր գրականութեան համար սուղ, շատ սուղ արժաժ քանաստեղծութիւն մըն է այս եւ այդ հանգամանքը արդէն կը կրկնապատկէ այդ քանաստեղծութեան արժէքը: Կշիռին մէկ նժարին մէջ ամբողջ Մեծարենցի մը ճակատագիրը կայ, միւս նժարին մէջ՝ 12 տողերէ բաղկացեալ այս քանաստեղծութիւնը: Թուաբանական թուանշաններու չենք վերածեր մէկուն կամ միւսին արժէքը, բայց երկուքն ալ մեր կուրծքին կը սեղմենք եւ անկէ վերջ կ'անդրադառնանք թէ ի՞նչ է տառապանքին տեղը գրական ստեղծագործութիւններուն մէջ: Անոնք որոնք երկար տարիներ երջանիկ կ'ապրին ու բաւական ալ իմաստուն են հասկնալու համար այսպիսի քանաստեղծութեան մը գեղեցկութիւնը, պահ մը գլխարկ պէտք է հանեն Մեծարենցի նման տարաբախտ ու վաղամեռիկ արուեստագէտներէ մերժուած երեսուն, քառասուն տարիներուն առջեւ: Պէտք է գլխարկ հանեն քսան տարեկան քանաստեղծի մը առջեւ, որ շուրջը ցնձագին գիշերուան մը լոյսերն ու լուսինը կը տեսնէր, բայց կը զգար որ իր հոգւոյն լոյսը քիչ քիչ կը մաշէր...

ՅԱՅԳ (1)

Մեծարենցի բանաստեղծական ստեղծագործութեան ու բառամթերքին մէջ յաճախանք մըն է «ցայգ» բառը: Մեր այս սիրելի բանաստեղծին երկրպագուները նշմարած ըլլալու են որ ան շատ կը սիրէ այս բառը եւ յաճախակի կերպով կը գործածէ զայն: «Ցայգ»ը, բառական իմաստով «մինչեւ այգ» կը նշանակէ, գիշերային յառաջացեալ ժամն է ան, որ կ'երկարի մինչեւ այգ, մինչեւ առաւօտեան առաջին լոյսը: Բանաստեղծը կը սիրէ «ցայգ»ը, եւ այդ բառով շինուած խորագիրներով գրած է բազմաթիւ բանաստեղծութիւններ: «Ցայգանուագ», «Ցայգային», «Ցայգանկար», «Ցայգերգ», եւ քանի որ «Ցայգ» բառին անմիջապէս կը կապուի նաեւ «Այգ» բառը, «Այգերգ», «Այգային»: Պէտք չունինք բանաստեղծին հիւանդ մարդու հոգեբանութեան կապել գիշերային ժամերու նկատմամբ զգացուած այս նախասիրութիւնը: Ընդհակառակը: Տրամաբանութիւնը մեզ կը հրաւիրէ մտածելու թէ հիւանդները չեն սիրեր գիշերային ժամերը: Մեծարենց գիշերային ժամը կը սիրէ, որովհետեւ բառին իրական իմաստով բանաստեղծ է եւ բանաստեղծները կը սիրեն գիշերուան այն ժամերը որոնք լեցուն են խորհուրդով ու ներշնչումով:

Վերեւ յիշուած բանաստեղծութիւններէն զատ Մեծարենց ունի նաեւ արձակ էջ մը, դարձեալ «Ցայգային» խորագրով: Արձակով գրուած բանաստեղծութիւն մըն է այդ, ուր մեր բանաստեղծը կը պատմէ թէ որքան եւ ինչո՞ւ կը սիրէ գիշերը:

Կը սիրեմ թափառիլ գիշերիմ մէջ, գիշերիմ մէջ, ուր այգում դէմ, երազի անո՛յշ ծաղիկներ, ձիւնէ փթթումներով կը քացուիմ հոգիներու շուշան

համբարյրիմ, գիշերիմ մէջ՝ ուր գետեզրին մօտէն
լսուող կոչնակիմ զամգիւնը կ'օրրէ զգացմունքները:

... Ու բոլոր մրտենիները, բուրումնալիք, դալար
համբարյրներ կը սոսաւեն հոլանի միջոցիմ մէջ:
Պարզկայ գիշերուան սիւքը կ'անցնի տերեւախիտ
թաւուտիմ միշդ սրտիմ ընդմէջէն, սարսուռներ
պտըտցնելով հոն: Ու ես կը մտածեմ, աչքերս կիսա-
փակ ու յոգնած, գլուխս իարի մը յեցած եւ հոգիս
հեշտանքով ու տենդով լեցուն, ես կը մտածեմ՝:

Հովը, գիւնով աղջիկ մըն է կարծես հովը, ծփացիկ
պարեգօտով հո՛վը, գիշերուան դողահար ու
բուրումնաւէ՛տ հովը, որ ջուրերում վրայ խօ՛լ
ու տատանուտ շուրջպար մը կը դառնայ յուլօրէն,
գիշերիմ մէջ՝ որ ցրտիմ է ու դողդոջուն:

Քանի մը տողերուն վրայէն ցատկելով է որ հոս
արտագրեցինք արձակ այս բանաստեղծութեան նկարա-
զեղ տողերը, որոնք մեզի կը մատնեն հոգեբանութիւնը
գիշերասէր բանաստեղծին: Հոս կարծես յստակ պատ-
կերով կը տեսնենք թէ բանաստեղծը ինչու կը սիրէ
գիշերը եւ թէ ինչու յաճախ կը խօսի գիշերուան
ժամերուն մասին: Բայց արձակ այս էջը չէ վերջացած:
Կը մնան վերջին երեք տողերը, որոնք յանկարծ տարբեր
մթնոլորտով մը պիտի փակեն գիշերուան ժամերուն
նուիրուած այս էջը:

Կը սիրեմ ես թափառիլ ինչ հոգիիդ գիշերիմ
մէջ, ո՛վ կիմ, գիշերիմ մէջ ինչ հոգիի՛դ, որ տրտում
է եւ ահաւոր, լայն ու հեշտագիմ, կրճոտ ու
խանդարորք, ցրտիմ ու դողահար:

Ահա որ բանաստեղծը անակնկալ վերջին չորս տողերով
բնութեան գիշերը նոյնացուց կնոջ մը հոգիին գի-

չերուական հետ: Պիտի չզարմանանք որ բանաստեղծը կը սիրէ թափառիլ այդ երկու գիշերներուն մէջ, երկուքն ալ միթին ու ահաւոր, երկուքն ալ հեշտագին ու կրքոտ, երկուքն ալ ցուրտ ու դողահար: Բնութեան բոլոր ցայգանուազներն ու ցայգերը վերջին հաշուով բանաստեղծը պիտի առաջնորդեն դէպի հոգիներու գիշերային աշխարհը, նախ՝ կնոջ մը հոգիին գիշերային, ապա՝ իր իսկ հոգիին գիշերային աշխարհը:

Չենք գիտեր թէ Մեծարենց արձակ այս էջը գրած է իր նշանաւոր «Սիրերգ»էն առաջ, թէ վերջը: Յիշենք «Սիրերգ»ին քանի մը տողերը.

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագի՛ն,
հաշիշով օծուի ու քալասանով.
Համբոյրներ կուգան հովէն ու ծովէն
համբոյր լոյսէն՝ որ չորս դիւ կը ծաղկի:

Եւ այս տողերը բաղդատենք վերոյիշեալ արձակ էջին առաջին քանի մը տողերուն հետ.

Կը սիրեմ թափառիլ գիշերին մէջ, գիշերին մէջ,
ուր այգում դէմ, երազի անո՛յշ ծաղիկներ, ձիւնէ
փթթումներով կը բացուին հոգիներու շուշամ
համբոյրին:

Երկուքին մէջ ալ կը գտնենք նոյն միթնուորտը, որ բանաստեղծին սիրածն է: Բայց մենք գիտենք կամ կը զգանք նաեւ որ բանաստեղծը առանձին է գիշերային ժամերու այդ կախարդանքին դիմաց: Կամ երջանիկ չէ այդ կախարդանքին դիմաց: Որքա՛ն ալ գեղեցիկ ըլլայ գիշերային այդ ժամը, բանաստեղծը լրիւ չի վայելեր զայն, բան մը պակաս է իր հոգեբանութեան մէջ եւ ատիկա անպայման հաւատարիմ այն սիրելին

է որ նոյնութեամբ պիտի վերադարձնէր բանաստեղծին սէրն ու գինովութիւնը:

Միայն թէ հոգեբանական գիտութիւնները մեզի կը թելադրեն սա ճշմարտութիւնը. մարդ գիշերուան գեղեցկութեան շատ աւելի կ'անդրադառնայ, երբ առանձին է այդ գեղեցկութեան դիմաց:

ՅԱՅԳ (2)

Մեծարենց գիշերային յուզումներու ազդեցութեան տակ է որ պիտի հիւսէ տողեր, որոնք թերեւս Մեծարենցին միւս գլուխ-գործոցներուն չափ չեն անմահացած, որոնք սակայն մեզի կ'օգնեն որպէսզի տեսնենք թէ ինչ մակարդակով բանաստեղծ մը կար անոր մտածումներուն մէջ:

Կարգանք պատահական տողեր «Ցայգանուազ» խորագրեալ բանաստեղծութենէն: Մէկ կողմէ ալ տեսնենք թէ բանաստեղծը ինչպէս հոս եւս կը գործածէ այն քանի մը բառերը, որոնց յաճախ կը հանդիպինք իր բանաստեղծութիւններուն մէջ, ինչպէս՝ «սիրերդ», «գիշերն երջանիկ», «չափիւղայ» կամ «հեշտագին»:

Կուգայ սիրերգն հեղեղատիմ
անտառներու մէջ մենիկ
երբ ժխորներ պահ մ'ընդհատիմ,
հասնի գիշերն երջանիկ:
Արեւելքի գիշեր մը ջիմջ
շափիւղազարդ երկիմֆով,
ուր հեշտութիւն է ամէն ինչ,
ամէն իր լի բուրմունքով:
Ու կը շրջի անտես ոգիմ
հոն անտառի ծառերում՝

Խարշափն որոնց թռյլ, հեշտագիւն,
կը նուագէ օրօրուն:

Յայգանուագ կոչուած է այս բանաստեղծութիւնը:
Ձայգանուագ, թէ ցայգանկար: Պիտի ըսենք՝ երկուքն
ալ: Բայց նուագ ըլլայ կամ նկար, այս գեղեցկութիւնը
յանկարծ պիտի յանգի պոռթկումի մը, բողոքի մը:

Դեռ միւնչեւ ե՞րբ, ըսէ, հոգիս,
դեռ միւնչեւ ե՞րբ տառապիմ՝
պրպտելով անբջանքիս
թօշ ծաղիկը մտերիմ:
Գուցէ վաղը մթնէ հոգիս,
գուցէ դո՛ւն ալ թարշամիս,
մ'եղծեր հմայքն տենչանքիս
ու ծաղիկը պաշտումիս:

Հոս ալ բանաստեղծը անձնատուր է նոյն հոգեբա-
նութեան: Գիշերուան գեղեցկութիւնը կը տառապեցնէ
զինքը ու հարց կուտայ. «Դեռ միւնչեւ ե՞րբ պիտի
տառապիմ, ըսէ՛, հոգիս»:

Ահաւասիկ քանի մը պատառիկներ ուրիշ բանաս-
տեղծութենէ մը որուն խորագիրն է «Յայգային»:

Լուսնի մահիկն երբ
սանդուխներու վրայ
մեղմով կը տեղայ
լոյծ, անձրեւակերպ
սահանքն իմ լոյսին
եւ երբ մանիշակ
գոլորշիներուն
մշուշն անապակ
կը ծաղկի թրթռում

Ժովերում վրայ,
խորն իմ սեմեակիս
կը հանգչի հոգիս.
փակաչ՛ք ու անթարթ
կը ծփամ հանդարտ
ստուերի գորշ գորշ
լնակներում մէջ:

Բանաստեղծը նմանօրինակ տողերով պիտի շարունակէ նկարագրել գիշերային սա վայրկեաններուն գեղեցկութիւնը: Բայց արդիւնքը միշտ նոյնն է:

Հապո՛ւն, կը մեկնիմ
իմ անբջանքիմ
թիթեռներն ամէն,
ու միջոցիմ մէջ
յուշիկ կը գծեն
շառայլ թռիչքիմ
ակօսն հեշտագիմ:

Գիշերուան գեղեցկութեան մէջ մեկնեցան-գացին ահաւասիկ բանաստեղծին երազի թիթեռները: Բանաստեղծը դարձեալ մնաց իր առանձնութեան հետ գլուխ գլխի, կրկին ծամելով այն քանի մը բառերը որոնք իր բառամթերքին ամենասիրելիներն են. «անըջանք», «թիթեռ», «յուշիկ» կամ «հեշտագին»:

Հիմա կարդանք քանի մը տողեր բանաստեղծութենէ մը, որուն խորագիրն է «Յայգանկար», դարձեալ գրուած ցայգի, այսինքն գիշերային ժամերու կախարդանքէն հասնող ներշնչումով.

Համատարած անդորրութեամ մը մէջէն,
կիսաթափանց մշուշներում մէջ հալած

ուրուագիծը տուներու՝
որոնց լայնաֆթիթ պատուհաններէն
կը ժայթփեն
լոյսի ցայտփեր՝ տարփագին ծաղիկներուն պլլուած:
Ու հեշտոտ ու մարմրուն
աղաղակն ալ նուագներուն լարաւոր
կը ծաղկեցնեն դիւթանքն անդորրիկ
գիշերուան մը երջանիկ:

Ասիկա մէկն է այն սակաւաթիւ բանաստեղծութիւն-
ներէն, որոնք տխուր շեշտ մը չունին վերջաւո-
րութեան: Բանաստեղծը հոս չի յագենար նկարագրելէ
գիշերուան գեղեցկութիւնը ու բանաստեղծութիւնը
կ'աւարտէ սա տողերով.

.... ուր երկիմփն ալ կը քնանայ
կապոյտներու խորհուրդիմ մէջ երագելով
վաղորդայններն երջանիկ:

ՅԱՅԳ (3)

Ցայգ բառէն ներչնչուած ուրիշ բանաստեղծութիւն
մըն ալ ունինք Մեծարենցէն, որ կոչուեր է «Ցայգերգ»:
Այս ալ տարբեր սիրերգ մըն է, այս անգամ առանց
«Սիրերգ» կոչուած ըլլալու: Այս բանաստեղծութեան
մէջ ալ կը տիրէ Մեծարենցեան մեղի ծանօթ մթնոլոր-
տը: Կարդա՛նք ուրեմն.

Դադրեցան ձայներն ամէն
ցերեկուան ժխորներուն,
կը հնչեն բայց հոգւոյս մէջ
դեռ սիրոյդ երգերն անհուն:
Կը հիւծիմ ցովքերն հիւանդ

գիշերուան մեղկ լոյսերում,
կը փայլի հոգւոյս մէջ վառ
տարփանքիդ բոցը սիրում:
Կը նիրհենք ինչի մէջ խոր
թմրիքով իրերն ամէն,
կը յուզուի հոգին արթում
ինչ սիրոյդ թումնդ պաշտումէն:
Թո՛ղ մարին լոյսերն ամէն
ու մեռնին յոյզ ու ժխոր,
կ'ուռնանայ, կեանքոտ յաւետ,
սէրդ անջինջ իմ հոգւոյս խոր:

Եթէ աշակերտը գրականութեան ուսուցչին հարցնէ
թէ այս բանաստեղծութեան մէջ ինչ բան լաւ է եւ
ինչ բան լաւ չէ, ուսուցիչը ըսելիք չատ բան պիտի
գտնէ: Նախ պիտի պատմէ Մեծարենցի սէրը գիշերային
ժամերու, ցայգային ժամերու նկատմամբ: Մեծարենցի
համար գիշերային ժամը այն մէկն է ուր ամէն ինչ
կը մտնէ խոր քունի մէջ, բայց հոգին արթուն կը
մնայ ու կը լեցուի սիրելիի մը սիրով: Պէտք է դադրին
ցերեկուան ժխորները, որպէսզի հնչել սկսի սիրելիի
մը երգը: Ասիկա մեր բանաստեղծին նախասիրած
մթնոլորտն է: Քանի հիւծին գիշերուան տկար ու
հիւանդ լոյսերը, այնքան կը փայլի սիրելիի մը տար-
փանքին բոցը: Ուրեմն այս բանաստեղծութիւնը մեզի
կը բերէ Մեծարենցի սիրած մթնոլորտը: Եւ մեզի
սիրելի կը դառնայ անով որ այս բանաստեղծութեան
մէջ եւս տառապանք չկայ: Բանաստեղծը տառապանքով
չէ՛ որ կը խօսի անծանօթ սիրելիի մը սիրերգին ու
տարփանքին մասին:

Բայց ուսուցիչը աշակերտին դիտել պիտի տայ նաեւ
որ այս բանաստեղծութիւնը բաներ մը կորսնցուցած
է յանգերու ու կշռոյթի հաւատարիմ մնալու

ստիպողութեան մը պատճառաւ: Գործածուած ստորոգելիներն ու ածականները շփոթ պատկանելիութիւն կրնան ունենալ: Օրինակ՝

Կը փայլի հոգւոյս մէջ վառ
տարփանքիդ բոցը սիրուն:

Բանաստեղծը անշուշտ որ այստեղ «վառ» ածականը գործածած է «կը փայլի» բային համար, այսինքն ըսել ուզած է «վառ կը փայլի»: Բայց կարելի է կարծել որ «վառ»ը կը պատկանի «տարփանք»ին, թէ բանաստեղծը ուզած է խօսիլ «վառ տարփանք»ի մասին:

Ուսուցիչը պիտի բացատրէ թէ որքա՛ն դժուար է բանաստեղծութիւն մը ճիշդ կարդալը, եւ իբր օրինակ պիտի նշէ սա երկու տողերը.

Կը հիւծիմ ցոլքերն հիւանդ
գիշերուան մեղկ լոյսերուն:

Այստեղ անկասկած «հիւանդ»ը կը պատկանի «ցոլք»ին, բայց մէկը եթէ սխալ կարդայ այս երկու տողերը, կրնայ կարծել որ «հիւանդ»ը կը պատկանի անմիջապէս անոր յաջորդող «գիշեր» բառին: «Կը հիւծին հիւանդ ցոլքերը գիշերուան մեղկ լոյսերուն», ըսել կ'ուզէ բանաստեղծը եւ ոչ թէ «Կը հիւծին ցոլքերը - հիւանդ գիշերուան մեղկ լոյսերուն»:

Ուսուցիչը կրնայ տալ նաեւ սա օրինակը.

Կը միքիեմ բուռի մէջ խոր
թմբիրով իրերն ամէն:

Առաջին տողի «խոր»ը կը պատկանի ո՛չ թէ «նիրհեն» բային, այլ «թմբիր» գոյականին: Խոր թմբիրով կը

նիրհեն իրերն ամէն: Այսպէս ըսել կ'ուզէ բանաստեղծը: Բայց «խոր»ը վերը մնացած է, եւ «[Ժմբիրը» վար իջած է, բան մը որ կը կաղացնէ ընթերցումը, կը դժուարացնէ իմաստի ընկալումը:

Թող արտօնուի որ անդրադառնանք վերջին կաղացումի մըն ալ.

Թող մենմիմ յոյզ ու ժխտք,
կ'ուռնանայ, կեանքոտ յաւէտ,
սէրդ անջինջ իմ հոգւոյս խոր:

Սա վերջին բառը, «խոր», ի՞նչ կը նշանակէ այստեղ: Բանաստեղծը իր «խոր հոգւոյն», այսինքն իր խորունկ հոգւոյն մասի՞ն է որ կը խօսի: Սիրելիին անջինջ սէրը կ'ուռնանայ բանաստեղծին «խորունկ հոգիի՞ն մէջ»: Ո՛չ: «Խոր»ը այստեղ գործածուած է ո՛չ թէ «խորունկ» ածականի իմաստով, այլ «խորը», «խորութեան մէջ» իմաստով: Բանաստեղծը ըսել կ'ուզէ. «Սէրդ կ'ուռնանայ իմ հոգւոյս խոր(ը)»: Մեր այսօրուան լեզուով «ը» մը պակաս է «խոր»ին ետին: Բանաստեղծը աւելի հասկնալի կը դառնար եթէ «հոգւոյս խորը» գրէր, բայց այս անգամ «խորը» բառը յանգ պիտի չդառնար վերը գործածուած «ժխոր» բառին:

Անտարակոյս միայն Մեծարենցին այս բանաստեղծութիւնը չէ՛ որ կը տառապի նմանօրինակ կաղացումներէ: Չկայ բանաստեղծ մը, որուն գործերուն մէջ նմանօրինակ կաղացումներ չտեսնուին եթէ բառերը դիտուին խոշորացոյցով կամ եթէ բանաստեղծութիւնը կարգացուի ուշադիր վերլուծումով: Առարկութիւն չունինք: «Արուեստ քերթողական» կոչուածը յաճախ տուրք կը մատուցանէ նմանօրինակ կաղացումներու եւ ատոր համար մեզմէ ներողութիւն ալ չի խնդրեր:

ՅԱՅԳ (4)

Հիմա ունինք «Յայգ» բառէն ներչնչուած բանաստեղծութիւն մը եւս, զոր պիտի չկարենանք անտեսել քանի որ ան հրաշալիօրէն կը ցոլացնէ այն միսթիք ու բնութեան հետ նոյնանալու տրամադրութիւնը զոր Մեծարենց ունեցած է իր բանաստեղծական յուզումներուն մէջ: Մեր սիրելի քերթողը այս բանաստեղծութեան համար ընտրած է «Յայգն է պայծառ» վերնագիրը: Միայն ցայգը չէ որ պայծառ է հոս, պայծառ է նաեւ հոգեվիճակը Մեծարենցին, որ ինքզինք պատրաստ կը նկատէ յանձնուելու գիշերուան ցոլցլանքին, իր հոգին լեցնելու անծանօթ աշխարհներու կրկներեւոյթներով եւ ճախրելու՝ դէպի անհուն:

Մանաւանդ իր վերջին չորս տողերով այս բանաստեղծութիւնը հիմնովին պիտի տարբերի Մեծարենցեան մեզի ծանօթ հոգեբանութենէն: Բայց անկէ առաջ պտոյտ մը ընենք բանաստեղծութեան սկզբնական մասի քանի մը տողերուն մէջ:

Յայգն է պայծառ անհունօրէն
ցոլցլանքովն իր խօլապար.

Պարզկայ ցայգուն անուրջին մէջ
լուալ կ'ուզեմ մերմակ հոգիս,
եւ հրահրել՝ երբեմնի շէջ
աշտանակներս իմ երագիս:
Մտածումս կ'անցնի մորէն
շաւիղներէն իր լուսաւէտ,
հեշտութիւններ հոգւոյս յաւէտ
բերելով իր մամբաներէն:
Գիմով եմ ես ծաղկանց բոյրէն,

տարաշխարհիկ ու գրաւիչ,
ու ճայներէն ալ՝ որ քիչ քիչ
իմ երազներս կ'օրօրեն:
Եւ անժամօթ աշխարհներում՝
ամեզրիմ մէջ խորհրդագեղ,
կ'անդրադառնայ մէջն իմ հոգում
կրկներեւոյթը գունագեղ:

Շարունակելէ առաջ ընթերցումը, պահ մը անդրադառնանք որ բանաստեղծը կրկին յանձնուած է գիշերային ժամերու հեշտութեան մը, որ իր սիրած միջնորդն է, կամ կրկին գինով է ծաղիկներու բուրմունքէն, որ դարձեալ մնայուն տրամադրութիւն է Մեծարենցեան բանաստեղծութեան մէջ: Բայց, ինչպէս պիտի տեսնուի, այդ տրամադրութիւնը տակաւ կը բացուի դէպի անձանօթ աշխարհներ, որոնք առկայ են խորհրդագեղ անեզրին մէջ: Ասիկա նոր տրամադրութիւն մըն է Մեծարենցին մէջ: Վերել յիշատակուած վերջին տողերը քիչ մը շփոթ կ'երեւին եթէ տպագրական սխալ մը չէ սպրդած «կ'անդրադառնայ մէջն իմ հոգւոյն - կրկներեւոյթը գունագեղ» տողերուն մէջ: Այնուհանդերձ, ինչպէս արդէն ամէնէն վերջը յայտնի պիտի դառնայ, Մեծարենց այստեղ ունի դէպի անձայրածիր երկնքի խորհրդաւոր աշխարհները ճախրելու տրամադրութիւն մը:

Պիտի ծծեմ ես անդադար
հոծ երազամբն անոնց քալիմ,
ու շողերմ՝ որ կը փալփիմ՝
ոսկեպաղպաջ ինչպէս մեկտար:
Պիտի անցնիմ ես խանդավառ
այս լուստոռոգ ուղիներէն,
եւ ուխտաւոր ուղեմ՛ուար՝

խորհրդածուփ քափառելէն:
Պիտի անցնիմ ես Անհունիմ
յաւերժալուռ երկիմՔներէն,
միմչեւ յոյգերս ամէն թօշմիմ՝
ու ես երկիր դառնամ նորէն:

Մեծարենցի երազը յստակ է: Ան արդէն վառեց իր հին երազներու մարած աշտանակները եւ ճամբայ ելաւ դէպի Անհուն: Պիտի անցնի յաւերժօրէն լուռ մնացող երկիրնքներու այդ Անհունէն, ամենուրեք պիտի ցանկ իր յոյգերն ու յուզումները մինչեւ որ անոնք թօշնին եւ իրենց ոյժը կորսնցնեն: Անկէ վերջ բանաստեղծը կրկին պիտի վերադառնայ երկիր: Մեծարենց հողը չէ լքած, չէ դադրած կոխելէ երկրին վրայ: Անոր ցանկութիւնը չէ՛ անհետանալ Անհունին մէջ, կամ նոյնանալ Անհունին հետ: Անոր ցանկութիւնն է պահ մը սիրաբանիլ Անհունին հետ, յետոյ կրկին վերադառնալ մեր երկիրը: Այս տեսակէտով է որ քիչ մը տարբեր մթնոլորտ մը ու տրամադրութիւն մը կը տեսնենք «Ցայգայիս ժամեր»է ներչնչուած այս բանաստեղծութեան մէջ:

Գրականութեան աշակերտը թերեւս քանի մը անձանօթ կամ նոր բառեր պիտի գտնէ սա վերջին տողերուն մէջ եւ բացատրութիւն պիտի ուզէ իր ուսուցիչէն: Գրականութեան ուսուցիչի մը համար ինչ հաճոյք է անդրադառնալ որ Մեծարենց այստեղ ալ, ինչպէս ուրիշ բանաստեղծութիւններու մէջ, շարունակ կը հարըստացնէ մեր շքեղ Արեւմտահայերէնը եւ մեզի կը հրամցնէ բաղադրեալ սիրուն բառեր, որոնց հնարիչը ինքն է ամենայն հաւանականութեամբ: Նշենք այս բառերէն մէկ քանին.

«Ոսկեպաղպաղ», որ շինուեր է ոսկրի ու պաղպաղելու միացումէն:

«Լուստոռոգ», որ շինուներ է լոյս ու ոռոգել բառերէն:
«Ուղեմոյար», որ շինուներ է ուղի եւ մոլորիլ բառերէն:
«Խորհրդածուփ», որ շինուներ է խորհուրդ եւ ծփալ
բառերէն:

«Յաւերժալուռ», որ շինուներ է յաւերժ եւ լուռ
բառերէն:

Այս բոլորը ընդամէնը ինը տողերու մէջ:

Մեծարենց, դէպի Անհուն իր գնացքին մէջ, մէկ կողմէ
կը ցանէ իր յոյգերը, մէկ կողմէ ալ մեր Մեծաաքանչիւ
համար կը քաղէ նոր բառեր:

ԱՅԳ (1)

Տեսանք ու դեռ ալ պիտի տեսնենք թէ Մեծարենցեան
բանաստեղծութեան ու զգայնութեան մէջ որքան
տարածուն տեղ ունի «Յայգ» բառը: Յայգ, այսինքն
գիշերային այն ժամը որ կ'երկարի մինչեւ այգ, մինչեւ
առաւօտեան լոյս, լուսայգ: Մեծարենց միշտ ներ-
շնչումներ գտած է գիշերային ժամերու եւ երազանքի
մէջ: Բայց անմիջապէս ըսենք որ ան չէ կրցած
անտարբեր մնալ նաեւ «այգ»ին նկատմամբ, առաւօտ-
եան այն կանուխ ժամերու նկատմամբ՝ որոնք «խոր
թմբիւրէ» է կ'արթնցնեն բնութիւնն ու մարդոց տրա-
մադրութիւնները: Գիշերուան վերջին վայրկեաններն
են ասոնք, պատրաստ՝ խառնուելու օրուան առաջին
լոյսերուն՝ որոնք հագիւ թէ սկսած են ծագիլ: Խաւարի
ու լոյսի խառնուրդ մը՝ որ ներշնչող է: Մեծարենցին
գրականութեան մէջ մենք, այսպէս, կը գտնենք նաեւ
«այգ»ի վրայ գրուած բանաստեղծութիւններ, որոնք
եղբայրացած են «ցայգ»ի վրայ գրուած բանաստեղծու-
թիւններուն հետ:

Ահա անոնցմէ մէկը, որ դարձեալ երգ մըն է, այս

անգամ ո՛չ թէ «Սիրերգ» կամ ո՛չ թէ «Ցայգերգ», այլ պարզապէս «Այգերգ»: Այս մէկն ալ մեզի կը բերէ բնութեան շատ գեղեցիկ մէկ նկարագրականը եւ մեզի համար կը գծանկարէ գիշերային ժամերու սիրահար Մեծարենցին մօտ առաւօտեան կենսատու պահերու սիրահար ուրիշ Մեծարենցի մը դիմագծութիւնը:

Սարերում մէջ կը կոծկոծի այգում՝
կոչնակը վանքին,
եղնիկները մթնշաղիմ դէպի գետափ կը դիմեն.
աղջիկ մըն է կարծես հովը՝ գիմով մուրտի
բուրումէն՝
որ ջուրերում վրայ կը դառնայ սարսուռի
պարն հեշտագին:
Վանքին ինքի արահետէն կարաւանները կ'անցնին,
բոժոժներում երգը լալով գիշերին մէջ տրտօրէն.
միմչ կը սպասեմ ջիմջ լոյսերում՝ որոնք ծագիլ
կը յամեն,
ու կը լսեմ շշուկներն՝ որ կը հծծեն մէջը ցանկին:

Մեծարենցեան բանաստեղծութեան բոլոր բառերը գործածուած են վերի քանի մը տողերուն մէջ. այգ, կոչնակ, եղնիկ, մթնշաղ, հով, մուրտի բուրում, հեշտագին, արահետ, բոժոժ, երգ, գիշեր, լոյս, շշուկ, հեծծել: Ըսել չենք ուզեր որ Մեծարենցի բառամթերքը աղքատ է: Ընդհակառակը, ահաւոր կերպով հարուստ է մեր սիրելի բանաստեղծին բառամթերքը: Բայց Մեծարենց ունի բանաստեղծական իր մասնաւոր կլիման եւ այդ կլիմային համար ալ ունի իր մասնաւոր բառերը, որոնց անպայման կը հանդիպինք եթէ իրերայաջորդ քերթուածներ կարդանք իրմէ: Շարունակենք կարդալ վերինը.

Կիրճին խորը, ժայռին ծոցն է գիւղանկարը
փռուած,
տարտամօրէն, հսկայական, արծիւի մը ձեւերով,
մագիլները խորասուզուած խորշերու մէջ մթամած:
Արքշիռ բոյրէն՝ գոր կը բերէ ինծի
առտում անխոռով,
ես կ'երագեմ ծառերում տակ ու կը սպասեմ
խօլաբար
լոյս պարիկին՝ որ իդձերս պսակելու պիտի գար:

Մեծարենցի սիրահարները այս վեց տողերուն մէջէն
ալ պիտի ճանչնան յաճախանքի բազմաթիւ բառեր ինչ-
պէս կիրճ, ծոց, գիւղանկար, տարտամ, խորշ, արքշիռ,
բոյր, լոյսը պարիկին, իղճ, եւայլն: Բայց այս բա-
նաստեղծութեան մէջ Մեծարենց իր իղճերուն պսա-
կումին համար «խօլաբար» կը սպասէ ո՛չ թէ գիշերային
ժամերու ժամանման, այլ այգաբացի լոյս պարիկին,
այգաբացի հրաշագործ լոյսերուն:

Հիմա պիտի կարդանք դարձեալ առաւօտեան ժամերու
գինովութենէն ներշնչուած գեղեցիկ ուրիշ կտոր մը,
որուն վերնագիրն է՝ «Այգային»:

Տանիքներում վրայ մշուշը սնդուս լաթեր
կը փռէ,
գամբաններում վրայ արեւը՝ շոգոլիներ ոսկեման:
Որմին մօտիկ սրինգն անվերջ՝ մեղեդիներ արոյրէ,
որմին վրան՝ ափոքն սթափ գարթօնքի
գիչն անսահման,
որմին դիմաց՝ աղջնակ մը տարփոտ երգեր կ'ուրբէ:

Եթէ ընթերցողը հարցնէ թէ այս գեղեցիկ նկարագրա-
կանին մէջ ի՞նչ կը նշանակէ «շոգոլի ոսկեման»ը,
պատասխանենք. «Ոսկիով մանուած շոգի, գոլորշի»:

Սէր-Արեւիդ բոցմ երկարէ խորերէն հոգւոյս իմ
պատանի,
գերթ արեւիմ լեզուակն ոսկի՝ որ կը ծծէ մշուշմ
այգումն.
ն՞ւր է ճաճանչն, հուրքը ջերմիմ՝ որ մտռախուղմ
առնէ, տանի,
սէր-արեւիդ բոցմ երկարէ խորերն հոգւոյս
իմ պատանի:

Մեծարենցն ալ, Պետրոս Դուրեանի կամ Մատթէոս
Ջարիֆեանի նման, պարբերաբար պահանջքը կը զգայ
յիշեցնելու թէ հիւանդ է: Թէեւ ան իր հոգւոյն համար
է որ կ'ըսէ թէ հիւանդ է, բայց մենք գիտենք թէ հիւան-
դը մարմինն է, ո՛չ թէ հոգին: Հոգին պարզապէս կը
տառապի այն յուսախաբութենէն եւ անյուսութենէն,
զոր մարմնական հիւանդութիւնը կը թելադրէ անոր:

Մեծարենցի հիւանդութիւնն էր որ զինքը դար-
ձուցած էր մարդկային բնկերութենէ կտրուած եւ
բնութեան հետ գլուխ գլխի մնացած առանձին մարդ
մը, որ շարունակ կ'արբենայ ծաղիկներու բուրմունքով
եւ կը ծծէ ցայգային կամ այգային ժամերու
խորհրդաւոր ու մշուշոտ մթնոլորտը: Եթէ հիւանդ
չըլլար Մեծարենց, տարբեր բանաստեղծութիւն մը
պիտի տա՞ր մեզի: Չենք գիտեր:

Բայց հետաքրքրական է անդրադառնալ որ Մեծա-
րենցեան բանաստեղծութեան մէջ գրեթէ բնաւ չկայ
ուրիշ մարդ, գրեթէ ոչինչ կայ մարդկային յարաբե-
րութիւններէ, չկայ կեանքի սա կամ նա գրուագի
տպաւորութիւն, չկայ պատմութիւն, դէպք: Բանաս-
տեղծը միշտ միայն իր «ես»ին հետ գլուխ գլխի է եւ
այդ «ես»ը յանճնած է միայն բնութեան գեղեցկու-
թիւններուն՝ զիչերային կամ առաւօտեան: Մեծարենցի
ամբողջ բանաստեղծութիւնը բնութեան նկարագրու-

Թիւն մըն է: Այդ բնութեանէն ներս երբեմն կը սպրդի անոյշ աղջկան մը պատկերը, սիրելիի մը պատկերը, բայց այդ ալ իրական պատկեր մը չէ եւ ծնունդ է երազանքի կամ երեւակայութեան: Բանաստեղծը, իր կարճատեւ կեանքի վաստակէն ժառանգուած մօտաւորապէս 140 բանաստեղծութիւններու ջախջախիչ մեծամասնութեան մէջ, նոյնիսկ գրեթէ բոլորին մէջ, իրեն խօսակից ունի բնութիւնը, բնութեան տարրերը՝ ինչպէս գիշերը, այգը, արեւը, լուսինը, հազարամէկ գեղահունչ ծաղիկներ, մշուշ, մառախուղ, բուրմունք, հաշիչ կամ բալասան, արիչն ու սարբինան, լեռնային ճամբաներ, հիւղակ մը, ծառ, որոնց դիմաց կը զգայ ուժեղ «Արբեցութիւն» մը: Այդ արբեցութիւնն է որ երբեմն հրաշքով պիտի դառնայ «անանձնական ուրախութիւն», պիտի ուզէ բանաստեղծը տանիլ դէպի համամարդկային սէր, դէպի ուրիշներու ծառայելու կարօտ, բայց Մեծարենց այդպիսի ծառայութեան մը համար չէ որ ստեղծուած է: Ան ստեղծուած է որպէսզի իր պատուհանէն նայի դէպի բնութիւն, դէպի արեւ, դէպի լուսին:

Երէկ գիշեր մռոցեր էիր,
լուսնա՛կ, գիտես,
երէկ գիշեր մռոցեր էիր պատուհանիկս իմ
համեստ:

կամ.

Մահիկ ոսկեսար, այս գիշեր մորէն
սարսռացի լոյսիդ մէջ երանակամ:

ՀԵՇՏԱԳԻՆ

Ըսինք արդէն որ Միսաք Մեծարենցի բանաստեղծութիւնը ամբողջ իր սնունդը կ'առնէ բնութեան գեղեցկութիւններէն: Քայլ մը եւս պիտի առնենք ու պիտի ըսենք որ մեր բանաստեղծը բնութեան պատկերներուն դիմաց միայն հիացում չէ՛ որ կը զգայ, այլ նաեւ կը զգայ հաճութիւն, գոհացում, լիութիւն, մանաւանդ հեշտանք: Ասիկա թերեւս սիրային ապրումի նման ապրում մըն է, որ զգլխիչ է բանաստեղծին համար, հմայիչ, դիւթիչ: Մեծարենցի մասնաւորաբար առաջին հաւաքածոյին մէջ, «Ծիածան», դժուար է գտնել հատ մը որուն մէջ բանաստեղծը չխօսի հեշտանքի, հեշտութեան, հեշտագինի, հեշտի մասին: Դարձուցէք «Ծիածան»ի էջերը եւ տեսէք թէ տակաւին ինչպէս առաջին բանաստեղծութենէն Մեծարենց կը յանձնուի հեշտագին զգայնութիւններու: Քանի դարձնենք էջերը, նոյնը պիտի պատահի: Պիտի տանք օրինակներ.

Թող որ լիառատ ծծեմ հեշտագին
կաթը մեղմահոս լոյսիդ տարփամբին:
(Ձմրան պարզ գիշեր)
Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին
(Սիրերգ)

Հեշտութիւն մը կապոյտի - հանդարտօրէն
կը ժպտի
(Թրթռումներ)

Արեւելի գիշեր մը ջիմջ
ուր հեշտութիւն է ամէն ինչ
(Յայզանուազ)

Ջուրը ցայտփէն ծաղիկ ծաղիկ կը կաթէ.
նուագն անոր կը հեծեծէ հեշտակամ:
(Աքասիաներու շուքին տակ)

Շողա շողա, բարի արևւ, հիւանդ եմ,
Ճառագայթոյ գոլիդ մէջ հեշտագրգիռ.

(Արեւին)

Ակօսն հեշտագիմ՝
որ ձայնիդ կառչած

(Ճայգային)

Ու երբ կ'երգէ ջութակիմ հետ սարսոռն
մեղմածաւալ հեշտերգն իրենց ցայգայիմ...

(Սիրերգ)

Մտածումս կ'անցնի նորէն
շաւիղներէն իր լուսաւէտ
հեշտութիւններ հոգւոյս յաւէտ
բերելով իր մամբաներէն:

Պիտի ըղձամ ես տեսարար
բուրումն անոնց ծաղիկներուն
որոնք հեշտիմ կը դառնան պար:

(Ճայգն է պայծառ)

Խրախութեան աղաղակներ հեշտալուր

(Իրիկուան ձայներ)

ԾԾԵԼ

Մեծարենց, մասնաւորաբար իր սկզբնական բանաստեղծութիւններուն մէջ, որոնք նաեւ ամենագեղեցիկներն ու մնայուններն են, զգալի կը դարձնէ մայր բնութիւնը իր մէջ առնելու եւ իր մէջ հալեցնելու տրամադրութիւն մը: Մեծարենցեան բանաստեղծութիւնը արդէն սկիզբէն մինչեւ վերջ բնական պատկերներու նկարագրութիւն մըն է, խոյանք մըն է այդ բնութիւնը իր մէջ զգալու, այդ բնութիւնը ծծելու ու իր մէջ հալեցնելու: Այս պատճառաւ ալ Մեծարենց

իր ամէնէն նշանաւոր բանաստեղծութիւններուն մէջ շատ սիրեց «ծծել» բառը: Եթէ դարձեալ սկսինք թղթատել «Ծիածան»ի էջերը, ամէն քայլափոխին պիտի կարենանք հանդիպիլ այս կախարդական բառին: Ծծել:

Մտասեւեռում մըն է այս Մեծարենցի մօտ, ինչպէս մտասեւեռում մըն է «համբոյր» բառը իր ամէնէն աննիւթական ու բարոյական իմաստով: Ամէն անգամ որ բանաստեղծը կը կախարդուի բնութեան սա կամ նա գիշերային կամ ցերեկնային տեսարանէն, կ'ուզէ իր թոքերուն մէջ ընդունիլ շունչը գեղեցիկին:

Եթէ օրինակներ տանք, աւելի լաւ պիտի հասկնանք: «Ձմրան պարզ գիշեր»ին մէջ Մեծարենց կը ցանկայ ծծել գիշերային լոյսի կաթը.

Թող որ լիառատ ծծեմ՝ հեշտագիւն
կաթը մեղմահոս լոյսիդ տարփանքին:

Նշանաւոր «Կիրակմուտք»ին մէջ Մեծարենցի տրամադրութիւնը այս անգամ միսթիք է, կամ եկեղեցաշունչ, եւ ան խունկն է որ կ'ուզէ ծծել անօրինակ վերացումով.

Խումկի ծարաւ իմ հոգիս կը ծծէ պահն
այս հանդարտ,
ոսկեկրակ աչքերով բուրվառններն երբ կը մօճին:

«Հովին անցքը» վերնագրով բանաստեղծութեան մէջ Մեծարենց այս անգամ հովն է որ կ'ուզէ քաշել իր թոքերէն ներս.

Կ'ուռի այս գիշեր հովն ալիք ալիք,
կը ծծեմ լեղի սարսափն իր ճամբուն:

Ուրիշ տեղ մըն ալ, «Այգերգ», կը տեսնենք որ մեր սիրելի բանաստեղծը յանկարծ կը յիշէ թէ հիւանդ է եւ կը նայի դէպի արեւ, դէպի բնութեան ծաղիկներուն բուրմունքը.

Պիտի ըմպեմ բոցն արեւիմ, մառագայթի եմ
ծարաւի,
պիտի ծծեմ բոյրն առտուամ՝ հոգւոյս համար
որ հիւանդ է:

Համբուրե՛լ, ըմպե՛լ, ծծե՛լ: Բառեր՝ որոնք սիրելիին կամ գեղեցիկին միանալու, անոր հետ նոյնանալու տենչանք կ'արտայայտեն: Բայց «ծծել»ը կարծես քիչ մը աւելի բանաստեղծական շեշտ մը ունի:

Հիմա հարցնենք անգամ մը: Միայն բառին բանաստեղծական գեղեցկութեանը պատճառաւ է որ Մեծարենց կը սիրէ գործածել «ծծել» բառը: Անտարակոյս ո՛չ: Ճիշդ է որ բանաստեղծը կը սիրէ այս բառը անոր բովանդակած բանաստեղծական ամբողջ գեղեցկութեան պատճառաւ, ինչպէս որ ան կը սիրէ տակաւին ինչ ինչ մասնաւոր բառեր, զոր կրնայինք շատ դիւրութեամբ առանձնացնել եւ որոնք դարձած են Մեծարենցեան բանաստեղծութիւնը յիշեցնող բառեր: Ասիկա ճիշդ է: Բայց ծծել բայը ուրիշ կախարդանք մըն ալ ունի բանաստեղծին համար: Մարդ միայն իր սիրած բանն է որ կը ծծէ, մարդ միայն ծծելով է որ նախ իր բերնին, ապա ամբողջ իր էութեան մէջ կը զգայ սիրուածին համը եւ զայն լրիւ կ'իւրացնէ իր մէջ, անոր հետ կը նոյնացնէ ինքզինք: Ահա թէ ինչու Մեծարենց, գիտակցաբար կամ անգիտակցաբար «ծծել» բայը կը գործածէ ամէն անգամ որ կախարդանքի մը հետ դէմ յանդիման կը մնայ:

Կարդանք սա քանի մը տողերը «Մթնշաղներ»

խորագրեալ բանաստեղծութենէն, ուր Մեծարենց դարձեալ ցայգի ու ցերեկի, խաւարի ու լոյսի միջեւ ալեծփումներ կը զգայ.

Մուօքը կ'իջնէ հոգւոյս՝ ուր վաղուց գիշեր է
արդէն,
Սպասումի՛ ցայգ՝ ուր դեռ չշողաց լո՛յսն երագին,
Հագիւ քիչ մը քոյր ծծած մոռացումին ես վարդէն,
Նորէն քեզի կը դառնամ, ակն արեւիս ոսկեծին:

Հոս ալ վարպետօրէն գործածուած է ծծել բայը: Բանաստեղծը նոյնը ընել կուտայ իր տենչանքներուն, իր փափաքներուն, զորս կը նմանցնէ մեղուներու: «Մեղուները» խորագրեալ բանաստեղծութեան մէջ կը կարդանք որ բանաստեղծին տենչանքները մեղուներու նման ոսկի երիզ մը բանալով թռեր, գացեր են երամ երամ: Հիմա խօսքը այդ տենչանքներուն մասին է.

Արեւակի, սուտակներու ու գիւմրիւթի
փաղփում երամգը ծծելով իրենց չորս դիմ,
ծործորներէն, բոցավայրէն - անցան գացին:

«Ծծել» բառը առանձին չէ Մեծարենցեան բառա-
մթերքին մէջ: Որքան շատ կարդանք Մեծարենցը,
եւ մէկ անգամէն որքան շատ բանաստեղծութիւն
կարդանք Մեծարենցէն, կը տեսնենք որ Մեծարենց,
հակառակ հայերէն լեզուի իր այնքան ճոխ բառա-
պաշարին, յատուկ տկարութիւններ ունի առնուազն
քսան, երեսուն բառերու նկատմամբ, որոնց յաճախ
կը գիմէ իր նկարագրութիւններուն մէջ, առանց
ինքզինք ձանձրացուցիչ ձեւով կրկնելու:

ԱՆԱՆՁՆԱԿԱՆ

Ըսինք արդէն որ Մեծարենցեան բանաստեղծութիւնը իր ընդհանուր գիծերուն մէջ ենթակայական կամ անձնապաշտ բանաստեղծութիւն է: Բանաստեղծը շարունակ ի՛ր զգայնութիւններուն մասին է որ կը խօսի բնութեան պատկերներուն եւ փոփոխութիւններուն դիմաց: Իրմէ զատ թերեւս կայ միայն երեւակայական սիրելի մը, գրեթէ աննիւթական սիրելի մը: Այս բանաստեղծութիւններուն մէջ շատ խօսք չկայ մարդկային յարաբերութիւններու, մարդկային կեանքի ինչ ինչ ուրախ կամ տխուր դէպքերու, գաղափարական, ընկերային կամ քաղաքական մտածումներու մասին: Բանաստեղծութիւններու խորագիրներն իսկ կը բաւեն թելադրելու թէ ի՞նչն է որ կը զբաղեցնէ բանաստեղծին ներշնչումի պահերը: Չմրան գիշեր, թրթռումներ, ցայգանուագ, երագի պահեր, ճերմակ վարդեր, աքասիաներու շուքին տակ, գետափի երազանք, խոնջ իրիկունը, աշնանային հեծութիւններ, հովին անցքը, մթնշաղեր, իղձեր, ուռիներու շուքին տակ, իրիկուան ձայներ, առտուան արեւին մէջ, եւ դեռ այսպիսի «խորագիր»ներ պերճախօս են: Թերեւս բանաստեղծը ժամանակ իսկ չէ ունեցած տակաւին ուրիշներով զբաղելու: Եթէ աւելի երկար կեանք մը տրուած ըլլար իրեն, թերեւս կարգը պիտի գար մարդկային յարաբերութիւններու: Բայց կարգը անոնց չեկաւ, եւ Մեծարենցեան բանաստեղծութիւնը, իր քանի մը տարուան կեանքին մէջ, դատապարտուեցաւ մնալու որպէս բնական պատկներու նկարչութեան հաւաքածոյ մը, որ կտաւին յանձնուեցաւ իրապաշտ, խորհրդապաշտ կամ տպաւորապաշտ նկարիչներու վրձինով:

Բայց Մեծարենցի բանաստեղծութիւններուն մէջ

Հատ մը կ'առանձնանայ մարդասիրական, այլասիրական իր տրամադրութիւններով: Այս բանաստեղծութեան մէջ մեր սիրելի քերթողը կ'ուզէ մոռնալ իր անձը եւ կը ցանկայ տէր դառնալ «անանձնական ուրախութիւն»ներու: Ասիկա արդէն բաւական յայտարարած բանաստեղծութիւն մը ըլլալ կը թուի, քանի որ տեղ չէ գտած Մեծարենցին առաջին երկու քերթողագիրքերուն մէջ «Ծիածան» եւ «Նոր Տաղեր»: «Տուր ինձի, Տէր» կամ «Արդի մարդուն Հայր Մերը» կոչուած այս բացառիկ բանաստեղծութեան մէջ ալ թէեւ Մեծարենց «եսակեղրոն անանձնականութիւն» մը կը ցուցաբերէ, այսինքն անանձնական ուրախութիւնն անգամ կարծես իր սեփական ուրախութեան համար կը խնդրէ, բայց եւ այնպէս այս մէկը հրաշալի բանաստեղծութիւն մըն է եւ կը դառնայ ազամանդ մը Մեծարենցեան բանաստեղծութեան մէջ:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական,
ծաղիկներու պէս գայն ժողովեմ՝ ցամաքուս վրան՝
նայուածքներուն մէջ ամէնուն եւ ամէն օր:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական,
գանգակներու պէս գայն կախեմ ամէն դրան՝
ու գերթ նարօտ ամէն դրան գայն պսակեմ:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական,
ու չըլլայ որ ուրիշներու կոծն ու կակամ
խեղդել ուզեմ ջրվէժիմ մէջ դափիս ձայնիմ:

Ահաւասիկ անանձնական ուրախութեան խնդրանք մը, ուրիշներուն ալ օգտակար ըլլալու, ուրիշներն ալ ուրախացնելու կարելիութեան աղերսանք մը, որ կուգայ ցարդ միայն իր սեփական բանաստեղծական զգայնութիւններուն դափ ու թափ տուած բանաստեղծէ մը:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական,
գայն ջուրերում վրան ձգեմ իրրեւ ուռկան,
գայն իրր արօր պիտաներում ձգեմ վրան:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական,
գայն իրր անձրեւ ցօղեմ ամէն դաշտի վրան,
գայն իրր արեւ քաշխեմ ամէն հորիգոմի:

Հիանալի տողեր են ասոնք, որոնց մէջ մենք կը գտնենք այլասէր ու մարդասէր Մեծարենց մը: Բայց իրականութեան մէջ նոյն Մեծարենցն է, որ «անանձնական բոլոր ուրախութիւններու» մէջ իսկ դարձեալ բնութիւնը կը տեսնէ որպէս բարիք, բնութեան բարիքներուն մասին է որ կը մտածէ որպէս մարդոց միջեւ բաշխելի գործ, հաց ու նպաստ:

Մեծարենցի երկրպագուները անտարակոյս մինչեւ վերջ իրենց սիրելի բանաստեղծը պիտի յիշեն այս բանաստեղծութեամբ, որուն մէջ 15 անգամ կրկնուած է սա «Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական» նախադասութիւնը (Մեծարենց կը սիրէր գրել «ինձ», ո՛չ թէ ինձի): Բնութեան սիրահար ու անանձնական ուրախութիւններու հետամուտ մեր բանաստեղծը սապէս կը վերջացնէ իր «Հայր Մեր»ը.

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական՝
ժողովել՝ յուզուոյն մէջ ամէնում, համայնական
հոգւոյն ամէն մասնիկներում մէջ՝ ամէն ժամ:
Ճամբաներէ՛ն, ու գետերէ՛ն, ու դաշտերէ՛ն,
անտառներէ՛ն, ու լեռներէ՛ն, ու ձորերէ՛ն,
տանիքներէ՛ն, ու տուններէ՛ն, ու դուռներէ՛ն՝
Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական:

Միայն աւարտական այս տողերը պիտի բաւէին որ-
պէսզի այս բանաստեղծութիւնը անմահանար: Մե-

Ճարենց եղաւ ահաւաստիկ իր սիրելի ճամբաներէն,
դաշտերէն, գետերէն, ծաղիկներէն, անտառներէն իսկ
անանձնական ուրախութիւն քաղել ցանկացող բնա-
պաշտ բանաստեղծը: Այդ ուրախութիւնները կրցաւ
քաղել բնականաբար, եւ ի վերջոյ կրցաւ նաեւ զանոնք
ուրիշներու հետ բաժնել ... Հնորհիւ այն
բանաստեղծական վաստակին, զոր ժառանգ թողուց
իբր այլոց ուրախութիւն անանձնական կամ գրական:

ԸԼԼԱՅԻ

Մեծարենցի բանաստեղծական մտերմիկ յուզում-
ներէն հրաժեշտ առնելէ առաջ պիտի ուզէինք անգամ
մը եւս միասնաբար կարդալ այն բանաստեղծութիւնը
որ Մեծարենցի թերեւս ամէնէն ժողովրդական ու
հանրաձանօթ կտորն է: Խօսքը կը վերաբերի «Ըլլայի,
ըլլայի» շարքին եւ այդ շարքէն «հիւղը» անուն կտորին:

Դաշտի մամբու մը վրան,
կամ ստորոտը լերան,
ուղեւորիմ ժամանման
սպասող հիւղն ըլլայի:
Ու գգուամբիս կանչէի
ես մամբորդներն անժաման
ու մամբում վրայ մեմաւոր,
ու մամբում վրայ ռսկեման,
եկուորներում դիմաւոր՝
ծխանիս ծուխն ամպէի:

Ատենօք թերեւս մեծ թիւով գրասէրներ անգիր
գիտէին այս բանաստեղծութեան գոնէ առաջին չորս
տողերը, որոնք գրուած են յուզումով, նաեւ

երաժշտական կշռոյթով: Մեծարենցի բացառիկ գիւտերէն մէկն է այս, ուր կը բաբախէ նաեւ հոգածու հետաքրքրութիւն մը ուրիշներու նկատմամբ, ինչպէս կը բաբախէր «Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանճնական» խորագրեալ քերթուածին մէջ: Բանաստեղծութիւնը շատ կարճ է, ուստի պիտի ցատկենք տողերուն վրայէն ու կանգ պիտի առնենք վերջընթեր տողերուն վրայ.

Ու ձմեռնեքն ալ համբում,
հրաւիրակ գուարթում,
կանգնէի ինձը մամբում
ու ձիւնապատ հէ՛ք մարդում
ես հայրօրէն, լայնարաց
երկու թեւս պարզէի.
միշտ Քաղցրագիմ, միւթացած
հրաւերն ես ըլլայի՛:

Ա՛հ, ըլլայի՛, ըլլայի՛,
դաշտի մամբու մը վրամ
կամ ստորոտը լերամ,
ուղեւորիմ ժամամամ
սպասող հի՛ւղն ըլլայի:

Բանաստեղծութիւնը, այսպէս, կը վերջանայ այն տողերով, որոնցմով սկսած էր:

«Ըլլայի՛»ներու շարքը կը բաղկանայ քանի մը բանաստեղծութիւններէ: Բոլորն ալ նոյնքան յաջող չեն, բայց անոնք բան մը կը խաղցնեն Մեծարենցի սիրահարներուն սրտին մէջ: Օրինակ, «Իրիկունը» անուն բանաստեղծութիւնը.

Սա իրիկունն ըլլայի ես,

եւ հպէի մակտիմ ամէն անցորդի,
չժնադագեղ ու մուադում յամուրդի
սա իրիկումն ըլլայի ես:

Սա իրիկումն ըլլայի ես,
համայնական, չժնադ, քաղցրիկ, լուսագէտ,
եւ ամէնուն տայի հուրժէս, ոսկիէս:
Սա իրիկումն ըլլայի՛ ես:

Հոս եւս մենք կը գտնենք բնութեան հետ նոյնանալու
այն հակումը, զոր տեսած էինք Մեծարենցի մէջ:
Մեծարենց որ շարունակ շնչեց, ծծեց բնութեան բոլոր
բուրմունքներն ու լոյսերը եւ այդ կերպով նոյնացաւ
անոնց հետ, «Ըլլայի՛»ներու շարքին մէջ ալ ուրիշ ոչինչ
ըլլալ կը ցանկար եթէ ոչ գիւղին ճամբուն վրայ հիւղ
մը, կամ իրիկունը, կամ ալիքներուն վրայ ոստոստող
հովը:

Ալիքներուն վրայ ոստոստող հովն ըլլայի,
ու ջուրերու խուլ մոռնչիմ մէջ ամայի՝
ձկնորսներու ականջն ի վար փսփսայի
սիրուած երգեր, քաղցրութիւնով օծուն քառեր:

Ուրիշ բանաստեղծութեան մը մէջ ալ կը ցանկայ
նոյնանալ բարձունքներու լայն ճամբաներուն հետ:

Բարձունքներու լայն ճի մամբան ըլլայի,
որ ծաղկաեհիւս կողերէ վեր կը մագրի:

Մեծարենցէն մեզի կը մնայ քանակով համեստ, բայց
գրական իմաստով կոթողային ժառանգութիւն մը:
Միսաք Մեծարենց Պոլսահայ գրականութեան, ամբողջ
հայ գրականութեան քանի մը զազաթներէն մէկն է:

Ո՛չ ոք կրնայ չտեսնել բառերու ու պատկերներու այն ճոխութիւնն ու շողշողանքը, որ Մեծարենցը դարձուց մեր արդի Արեւմտահայերէնի առաջին ճարտարապետներէն մէկը: Ան մեր Մեծասքանչին բոլոր գեղեցկութիւններովը զարդարեց Մայր Բնութիւնը, իր բանաստեղծութիւնն ալ լեցուց ամենագեղեցիկ ծաղիկներու անուններով ու բուրմունքներով: Այսօր Մեծարենցի բանաստեղծութիւններուն կը նայինք ո՛չ թէ որպէս քերթուած, այլ որպէս նկարչական գործ, գունազեղ պատկեր, գիշերներու կամ արեւներու մէջ թաթաւուն համայնապատկերներ: Եւ ամէն անգամ որ կը նայինք այդ համայնապատկերներուն, կը յիշենք Մեծարենցի հրաշալիօրէն անմահ, բայց նոյնքան առեղծուածային հարցումը.

Վայրի ծաղի՛կ, անունդ ի՞նչ է:

**ԵԿԷՔ ՍԵՂՍԵՆՔ
ՌՌՒԲԷՆ ՍԵՒԱԿԻՆ ՉԵՌՔԸ**



ԼԵՄԱՆԻ ԱՓԻՆ

Բանաստեղծ Ռուբէն (Զիլինկիրեան) Սեւակ 1907 թուականին, իրիկուն մը, նստած է Զուլիցերիոյ Լեման լիճի եզերքը ու ինքզինք յանձնած է հաճելի այն հովուն, որ կը սահի լիճին հանդարտ ջուրերուն վրայէն: Տեսարանը գեղեցիկ է, զգայնութիւնը՝ բանաստեղծական: Այդ պահուն 22 տարեկան է տակաւին, բժշկական համալսարանի ուսանող է եւ երկու տարի վերջ պիտի վկայուի որպէս բժիշկ:

Բայց բժշկական գիտութիւնները չեն որ լեցուցած են անոր զգայուն ու մարդասէր սիրտը: Անոր սիրտը լեցուն է բանաստեղծական յուզումներով: Եւ հիմա կը յուզուի Լեմանի ջուրերուն նայելով: Թերեւս կը մտածէ իր ապագային մասին, ապագան՝ որ փայլուն պիտի ըլլայ անպայման: Մինչդեռ չի գիտեր թէ հազիւ ութ տարի պիտի կարենայ ապրիլ: Ութ տարի վերջ, 1915, ան Դանիէլ Վարուժաններու ու Սիամանթոններու կողքին պիտի զոհուի այն աղէտին, որ պիտի իջնէ հայ ժողովուրդին վրայ:

Բայց մենք գիտենք որ 1907-ի այդ իրիկունը երջանիկ էր բժշկական գիտութիւններու երիտասարդ ու գեղադէմ ուսանողը, սիրոյ սիրահար բանաստեղծը, որ Լեմանի ջուրերէն կը սպասէր որ անոնք պատմէին իրենց սէրերուն պատմութիւնը: Դեռ երկու տարի առաջ էր որ իր զրիչը առաջին անգամ թաթխած էր բանաստեղծութեան մէջ եւ հիմա Զուլիցերիոյ գեղեցիկ համայնապատկերներուն կը նայէր բանաստեղծի աչքով: Ամէն ինչ բանաստեղծութիւն էր եւ սէր: Սէր՝ գեղեցիկ սեռին նկատմամբ, սէր՝ բնութեան նկատմամբ, սէր՝ մարդուն նկատմամբ, սէր՝ արդարութիւններու ու մարդկային իրաւունքներու նկատմամբ:

Ի՛նչ անուշ է համդարտիկ հովմ իրիկուամ
Մայրամուտի քաղցրիկ շունչովը լեցում.
Ծաղիկները կը մթագնին, կը հեւան,
կը մուսգի թռչնիկին երգը ցնծում:
Ի՛նչ անուշ է համդարտիկ հովմ իրիկուամ:
Ու սիրատարփի մայուածժներում պէս մթին՝
Երեկոյեան կ'իջնէ ստուերը բնֆուշ.
Մեղմ կը հպի լերամ ջուրին մարմանդին,
Երագներու դիւթիչ քողին պէս անուշ:
Բլուրմ ի վար, սէգ ծառերում շուքին քով,
կը ստուերոտի չժնաղ լիմը Լեւանի,
Զնաշխարհիկ պչրուհիի մագանքով
Ափին աւազը կը գգուի, կը շիկնի
Բլուրմ ի վար, սէգ ծառերում շուքին տակ:

Բանաստեղծը իր գրիչը տակաւին չէ թաթխած իր քանի մը գլուխ-գործոցներուն կաղամարին մէջ: Յնցիչ գիւտ մը չկայ վերի տողերուն մէջ, հզօր նկարագրական մը չկայ հոն: Պարզապէս բանաստեղծական ճաշակաւոր նկարագրութիւն մըն է որ կը պարզուի վերի այս տողերուն մէջ: Բայց բանաստեղծին նպատակը արդէն նկարագրել չէ Լեւանին գեղեցկութիւնը: Անոր նպատակն է խօսիլ լիճին ջուրերուն հետ եւ տեսնել թէ սիրոյ ինչ խորհուրդ թաքնուած է լճին ջուրերուն տակ:

Լեւա՛ն, Լեւա՛ն, պատմէ ինձ սիրտդ լռիկ,
Անհում սիրտդ, որ քու ջուրերդ կապոյտ
Կ'ուռնեցնէ ալեակներով համդարտիկ,
Եւ որ սարսուռ կուտայ քու ջիմջ հայելոյդ:
Լեւա՛ն, Լեւա՛ն, պատմէ ինձ սիրտդ լռիկ:

Կը զգանք անշուշտ որ յանկարծ բան մը փոխուեցաւ

քիչ անդին:

Գիտենք թէ բանաստեղծը գեղեցիկ տաղեր պիտի հիւսէ մեզի համար:

ԵՐԿՈՒ ԿԱՐԱՊՆԵՐԸ

Լեմանի լիճին եզերքն է որ ծանօթացանք տարաբախտ բանաստեղծ Ռուբէն Սեւակին: Նստած էր գետափին ու Լեմանի կապոյտ ջուրերէն կը սպասէր որ անոնք պատմէին թէ որո՞ւ սիրահարած էին: Լիճը թերեւս կը խոսափէր իր գաղտնիքը պարզելէ:

Եւ հիմա դարձեալ հոն է բանաստեղծը, դարձեալ նոյն տեղը նստած է եւ կը նայի ջուրերուն: Բայց այս անգամ ան երանութեամբ կը նայի երկու կարապներու, որոնք դէմ դիմաց կը թափահարեն իրենց ճիւնասպիտակ թեւերը եւ կարծես կը սիրաբանին իրարու հետ, իրարու մօտեցնելով իրենց երկար ու գեղեցիկ վիզերը: Հրաշք մըն է այս, սիրոյ գեղեցիկ պատկեր, որուն վկաներն են շրջապատող լեռները պատկառազողու, ու անոնցմէ ալ աւելի վեր, երկինքը:

Կարապները գեղեցկութեան ու սիրոյ խորհրդանշաններ չէի՞ն արդեօք Ռուբէն Սեւակին համար, որ տակաւին չէր ուզեր յիշել աշխարհի այն անիրաւութիւններն ու անարդարութիւնները, որոնց դէմ այնքան ուժեղ բանաստեղծութիւններ պիտի գրէր երեք տարի վերջ: Չէր ուզեր մտածել մարդուն կեանքը թունաւորող այդ անիրաւութիւններուն մասին, որովհետեւ բժշկական համալսարանի երիտասարդ ուսանողը կ'ուզէր ամէն ինչ խեղդել բնութեան նկատմամբ իր զգացած սիրոյ մէջ:

Եւ կարապները...:

Բանաստեղծ եղէք ու մի կախարդուիք կարապներու հմայքէն:

Գիշեր է լուռ, հանդա՛րտ գիշեր ամառուան,
Մութը պատեր է երկինքը համօրէն.
Հեռուներէն թանի մը լոյսեր միայն
Իրենց ձիւնը վար կը կաթեն յուլօրէն:
Բարձրը, մութին ալքերում մէջ, հեռակայ,
Ժուրաներու ստուերը լուռ կը մրափէ,
Աւելի վեր, արհամարհոտ ու հսկայ
Ալպեաններու սէզ ցակատն է սատափէ:
Զոյգ ալեփառ շղթաներու դարաւոր,
Օրբանին մէջ ընկողմանած հոլանի՛,
Լեռներու վեհ հուրիներում պէս աղուոր
Կը քնանայ կապոյտ հոգին Լեմանի:

*Տէքօրը գծուեցաւ արդէն: Մէկ կողմը՝ Ժուրաներու
լեռնաշղթան, միւս կողմը՝ Ալպեանները, այս երկու
«դարաւոր ու ալեփառ շղթաներուն միջեւ» կը քնանայ
Լեման լիճի հոգին, հուրիներու չափ աղուոր հոգին:
Բայց քնացող ջուրին երեսին վրայ շարժում մը կայ:*

Հեռուէն

Ճանաչման, փրփուրներու պէս աղուոր,
Քնացող ջուրին երեսին վրայ մեղմօրէն
Երկու կարապ կը սահին լուռ մեմաւոր:
Իրենց մարմինը թմբուշ է, գեղեցիկ,
Իրենց թւերն արծաթակերտ, ձիւնագէս,
Ու մարմարի իրենց վիզը սլացիկ՝
Երազային տանարներու սիւնին պէս:
Կը մօտեման անոնք իրար մեղմօրէն
Ու կտուցնին իրար կուտան ուղղակի,
Այնպէս ինչպէս ո՛չ մի շրթունք տակաւին
Այնքան սիրով չէ մօտեցած շրթունքի:

Կրցա՞նք անդրադառնալ թէ՛ յանկարծ ինչպիսի հոյա-

կայ թոխչք մը առաւ բանաստեղծութիւնը սիրաբանող երկու կարապներու պատկերին ընդմէջէն: Կարապներու սլացիկ երկար վիզերը՝ որոնք երազային տաճարի մը սիւններուն կը նմանին: Եւ անոնց կտուցները՝ որոնք իրարու այնպէս մը կը միանան ինչպէս ոչ մէկ շրթունք միացած է ուրիշ շրթունքի մը:

Ու ճիւղափառ իրենց թւերն կ'առնեն վեր,
կը գալարին իրենց վիզը երկնասլաց,
Այնպէս ինչպէս երկու բազուկ անձնուէր
Այնքան սիրով իրարու չեն գալարուած:
Գիւղերու լոյսը կը ցոլայ հեռուէն,
Վերը շուքը ժուրամերում հեռակայ,
Աւելի վե՛ր Ալպեանները համօրէն,
Աւելի վե՛ր Երկինքը կանգներ է վկայ:
Վարը՝ ճնացող ջուրին վրայ տրտմաբար,
Վեհ պարտքի մը գիտակցութեամբը լեցուած,
Բերան-քերմի, վիզը վզին անբարբառ
Կարապները կը մնան լո՛ւռ, ճարացած:

Կարծես հարսանեկան պսակ մըն է որ կը կապուի
Լեմանի քնացող ջուրերուն վրայ: Պսակի արարողութիւնն է այս՝ հարսանեկան իրենց շրջագեփտները հագած երկու կարապներու: Ջուրերը կը քնանան, բայց այս երջանիկ արարողութեան արթուն վկաները կան հոն: Նախ՝ ժուրայի լեռները, անկէ վեր՝ Ալպեաններու լեռնաշղթան, իսկ անկէ ալ վեր՝ Երկինքը, բոլոր սէրերու պահապան հրեշտակը: Բայց վկաներէն մէկն ալ ինքն է անշուշտ, բանաստեղծը: Եւ չենք գիտեր թէ անպայման բանաստեղծ պէտք է ըլլանք, որպէսզի մենք ալ կախարդուինք ու քարանանք սիրոյ տարփանքին մէջ կտուց-կտուցի, վիզ-վզի քարացած սա երկու կարապներու գեղեցկութեան դիմաց:

Ռուբէն Սեւակի գրական կեանքը ընդամէնը տասը տարուան կեանք մըն է: Այսինքն ոչինչ մը, եթէ պիտի ընդունինք որ ամէն գրողի ու ամէն արուեստագէտի պէտք է տրուի ստեղծագործական գոնէ քառասուն տարիներու ժամանակաշրջան մը: Բայց այդ տասը տարիները բաւեցին որպէսզի բանաստեղծը մեզի շօշափելի գործ մը թողու ողբերգական պայմաններու մէջ այս աշխարհէն հեռանալէ առաջ: Ու մենք հիմա յարգանքով պիտի մտնենք անոր գրական այդ գործին մթնոլորտէն ներս:

ՄԻԱՆԱԿ Լ ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Տակաւին համալսարանի ուսանող է, փայլուն երիտասարդ, ապագայ բժիշկ, սակայն Ռուբէն Սեւակ իր հոգին կը նմանցնէ անժամանակ թարչամած գարնան տերեւի մը: «Հոգիս» խորագրեալ բանաստեղծութեան մը մէջ է որ կ'ընէ այս տխուր խորհրդածուլթիւնը: Մինչդեռ 22 տարեկան է տակաւին, եւ բախտն ունեցած է Պոլիսէն Չուիցերիա գալու ու Լոզանի մէջ բժշկական համալսարանի դասընթացքներուն հետեւելու: Ինչո՞ւ արդեօք ան իր հոգին կը նմանցնէ կանուխէն թարչամած գարնան տերեւի մը:

Որովհետեւ բանաստեղծները թերեւս չատ ալ անկեղծ չեն, երբ կ'ըսեն թէ դժբախտ են: Դժբախտութեան հոգեբանութիւնը նորաձեւութիւն է չըլլանի բանաստեղծութեան մէջ: Պատրուակ մըն է գեղեցիկ ու յուզիչ տողեր գրելու համար:

Հիւանդ տերեւ մը տեսայ կամաչիմ մէջ դաշտերում,
Ի՞նչ աղուոր էր գարումը, փափուկ հովէն օրօրում,
Սիրում խոտերը դաշտիմ, ծաղիկներն ալ
րիւր գոյնով

Կը խնդայիմ լռելեայմ գաղջ արեւիմ տակ գիմով:

Բայց գարնայիմ կեմսաւէտ այդ պահիմ մէջ օրօրում,
Հիւանդ տերեւ մը տեսայ, կամաչիմ մէջ

դաշտերում,
Չորցած տե՛րեւ մը նիհար, որ զեփիւռիմ հպումով,
Մեռելամերձ կը դողայ մարգերում մէջ ակնաթով:

Սիրտս անհուն ցաւով լի, ես հեռացայ սգահայ
Մատներու մէջ առի գայմ, ու իր մարմինը նիհար,
Գուրգուրամբով, արցունքով մօտեցուցի շրթումնիս:

Անժամանակ թարշամած գարնան տերեւ մ'է հոգիս,
Ծաղիկներու մէջ կեանքիմ, զեփիւռիմ տակ

Մայիսի,
Այ ժպտելու անկարող, ան կը դողայ, կը մսի:

Հիւանդ տերեւ մը տեսայ կամաչի մէջ դաշտերում:

Յայտնի է որ բանաստեղծը դաշտերուն կանաչին մէջ
Հիւանդ տերեւ չէ տեսած իրականութեան մէջ: Հիւանդ
տերեւը իր հոգին է: Մնացեալը երեւակայութիւն է:
Ըսելու ձեւ մըն է: Բանաստեղծութիւն ստեղծելու
պատրուակ մը: Եւ այդ բանաստեղծութիւնն ալ պար-
զութեան ու սովորականութեան սահմաններէն ան-
դին չ'անցնիր: Բայց կը մատնէ հոգեվիճակ մը, բա-
նաստեղծին հոգեվիճակը, որ երբեմն մեզի այնքան
կ'օգնէ բանաստեղծը հասկնալու, որքան կ'օգնէ
նոյնինքն բանաստեղծութիւնը:

Եկէք այս բանաստեղծութիւնը կասենք մէկ տարի
վերջ գրուած ուրիշ բանաստեղծութեան մը, որուն
վերնագիրն է «Տրտում ոգի»: Դարձեալ իր հոգին չէ՞
այդ «տրտում ոգին»: Բանաստեղծի տրտում ոգին:

Թափառամուլ մամբուս վրայ քերթողի,
Տրտում Ոգի - ահա դարձեալ գտայ քեզ,
Հոն ուր քեզի օր մը մեծակ ես թողի,
Քարին վրայ, աղբիւրի մօտ, կը յիշե՞ս:
Մեր հրաժեշտի օրէն ի վեր դուն այսպէ՛ս,
Հեռուն յառած մութ այժերդ սեւածիր՝
Սպասեցիր մամբուս վրայ տրտմապէս,
Ու արցունքիդ լոճիկ ե՛րգը միշտ լացիր:

Կը հասկնանք: Բանաստեղծը օր մը այդ Տրտում Ոգին
Թողուց աղբիւրին մօտ ու հեռացաւ: Հեռացաւ տար-
տամօրէն ման գալով իր երազած ճամբաներուն վրայ,
վերջալոյսի Թռչուններուն պէս տրտում, ու իր վէր-
քերուն ախտաւոր ծաղիկները տարաւ մինչեւ մութ
հորիզոններ: Խոյացաւ տենդահար՝ հոն ուր նիհար
ճառագայթ մը տեսաւ լոյսի, հոն ուր տեսաւ որ սիրոյ
երգ մը կը դողար: Բայց երջանիկ չեղաւ: Ու հիմա...

Ու թեւաբեկ ահա քեզի կը դառնամ
Երջանկութեամ մամբաներէն յետադարձ,
Տրտում Ոգի, հոգիիս միակ քարեկամ,
Դուն իրակամ, դուն մշմարիտ, դո՛ւն անդարձ:
Ձեռներուս մէջ դիր ձեռներդ մահաթոյր,
Ու հողեղէն շրթումքներդ շրթումքիս,
Երակներուս մէջ թու շունչդ տրտմարոյր,
Արցունքներուդ քիւրեղիմ մէջ՝ իմ հոգիս...

Բանաստեղծութիւնը դեռ ունի վերջին չորս տողեր:
Բայց զանոնք կարդալէ առաջ պահ մը ողջունենք քեր-
թողական արուեստին ու հոնկէ պոռթկացող զգայնու-
թեան գեղեցկութիւնը: Ողջունենք բանաստեղծին վե-
րադարձը դէպի այն հոգեվիճակը՝ որմէ բաժնուած էր
տարիներ առաջ: Երկու տրտում հոգիներուն երջանիկ

միացումն է այս տրտմութեան մէջ: Իրարու փոխանցուած տաքուկ համբոյր մը:

Եւ ահա այս գեղեցիկ բանաստեղծութեան վերջին չորս տողերը.

Տրտո՛ւմ Ոգի, թեւդ թեւիս գալարում,
Համբոյրի մը անհումիմ մէջ սգաւէտ,
Մեր ցաւերում, արցումքներում, վէրքներում
Պատարագը պիտի տօնենք քեզի հետ:

Բացօթեայ պատարագ արդարեւ, որ տօնակատարութեան մը նման կը մատուցուի աղբիւրին մօտ, քարի մը վրայ, ի յիշատակ ինչ ինչ ցաւերու, արցունքներու ու վէրքերու: Բայց վերջին շեշտը՝ ուրախութեան շեշտ է, տօնակատարութիւն է, որովհետեւ երկու սիրող հոգիներու միացումը ուրիշ ոչինչ է եթէ ոչ ցնծութիւն, նոյնիսկ եթէ այդ երկու հոգիները իրարու կը միանան տրտմութեան ու տառապանքի մթնոլորտին մէջ:

ՔԵՐԹՈՂ ԵՄ ԵՍ...

Արդէն հազիւ թէ երկու կամ երեք տարիէ ի վեր բանաստեղծութիւն կը գրէր, որ Ռուբէն Սեւակ տեսաւ թէ ինչ լաւ տպաւորութիւն կը ստացուէր երբ նոյն տողը վերն ու վարը կը կրկնուէին: Ասիկա իր սեփական գիւտը չէր, իրմէ առաջ ուրիշ բանաստեղծներ ալ քանիցս փորձած էին: Բայց ամէն բանաստեղծ ունէր իր սեփական ձեւն ու ոճը: Նոյն տողը գործածել որպէս բանաստեղծութեան առաջին ու վերջին տող: Կամ նոյն տողերը գործածել իւրաքանչիւր տունի կամ հատուածի առաջին եւ վերջին տողերուն: Ասիկա բանաստեղծական շատ տպաւորիչ թէքնիք մը կը դառնար եթէ գործածուէր ճաշակաւոր կերպով: Թէ՛ կրկնութեան ճամբով

ընթերցողին մտքին մէջ կը քանդակէր բանաստեղծութեան մայր պատկերը, եւ թէ այդ կրկնութեան շնորհիւ որոշ երաժշտականութիւն մը, քնարական շեշտ մը կը ստեղծուէր:

Ռուբէն Սեւակի մօտ այս թէքնիքին առաջին գործադրութիւններէն մէկը կը տեսնենք 1908-ին գրուած «Երգ Երգոց» խորագրեալ բանաստեղծութեան մէջ: Սիրային բանաստեղծութիւն մըն է, քանի որ բանաստեղծը տակաւին չէ սկսած գրել մարդասիրական ու ընկերային հարցերով տառապող իր քանի մը երկարաշունչ ու անմահանալու կոչուած «պոէմ»ները: Սիրային բանաստեղծութիւն մըն է եւ Ռուբէն Սեւակ արդէն բանաստեղծ մըն է որ շատ լաւ գիտէ թէ ինչ կը նշանակէ սիրել:

Երա՞գ, տեսի՞լ, անգոյ ստուե՞ր մ'անհոգի,
Ճառագայթքի, փրփուրի խա՞ղ մը տարտամ:
Քմայապաշտ ծաղի՞կ մ'արդեօ՞ք ցնորքի,
Քու մշուշոտ գիծերուդ ի՞նչ անուն տամ.
Երա՞գ, տեսի՞լ, անգոյ ստուե՞ր մ'անհոգի:

Ահա տպաւորիչ մուտք մը, ուր արդէն վերոյիշեալ թէքնիքը գործադրուեցաւ յաջողապէս: Նոյն տողը գործածուեցաւ որպէս առաջին եւ հինգերորդ տող: Կրկնութիւնը ծանրութիւն մը դրաւ հարցումին վրայ, նաեւ ստեղծեց երաժշտականութիւն մը:

Յաջորդող տողերուն մէջ բանաստեղծը նորութիւն մը պիտի աւելցնէ այս թէքնիքին վրայ: Միշտ չէ, բայց երբեմն կրկնուող տողին մէջ պիտի փոխէ մէկ կամ երկու բառ եւ այս կերպով իմաստի այլազանութիւն ու երաժշտութեան նոր ճայն պիտի շահեցնէ իր բանաստեղծութեան: Ահաւասիկ շարունակենք կարդալ յաջորդ երկու տուները.

Քու կապոյտդ վնիտ, աղուոր ջուրերու
Եթերայիմ անբջանժիմ է հանգոյմ.
Ու ինու կարմիրդ Պէնկալեան վարդերու
Երագամած կարմրութեան պէս տժգոյմ.
Գոգն աչքերուդ կապոյտն ունիս ջուրերու:

Արցունժիդ մէջ նայեատներ պար կը դառնան:
Այդ ի՞նչ հեշտամժ որ շրթներուդ մէջ կ'ըմպես.
Շունչդ գիմով է հովերու պէս գարնան,
Ձայնդ տարփոտ՝ աղբիւրներու երգիմ պէս..
Արցունժիդ մէջ նայեատներ պար կը դառնան:

Առաջին տունին մէջ երկու տողերը թէեւ նմանաձայն են, բայց տարբեր բառերով շինուած են, մինչդեռ երկրորդ տունին մէջ նոյն տողն է որ կը կրկնուի: Դարձեալ կարդանք առաջին տունի երկու նախադասութիւնները, զանոնք աւելի պարզացնելով. «Քու կապոյտդ կը նմանի վնիտ ու աղուոր ջուրերու եթերային երագին»: Այս նախադասութիւնը վերջին տողին մէջ պիտի փոխուի. «Աչքերուդ գրկին մէջ ջուրերու կապոյտը կայ»: Իսկ երկրորդ տունին մէջ բան չէ փոխուած, նոյն տողն է որ գործածուած է իբր առաջին ու վերջին տող: Կրնանք ըսել որ կրկնուող այդ առաջին ու վերջին տողերը բանաստեղծութեան բո՛ւն իսկ նպատակն են, իսկ միջանկեալ տողերը բանաստեղծութեան մարմին տուող օգնական սնունդ:

Կը ցատկենք տողերուն վրայէն ու կը կարդանք բանաստեղծութեան վերջին երկու տունները.

Ի գո՛ւր: Հոգիս թաղուիլ կ'ուզէ յուլօրէն
Ստիմժներուդ մտերմութեանը մէջ կոյս.
Ու անութիդ որոշ ծալքերը նորէն

Գիտեմ որ գիս պիտի տանջեմ մի՞նչեւ լոյս...
Քու մէջդ հոգիս թաղուիլ կ'ուզէ յուլօրէն:

Տժգոյն աղջիկ, հիւսիսայգի աչքերով,
Կոպերուդ վրայ ու քիբերուդ մէջ խոնաւ
Այդ ի՛նչ աննառ երանութիւն, ի՛նչ գորով...
Ո՛չ մէկ արգանդ թեզ պէս հրաշք չծնաւ,
Տժգո՛յն աղջիկ, հիւսիսայգի աչքերով:

Վարուժանեան ու Հեթանոսական տարփանքով գրի
առնուած այս տպաւորիչ բանաստեղծութեան մէջ
Ռուբէն Սեւակ յաջողապէս քանդակած է այն կերպարը
որ իր սիրոյն արժանի է, կամ իր սիրոյն առարկան է:
Բայց այս բանաստեղծութեան մէջ մեզի համար աւելի
գրաւիչ է տալու ձեւը, քան թէ տրուած նիւթը: Եւ
տալու այդ ձեւին դեռ մենք բազմաթիւ անգամներ
պիտի հանդիպինք Ռուբէն Սեւակի բանաստեղծութեան
մէջ: Սեւակը, գոնէ բանաստեղծական ապրումի այդ
առաջին տարիներուն (արդէն քանի՞ տարի ունեցաւ
որ) գերազանցապէս սիրոյ բանաստեղծ է: Արդէն ինքն
է որ կը խոստովանի թէ ազուոր սիրելիի մը կը պարտի,
եթէ բանաստեղծ է:

Օ՛հ, ինչն^{ու} ըսի. «Ալ քերթոյ չեմ ես»
Ի՛նչ դառն հայհոյամբ: Երբ վիճի մը պէս
Սրտիս վրայ կը զգամ գլուխդ ոսկեգէս,
Երբ երջանկութեան տաղդ ինձ կ'երգես,
Ո՛հ, ես քերթոյ եմ, քնարի մը պէս
Հրճուամբդ մատիս տակ կը նուագես,
Ու կը գիճովմամ ձայնէդ հրակէզ...
Քերթո՛ղ եմ, աղուոր, զայն կը պարտիմ թեզ:

ԴԷՊԻ Ո՞ՒՐ Կ'ԵՐԹԱՅ ԱՍՊԵՏԸ

Կրկնուած տողերով տպաւորութիւն ստեղծելու թէք-
նիքը Ռուբէն Սեւակին կողմէ յաջողապէս գործածուած
է ուրիշ բազմաթիւ քերթուածներու մէջ եւս: Բա-
նաստեղծը ունի «Ասպետին երգը» խորագրեալ սիրուն
բանաստեղծութիւն մը, որ մէկն է այն բանաստեղ-
ծութիւններէն, զոր պարտաւոր ենք կարդալ՝ եթէ
կ'ուզենք ճանչնալ Սեւակը:

Ճերմակ ձիւն է թամբեր, տեսէ՛ք,
Ոսկի թամբիւն վրայ կանգնած սէգ
Լռիւն կ'երթայ ասպետն, ըսէ՛ք,
Ասպետը սէգ դէպ ո՞ւր կ'երթայ:
Կը խրոխտայ վէս ձիւն՝ կոյսի պէս.
Արշալոյս է, ծաղկի հանդէս,
Հագար թոջներ կ'երգեն անտես,
«Ասպետն, ըսէ՛ք, դէպ ո՞ւր կ'երթայ»:
Հտտուորդներն ո՞ւր են աղուոր,
Ռագմի՞ կ'երթայ ան ահաւոր.
Ոչ, իր սրտէն վիրաւոր,
Ասպետն, ըսէ՛ք, դէպ ո՞ւր կ'երթայ:
Ահա հասաւ ժայռիւն գագաթ,
Դէմքը խախկեց ձեռքով երկաթ,
Խոյացաւ վար ձիւն խանդակաթ,
Ասպետը սէգ՝ մահուան կ'երթայ...:

Մէկ շունչով կարդացինք այս յուզիչ բանաստեղ-
ծութեան ամբողջութիւնը: Ասպետ բառը սիրելի բառ
մըն է մեր բանաստեղծին համար եւ կրնանք մտածել
որ այդ բառին մէջ Սեւակ կը տեսնէ երկու բան. նախ՝
սիրող ու տառապող ազնուական մարդը: Ապա՝ ինքզինք:

Բայց ինչ որ վերի բանաստեղծութիւնը այնքան տպա-
ւորիչ կը դարձնէ ամէն բանէ առաջ, սա «Ասպետը
սէգ դէպ ո՞ւր կ'երթայ» տողն է որ երեք անգամ կը
կրկնուի որպէս հարցում, եւ որ ամէնէն վերջը կը
վերածուի պատասխանի. «Ասպետը սէգ՝ մահուան
կ'երթայ»: Այս տողը հիանալի երաժշտականութիւն
մը կուտայ գողտրիկ քերթուածին: Իսկ այդ երաժշտա-
կանութիւնը ալ աւելի հանդիսաւոր կը դարձնէ
քերթուածին տխուր պատգամը, դէպի մահ երթալու
պատգամը, որ նախախնամութեան տխուր կարգադրու-
թեամբը պիտի դառնայ նոյնինքն բանաստեղծին
ճակատագիրը: Այս բանաստեղծութիւնը գրելէ չորս
տարի վերջ Սեւակ, կարծես իր ճերմակ ձին թամբած,
պիտի երթայ դէպի իր ծննդավայր երկիրը եւ արդէն
գացած պիտի ըլլայ դէպի իր մահը:

Նոյն տխուր մթնոլորտը կրնանք գտնել «Գացող
մարդը» անուն քերթուածին մէջ: Հոս ալ Ռուբէն Սեւակ
կը խօսի իրեն այնքան սիրելի «ասպետ»ին մասին:
Եւ հոս ալ կրկնուող բառերու հրաշալի երաժշտա-
կանութիւն մը կը ցնցէ մեզ.

Ձեմ գիտեր ո՛վ, չեմ գիտեր ո՛ւր
կ'երթայ... հի՛ն-հի՛ն ասպետ մը լուռ,
կ'ըսեն՝ ձի՛ն վրայ տխուր
կ'երթայ շուտ-շուտ, չեմ գիտեր ո՞ւր...
Կը տեսնեմ մեծ շուքն իր միհար
վերջալոյսին, ամպերէն վար,
Սեւ մտոյգի՛ն վրայ հոգեվար,
Սարին կ'երթայ, չեմ գիտեր ո՞ւր...
Կ'երթայ շուտ-շուտ ու չի տեսներ
Որ ետեւն քիւր կմախքներ
Ալ վագելէն շատ են յոգներ,
Ան կ'երթայ շուտ, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'ըսեմ դդեակ մ'ունի աղուոր,
Կամ ուխտ մը սուրբ, սէր մ'հեռաւոր,
Ու հոդ կ'երթայ...: Եւ գիտեմ որ
Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՞ւր:

Քիչ մը կանգ առնենք նախ այս բանաստեղծութեան կառոյցին վրայ: Անմիջապէս կը հասկնանք թէ հաճելի երաժշտականութիւն մը կայ սա չորս անգամ կրկնուող «չեմ գիտեր ո՞ւր» հարցումին մէջ: Բայց ատկէ զատ կայ յանգերու գեղեցկութիւն մըն ալ: Առաջին չորս տողերը կը վերջանան «ուր», «լուռ», «տխուր» եւ «ուր» բառերով: Երկրորդ տունին մէջ, առանց որ թերեւս ընթերցողը նշմարէ, նոյն տպաւորութիւնը պիտի գործեն «նիհար», «վար» եւ «հոգեվար» բառերը: Նոյնը երրորդ ու չորրորդ տուներուն մէջ: Բայց այս բանաստեղծութիւնը, բացի երաժշտական իր գեղեցիկ կշռոյթէն, ունի ուրիշ բացառիկ կողմ մը: Նիւթն է այդ: Նիւթն է որ այս քերթուածը դարձեալ կը դարձնէ բանաստեղծին բացառիկ բանաստեղծութիւններէն մէկը: Խորհրդաւոր ու մշուշոտ նիւթ մը, խորհրդաւոր պատկեր մը ասպետի մը դիմազծութեան տակ: Ո՞րն է այն հեռաւոր դդեակը կամ այն սուրբ ուխտը, դէպի որոնց կ'երթայ ասպետը: Ընթերցողին կը մնայ հասկնալ, կամ կռահել, կամ ենթադրել: Բայց այդ բոլորէն դուրս բանաստեղծը կը յիշեցնէ. «Գիտեմ որ ան տապան մը ունի»: Ո՞ւր է այդ տապանը, չի գիտեր, բայց գիտէ որ կայ այդ տապանը: Այսինքն գիտէ որ կայ մահը: Կայ՝ մահը եւ կայ այդ գերեզմանը: Կամ ըսենք՝ հողակոյտը: Հողակոյտ մը՝ որուն տեղը յայտնի չէ:

Նախզգագո՞ւմ: Դիպուա՞ծ:

Բայց մենք առ այժմ կանգ կ'առնենք քերթուածին գեղեցկութեանը վրայ եւ կրնանք ենթադրել թէ ո՞վ

է այն ասպետը, որուն մասին շարունակ կը խօսի քերթողը: Ահա նաեւ «Լուսնակ լոյսով» անուն քերթուածին ասպետը, Սիրոյ Արքան, որ, ըստ հէքեաթի, քարացած է ամէն գիշեր իր սիրածին համար երգ մը երգելով:

Սա ծառիմ տակ րազկատարած
Մարմար լիճ կայ լայնատարած,
Լուսնակ լոյսով լեզու առած
Քարեր հէքեաթ մը կը խօսին:
Ասպետ մ'ամէն վերջալոյսին
Հոն կը սօսէր սիրած կոյսին...

ՈՎ ՈՐ ՉԻ ՍԻՐԵՐ...

Պիտի շարունակենք հիանալ Ռուբէն Սեւակի քնարաշունչ բանաստեղծութիւններուն վրայ, այժմ ընտրելով անոնցմէ երկու շատ գեղեցիկ նմոյշներ, որոնք եւս հիւսուած են կրկնուող տողերու երաժշտականութեամբ: Անոնցմէ առաջինը կոչուած է «Եկուր»:
Սեւակին անմահացած գործերէն մէկն է այդ.

Եկո՛ւր, եկո՛ւր, մամբաներէն անուրջիս
Սրտիս ջահերն այրեցի թեզ ի հանդէս,
Վերջին անցորդ տառապանքի կամուրջէս,
Երգի մը պէս, իրոջ մը պէս, մօր մը պէս
Եկո՛ւր, եկո՛ւր մամբաներէն անուրջիս:

Վարագոյրը արդէն բացուեցաւ շքեղ հանդիսաւորութեամբ: Անուրջներու ու տառապանքներու կամուրջներուն մէջէն կանչուեցաւ վերջին անցորդը, որ պէտք է գայ երգի մը պէս, թրոջ մը պէս, մօր մը պէս: Հիանալի: Եւ տունին առաջին տողը միշտ պիտի կրկնուի վերջին տողին վրայ:

Եկո՛ւր, ես բուկդ եմ, բեզ արժայ ու գերի,
Ես, մեղապարտ անօթը սուրբ համբոյրիդ...
Հեւքս աղօթքի պէս դէմքիդ շուրջ կը դեգերի,
Պաշտամունքիդ ես խնկանօթ միամիտ:
Եկո՛ւր, ես բուկդ եմ, բեզ արժայ ու գերի:

Իւրաքանչիւր տողը գոհար մըն է բանաստեղծական
պատկերի: Բայց գոհար մըն է նաեւ սա կրկնուող
խորհուրդը: Սիրահարը, որ իր սիրածին թէ՛ արքան
է, թէ՛ գերին:

Քու անունովդ պատանքեցիմ ծեր հոգիս,
Քեզ երգելէն արիւնեցան, խենթեցան
Եօթը վէրքերն իմ քարունակ սրինգիս,
Սրտիս ճամբուն վրայ մերկ ռոններս այրեցան,
Քու անունովդ պատանքեցիմ ծեր հոգիս:

Պիտի կրկնենք: Իւրաքանչիւր տող գոհար մըն է,
բայց ի՞նչպէս պիտի չցնցուինք սա սրինգի պատկերին
գիմաց: Կարդանք կրկին: Սրինգին եօթը վէրքերը,
այսինքն սրինգին վրայ բացուած եօթը ծակերը արիւ-
նեցան ու խենդեցան շարունակ սիրուած անձին երգը
երգելով: Ո՞վ է որ շարունակ սրինգը կը հնչեցնէ
սիրելիին համար, ո՞վ է որ կը կանչէ իր սիրելին: Եւ
կ'ուզէ որ սիրելին բանայ իր մարմնին ու հոգիին մէջ
թաքնուած բոլոր գեղեցկութիւնները.

Բա՛ց ինձ կարմիր շրթներդ կարմիր վերքի պէս,
Բա՛ց ինձ թելերդ, յաւերժական քա՛նտ անոյշ,
Բա՛ց ինձ հոգիիդ հրաշքներուն մուտքն անտես,
Ու տուր ինձ հոն անէանալ, լուռ, անյուշ,
Բա՛ց ինձ կարմիր շրթներդ լայն վերքի պէս..
Այս բանաստեղծութիւնը իր աւարտին պիտի հասնի

Հինգ տողերով, որոնք ուժեղ պատգամ մը կուտան մեզի սիրոյ ու կեանքի յարաբերութիւններուն մասին: Կարգալէ վերջ ամբողջ բանաստեղծութիւնը, իրաւունք պիտի ունենանք ըսելու որ ամբողջ բանաստեղծութիւնը գրուած է այդ վերջին հինգ տողերուն համար, մանաւանդ այդ հինգ տողերէն մէկ հատին համար: Կարգանք:

Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրեմք կաթոգիմ,
Ով չի սիրեր, պիտի մեռնի առ յաւէտ:
Սէրը պետքն է, երազն է կեանքը կեանքիմ.
Սէրը մահուան մեր անուրջն է արփաւէտ.
Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրեմք կաթոգիմ:

Ո՛րն է այն տողը, զոր մենք պէտք է անջատենք ամբողջ բանաստեղծութեան մէջէն, որպէսզի զայն արձանագրենք թուղթի մը վրայ, շրջանակենք ու մեր պատերէն կախենք:

Ով չի սիրեր, պիտի մեռնի առ յաւէտ:

Ասիկա անէծք մըն էր որ կ'իջնէ բոլոր այն դժբախտ հոգիներուն վրայ, որոնք սէր չունին, որոնք սիրել չեն կրնար, որոնք սէրը չեն սիրեր: Եւ որքա՛ն լաւ է որ այդ անէծքը կ'իջնէ անոնց վրայ, եթէ անշուշտ աշխարհի վրայ կան մարդիկ, որոնք սիրել չեն գիտեր, որոնց սրտին մէջ սէր չկայ: Բանաստեղծը կրնար ըսել նաեւ. «Ով որ չի սիրեր, արդէն մեռած է առ յաւէտ»:
Բայց խօսքը ապագային մասին է: Ով որ չի սիրեր, պիտի մեռնի: Անմահանալու իրաւունք չունի, անմահանալու բախտը պիտի չունենայ: Իսկ ան որ կը սիրէ, արդէն իր կեանքը լեցուցած պիտի ըլլայ այն սքանչելի զգացումով, որուն համար արդէն ստեղծուած է կեանքը: Սէ՛րը: Եկուր սիրելիս, եկուր գիրար սիրենք կաթոգին:

Կեանքի մէջ ի՞նչ կայ աւելի իրական, աւելի արբեցուցիչ, աւելի իմաստալից, քան սէրը: Այդ անմեղ ու հրաշագործ սէրը: Եկո՛ւր սիրելիս, բա՛ց ինձի քու կարմիր չրթներդ, հոգ չէ թէ անոնք կարմիր վէրքերու կը նմանին, բա՛ց ինձի թեւերդ, հոգ չէ ես այդ թեւերուդ մէջ պիտի գտնեմ իմ յաւերժական բանտս, բա՛ց ինձի հոգիիդ հրաշքներուն մուտքը, հոգ չէ ես հիմա տակաւին չեմ տեսներ զանոնք: Ես կ'ուզեմ անէանալ, ոչնչանալ, մահանալ քու հոգիիդ խորերուն մէջ: Այսպէ՛ս է միայն որ ես կրնամ անմահանալ: Որովհետեւ, չմոռնանք. .

Ով չի սիրեր, պիտի մեռնի առ յաւէտ:

ԿՈՐՍՈՒԱԾ ՆԱԻԸ

Հիմա եկէք միասնաբար կարդանք Ռուբէն Սեւակի այն երկրորդ քնարաչունչ բանաստեղծութիւնը, որուն մասին խօսած էինք անցեալ անգամ: Ասիկա մեր բանաստեղծին ամենագեղեցիկ քերթուածներէն մէկն է. «Սիրոյ եւ մահուան երգը»: Հոս ալ բանաստեղծութեան իւրաքանչիւր տունը կը սկսի ու կը վերջանայ նոյն տողով: Բայց ամբողջ բանաստեղծութիւնը ունի իմաստի ու մտածումի այնպիտի հարստութիւն մը, որ պիտի ըսենք թէ կրկնութեան այս թէքնիքը շուքի մէջ կը մնայ:

Իմ կեանքս թող աղաչաւոր երգ մ'ըլլայ,
Եղերակամ ու միամիտ, սե՛ւ ողբերգ,
Իմ սիրտս թող անհունիմ մէջ վերք մ'ըլլայ,
Հսկայական ու տխրօրէն ժաղճ վերք,
Իմ կեանքս թող աղաչաւոր երգ մ'ըլլայ..:

Ինչո՞ւ այսքան տխուր շունչով մը սկսաւ բանաստեղծը, ինչո՞ւ ուզեց որ «սեւ ողբերգ» մը ըլլայ իր այս երգը: Թող ինք պատասխանէ.

Ես կը սիրեմ իմ տրտմութիւնս դիւթական,
Իմ տրտմութիւնս աստուածներու ցաւիմ պէս,
Քոյր, սրտիս մէջ ի՛նչ խաւարներ, վիհեր կան,
Ջոր մայուածքովդ կ'ոսկեգօծես ու կ'օրհնես,
Ես կը սիրեմ իմ տրտմութիւնս դիւթական:

Արդէն չկայ բանաստեղծ մը որ չսիրէ տրտմութիւնը: Տրտմութիւնն է որ բանաստեղծական է, այլ ո՛չ թէ ուրախութիւնը: Եւ պիտի չզարմանանք տեսնելով որ Ռուբէն Սեւակն ալ կը սիրէ տրտմութիւնը, «իր» տրտմութիւնը, «Իր», ստացական ածական, որ մեզի կը յիշեցնէ թէ ամէն բանաստեղծ ունի ի՛ր սեփական տրտմութիւնը: Եւ այդ տրտմութեան մթնոլորտին մէջէն է որ բանաստեղծը կոչ կ'ընէ իր խորհրդաւոր սիրածին, զոր «Քոյր» կ'որակէ.

Եկո՛ւր ինձի, լուսնակիմ պէս գեղեցիկ,
Եկուր ինձի, լո՛յս ու ցնծում հեւալով
Քու արծաթի շողերուդ մէջ սլացիկ
Լուսաւորէ աւերակներս լալո՛վ,
Ես Մահն եմ, ե՛կ ինձ կեանքիմ պէս գեղեցիկ..:
Միայն այս տունին մէջ է որ առաջին տողը փոխւեցաւ վերջին տողին մէջ: Փոքրիկ խաղ մը, որուն դիմեր է բանաստեղծը աւելի ցնցիչ դարձնելու համար այն տրամերգութիւնը, որ կը ներկայացուի սրտին խորը: Կ'ընդունինք որ գեղեցիկ են տրամերգութեան պատկերները: Միբուսած անձը կը կանչուի որպէս լոյս մը որ պիտի լուսաւորէ բանաստեղծին ներքին աւերակները:

Իմ կեանքը թող առուիմ երգիմ պէս ըլլայ
Ու երգս անուանդ կրկնումն ըլլայ թող յաւերժ,
Իմ կեանքս թող մո՛ւթ ջրվէժի պէս ըլլայ,
Ու դէպի քեզ անկում մ'ըլլայ գահավէժ,
Իմ կեանքս թող առուիմ երգիմ պէս ըլլայ:
Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի պէս,
Ուր խաւարմեր կը փոթորկիմ մոլեգիմ,
Երկու աչերդ՝ աստուածներու սկիհիմ պէս,
Տուր ինձ անոնց մէջ սրբացնել իմ հոգիմ,
Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի պէս...

Պահ մը մեր մտքին մէջ կրկնենք երկու գեղեցիկ պատկերները, որոնք կը պոռթկան այս երկու տուներուն մէջէն: Առաջինը այն երգն է, որ առուի մը պէս կը հոսի ու անվերջ կը կրկնէ իր սիրածին անունը, ապա ջրվէժի մը նման գահավիժօրէն կը թափի իր սիրելիին ջուրերուն մէջ, որպէսզի միանայ անոր ու հալի անոր մէջ: Երկրորդը իր սիրելիին աչքերուն մէջ աստուածներու երկու սկիհներ տեսնելու ու այդ սկիհներուն մէջ իր հոգին սրբացնելու աղաչանքն է:

Եւ հիմա կարդանք այս պատկերալից քերթուածին վերջին երկու տուները, որպէսզի յստակ կերպով լսենք «սիրոյ ու մահուան երգը» զոր կ'ուզէ հնչեցնել բանաստեղծը.

Եկո՛ւր ինձի, քեզ կ'ըղձայ շունչս անգոր,
Եկո՛ւր, ես մութ քաներ պիտի քեզ ըսեմ
Սիրոյ պէս քաղցր ու Մահուան պէս հզօր,
Գերեզմանիս լացող սիւքիմ պէս նսեմ,
Եկո՛ւր ինձի, քեզ կ'ըղձայ շունչս անգոր:
Իմ կեանքս թող կորած մաւուն պէս ըլլայ,
Շունչդ ուռեցնէ ծեր առագաստս անահ.
Մի՛, մի՛ լսեր յոգնած հոգիս որ կուլայ,

Տա՛ր գիս Սիրոյ կղզիներէն դէպի Մահ,
Իմ կեանքս թող կորած մաւռն պէս ըլլայ...:

Գործածուած յանգերը քիչ մը բռնազբօսի՞կ են, կամ մահուան գաղափարին շուրջ դեգերելու ցանկութիւնը քիչ մը չափազանցեա՞լ է, մեզի համար կարեւոր չէ, որովհետեւ մենք խորհրդանշական շատ բան կը գտնենք այն «մութ բաներ»ուն մէջ որոնք բանաստեղծին կողմէ պիտի ըսուին սիրելի էակին, եւ որոնք թէ՛ Սիրոյ չափ քաղցր, թէ՛ Մահուան պէս հզօր են: Բայց ցնցիչ կերպով տպաւորիչ է վերջին պատկերը, որուն մէջ բանաստեղծը կ'ուզէ որ իր կեանքը դառնայ կորսուած նաւ մը, որուն առագաստները պիտի ուռին միայն իր սիրածին շունչովը: Եւ այդ կորսուած նաւը պիտի երթայ Սիրոյ կղզիներէն դէպի մահ:

Ռուբէն Սեւակ այս բանաստեղծութիւնը գրած է 1912-ին: Արդէն բժիշկ է: Ամուսնացած է ու խենդի պէս կը սիրէ իր գերմանացի կինը, Եաննին: Բայց չի գիտեր որ հազիւ երեք տարի ունի ապրելիք: Բան մը զինքը կը կանչէ դէպի մահ, դէպի նահատակութիւն: Բան մը որ զինքը կորսուած նաւու մը նման Սիրոյ կղզիներէն պիտի տանի դէպի Մահ:

ՎՏԱԿԻ ՄԸ ՆՄԱՆ

Սիրոյ կղզիներէն դէպի Մահ: Յիշենք որ վերջին անգամ մեր բանաստեղծը ուզած էր որ իր կեանքը դառնայ կորսուած նաւ մը, որուն առագաստը պիտի ուռէր սիրելիին շունչովը եւ որ սիրոյ կղզիներէն պիտի երթար դէպի Մահ: Դէպի մահ աճապարելու, դէպի մահ վազելու յաճախանք մը կայ Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններուն մէջ: Տխուր է այդ թէման,

բայց բանաստեղծական հրաշալի թէմա է, որ շատ բանաստեղծներու նման, վարպետօրէն գործածուած է նաեւ Ռուբէն Սեւակի կողմէ: Բայց հիմա եկէք միասնաբար կարդանք «Ցնծուն մահ» խորագրեալ սիրուն բանաստեղծութիւն մը, որուն հրաշալի երաժշտականութիւնը մեզի մոռցնել պիտի տայ թէմային տխրութիւնը, նաեւ բանաստեղծութեան մէկ երկու թոյլ կողմերը: Կարդալու ընթացքին, պէտք է որ ուշադրութիւն ընենք այն գեղեցիկ ու գեղահունչ յանգերուն, զորս գտած է քերթողը տողերու վերջաւորութեան: Հո՛ն է երաժշտութեան գաղտնիքը.

Քերթողն ըսաւ. «Անո՛ւշ վտակ,
Շիւղերու տակ, ցիւղերու տակ
Ո՞ւր կը վազես աննպատակ...
Վարդեր կուլան շուրթիդ վերել,
Սէզեր կուտան ինչ բիւր բարել,
Քե՛զ կը կանչեն ծաղիկ, տերել...
Լուսնակի ցոլքը ծոցդ առած,
Դաշտերու մէջ լայնատարած
Ո՞ւր կը վազես դուռն շուարած..
Կեանքդ արդէն կարճ է, ա՛յ վտակ,
Մի՛, մի՛ վազեր, ծովն անյատակ
Պիտի թաղէ ինչ ալեաց տակ...»

Բոլոր վտակները դէպի իրենց մահը կը վազեն, յայտնի պատկեր է: Անոնք ծնունդ կ'առնեն վեհ լեռներէն, ամենագեղեցիկ կամ ամենավայրագ բարձունքներէն, ծնունդ կ'առնեն ու խենդի պէս կը հոսին դէպի վար, դէպի ցած մակարդակ, դէպի ծով, որուն մէջ պիտի թափին, որուն ալիքներուն տակ պիտի թաղուին, ինչպէս ըսաւ բանաստեղծը: Բայց բանաստեղծին սրտին մէջ կարեկցութիւն կայ. ինչո՞ւ աճապարել: Ինչո՞ւ

աւելի կրճատել կեանքը: Մի՛ վազեր, մի՛ վազեր,
կաղաղակէ քերթողը:

Բայց վտակը արդէն ունի իր պատասխանը, նոյնքան
երաժշտական:

Վտակը հծծեց.- «Թող անդադրում
վազեն ջուրերս. մի՛, մի՛ տրտում
Արցունք կաթեր անոնց սրտում:
Թո՛ղ, որ երգեմ լոյսն ու մութիւն,
Ի՛նչ փոյթ թէ մահն է քայլ մ'անդիւն,
Ես սիրահար եմ մարմանդիւն:
Ու միւնչ քերթողը կ'երագէր՝
Լալն՛վ, վտակը եռուզեռ
Երգով իր մահը կը վագէր...»

Այո՛, վտակը դժգոհ չէ իր վազքէն, իր հոգը չէ թէ
մահը մէկ քայլ անդին է: Եւ չի ալ արտօներ որ
բանաստեղծը տխուր արցունքներ կաթեցնէ անոր
ջուրերուն մէջ ու խանգարէ իր ջուրերուն ուրախու-
թիւնը: Ինք սիրահար է մարմանդին:

Թէեւ քիչ մը պիտի դժուարանանք հասկնալու թէ
ճշգրիտ կերպով ի՞նչ կը նշանակէ այստեղ մարմանդ
բառը, հանդարտութի՞ւն, խաղաղութի՞ւն, թէ հաճելի
դաշտ, հաճելի կանանչութիւն, թէեւ պիտի չհասկնանք
թէ մարմանդի նկատմամբ սէրը ինչու պատճառ դառնայ
որ վտակը անապարէ դէպի իր մահը, այնուհանդերձ
քերթուածը մեզի մտածել կուտայ «ցնծազին մահ»ուան
մասին, այսինքն ցնծութեամբ ու յօժարակամ ըն-
դունուած մահուան մասին: Բանաստեղծութեան պատ-
գամը ա՛յս է, եւ այս բանաստեղծութիւնն ալ գրուած
է 1914 թուականին, բանաստեղծին ողբերգական
մահէն տարի մը առաջ:

Այժմ տեղն է յիշեցնելու թէ Ռուբէն Սեւակ կրնար

վերադարձած չըլլալ Պոլիս եւ շարունակէր որպէս բժիշկ պաշտօնավարել Զուլիցերիոյ կամ Գերմանիոյ մէջ, եթէ բախտը օգնէր իրեն: Շատ ծանր պայմաններու մէջ է որ աւարտած էր իր ուսումը Լոզանի մէջ: Համալսարանի դասերուն հետեւած էր կուրծք տալով թշուառութեան ու նիւթական անբաւարար վիճակի: Ազգային իշխանութիւնները չէին ուզած օգնել ուսումնատենչ այս երիտասարդին: Նամակներ գրած էր Արչակ Չօպանեանին եւ ուրիշներու, որպէսզի անոնք կերպով մը օգնէին իրեն, բայց այդ դիմումներն ալ արդիւնք չէին տուած: Այնուհանդերձ ան յաջողած էր վկայուիլ որպէս բժիշկ: Այլեւս նոր տուն պիտի կարենար վարձել, նոր կարասիներով օժտել այդ տունը: Թէեւ երբեմն կը ստիպուէր հեռու մնալ իր պաշտելի կնոջմէն, Եաննիէն, որ Գերմանիա կ'երթար իր ծնողքին մօտ: Ռուբէն Սեւակ հրաշալի նամակներ կը գրէր իր կնոջը: Կ'ուզէր որ ան իր ուզած ձեւով կահաւորէր իրենց ապագայ տունը: Բայց միշտ ալ ունէր մտասեւեռում մը: Պոլիս վերադառնալու, ու հոն գիրի ու մշակոյթի նուիրուելու մտասեւեռումը: 1912-ի Ապրիլին Լոզանէն իր կնոջը գրուած երկարաչունչ նամակի մը մէջ սապէս կը գրէր.

«... Եւ յետոյ, մենք յարատեւ կերպով Եւրոպա պիտի չմնանք, պիտի գայ օր մը (եւ այդ օրը գուցէ բնաւ ալ հեռու չէ) երբ Պոլիս պիտի երթանք՝ հոն ապրելու ու մեռնելու համար»:

Ռուբէն Սեւակ իր մտադրութիւնը իրականացուց ու 1915 թուականի 24 Ապրիլէն հազիւ տարի մը առաջ, թերեւս նոյնիսկ քանի մը ամիս առաջ Պոլիս եկաւ իր պաշտելի կնոջը հետ: Պոլսոյ մէջ է որ ապրիլ ու մեռնիլ կ'ուզէր: Չարաչուք թուականը առիթը չտուաւ որ առաջինը իրականանայ: Չկրցաւ ապրիլ: Միայն երկրորդն էր որ իրականացաւ: Մահը: Իր նկարագրած վտակին նման, աճապարած էր ան:

ՍԷՐ- ԱՍՏՈՒԱԾ

Ռուբէն Սեւակի ամբողջական գործին մէջ կ'առանձնանայ 16 տողերէ բաղկացեալ սիրուն քերթուած մը, զոր կը կարդանք յուզումով: Կը կարդանք ու կը ջանանք թափանցել այդ բանաստեղծութեան խորհուրդէն ներս: Ի՞նչ պիտի զգացումներով, ինքն իր մասին ի՞նչ պիտի պատկերացումներով էր որ Ռուբէն Սեւակ գրած էր այդ բանաստեղծութիւնը: Հարցումին պատասխան փնտռելէ առաջ, մէկ շունչով կարդանք ամբողջ բանաստեղծութիւնը: Խորագիրն է «Ինչո՞ւ»:

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, թեզի մեղք էր.
Փոքրիկ ծոցիդ թիթե՛ն պէտք էր,
Դուն ծեր արծիւ մը քանտեցիր:
 Կապոյտ աչերդ երբ որ քացիր,
 Կապո՛յտ աղջիկ, պլպուլիմ երգէր.
 Քեզ ալ սիրոյ մը մունջ պէտք էր,
 Դուն գուժկան մոռումչս ընտրեցիր:
Ես կ'երթամ միշտ, անծայրածիր
Դամբաններ են ռոտիս հետքեր,
Քեզ սիրոյ մեղմ սիւժ մը պէտք էր,
Դուն փոթորկիմ կուրծքդ քացիր:
 Կ'այրիմ աչերդ սեւածիր,
 Պիտի մեռնիս, այդպէս մ'երգեր,
 Քեզի փոքրիկ սէր մը պէտք էր,
 Դուն Սէր-Աստուածը սիրեցիր...

Անկարելի սիրոյ մը պատմութիւնն է այս, պատմութիւնը սիրոյ մը, որ յանկարծ կը բռնկի երկու անհաւասարներու միջեւ եւ որ սակայն ապագայ չունի, որովհետեւ կրակ մըն է որ սխալ տեղ ինկած է: Փոքրիկ

ու անմեղ աղջիկ մը սիրահարած է Բանաստեղծին: Եւ Բանաստեղծը չի կրնար ընդունիլ այդ սէրը: Բանաստեղծը գիտէ որ այդ փոքրիկ աղջնակը սխալ ընտրութիւն մը ըրած է: Մե՛ղք այդ աղջկան: Այդ աղջիկը պէտք է իր սրտին սեղմէր զուարթ թիթեռ մը, մինչդեռ հիմա իր կուրծքին կը սեղմէր ծեր արծիւ մը: Սիրոյ մրմունջ մը պէտք էր անոր, մինչդեռ ան ընտրեց Բանաստեղծին գուժկան մոռնչը: Սիրոյ մեղմ ու անուշ հով մը պէտք էր անոր, բայց ան իր կուրծքը բացաւ փոթորիկին: Չէ՛, սխալ ընտրութիւն ըրաւ: Փոքրիկ ու անուշ սէր մը պէտք էր անոր, մինչդեռ ան սիրեց Սէր-Աստուածը:

Այս գողտրիկ բայց մուսյլ քերթուածին տողերուն ետին ի՞նչ թաքնուած է: Բանաստեղծը իր սեփական եսի՞ն մասին է որ կը խօսի երբ կը գործածէ «ծեր արծիւ», «Գուժկան մոռնչ», «փոթորիկ» եւ վերջապէս «Սէր-Աստուած» բացատրութիւնները: Եթէ այդպէս է, ինչո՞ւ այդքան ժխտական պատկերացում ունի ինքն իր մասին:

Բանաստեղծութիւնը գրուած է 1911-ին: Բանաստեղծը հաւանաբար այս թուականներուն է որ Հիւանդանոցի մը մէջ ծանօթացած է այն գերմանուհիին հետ, ժաննիին, որ իր ապագայ կինը պիտի ըլլայ եւ որուն խենդի նման պիտի սիրահարի: Շարունակ «փոքրիկ ժաննի, իմ փոքրիկ ու սիրելի կինս» պիտի անուանէ զինքը: Արդեօք անո՞ր է որ կ'ակնարկէ երբ կը գրէ. «Ինչու, ինչո՞ւ զիս սիրեցիր փոքրիկ աղջիկ»:

Բայց մեզի համար կարեւորը բանաստեղծութիւնն է եւ այս բանաստեղծութիւնը մէկը չէ այն բանաստեղծութիւններէն, որոնք Հովիվուտեան «երջանիկ վախճան» կ'ուսենան: Ասիկա տխուր վախճան ունի: Որովհետեւ Ռուբէն Սեւակի մտածումներուն մէջ սիրոյ ընկերացողը միշտ Մահն է, պաղ ու անգուլթ մահը:

«Սիրոյ ու մահուան երգը» կոչած էր իր ամենագեղեցիկ բանաստեղծութիւններէն մէկը, որուն մէջ, ինչպէս տեսանք, ան կ'ուզէր որ իր սէրը, կորսուած նաւու մը նման, զինքը Սիրոյ կղզիներէն տանէր դէպի Մահ: «Սիրոյ ծարաւ» խորագրեալ ուրիշ բանաստեղծութեան մը մէջ ալ ան հիւանդ պարմանի մը մասին կ'ըսէր.

Տեսէ՛ք, սիրոյ սուրբ քաժակէն
Պարմանն հիւանդ կ'ըմպէ իր Մահ...

Մահը, միշտ գլխազիր գրուած, յաճախանք մըն է բանաստեղծին մտքին մէջ, ո՛վ գիտէ, թերեւս նախազգացում մը: Կարգանք նաեւ «Սէրը» կոչուած սա բանաստեղծութենէն հատուածներ.

Քնարիս եօ՛թն աղիքներէն կանացի
Եօթը որրուկ հառաչանքներ հանեցի.
Ես մի՛շտ ժպտիլ կը կարծէի, մի՛շտ լացի...:
Սէրը մերմակ անհունին մէջ կոյր անձն է.
Սէրը՝ սիրոյ ովսանման չէ՛, իր խա՛ջն է,
Իր ցաւերուն ընդդիմացող ո՞ր քաջն է ...:
Սէրը սէր չէ, մահը մահ չէ, սէ՛րն է մահ,
Սէրն անդունդին մէջ ընկուզումն է անվա՛խ.
Սէրն աչքը գոց ցայգաշրջի՛կն է անմահ...:
Երջանկութեան սեղանին վրայ խրախճան՝
Բեհեզ, կարմիր ծածկոյթին տակ պատմութեան՝
Սէրը կմա՛խք կոչնականն է դաւանան ...:
Կը տեսնե՞ս սա վիհին վրայ Սէր-ակը.
Հագարնե՛ր կուլ է տուեր այդ սե՛ւ ակը.
Իր ջուրէն օր մը խենթեցաւ Սեւակը:

Այս բանաստեղծութիւնը, որ հրատարակուած է Պարսամեանի «Շանթ» պարբերաթերթին մէջ, վերջաւո-

րուժեան Սեւակ անունը կը գործածէ թէ՛ իբրեւ ստորագրութիւն, թէ՛ իբրեւ վերջին տողին տէրբայր: Սիրոյ ակը վիհին եզերքը կը գտնուի, սեւ ակ մըն է ան, հազարներ կուլ տուեր է ան, եւ հիմա Սեւակն է որ կը խմէ անոր ջուրը ու կը խենթենայ:

Սէրը ա՛յս էր Ռուբէն Սեւակին համար եւ թերեւս իրաւունք ունէր երբ ինքզինք կը կոչէր Սէր-Աստուած:

ԵՐԹԱ՞Ն, ԹԷ ԿԱՌՉԱԾ ՄՆԱԼ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՀՈՂԻՆ

Բանաստեղծ ըլլալ ու հեռուներուն մասին չերագել, դէպի հեռուները երթալու փափաքով շտոգորուիլ, կարելի չէ: Ռուբէն Սեւակի շատ գեղեցիկ մէկ բանաստեղծութիւնը կրնայ մեզի վկայել թէ ան ալ երբեմն իր աչքերը կը պահէր հորիզոնին վրայ ու կը մտածէր երթալու, երթալ-հեռանալու մասին: Երթա՞լ: Ո՛ր: Եւ ի՞նչպէս: Կամ ինչո՞ւ:

Բանաստեղծութիւնը կը կոչուի «Երթալ»:

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ անձայն, անհանդէս,
Երթա՛լ առուին պէս՝ մարգերու տակ անտես,
Կապոյտին մէջ՝ հե՛զ, հողմավար ամպին պէս..

Երթա՛լ՝ առանց գիտնալու թէ դէպի ո՞ւր,
Երթա՛լ հեռո՛ւ ոստաններէն այս տխուր,
Երթալ՝ խաւար գիշերին մէջ թախտաբան..

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ առանց մրագի,
Երթա՛լ առանց սուգի, լացի, փափաքի,
Երթա՛լ առանց սովի, առանց պապակի..:

Երթա՛լ մարդոց կոյտին մէջէն լռելիայն,
Օտար մնալ իրենց ծաւին, Գիտութեան,
Երթա՛լ տգէտ, խո՛ւլ, հա՛մր, կոյր յաւիտեան...

Ողջունենք երաժշտական շեշտը որ դուրս կուզայ մեկամաղձոտ այս բանաստեղծութենէն, ուր բանաստեղծը գեղահունչ յանգեր շիներ է տողերու վերջաւորութեան: Բայց ողջունենք նաեւ հոգեվիճակը երթալ ու հեռանալ ցանկացող մարդուն: Երթա՛լ անձայն, հովերէն քշուած ամպերու պէս, առանց գիտնալու թէ ուր կ'երթաս, երթա՛լ առանց ճրագի, ուս թօթուելով մարդոց ցաւերուն ու գիտութիւններուն դիմաց, երթալ՝ առանց բան սորվիլ ուզելու, առանց խօսելու, գոցելով ականջներդ ու աչքերդ:

Աննիւթամալ, անբջամալ, վսեմ, վէս,
Երթալ անցայգ, անայգ երթալ վերջապէս,
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճիմ պէս...

Երթալ, երթա՛լ, չմանչնալ Մարդ ու Աստուած,
Ջոյգ երթալ՝ ձեռքդ թոյր ձեռքի մէջ դրած
Անբջամքիմ ու Սիրոյմ պէս - ախորուած:

Թերեւս պիտի ցանկայինք որ այս հզօր բանաստեղծութիւնը վերջնար տարբեր շեշտով մը, տարբեր պատգամով մը, բայց ա՛յս է բանաստեղծին տուածը եւ մենք արդէն կը տեսնենք բանաստեղծը, որ քոյր հոգիի մը ձեռքէն բռնած, կը հեռանայ մշուշներուն մէջէն, մոռնալ ջանալով ամէն ինչ, մարդ, Աստուած, իրեն հետ տանելով միայն աքսորեալի վէս ճակատը:

Իրականութեան մէջ բանաստեղծին բուն նպատակը հեռանալ ու խոյս տալ չէ: «Երթալ»ու ցանկութիւնը թերեւս բանաստեղծական քմայք մըն է որ մէկ վայրկեան միայն պիտի տեսէ: Ռուբէն Սեւակ ո՛չ միայն պիտի չհեռանայ, այլ նաեւ ընդհակառակը ամուր կառչած պիտի մնայ իր ներկային ու անցեալին, բողոքելով աշխարհի անիրաւութիւններուն ու մարդկային անհաւասարութիւններուն դէմ եւ ինքզինք

նոյնացնելով այն մեծ ողբերգութեան հետ որ իր ժողովուրդին ճակատագիրն է: Մենք կրնանք շատ սիրել անոր քնարական սիրուն բանաստեղծութիւնները, բայց միև կողմէ գիտենք որ այդ քնարաչունչ բանաստեղծութիւններուն համար չէ՛ որ բանաստեղծը ամէն ինչ թողուց ու վերադարձաւ իր հայրենիքը, վերադարձաւ դէպի իր ժողովուրդը, վերադարձաւ դէպի տառապանք ու գողգոթա: Իր երկարաչունչ «պոէմ»ներուն մէջ արդէն կը զգայինք թէ ինչ բանն էր որ կը խլրտէր անոր հոգիին խորը: Ան խորունկ ընդվզում ունէր ամէն բանէ առաջ մարդոց անհաւասարութեան դէմ: Երբեմն աչքերը կը գոցէր ու կ'երազէր հազարումէկ նկարներ, որոնց մէջ կը տեսնէր որ անխրաւուած մարդոց բանակներ կ'ապստամբէին ու «կը տապալէին ամէն ինչ, տաճար, աստուած, կուռք, իշխան, տէր ու կ'երթային հաւասարութեան սերմը ցանելու»: Բայց ատիկա տեսիլք մըն էր միայն, աւա՛ղ: Երբ իր աչքերը կը բանար, կը տեսնէր որ ամայութիւն կը տիրէր իր շուրջ: Այն ատեն կ'երթար եւ իր սուգին դարման կը փնտռէր հոն ուր մարդիկ հաւասար են բացարձակապէս: Գերեզմանը:

Պիտի արժէ որ ուշադրութեամբ ու երկիւղածութեամբ դանդաղինք Ռուբէն Սեւակի այն բանաստեղծութիւններուն վրայ, որոնք քնարի մը լարերը չէ՛ որ կը թրթռացնեն, այլ կը հնչեցնեն մարդկային բողոքներու ցնցիչ շեփորները: Ռուբէն Սեւակ առաւելաբար այդ բանաստեղծութիւններուն մէջ է որ կը յայտնուի որպէս իր ժամանակին մարդասէր բանաստեղծը, անոնց մէջ է որ Սեւակ, մոռնալով Լոզանի Լեման լիճն ու այդ լիճին երջանիկ կարապները, ման կուգայ իր գիւղին եկեղեցիին մէջ, ման կուգայ իր գիւղին ճամբաներուն վրայ, կ'այցելէ իր գիւղին գերեզմանատունը, ականջ կուտայ թրուպատուրներուն, այսինքն աշուղներուն,

կամ հալածուած ու անիծուած երգի իշխաններուն, որոնք ռամիկին համար երգեր կը հիւսեն: Եւ այս բողոքէն վերջ, ան օր մըն ալ վերջապէս իր սիրտը պայթեցու աստիճան կ'ուռեցնէ փողոցի աւելածուի մը նկատմամբ՝ ամբողջ իր զգացած կարեկցութեամբ ու սիրով:

Հիմա տեսնենք թէ Ռուբէն Սեւակ ինչ պատգամներ կուտայ մեզի:

ԳԻՒՂԻ ՊԱՐԶՈՒԿ ԵԿԵՂԵՑԻՆ

Ռուբէն Սեւակ ունի վեց երկարաչունչ պոէմներ, որոնք զրօշ կը պարզեն ընկերային անարդարութիւններուն եւ նոր ժամանակներու այլասերումներուն դէմ: Ասոնք կը կոչուին՝ «Գիւղական եկեղեցիին մէջ», «Գիւղական ճամբուն վրայ», «Գիւղական գերեզմանատան մէջ», «Այս դանակը», «Թրուպատուրները» եւ «Փողոց աւլողը»: Ասոնցմէ ամէնէն նշանաւորը «Թրուպատուրները»ն է: Բայց եթէ մեզի հարցուի, պիտի ըսենք որ միւսներն ալ արժանի են նոյնքան եւ աւելի նշանաւոր դառնալու: Այս պոէմներուն մէջ է որ Ռուբէն Սեւակ կը դառնայ մարդասէր այն մտաւորականը որ իր ժամանակաշրջանի ընկերային հարցերով կը տառապի, ժամանակաշրջանի այլասերումները կը պախարակէ, աղքատին ու հարուստին, իշխանին ու գերիին միջեւ առկայ ահաւոր տարբերութիւնը կը մերժէ, ու կ'երագէ նոր աշխարհ մը, ուր մարդիկ պիտի քանդէին հին բարքերը ու նոր բարքերու մէջ պիտի դառնային իրարու հաւասար ու բախտակից: Կրնա՞նք ըսել թէ թերեւս կը գուշակէր համայնավար նոր վարչակարգի մը մօտալուտ ծնունդը, զոր ինք պիտի չկարենար տեսնել: Թերեւս: Ամէն պարագայի ան կը տառապէր անարդարութիւններու ու անհաւասարութիւններու դի-

մաց: Ան իր երկու պոէմները կը վերջացնէ նոյն երկու հրաշալի տողերով.

Ու գացի ես լուռ, իմ սուգիս դարման,
Հաւասարութեամ դաշտը - Գերեզման..:

Անարդարութիւնները սրբագրելու իր անկարողութեան դիմաց իրեն մնացած է մէկ բան. այցելել գերեզմանատուն ու հոն թեթեւցնել իր սուգը, իր ցաւը, որովհետեւ գերեզմանատունը այն դաշտն է, ուր այլեւս ամէն մարդ իրարու հաւասար է: Թէեւ մահուան մէջ ձեռք բերուած հաւասարութիւն մըն է այս, հողին տակ ձեռք բերուած հաւասարութիւն մը, բայց բանաստեղծը կը հաւատայ որ հոն նայելով է որ կարելի պիտի ըլլայ ստեղծել նաեւ կեանքի մէջ հաւասարութիւնը, նաեւ հողին վրայ՝ հաւասարութիւնը:

Կը սկսինք «Գիւղական եկեղեցիին մէջ» խորագրեալ պոէմով, որուն մէջ Ռուբէն Սեւակ կը լքէ Արեւմտեան աշխարհի փայլուն պատկերները, որոնցմէ ձանձրացած ու նողկացած է: Ձանձրացած է Արեւմուտքէն, ուր «մարդկային խիղճը պարապ բառ մըն է միայն, ուր սէրը հաշիւ է, կեանքը՝ դրամ է»: Բանաստեղծին հոգին հիւանդ է ի տես այս նիւթապաշտ աշխարհին, ուստի կը լքէ Արեւմուտքը ու երեւակայութեամբ ճամբայ կ'ելլէ դէպի իր գիւղին եկեղեցին, կը ճախրէ դէպի «հոռու, խնկաւէտ, լուռ, մշտնջենի, Արեւելքի իր գիւղը հայրենի»: Եւ հոն կայ իր գիւղին եկեղեցին: Կիրակի է: Եւ ինք եկեղեցի կ'երթայ իր ալեւոր մօրը հետ միատեղ:

Պոէմը եօթը էջ բռնած է գրքին մէջ ու մենք այստեղ պիտի կարենանք կարդալ նուազագոյնը: Բայց նախ պիտի չկարենանք անտես առնել այն քանի մը սքանչելի տողերը, որոնցմով կը նկարագրուի եկեղեցին.

Եկեղեցւոյն մէջ մտայ լուսեայն,
 Շէնքը փոքրիկ էր, բայց բաւական լայն
 Աստուածն ու դարե՛րը ամփոփելու...:
 Քար քարի վրայ, ծներ էր, հլո՛ւ,
 Առանց արուեստի, առանց մեծ ոգի,
 Պարզ, ինչպէս ծառ մը որ հողէն կ'աճի.
 Ու քար, ու բազմոց, ու կերոն, ու խաչ,
 Հոն, հիմ դարերու բոյրն ունէին գաղջ...:
 Հոն ո՛չ հեւք, ո՛չ վագք, ո՛չ ժամ, ո՛չ վայրկեան,
 Անսահմա՛ն, անխոռ՛վ, անծա՛լ, յաւիտեա՛ն:
 Զորս պատերու մէջ՝ Անհուն մը խորիմ,
 Ուր մեր գեղջուկներ մեռնի՛լ կը ստրվին:

Ահաւասիկ զիւղին պարզուկ եկեղեցին, որ այնքան
 պարզուկ ու փոքրիկ ըլլալով հանդերձ կրցած է իր
 պատերէն ներս առնել Աստուածն ու դարերը: Բայց
 հոն բացառիկ տօնակատարութիւն մը կայ այդ կիրակի:
 Մեծահարուստ ջոջի մը նորածին որդւոյն կնունքը
 պիտի կատարուի: Ուստի ծեր, մանուկ, բոլորը հա-
 ւաքուած են ու քահանան ալ այդ մեծ օրուան համար
 փոքր քարոզ մը պատրաստած է: Ան երկու կերոններու
 միջեւ կանգնած, կը խօսի ու զեղջուկները երանու-
 թեամբ կ'ուսնկնդրեն քարոզը, թէեւ անոնցմէ ոչ մէկը
 հայերէն կը հասկնայ:

Բայց յանկարծ անակնկալի մը հետ դէմ յանդիման
 պիտի մնանք: Նոյն եկեղեցիին մէջ երկրորդ կնունք
 մըն ալ կայ, այս անգամ աղքատիկ մարդու մը նորա-
 ծինին կնունքը: Ահաւասիկ երկու թափօրներ պիտի
 կազմուին ու ասոնք պիտի հանդիպին իրարու: Ասիկա
 այն դասական հանդիպումը չէ որ կը պատահի երբ
 կնունքի մը թափօրը կը հանդիպի յուղարկաւորութեան
 մը թափօրին: Ո՛չ: Երկուքն ալ ուրախութեան թա-
 փօրներ են:

Ո՛չ: Երկու թափօր, երկուժն ալ ժպտուն,
Մէկը մորածին որդին մեծատուն,
Միւսը աղքատի ծնունդը անտուն.
Մէ՛կը բեհեզով քնացած, միւսն արթուն,
Մէկուն ժամեակներ, մետաքսի հիւսկէն,
Միւսին ձորձ մը խեղճ՝ հօրը շապիկէն.
Առաջնոյն ոսկի, ժամեակ բիւր տեսակ,
Երկրորդին մակտին փուշի սել պսակ.
Մէկը Տէր արդէն, միւսը՝ գրաստ:
Ճակատագի՛ր, վա՛խ, տղաժները փաստ ..:

Ահա ընդվզումի իր սիրտը արդէն բացաւ բանաստեղծը: Եւ տեսնենք թէ՛ դեռ ինչ պիտի ըսէ ան:

ՕՐՕՐՈՅՆԵՐ ԱՅԳԻՆ ՈՒ ՅԱՅԳԻՆ ՄԻՋԵՒ ՏԱՏԱՆՈՂ

Բանաստեղծը իր գիւղին եկեղեցիին մէջ ահաւասիկ կը տեսնէ կնուճքի երկու արարողութիւններ, մէկը հարուստ մարդու զաւկին կնուճքը, միւսը աղքատիկ մարդու զաւկին կնուճքը: Մէկը այնքան փարթամ, միւսը այնքան համեստ: Այստեղ անարդարութիւն մը կայ եւ բանաստեղծը ո՛չ մէկ արդարացում կ'ընդունի այդ անհաւասարութեան համար: Մի՛ ըսէք որ մէկը ազնուական արիւն ունի, մի՛ պաշտպանէք այն տարբերութիւնը որ կը դրուի այս երկու նորածիններուն միջեւ: Անուն ալ մի տաք այդ նորածիններուն, որովհետեւ անոնք այժմէն ունին իրենց անունները: Մէկը Ոյժն է, միւսը Ստրկութիւնն է: Ան որ ոյժ ունի, վաղը պիտի ծծէ միւսին արիւնը: Ու իր ժանիքները պիտի մխէ միւսին միսին մէջ:

Ու բանաստեղծը կը գոչէ նայելով մեծահարուստին

գաւկիւն.

Ողջունեցէ՛ք զայն, Իշխանն է վաղուան:

Ա՛յս է ամբողջ ոգին երկարաշունչ պոէմին, որուն պիտի արտագրենք վերջին 16 տողերը, վերջաբանը, որ արդէն կը բովանդակէ ամենակարեւոր պատգամը.

Ծնրադրած դողդոջ, աչքերս ձեռքիս,
կուրծքիս տակ զսպել կ'ուզէի հոգիս:
Հագա՛ր նկարներ կ'անցնէիմ մտքէս:
Արեան շոգւոյն պէս, նոցիմներու պէս
Բիւր կախադաններ անգութ մեծերու...
Ու հրդեհներու մէջ հեռուէ հեռու
Ստրուկներու կո՛ւռ, քարքարոս գունդեր,
Որ տանա՛ր, աստուած, կուռք, իշխա՛ն ու տէ՛ր
Տապալելով վար, կ'երթայիմ հեռու
Հաւասարութեան սերմը ցանելու,
Ու լայն բաշխելու Արդարութի՛ւն, Հա՛ց...
Այտիս վրայ հրաշէկ արցունք մը դողաց.
Աչքերս բացի, տեսիլք էր միայն.
Ամէնքն ալ գացած, ժամն էր լուելայն...
Ու ե՛ս ալ գացի՝ իմ սուգիս դարման՝
Հաւասարութեան դաշտը - գերեզման...

Ռուբէն Սեւակ, գիւղի եկեղեցիին մէջ նստած վերջ
այս անարդար անհաւասարութիւնը, իր խոկումները
կը շարունակէ յաջորդ ուրիշ պոէմի մը մէջ՝ «Գիւղական
ճամբուն վրայ»: Եկեղեցիէն ելած է ու կը քալէ դէպի
գերեզմանատուն, որ, ինչպէս ըսաւ, մարդոց հաւասա-
րութեան միակ դաշտն է: Բայց գերեզման հասնելէ
առաջ քարի մը վրայ կը նստի պահ մը ու Արեւելքցիի
իր հոգւոյն ծարաւովը կ'երազէ հեռաւոր երկիր մը, ջինջ,

միսթիք, լուելեայն, յաւերժօրէն ծաւի երկինքով, ուր
ժպիտ չկայ, ուր ցաւ ալ չկայ, ուր սէր չկայ թէեւ,
բայց կռիւ ալ չկայ, ուր մարդիկ, բոյսեր ու անասուններ
հազար դարերու մտերմութեան մէջ կ'ապրին առանց
աճելու, բայց առանց նուազելու: Ի՞նչ տեսակ աշխարհ
մըն է այն, զոր կ'երագէ բանաստեղծը, ուր իր իսկ
բառերով.

Ու հոն արեւին գունդին մէջ անշէջ
Բան մը կար կեանքէն անջատ, Կեանքէն վեր,
Բան մը որ Կեանքէն բնաւ չէր ազդուեր,
Որ կը մմանէր Երէկին, Վաղուան...
Այդ՝ Մահուան իսկ մէջ ժխտումն էր Մահուան...:

Բանաստեղծը այլեւս թաղուած է իմաստասիրական
ծանր ու դժուար հետեւելի խոկումներու մէջ, ուր ան
կը համեմատէ Կեանք բառին իմաստը Արեւմուտք-
ցիներու ու Արեւելքցիներու առումով, Կեանք որ
հարցական նշան է Արեւմուտքի մէջ, իսկ Արեւելքի
մէջ միայն կախման կէտ: Բայց ի վերջոյ կեանքը նոյն
անիմաստ կեանքն է, որ մահով պիտի վերջանայ.

Ա՛խ, որովհետեւ ինչ որ ալ ըլլանք,
Գուլիմիս երկինք, ռոֆմերուս տակ հող,
Այգիմ ու ցայգիմ միջեւ տատանող
Օրօրոցներ ենք: Ու ինչ որ անշէջ
է, պիտի շիջի շիրմին մութին մէջ:

Կեանքի ու մահուան մասին իր խոկումներուն մէջ
բանաստեղծը մերթ կը հասնի փիլիսոփայական ծանր
խոկումներու, մերթ ալ տեղ կուտայ բանաստեղծու-
թեան ուժեղ շունչով տաքցած տողերու.

- Ինչո՞ւ շտապել. չէ՞ որ ամէնքս ալ,
Ոմամբ հեւ ի հեւ, ու ոմամբ դամդադ,
Անվրէպօրէն պիտի հասնինք Մահ...
Կեանքն է այս. միշտ սուտ սուտի ետեւէ.
Մէկը հազիւ թէ միւսին չափ տեւէ...:
Շառաչող ծովուն ալիքներուն պէս,
Կը ծնինք ամէնքս, կը քարճրանամք վէս,
Բայց հազիւ ատեն մը կայ փրփրելու...
Պէտք է կորսուիլ, կը կորսուինք հլու ...

Ու այդ քարին վրայ, ուր բանաստեղծը նստած էր
եկեղեցիէն գերեզմանատուն երթալու ճամբուն վրայ,
ան հառաչ մը կ'արձակէ ու գետնէն կը վերցնէ ափ մը
փոշի: Երկարաշունչ պոէմին ամէնէն ցնցող ու հրա-
հանգիչ մասն է թերեւս այս: Բանաստեղծը կը նայի
փոշիի հատիկի մը ու ինչե՞ր կը տեսնէ անոր մէջ, ինչե՞ր
եկած ու խտացած էին հողի այդ փոշիին մէջ: Տեսնե՛նք:

ՓՈՇԻԻ ՀԱՏԻԿԻ ՄԸ ՄԷՉ

Կրկնե՛նք: Բանաստեղծը, գերեզմանատան ճամբուն
վրայ, քարի մը վրայ նստած, գետնէն վերցուց ափ
մը փոշի: Ու նայեցաւ այդ փոշիին: Ի՞նչեր տեսաւ
հոն.

Բայց ի՛նչ կիկլոպներ, իբրեւ թէ անշէջ,
Ի՛նչ ազգեր, կեանքե՛ր այդ փոշիին մէջ:
Ի՛նչ արեան լիճեր, քանի՛ ոսկորներ
Դարերու մէջ հոն փոշի են դարձեր...
- Դիտեցի ուշով, զի՛ս ճանչցայ հոն շուտ -
Նախ քարայրներու քնակիչ մագուստ,
Թետոյ ասպազէն մետաճիգ մը սեգ,
Թետոյ թագաւոր մը - եթէ կ'ուզէք,

Յետոյ ածիլուած գլխով մէկ գերի,
Յետոյ թրուպատուր մը որ կը դեգերի...
Ու հիմա տժգոյն խեղճ մը դող ի դող,
Ո՛չ մարդ, ո՛չ աստուած, ու ո՛չ իսկ քերթող..

Անկարելի է պահ մը կանգ չառնել այս տողերուն վրայ ու անգամ մըն ալ չկարդալ զանոնք: Բանաստեղծը փոշիի մը մէկ հատիկին մէջ տեսաւ ամբողջ մարդկութեան պատմութիւնը, ինքզինք նոյնացուց այն մարդուն հետ, որ երկրագունտին վրայ երեւցաւ որպէս մազոտ նախամարդ, որ յետոյ սակայն եղաւ զինուոր, թագաւոր, գերի, աշուղ, եւ այլն: Ինք, բանաստեղծը, որ հիմա նստած է քարի մը վրայ, այդ փոշիին մէջ կը տեսնէ նաեւ ինքզինքը որպէս այսօրուան վերջակէտը անցեալի բոլոր այդ մարդոց, խեղճ մարդ մը, որ «ո՛չ մարդ է, ո՛չ աստուած է, ոչ իսկ քերթող մը»:

Եւ սակայն այսքան չէ: Բանաստեղծը ղեռ ինչե՛ր պիտի տեսնէ այդ փոշիին մէջ: Ծերուկ Սողոմոնին կարաւանները, կարաւաններ որոնք առասպելային հարստութիւններ կը տանին Կղէոպատրային: Կամ կը տեսնէ Շամիրամին պերճ պարտէզը առկախ: Փոշիին մէջէն կը խօսի տարաբախտ Անթուանն Հովմէացի, կը խօսին այն ժողովուրդները որոնք մեռան արքայի մը համար..:

Ռուբէն Սեւակ այստեղ յանկարծ կը փոխէ պոէմին ուղղութիւնը եւ կ'անցնի կեղեքուած աշխատաւոր մարդուն տրամերգութիւնը ցոլացնող պատմութեան մը: Հոն նստած է քարին վրայ, յանկարծ կը զգայ որ թեւ մը կը զարնէ իր ուսին: Տժգոյն տարեց մարդ մըն է ան: Ո՛վ ես դուն: Մարդը կը պատասխանէ. «Անունս Աշխատութիւն է»: «Ի՞նչ կ'ընես այսպէս»: «Կը մուրամ»:

Բանաստեղծը հիմա արթնցած է իր երազներէն ու

կը հետեւի մուրացկան մշակին, մինչեւ որ կը հասնի
անոր տունը, ուր մարդուն կինը հոգեվարք է, ուր
փոքրիկ զաւակները ուտելիք հաց չունին:

-«Հաց չկայ, կ'ըսէր հայրիկը ինձի,
Մի քանի օր է չեմ երթար գործի:
Կը տեսնես, վերջին օրերն են գուցէ.
Առանց ինձ, աչքերն ո՞վ պիտի գոցէ...»

Փոշիի մը մէջ ամբողջ մարդկութեան անցեալը տես-
նելէ վերջ ահաւասիկ բանաստեղծը մեզ յանկարծ դէմ
յանդիման կը բերէ այժմու կեանքի բիրտ իրականու-
թեան հետ: Սա հիւանդ կինն ալ, անոր աչքերը գոցելու
համար մուրալու իսկ յօժարող սա մշակն ալ օր մը
փոշի պիտի դառնան, բայց մինչեւ որ փոշի դառնան,
ի՞նչ ողբերգութիւն է որ կ'ապրին անոնք: Սա խեղճ
կինը, որ գիտէ թէ պիտի մեռնի, ինչպիսի
քաղցրութեամբ է որ իր ամուսնին կը թելադրէ որ
իրմէ վերջ իբր կին առնէ գիւղին ժրջան աղջիկներէն
մէկը, որովհետեւ գիտէ թէ այդ աղջիկը հաւասար աչքով
պիտի նայի իր զաւակներուն, իր ամուսնոյն ու գոմի
փոքրիկ հորթերուն...

Այս տեսարանը այլեւս անհանդուրժելի է: Եւ մեր
բանաստեղծը այս երկարաչունչ ու ծանր պոէմը
կ'աւարտէ սա սքանչելի տողերով.

Դուրս ելայ տունէն, մարմինս փուշ փուշ,
Խորհեցայ կեանքին իմաստին ապո՛ւշ,
Թէ ինչպէս ստրուկ կիրճերու հլու,
Մարդ աւելի վարժ է մուրալու,
Քան պապեմական օրհնած դանակով,
Քիչ մը վախցնել -գոնէ՛ կատակով-
Մեր ոսկեճոյլ մոր Աստուածները կո՛վ...:

Խորհեցայ թէ Դրամ միապետին ինչ
հնչ տժգոյն ըմբիշ մ'է Աշխատութիւն:
Խորհեցայ անգամ մըն ալ անարիւմ
Այն բուռ մը «Նորին Վսեմութեանց» վրայ
Որոնց շնորհիւ երկիր կը դառնայ:
Խորհեցայ Ոյժիմ վրայ մտովի,
Ու այն հտպիտին որ օրէնք կ'ըսուի...:
Ու գացի ես լուռ, իմ սուգիս դարման,
Հաւասարութեան դաշտը - Գերեզման...:

Ահաւասիկ այս երկրորդ պոէմն ալ, որ արդէն
չարունակութիւնն էր առաջինին, վերջացաւ նոյն երկու
տողերով, «Ու գացի ես լուռ, իմ սուգիս դարման,
Հաւասարութեան դաշտը - Գերեզման»:

Բայց անկէ առաջ ան նզովեց օրէնք կոչուած սա
խեղկատակ հտպիտը, որ այնքան անարդար է համեստ
ու աշխատունակ մարդոց նկատմամբ: Բանաստեղծին
ընդվզումը այնքան մեծ է, որ ան մինչեւ իսկ օրհնեալ
կը նկատէ պապենական դանակը, գոնէ անով վախ
պատճառելու համար մեր օրերու Ոսկեձոյլ
աստուածներուն, որ դրամն է ու բիրտ ուժը:

Է՛հ, սիրելի բանաստեղծ, ճիշդ է, միայն գերեզմա-
նատան հողին տակն է որ ոսկին կը հաւասարի երկա-
թին, ուր Աշխատաւորը կը միանայ Արքային, ու
հարուստն ու աղքատը իրարու կը միանան փոշիի
հատիկի մը մէջ:

ԱՆՈՒՆՍ ՄԱՀ Է

Ռուբէն Սեւակ, կեանքի անիրաւութիւններուն ու կեանքի խորհուրդին մասին իր խորհրդածութիւնները աւարտին պիտի բերէ «Գիւղական Գերեզմանատան Մէջ» խորագրեալ պոէմով, որ շարքին երրորդն ու վերջինն է: Բանաստեղծը, որ Արեւմտեան արեւելք վրայ նստելով հանդերձ, երեւակայութեամբ գնաց դէպի իր գիւղի եկեղեցին, յետոյ դէպի գերեզման գացող ճամբուն վրայ պահ մը նստաւ, հիմա կը մտնէ գերեզմանատուն: Ինքն է որ կ'ըսէ սա բառերով.

«Եթէ մարդ անգամ մը սկեպտիկ ժպիտով մը դանդաղօրէն խմած է կեանքի մրուրը, եթէ ամբողջ կամքովը անգամ մը ծառայած է այն մեծ վարպետին որ Վիշտ կը կոչուի, եթէ անգամ մը նայած է դժնէ Պատմութեան միւս երեսին, եթէ ճշմարտութիւնը ճանչնալու ծարաւով անգամ մը քննած է կապոյտ երկնքին պարապը, այդ մարդուն համար արդարեւ ուրիշ վայր մը կա՞յ աւելի քաղցրիկ հեշտանքով յղի, քան գերեզմաննոց մը աղքատիկ գիւղի»:

Լուռ նստած թարի մը վրայ տապան,
Դիտեցի լռիմ այդ վայրը խոպան,
Ու գուր խորհեցայ թէ այս այն վայրն է
Ուր վաճառական Աստուած մը դժմէ
Չարը կը պատժէ անսահման վախով,
Բարւոյն շնորհելով դրախտ մ'ապահով:
Ընկղմած ծոցն այդ Մահուան Քաղաքին,
Ջուր խորհեցայ թէ անմահ էր հոգին...:
Անմահ, բայց չէ՞ որ երկնից մէջ գարնան
Բիւր գիսաւորներ մոխիր կը դառնան.
Աստղեր կը վառին, աստղեր կը սառչին,
Կը լո՛ւ ցայգին պլպուլը վերջին,

Բոյս ու կենդանի կ'իյնան անկենդան,
Ամէն, ամէն բան մահուան գոհ կ'երթան:
Ու երկնքիմ հիւր՝ լոկ մարդն է տխուր,
Ամմա՛հ, միմչեւ ե՞րբ, եւ ինչպէ՞ս, եւ ո՞ւր:

Ահա որ բանաստեղծը, մարդկային ընկերութեան մէջ առկայ ինչ ինչ անիրաւութիւններէն մեկնելով, սկսած է խոկալ կեանքի ու մահուան հակասական պատկերներուն վրայ: Ի՞նչ անմահութիւն, կը բողոքէ ան, երբ կը տեսնէ թէ շուրջը ոչինչ անմահ է: Միայն մարդն է որ դիեցուցեր է անմահութեան Յոյս մը: Անմահութեան վրայ կը խոկա՞յ սարերու ծեր եղնիկը, երբ կը նայի անդունդն ի վար անյատակ, կամ գայլը, երբ փոքրիկ մացառներու մէջ կը նայի զնդակահարուած իր հօր: Միայն մարդն է որ ստեղծեր է անմահութեան յոյսը: Օ՛, ինչ լաւ կ'ըլլար եթէ մարդը իրապէս անմահ ըլլար...

Ա՛խ, ամմահ ըլլալ... Ապրիլ յաւիտեան,
Ի սպառ չունենալ ո՛չ դար, ո՛չ վայրկեան,
Ժամանակիմ պէս, ժամանակիմ մէջ,
Տէրա՛լ, տառապիլ, բայց ապրի՛լ անվերջ:
Միրտը արիւնոտ, մարմինը հիւանդ,
Յոգնարեկ, ի՛նչ փոյթ, ապրիլ մամաւանդ...
Քար մ'ըլլալ ամարգ, ապառաժ մ'անխօս,
Գէթ միհար առուակ մ'ըլլալ մշտահոս,
Ծառ մը դարաւոր, մետաղ մը միայն
Ամմիտ, անզգայ, չմեռնիլ սակայն...:

Մարդուս սրտի խորերէն բարձրացող այս բողոքին դարձեալ ինքն է որ կը պատասխանէ.

- Աստուածացեալդ Մարդ, ամօք քեզ, ամօք,

Մութ, ամբարտաւան խրոխտութեամ անօթ,
Դեռ ամէն գնով կը կառչիս հողիմ...:
Նայէի՛ր աշնան տերեւիմ դեղիմ...:

Ահա պատասխանը: Սեւակ չի հանդուրժեր որ մարդ
այնքան թշուառութիւն եւ նուաստութիւն ընդունի
ի սէր անմահութեան ու հողի: Նայէ դեղնած հոգեվարք
տերեւիւն եւ օրինակ առ անկէ:

Յուսահատ, թէ իրատես, անհաւատ թէ յուսախար,
մեր բանաստեղծը չի հաւատար հոգիի անմահութեան
եւ այս երկարաշունչ պոէմին վերջին տողերուն մէջ
կուտայ ցնցիչ եւ տխուր պատգամ մը: Սրտի սարսուռով
պիտի կարգանք այդ տողերը, որոնք սակայն Ռուբէն
Սեւակին վերջին խօսքերը չեն բարբախտաբար.

Ինկայ ու մտիկ ըրի սգահար
Ձայնի մ'որ քարիմ մերժեւ կը դողար.
- Ե՛ս եմ, Ե՛ս եմ, Ե՛ս, քեզ եղբա՛յր, քեզ քոյր,
Ե՛ս տիեզերքիմ աչքը կոյր,
Ե՛ս սկիզբ եւ վերջ, երախ ու արգանդ,
Ե՛ս վիհ անյատակ ու ծոց արգաւանդ.
Ե՛ս այն եմ որ քեզ ծնաւ, մաեւ այն
Ջոր պիտի ծնիս: Ե՛ս ձայն լուելայն:
Ես օրհնութիւնն եմ, քարի՛քը վերջիմ,
Ես այն եմ որմէ ամէնքը կը փախչիմ,
Եւ որմէ փախչիլ չկայ: Հաւասար
Ներումն եմ անոր որ ինձ կը յուսար,
Անոր որ հեզմեց զիս առանց խղմի,
Ամէնունն ալ վրայ իմ մարգս կ'աճի...:
Մանգաղս ո՞վ պիտի համբուրէր անահ...:
- Ինձ Աստուած ըսիմ, իմ անունս է Մահ...:

Մա՛հն է, Բնութի՛ւնն է որ իր կանանչ խոտին տակ

իրարու կը հաւասարացնէ բոլոր մահկանացուները հաւասարութեան սա դաշտին մէջ, որ գերեզմաննոց կը կոչուի:

ԽԵՂՃ ԲԱՐԻ ԱՇԽԱՏԱՒՈՐ

Ռուբէն Սեւակի վեց պոէմներէն չորրորդը կը կոչուի «Այս դանակը»: Մօտաւորապէս եօթը էջ երկարութեամբ այս պոէմին նիւթը քիչ մը երեւակայածին ու կամայական է, չենք կրնար ըսել որ համոզիչ նիւթ մըն է, բայց կարեւորը՝ այն պատգամն է որ դուրս կուգայ այդ պոէմէն: Եւ պատգամը դարձեալ մարդոց անհաւասարութեան մասին է:

Կեանքի բեմը երկու բաժիններ ունի: Մէկուն մէջ նստած են մեծահարուստները, գործատէրերը, գործարանատէրերը, որոնք բնաւ չեն ազդուիլ հրապարակին վրայ տիրող անգործութենէն, վերջ կուտան իրենց պաշտօնեաներուն գործերուն, բայց իրենց տուներուն մէջ կը շարունակեն ուտել-խմել, զուարճանալ, երգել ու պարել: Իսկ միւս բաժնին մէջ կան չքաւոր մարդիկը, իրենց գործէն նետուած աշխատաւորները, որոնք հաց չեն կրնար տանիլ իրենց անօթի գաւակներուն, նոյնիսկ եթէ անոնք հիւանդ են կամ մահամերձ:

Բանաստեղծին հետ կը մտնենք տունէ մը ներս, ուր ծերունի այր ու կին մը յուսահատօրէն կը նային իրենց սովահար գաւակներուն, որոնցմէ մէկը արդէն իր հոգին աւանդած է: Երախաները հաց կ'ուզեն իրենց հօրմէն, բայց հայրը չէ կրցած հաց բերել, որովհետեւ գործարանէն նետուած է, անգործ է: Ու դեռ հոն իր ճերմակ պատանքին տակ անշունչ կը պառկի գաւակներէն մէկը: Աղքատիկ մարդու մը տղուն մահը: Ասիկա որքան տարբեր է հարուստ մարդու մը տղուն մահէն.

- Մահ.. Ինչ տարրեր է մահը հարուստ տղուն:
Ան երագ մ'է լուռ ցնծումով քեղուն,
Ան կեանքէն միայն մանչցաւ նրբագո՛յն
Բեհեզները վառ, ժանեակը գոյն գոյն,
Մանեակներն ոսկի, ընծաներն առատ
Եւ չգիտցաւ որ թանկ լարերը վզին
Հագար խեղներու մահով կը դիզուին:
Մի՛նչդեռ այս փոքրիկ մեռելն աղքատին,
Ճանչցաւ կեանքն իր խուլ ցաւին մէջ յետին.
Ո՛չ ծաղիկ, ո՛չ խիւնդ, ո՛չ ժպիտ, ո՛չ երգ.
Կեանքը վիշտ կարծեց, աշխարհքը մի վէրք:

Գործարաններուն դռները փակ են ամիսէ մը ի վեր
արդէն: Բանուորները ամբողջ նետուեր են փողոց,
մինչդեռ բոլորն ալ քանի մը տղոց հայր են: Այո՛,
գործերը լաւ չեն, հասկցանք, բայց ինչո՞ւ միայն
աշխատաւորին համար:

Թէ քանուորն այնքան արտադրեր է շատ,
Ինչո՞ւ հաց չունի քանուորն անաշխատ:

Այս տխուր մթնոլորտին մէջ է որ սովահար երախա-
ներէն մէկը դարձեալ հաց կը խնդրէ իր մօրմէն: Մայրը
կատաղի գայրոյթով մը տեղէն կը ցատքէ, սեղանէն
կը վերցնէ հին դանակ մը, դայն կուտայ իր ծերուկ
ամուսնին, ու կը պոռայ.

- Հաց ճարէ՛: Հե՛տդ ըլլայ Աստուած:

Ծերունին հիմա, դանակը ձեռքին, կ'երթայ մէկը
գարնելու, որպէսզի փրկէ իր անօթի տղան:

Քամին կը գողայ, ձիւնի փաթիլները կը թռչտին,
բանուորը, որ գրեթէ սառած է, կը կանգնի տան մը
առջեւ: Գործարանատէրերէն մէկուն տունն է այդ,
ուրկէ ներս խրախճանք կայ, հակառակ որ գործերը

բնաւ ալ լաւ չեն:

Ծերուներն իր դանակով պիտի զարնէ այն առաջին մարդուն, որ դուրս պիտի գայ տունէն: Եւ ահա կուգայ մէկը: Բայց ի՞նչ անբախտութիւն: Այդ մէկը իր իսկ գործատէրն է: Ձեռքը կը քարանայ.

Աչքերը կարմիր, բանուորը գոռաց.
«Գոթութիւն, պարոն, ընտանեաց հայր եմ.
Զգոյշ մերժելու: Ձեր հոգին կ'այրեմ»:

Սպառնալիքը գործ կը տեսնէ: Մեծահարուստը գետին կը նետէ ինչ որ կայ վրան, ժամացոյց, շղթայ, դրամ: Ու սարսափահար կը փախչի-կ'երթայ: Ծերունի բանուորը ապշահար է: Մէկ կը նայի իր տիրոջ ետեւէն, մէկ ալ իր բարի ձեռքերուն, եւ ձեռքին մէջ՝ դանակին: Կը փղձկի, կը յուզուի ու կը պոռայ իր գործատիրոջ ետեւէն, որպէսզի ան ետ գայ ու առնէ իր ոսկիները: Սա ազնուական զգացում մըն է: Մարդուկը չէ կրցած իրեն վայլեցնել դանակով այս սպառնալիքը:

Եւ ահա թէ բանաստեղծը ինչ պիտի ըսէ այդ խեղճ մարդուն.

- Ո՛վ բարի բանուոր, ծե՛ր բարի բանուոր,
Թէ այնքան անպէտ ես մարդկութեան՝ որ
Ճարելու համար ապրուստ մը յետին
Կ'ապաւիմիս վատ դանակիդ ետին,
Թէ սեփական կեանքդ իժի մը պէս՝
Ուրիշի մահով պիտի ապահովես,
Թէ պիտի դաւես մութին մէջ լոնլեայն
Հոգ չէ թէ գաւկիդ համար ըլլայ այն...
Դէ՛հ, գնա մեռիր - մեռեր ես արդէն,
Մարդկութեան ի՛նչ խեր մարդասպան մարդէն:

Մարդասպան մարդէն ի՛նչ խեր կայ մարդկութեան: Եթէ զաւակներուդ չկրցար սորվեցնել ապրիլ ատելով, եթէ չկրցար սորվեցնել կեանքին դէմ կուրծք տալ, ուրեմն խօթէ դանակը աղիքներուդ մէջ եւ գոնէ զաւակներուդ սորվեցուր քաջաբար մեռնիլ:

Այդպէս ալ կ'ընէ խեղճ բանուորը եւ վերջ կուտայ իր կեանքին, ձիւներուն վրայ ձգելով արիւնոտ դանակ մը: Բայց այդ արիւնը ի՛ր արիւնն է, ո՛չ թէ ուրիշին: Եւ բանաստեղծը կ'ըսէ չքաւոր մարդուն.

կրնայիր արեան վրայ հիմնել օրէնքդ ապագայ
Բայց կը սպասես որ խաղաղութեամբ գայ
Արդարութեամբ գայ, գայ տարուէ տարի
Ջրկուած մարդկութեան երագը քարի:

Չքաւոր մարդոց այս բարի երագը ե՞րբ պիտի գայ:
Բայց Ռուբէն Սեւակ դեռ ըսելիք ունի մեզի:

ՄԱՐԴԸ ՈՐ ՓՈՂՈՅ Կ'ԱՒԷ

Ռուբէն Սեւակի վեց երկարաչունչ պոէմներէն հինգերորդն է «փողոց աւլողը»: Աւելի ճշգրիտ բառով աւելածուն: Այն խեղճ ու անփառունակ մարդը, որ ուրիշ գործ չէ կրցած գտնել եթէ ոչ փողոցները աւլելու գործը:

Այս պոէմը կը բերէ աղքատութեան ու մարդու անհաւասարութեան դէմ Սեւակին ամէնէն ուժեղ պողովկումը եւ կարելի է երկար ու երկար վերլուծել այդ բողոքին պարունակութիւնը: Ի՛նչ մեղք որ այդքան լայն տեղ չունինք այստեղ: Կանգ պիտի առնենք պոէմին ամէնէն հիմնական տողերուն վրայ:

Աւելածուն հոն է, բանաստեղծին պատուհանին ճիշդ դիմաց, ամայի փողոցին մէջ, ձիւնածածկ ու ցուրտ:

Ծերուկ աւելածուն առտուընէ ի վեր աշխատած է արդէն փողոցը աւլելու, ձիւները մաքրելու, ցեխերը անդին հրելու համար: Աչքերը թաց են խեղճ մարդուն, կ'արտասուէ, կը տառապի, կը դողայ: Այս անփառունակ աշխատանքը շատ է իրեն համար:

Տէրը ինչո՞ւ կերտեց Մարդը ոչինչէն:
Այս կեանքի՞ն համար: Իրեն համար չեն
Երկինքն աստղագարդ, պլպուլը ցայգին,
Ջեփիւռն առտուան, գինեբեր այգին,
Կապոյտ երակները՝ Թոնիրին մօտ,
Իր ծեր հասակին՝ ձեռքեր խնամոտ:
Բարէ՛, կեանք է այս: Աշխատիլ սովա՛ծ,
Ուտելու համար գիշերը սոխ-հաց:
Մենիլը լաւ չէ՞ այսպէս ապրելէն...:
Մարդերն ի՛նչ անյագ կենդանիներ են...:

Այսպէս կը խորհրդածէ բանաստեղծը, երբ պատուհանէն կը նայի ծերուկ աւելածուին: Այո՛, իրաւ է, այս մարդն ալ ինչո՞ւ չկարենար վայելել կեանքի այն բարիքները, զորս կը վայելեն բախտաւոր մարդիկ:

Բայց այստեղ ուշադրութի՛ւն սա վերջին տողին. «Մարդերն ի՛նչ անյագ անասուններ են»: Ասիկա տող մըն է որուն նմանը կը կրկնուի այս պոէմը բաղկացնող եւ իւրաքանչիւրը 10 տողերէ կազմուած 15 տուներէն իւրաքանչիւրին վերջաւորութեան:

Մինչեւ մերմկցան իր մօրուքն ու մագ,
Կեանքէն սորվեցաւ քան մը հագիւ հագ.-
Ճակատագրական ուժը Արգանդին:
Իր խելքը չ'անցնիր այդ կէտէն անդին:
Աշխատութեան ահա դարձաւ ծեր,
Բայց իր հացը չոր շո՛ւն մը չի կրծեր:

Մի՛նչ անդին ու՛մե՛ք ծնած վայրկեանիմ
իշխան եմ արդէն, կամ ոսկի ունիմ,
Ու աղքատիմ բաղդը կը տնօրինեմ...:
Մարդերն ի՛նչ ինքուստ կենդանիներ են...:

«Մարդերն ի՛նչ անյազ անասուններ են», յետոյ
«Մարդերն ի՛նչ քոսոտ անասուններ են»: Ահա նոր
թէքնիք մը, որ տարօրինակ երաժշտականութիւն մը
ու եռանդուն կշռոյթ մը կուտայ երկարաշունչ պոէմին:
Բայց անկէ առաջ ուշադրութի՛ւն վերի սա հրաշալի
սահմանումին: «Կեանքէն հազիւ թէ բան մը սորվեցաւ,
եւ ատիկա Արզանդին ճակատագրական ուժն է»: Ար-
զանդին ճակատագրականութի՛ւնը: Մարդուն ճակա-
տագիրը հո՛ն է որ կը ճշդուի արդէն, Արզանդին մէջ:
Նայած թէ ո՞ր արզանդէն է որ դուրս պիտի գաս: Աղքատ
կնո՞ջ, թէ մեծահարուստի:

Եւ այստեղ Ռուբէն Սեւակ կը սկսի իր սլաքները ուղղել
դէպի պետական համակարգը, դէպի իշխանութիւն-
ները, դէպի կառավարութիւնը, որուն հոգը չէ թէ
աղքատ մարդը ի՛նչպէս պիտի ապրի: Կեցցէ՛ կառավա-
րութիւնը, որ նախ կը սպաննէ, ապա կը թաղէ
ձրիօրէն:

Կառավարութի՛ւն: Ինչ բարի՛, բարի՛ ...
Աղքատիմ դպրոց է բացեր ձրի,
Որ հոն սորվեցմէ կարդալ ու գրել,
Օրէնքի առջեւ կոնակը ծոնել,
Գիտնալ որոշել չարը ու բարին,
Սեփական փողէն տուրք տալ կեսարին,
Ըլլալ հնազանդ մէկ կաթնատու կով,
Ջօրք գրուիլ, մեռնի՛լ արքային կամքով,
Յարգել հարուստիմ վաստակն անօրէն...:
Մարդիկն ի՛նչ ինչօք կենդանիներ են...:

Քաղաքական հզոր պատգամ կայ 1911-ին գրուած այս պոէմին մէջ, հրաւէր մը՝ ապստամբութեան ու յեղափոխութեան: Մարդիկը խելօք, նաեւ անմիտ կենդանիներ են, որոնք կ'արտօնեն որ հարուստները կեղեքեն զիրենք: Մա'րդ, վերջ տուր այդ խելօքութեան.

Ու սորվէ ատել մողկամբով անհուն
Անոմք որ «փրկչի» կը կրեն անուն:
Սորվեցուր տղոցդ ատել՝ արգանդէն
Քաղաքագէտները ամէն գոյմի,
Որոմք կը սպաննեն քեզ առանց թոյմի:
Սորվեցուր իրենց խօսքը յետագայ.
«Աղքատին համար քարեկամ չկայ»:
Փոքրերն անվրէպ մեծերուն կեր են:
Մարդերը կատղած կենդանիներ են...:

Ռուբէն Սեւակ հիմա Լեմանի լիճին գեղեցիկ փերէն շատ հեռացած է միտքով ու տրամադրութեամբ: Կը զգանք որ ատելութիւն կայ անոր սրտին մէջ բոլոր անոնց դէմ, որոնք ոչի'նչ կ'ընեն այս անարդարութիւնները սրբազրելու համար: Կ'արժէ որ հարց տանք: Ռուբէն Չիլիսկիրեան-Սեւակ որքա՞ն պիտի յուսադրուէր, եթէ զոհ չերթար 1915-ի ողբերգութեան ու շարունակէր ապրիլ՝ տեսնելով Խորհրդային Միութեան մէջ համայնավար կարգերու ստեղծումը: Բայց այս հարցումին պատասխանելէ առաջ՝ եկէ՛ք կարդանք այս հրաշալի պոէմին վերջին մասն ալ:

ՄԱՐԴԵՐԸ ԿԱՏՂԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ

Փռփրերն անվրէպ մեծերուն կեր են:
Մարդերը կատրած կենդանիներ են...:

Ռուբէն Սեւակի այս բողոքը, որ կուգայ մարդասէր մարդու իր սրտի խորերէն, արդէն յանգած է ծանր վճիռի. ան կ'ուզէ որ չքաւոր մարդիկը անդրադառնան այն անարդարութեան, որ կը գործուի իրենց դէմ, անդրադառնան ու դիրք գրաւեն այդ անարդարութեան դէմ, չհամակերպին, ատելութեամբ փոխադարձեն կեղեքիչներուն:

Սակայն այս մարդասիրութիւնը պահ մը կը տանջէ անոր սիրտը: Արդեօք ինք ո՞ր դասակարգին մէջ կը գտնուի: Ինք որ հիմա իր տաք սենեակին մէջ նստած՝ բանաստեղծութիւն կը գրէ, մինչ ծեր աւելածուն ցուրտ փողոցին մէջ սալաքարերը կ'աւլէ:

Աղքատասէր սիրտ մ'ունիմ ե՛ս ինքս ալ.
Թէ անկեղծ է այդ՝ քաղցր է ինձ յուսալ.
Այդ ծերը եղբայրս է, գրա՛ծս վկայ.
Մէկ տարբերութիւն միայն եթէ կայ,
Մի՞նչ ես կը գրեմ տողեր խնամոտ,
Սիկառ մը բերնիս, վառարանիմ մօտ,
Ու քիւր յանգերու մէջ քաղցրահնչիւն
Կը փնտռեմ կեանքի «ինչպէսն ու ինչուն»,
Ծերը այս ցուրտիմ կ'աւլէ խեղճօրէն...
Մարդերն ի՛նչ ահեղ կենդանիներ են...:

Ահաւաստիկ բանաստեղծին «աղքատասէր» սիրտը տանջանք մը ունի: Այդ ծեր աւելածուն, ինչ ազգութեան ալ պատկանի, իր եղբայրն է: Այսինքն բանաստեղծը կ'ուզէ ինքզինք դասել այդ աղքատիկ մարդուն,

այսինքն անիրաւուած մարդուն դասակարգին կամ անոր համակրող մարդոց դասակարգին մէջ: Բայց կարեւոր տարբերութիւն մը կայ մէկուէն ու միւսին միջեւ: Որքան ալ եղբայրասէր ըլլայ, ինք տաքուկ սենեակի մէջ է, բանաստեղծութիւն գրելով է որ կ'արտայայտէ իր եղբայրութիւնը, այլ ո՛չ թէ ինք ալ փողոց իջնելով, աւելածուին աւելը առնելով, անոր գործնապէս օգնելով այդ ցուրտ փողոցին մէջ: Բանաստեղծը կրնա՞յ մինչեւ հոն տանիլ եղբայրասիրութիւնը: Չի կրնար: Ուրեմն անկարելի եղբայրութեան մը խոստովանութիւնը կայ այստեղ:

Ո՛վ փողոց աւլող, ո՛վ եղբայր, ո՛վ ծեր,
Քու պարզ ներսիդիդ դժոխք եմ դարձուցեր:
Ու դու՛ն կը խորհիս. ինչո՞ւ է այս կեանք.
Լաւ չէ՞, որ շուտով մեռնիմք, հող դառնանք,
Թէ վարձատրութիւն չկայ աղքատին
Ո՛չ մահէն ասդին, ո՛չ մահէն անդին,
Թէ պատիժ չկայ հարուստ անգութին
Ո՛չ մահէն ասդին, ո՛չ մահէն անդին.
Ապա թող ամենքն իրար յօշոտեն...
Մարդերն ի՞նչ երկչոտ կենդանիներ են...

Քիչ առաջ ըսինք: Բանաստեղծին մարդասիրութիւնը կամ աղքատասիրութիւնը ուղղեալ է բոլոր մարդոց, առանց ազգութեան: Ասիկա համամարդկային սէր մըն է, որ ծնունդ կ'առնէ երկրին վրայ տիրող ընկերային անարդար պայմաններէն: Այս համամարդկային սէրը շատ յստակ կերպով Ռուբէն Սեւակը տարբեր կը դարձնէ մեր միւս դասական բանաստեղծներէն: Ռուբէն Սեւակ քնարերգակ բանաստեղծ է ինչպէս Վարուժան մը, Մեծարեանց մը, Զարիֆեան մը, Դուրեան մը, Ռուբէն Սեւակ ազգաշունչ բանաստեղծ է ինչպէս Սիամանթօ

մը, Վարուժան մը: Բոլոր այս բանաստեղծները իրենց քնարը հնչեցուցած են սիրահար մարդը կամ ցեղին սիրտը խօսեցնելու համար: Բայց մեր դասական այս բանաստեղծներէն ո՛չ մէկուն քով կրնանք գտնել ընկերային համատարած ու միջազգային անարդարութիւններու դէմ այնպիսի բողոք մը, որպիսին կը յայտնուի Սեւակի «փողոց աւլողը» պոէմէն: Այս գիծն է որ Սեւակը կ'անջատէ միւսներէն եւ կը դարձնէ ամբողջ մարդկութեան պաշտպան փաստաբանը: Այս գիծն է որ քնարասէր ու ազգասէր Ռուբէն Սեւակին ինքնութեան մէջ կ'աւելցնէ նաեւ համամարդկային սիրոյ առաքեալի մը ինքնութիւնը: Ռուբէն Սեւակի մարդասիրական վերջին պատգամը թաքնուած է սա պոէմին վերջին տողերուն մէջ, ուր բանաստեղծը կը սգայ Աստուծոյ մահը՝ հաւատացեալ ազքատ մարդու սրտին մէջ: Այսինքն հաւատքին մահը:

Ու ես գիտեմ որ, ցած խշտեակիդ մէջ
Ձմեռ գիշերներ գետնին վրայ գէջ
Լուռ մտմտամբով երբ որ կը դիտես
Որքերդ քնած հրեշտակներու պէս
Որ կը հասուննամ վաղուան գերութեան
Ու անվաղորդայն անիմաստ Մահուան,
Կը փղձկի ծեր սիրտդ սուգով լեցուն՝
Ձեր միակ պաշտպան բարի Աստծուն
Որ մեռցուցին ինչ մէջդ անգթօրէն...
Մարդիկ ինչո՞ւ վատ կենդանիներ են...:

Կրկնենք որ այս տողերը գրուած են 1911-ին: Տասնամեակ մը վերջ շատ բան պիտի կործանի աշխարհի մէկ հատուածին մէջ, մարդիկ պիտի ապստամբին տիրող կարգերու դէմ եւ յանուն հաւասարութեան ու մարդկային անարդարութեան, պիտի հռչակեն նոյնիսկ

Աստուծոյ մահը: Ռուբէն Սեւակը այդ տեսիլն է որ կը տեսնէ արդեօք իր այս պոէմին մէջ:

ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ (1)

Ռուբէն Սեւակի երկարաշունչ վեց պոէմներէն վեցերորդին մէջ մթնոլորտը պիտի փոխուի: Այս պոէմը, որ կը կրէ «Թրուպատուրները» վերնագիրը, Ռուբէն Սեւակի ամէնէն ծանօթ գործերէն մէկը կը նկատուի, բայց կարելի է տարակուսիլ: Թերեւս քիչեր միայն զայն կարգացած են ուշադրութեամբ: Սեւակ այդ բանաստեղծութիւնը ձօներ է իր բանաստեղծ ընկերներուն: Որովհետեւ այս պոէմին մէջ բանաստեղծներուն գովքը կը հիւսուի: Թրուպատուրները: Այսինքն աշուղները, կամ երգիչները: Մարդիկ որոնք ժողովուրդը կը զուարճացնեն կամ կ'ազնուացնեն իրենց արուեստով ու իրենց նուագով:

Երբ կը սկսիք կարդալ այս պոէմը, յանկարծ կրնաք կարծել որ կը դիտէք շարժանկարի ժապաւէն մը: Ահաւասիկ գիւղին հրապարակին վրայ եռուզեռ կայ, պատրաստութիւն, նաեւ յուզում, որովհետեւ «Թրուպատուրներ»ը կուգան, ինչպէս կուգայ կրկէս մը, որուն արուեստագէտներն ու լարախաղացները արդէն սկսած են ցոյց տալ իրենց արուեստէն նմոյշներ, մինչ անոնց գործակիցները կը լարեն այն ընդարձակ վրանը, որուն տակ պիտի սարքուի հանդիսութիւնը: Կէսօր է, օդը տաք է, այնքան տաք է, որ ժողովուրդը տակաւին չ'աճապարեք դիմաւորելու «Թրուպատուրներ»ը: Բայց «Թրուպատուրներ»ը կուգան արդէն.

Թրուպատուրներն են, տեսէ՛ք, իրե՛մք են,
Ծռանդո՛ւն, անփո՛յթ, գո՛հ կը մուագեն
Հրակէզ արեւուն տակ հրապարակին:

Կիսախուփ փեղկերէ, տարեց, տղայ, կիմ
Կ'երեւամ քիչ քիչ: Կէսօրի տապէն
Շատ քիչերն են որ տեսնել կը շտապեն
Թրուպատուրները:

Տարօրէն դէմքեր: Ամէնքն, էգ, արու,
Բախտէն կատաղի հալածուողներու
Անտում ընտանիք մը քայլամուտ:
Փողոցի ստոյգ հանգարներ բուռ,
Նուագելու համար պէտք չունին մօթի,
Կ'ապրին երգելով, կը մեռնին մօթի,
Թրուպատուրները:

Ռուբէն Սեւակի սիրտը այդ Թրուպատուրներուն հետ
է: Անոնք ուրտեղերէ անցեր ու եկեր են, Նեղոսի
ափերէն մինչեւ Ուրալները, եւ քանի քանի ընկերներ
ճամբուն վրայ հողին տուեր են: Յանուն արուեստի
ու յանուն ապրուստի: Դարը ապականած դար է, մեքե-
նայութեան դար է, բայց այդ ապականումը չէ կրցեր
ընկճել զանոնք, անոնց հողին դեռ խանդակաթ է,
հող չէ թէ կ'ապրին թշուառութեան մէջ: Անոնք գոնէ
ազատ են բնութեան մէջ: Այո՛, բանաստեղծին սիրտը
այդ Թրուպատուրներուն հետ է: Չէ՞ որ ինք ալ
բանաստեղծ է: Չէ՞ որ ինք ալ Թրուպատուր է: Կը
նայի անոնց ու կ'ուզէ միանալ անոնց խումբին.

- Առէ՛ք ինձ ձեզ հետ, երկիրէ երկիր,
Տարէ՛ք այս թշուառ սիրտս սգակիր,
Ապրի՛նք հեզմելով, ողբամք երգելով.
Ու երկրագունդին հետ մշտահուով
Մեր մորթն անօգուտ քննէ՛ք մշտերեր,
Մշտնջենական մութ ուխտաւորներ,
Թրուպատուրները:

Ապրի'նք հեզնելով, ողբա'նք երգելով: Այս է ճակատագիրը արուեստագէտին, Թրուպատուրին, ցնցոտիներ հազած ազնուական արուեստի մարդուն, երգի իշխանին: Կարժէ որ կրկնենք պատկերը. «ողբալ՝ երգելով»: Ասիկա այն հտպիտն է որ բեմին վրայ կը խնդացնէ, հակառակ որ սիրտը սուզով լեցուն է: Ռուբէն Սեւակ կը զգայ որ ինք ալ անոնցմէ է: Կամ կ'ուզէ նոյնանալ անոնց հետ:

Ձի մե'նք ենք քանաստեղծ, պուէտ,
Մենք պատառոտում քեհեզով վէտ վէտ
Երգի իշխաննե'ր, հպարտ, երբեմնի աստուած,
Մենք, չհասկցուած, մե'նք եղերական,
Մե'նք քանաստեղծներ, մենք ենք իրական
Թրուպատուրները:

Մենք՝ որ մեր վերջէն երգե'ր կը շինենք,
Մե'նք, գրկուածնե'ր մակատագրէն մենք:
Ու միմչ ուրիշներ առատ կը ջամբեն
Խիմդի սեղանէն, մուսայիմ մամբէն-
Մենք կ'երթամք ստոյգ Մահուան ամսուադ,
Մենք, Հիմ Մարդկութեան ուշ ծնած, աւադ,
Թրուպատուրները:

Բայց ինչ փոյթ: Թրուպատուրները հոգիով հարուստ են, անոնցն է ներշնչումը՝ որ կուգայ վերէն, անոնցն են բնութեան բոլոր գեղեցկութիւնները, վարդը, առուն, նոյնիսկ գերեզմանին սիւքը, քաղցր հովը: Հին Աստուածներու ցեղէն են Թրուպատուրները, անոնք իրենց գրիչով կը հեզնեն այս նենգ աշխարհին նենգութիւնները, «վէրք»էն «երգ» կը շինեն, քնար մը իրենց ձեռքին մէջ՝ ազատ բարբառի ասպետներ են անոնք:

Ազատ բարբառի ասպետներ անահ,
Կ'ապրիմ մեռնելով, կը մեռնիմ անմահ
Թրուպատուրները:

Շարունակելէ առաջ, ողջունենք սա իմաստալից տողը.
«Ապրիլ ամէն վայրկեան մեռնելով, բայց մեռնիլ՝
արդէն անմահ դարձած»:

ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ (2)

«Թրուպատուրները» խորագրեալ պոէմին մէջ Ռուբէն Սեւակ կը փառաւորէ արուեստագէտներն ու բանաստեղծները, բայց իր բուն նպատակը այդ չէ: Բանաստեղծին սրտին մէջ ցաւ մը կայ: Ան կը տեսնէ թէ արուեստը մեռնելու վրայ է, հոգեվարք է, բարքերը ապականիլ սկսած են, արծաթը, ոսկին ստրկացուցած են արուեստն ու արուեստագէտը: Իրականութեան մէջ՝ արուեստը մեռած է: Թրուպատուրները այդ «մեռած արուեստին մէջ տակաւին ողջ մնացած» բացառիկ մարդիկ են: Ահա անակնկալը: Բանաստեղծը կը սկսի բողոքել.

Այս ինչ դարերու հասեր ենք, Աստուած,
Փշրեցի՛ն ինչ որ կար վսեմ կերտուած,
Ոսկիիմ մեծ գայմն է ամենուրեք,
Մի միայն մեմք ենք որ դեռ անարգել
Սիրե՛լ կ'երագնեմք,

Ո՛ւր է Թրուպատուրներուն հայրը, Հոմերոսը, որ
աստուածներու ակէն կը խմէր, ո՞ւր են մեր Գողթան
երգիչները:

Կ'երագնեմ գիրեմք. ու լուռ, շուարում
Կը մայիմ փեղկէս այս թշուառներում

Որ բռնի կերպով կ'երգեմ, կը խաղամ:
- Վա՛խ, արծաթն Արուեստն հանեց կախաղամ,
Հիմ աստուածարմակ դարերը մեռան.
Ու հիմա պէտք է խնդացնե՛մ, մուրա՛մ
Թրուպատուրմերը:

«Թրուպատուրներ» պոէմը ըստ երեւոյթին տարբեր է միւս հինգ երկարաչունչ պոէմներէն, որոնց մէջ բանաստեղծը համամարդկային հարցեր կը դնէր սեղանի վրայ: Հոս՝ մեր բանաստեղծը սիրոյ տուրք կը վճարէ այն մարդոց, որոնք իր պաշտօնակիցներն են: Երգիչներ: Այն մարդիկը, որոնք ապականած աշխարհի մէջ, որքան ալ դատապարտուած ըլլան մուրալու, կը պահեն իրենց ազնուականութիւնը:

Այս պոէմը գրուած է 1910-ին: Այս թուականին բանաստեղծը արդէն սկսած է աշխատիլ Լոզանի հիւանդանոցներէն մէկուն մէջ: Բայց նիւթական վիճակը տակաւին չէ բարելաւած: 28 Ապրիլ 1910 թուականով իր ծնողներուն դրկած է այդ հիւանդանոցին քարթը, որուն ետին գրած է.

«Սիրելի հայր իմ եւ անոյշ մայր իմ,

Անցեալ շաբաթ ստացած եմ հինգ ոսկիի գումարը խորին շնորհակալութեամբ: Շատ լաւ եւ հանգիստ եմ, եւ Ձեր առողջութեան աղօթող եմ ամէն վայրկեան: Այսօր Հինգշաբթի ըլլալով, չորս օրէն Հայկական Ձատիկ է, եւ յոյս ունիմ որ քարթերս Ձեր ձեռքը կը հասնին եւ Ձեզ կը յայտնեն իմ ամենաջերմ շնորհաւորութիւններս Ս. Ձատիկի առթիւ: Այս քարթս կը ներկայացնէ այն հիւանդանոցը, ուր ամէն օր կ'աշխատիմ»:

Այս թուականէն մօտաւորապէս երեք տարի առաջ, 1907-ի Հոկտեմբերին, Ռուբէն Սեւակ նամակ մը գրած էր գրագէտ Ենովք Արմէնին: Նամակին սկիզբը «մտերմական» բառը գրուած է, թերեւս այն ցանկութեամբ

որ նամակը գաղտնի մնայ: Բայց գաղտնի չէ մնացած: Կարդանք միայն առաջին տողերը.

«Սիրելի Ենովք,

«Կեանքիս պայմանները անծանօթ չեն քեզ, գիտես թէ բարեկամներու օգնութեամբ է որ կ'ապրիմ, գիտես թէ այս օրերուս Պատրիարքին դիմեցի խնդրագիր-նամակով մը՝ իբրեւ Ջունդեան սանի թեկնածու: Նամակին մէջ բացատրեցի վիճակս, ըսի թէ ինչպէս Պէրպէրեան յանձն առած էր իմ պաշտպանութիւնս եւ թէ ինչպէս Պատրիարքին վրայ բարոյական պարտա-կանութիւն մը կը ծանրանար մտածելու իմ վրայ: Ըսի իրեն թշուառութեան բոլոր անասելի ձեւերը որոնք ճանչցայ անօթի չմեռնելու համար հոս, ստորնացում-ները, որոնք յանձն առի ձեռք կարկառելու համար աջ ու ձախ, դժուարութիւնները որոնց ենթարկուեցայ հացին պայքարը մղելով հանդերձ երկու տարի յաջորդաբար առաջինը հանդիսանալու համար ամէն ազգի բոլոր ուսանողներուն մէջէն»:

Ահա դառն ճակատագիրը՝ Լոզանի մէջ բժշկութիւն ուսանող մեր Թրուպատուրին: Նոյն նամակին մէջ պիտի կարդանք թէ օրուան Պատրիարքը գործադրու-թեան իսկ չէ դրած բանաստեղծ ու բժշկական համալ-սարանի ուսանող Ռուբէն Չիլինկիրեան-Սեւակին դի-մումնագիրը, թերեւս արդէն ուրիշ անուն մը ընտրած ըլլալով որպէս Ջունդեան սան: Այս թշուառ պայ-մաններու մէջ է որ Ռուբէն Սեւակ երկու տարի իրերա-յաջորդ կերպով առաջինը հանդիսացեր է համալսարանի ուսանողներուն միջեւ:

Պիտի զարմանա՞նք որ դառնութիւն կայ անոր սրտին մէջ անիրաւ հարուստներու ու անարդար կառավա-րիչներու նկատմամբ, պիտի զարմանա՞նք որ անոր սրտին մէջ կայ բողոք՝ արուեստին, գիրին, զրակա-նութեան նկատմամբ ցուցաբերուած արհամարհանքին

դէմ: Պիտի զարմանա՞նք որ կեանքէ ներս մտնելէ վերջ որպէս բժիշկ, ան պիտի ուզէ իր նպաստը բերել այս ծուռ աշխարհը քիչ մը շտկելու, մարդոց միջեւ հաւասարութիւն հաստատելու վեհ նպատակին:

Բայց Ռուբէն Սեւակ ժամանակ պիտի չունենայ: Ան Լոզանի մէջ արդէն տխուր լուրեր կը ստանայ հայրենիքէն: Հոյակապ բանաստեղծութեան մը մէջ ան պիտի հարցնէ. «Հովերը ի՞նչ ըսին քեզի, ո՛վ ճամբորդ»: Ինչ լուրեր կան այն հեռուներէն, որոնց վրայ ատենօք այնքան արցունք հոսեցուցած էր:

Ռուբէն Սեւակի բանաստեղծական աշխարհէն հրաժեշտ առնելէ առաջ, յուզումով պիտի կարդանք «Նապրիկ» խորագրեալ բանաստեղծութիւնը:

ՀՈՎԵՐԸ ԻՆՉ ԸՍԻՆ

Ռուբէն Սեւակի բանաստեղծական աշխարհէն հրաժեշտ առնելէ առաջ, յուզումով պիտի կարդանք «Նապրիկ» խորագրեալ բանաստեղծութիւնը, որ գլխու պտոյտ պատճառող տխրութիւն մը ունի: Մեր բանաստեղծը կը տառապի հայրենի հողերէ հասնող տխուր լուրերով:

Հովերն ի՛նչ ըսին քեզի, ո՛վ ճամբորդ,
Որ հեռուէն կուգաս, հեռուէն արփաւէտ,
Այն հեռուէն կուգաս, ուր աչերէս յորդ
Արցունք է ինկեր սրտիս արեամ հետ...

Թուականը 1912 է: Քայլ առ քայլ կը մօտենանք այն սեւ թուականին, երբ պատերազմը պիտի պայթի: Բանաստեղծին սիրտը խռովեալ է:

Հովերն ինչ խապրիկ, հողերն ինչ եղեռն
Պատմեցին քեզի, ո՛վ ցամաքորդ ընկեր,
Այն հովերն հեռուի, այն հեռուի տեղերն
Ուր ամեն քայլիս արցունք մ'է ինկեր:

Արցունք է ինկեր: Բանաստեղծը իւրաքանչիւր չորս
տողը պիտի վերջացնէ այդ արցունքով: Բայց ի՞նչ
լուրեր կան հոնկէ: Հաւանաբար տակաւին չէ գաղթած
այն գորչ թուչունը, որ իր երգը կը դադրեցնէր ամէն
անգամ որ բանաստեղծը ողբալ կը սկսէր: Բայց ո՛վ
գիտէ որքան շատ բան փոխուած է հիմա.

Եւ առուակն ալ որ հոն կը խոխոջէ,
Իմ առուակս չէ՛, այն երգը չ'երգեր,
Ան ծով թափեցաւ, այն նուրբ ջուրը չէ
Ուր ջուրերու պէս արցունքս է ինկեր...:

Ուշագրութիւն գեղեցիկ տողին: Ասիկա այլեւս այն
առուակը չէ որուն ջուրերուն մէջ ջուրի նման արցունք
հոսեցուցած էր ինք, բանաստեղծը: «Ուամբած են ան-
շուշտ սէրերն ալ դալար, նոր ծլած մարգերն ալ ինձ
չեն ճանչնար»: Ուրիշ տխուր գեղեցկութիւն մը
ահաւասիկ սա տողերուն մէջ.

Բայց հողն ի՛նչ ըսաւ, այն որ մայրաքար
Աչքիս ցօղին հետ ծծեց իմ հոգին.
Ան գիս կը ցանցնար: Ծաղիկ մը նիհար
Զըսա՞ւ թէ ինքը ծիւն է իմ արցունքին:

Հիանալով կրկնենք: Նիհար ծաղիկ մը չըսա՞ւ արդեօք
որ ինք ծնունդ առած է բանաստեղծին արցունքէն:
Այս ողբերգաչունչ բանաստեղծութիւնը կը վերջանայ
այնպէս ինչպէս սկսած էր. «Հովերն ի՞նչ ըսին քեզի,

ո՛վ ճամբորդ»։ Հովերն ի՞նչ ըսին, որ բանաստեղծը մոռցաւ Թրուպատուրները, մոռցաւ իր հիւանդները, մոռցաւ հարուստին ու աղքատին անհաւասարութիւնը, ամէն ինչ մոռցաւ ու իրեն հետ առնելով իր սիրելի կինը, իր փոքրիկ Եաննին, «իւր փխիկը», վերադարձաւ Պոլիս։ Պատերազմը կարծես անոր վերադարձին կը սպասէր որպէսզի պայթէր։ Բժիշկ բանաստեղծը զինուորական պարտականութեան կանչուեցաւ։ Հեծած էր իր սպիտակ ձիուն վրայ եւ կը ծառայէր «ասպետօրէն»։ Ան ճիշդ ու ճիշդ այն սպիտակ ու խորհրդաւոր ասպետն էր, այն սպիտակ ձիաւորն էր, որուն մասին քանիցս խօսած էր իր բանաստեղծութիւններուն մէջ։ Եւ օր մըն ալ, չարաշուք օր մը, զինքը առին-տարին իր տունէն։

*

Հայաստանի նշանաւոր գրողներէն Պերճ Զէյթունցեան ունի Գրիգոր Զօհրայի ու մեր միւս անբախտ գրագէտներուն նուիրուած վէպ մը. «Վերջին Արեւազալը»։ Երեւակայութեան զծով, հոն կը պատմուի որ աքսորի ճամբուն վրայ գիշեր մը, վերջին գիշեր մը, Վարուժան ու Ռուբէն Սեւակ տրամօրէն կը խօսէին իրարու հետ։

- Արդեօք սերունդները ի՞նչ պիտի մտածեն մեր մասին, կ'ըսէ Վարուժան, որ յանկարծ իր մէջ զգացած էր անտեղի անհանգստութիւն մը։ Պիտի ուզե՞ն մեզ կարգալ։ Պիտի չըսե՞ն. «Այս ինչ հնաբոյր են ու միամիտ»։

Ռուբէն Սեւակ կը պատասխանէ.

- Եկուր անցեալի մասին չխօսինք։ Չյիշենք ոչինչ։ Միայն մենք կանք ու այս գիշերը կայ։ Ուրիշ բան չկայ։

Բայց Ռուբէն Սեւակ անկեղծ չէ։ Իր միտքը ուրիշ տեղ է։ Արդարեւ քիչ վերջ պիտի խոստովանի.

- Գալիք սերունդները եթէ մեզ պիտի չկարդան, թող

չկարգան: Բայց գոնէ թող յիշեն որ իրենցմէ առաջ եղած են երկու հայ տղաներ, Դանիէլ ու Ռուբէն, որոնք կը սիրէին իրենց յաջորդները: Կը սիրէին առանց ճանչնալու: Մեծ ու անսահման սիրով: Բայց... յաջորդներ պիտի ունենանք:

- Պիտի ունենանք, եւ անոնցմէ շատեր պիտի կոչուին Ռուբէն կամ Դանիէլ: Ո՛չ թէ մեզի ի պատիւ: Այլ անոր համար որ անոնք հայ են...

Այդ օրերու վրայէն կարծես դարեր անցան: Կեանքը կը շարունակուի: Նոր սերունդներ կուգան ու կ'երթան: Բայց Ռուբէններն ու Վարուժանները տակաւ կը պակսին: Ու հայ ժողովուրդին զաւակները կը գաղթեն Լոզանէն ալ անդին, մինչեւ աշխարհի ամէնէն հեռաւոր անկիւնները: Անոնցմէ շատեր արդէն իսկոյն ամէն ինչ կը մոռնան: Իրենց համար ո՛չ անցեալ կը մնայ, ոչ հայերէն լեզու, ոչ բանաստեղծութիւն: Բայց կան ուրիշներ ալ, որոնք այսօր եւս կը նստին գետափի մը կամ ծովափի մը եզերքը ու Ռուբէն Սեւակին նման կը փնտռեն ճամբորդ մը, որ պէսզի հարց տան.

Հովերմ ի՛նչ ըսիմ քեզի, ո՛վ մամբոռդ:



187-188
L. H. H. H.

**ՅԻՇԵԼՈՎ
ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ**

ՔԻՉ ՄԸ ՉՈՒՐ ԹՕՇՆԱԾ ՎԱՐԳԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Արտաշէս Յարութիւնեան: Անուն մը մեր գրականութեան մէջ: Անուն մը որ սակայն մոռցուած է այսօր: Կրնա՞ր այնքան մը բախտաւոր ըլլալ, որպէսզի ան ալ մեր գրականութեան անդաստանին մէջ պարբերաբար յիշուէր ինչպէս գոնէ իրենց քանի մը բանաստեղծութիւններով շարունակ կը յիշուին մեր բանաստեղծութեան հսկաները՝ Վարուժան, Մեծարենց, Թէքէեան, Ջարիֆեան, նոյնիսկ Պետրոս Դուրեան, Սիպիլ, Ռուբէն Որբերեան: Չէր կրնար: Իր բանաստեղծութիւնը դատապարտուած էր մոռցուելու, գոնէ՝ լուսանցքին վրայ մնալու, որովհետեւ Արտաշէս Յարութիւնեան թերեւս չունէր այն նախանիւթերը, որոնք բանաստեղծութեան խոհանոցին մէջ անպայման պէտք է գտնուին, եթէ կ'ուզենք որ լաւ կերակուր մը պատրաստուի: Արտաշէս Յարութիւնեան, մեր գրականութեան նշանաւոր Մալկարացին, այլ անունով Մալկարացի Կարօ, մէկը այն տարաբախտ գրողներէն որոնք 1915-ին եղերական պայմաններու մէջ իրենց կեանքը կորսնցուցին, իր մահէն վերջ թողուց բանաստեղծութեան երեք հաւաքածոներ: Բայց այս հաւաքածոներուն մէջ զազաթային ու ցնցիչ բանաստեղծութիւններ չկային: Հիանալի լեզու մը, տիրութեան ու մեկամաղձոտութեան մէջ թաթխուած գրիչ մը, եւ բանաստեղծական տիգոյն ապրումներու արձանագրութիւններ, որոնք ցանցառ փայլատակումներով միայն երբեմն առաւել կը լուսաւորուէին: Երեւակայութիւնն ու թռիչքը ընդհանրապէս կը պակասէին այս բանաստեղծութիւններուն մէջ: Բայց այդ բանաստեղծութիւնները իրենց շրջանին օգնած էին որպէսզի

Արտաշէս Յարութիւնեան մեր բանաստեղծութեան պարտէզին մէջ արձանագրուի որպէս բանաստեղծ: Իրականութեան մէջ հրաշալի արձակագիր ու անկաշառ քննադատ էր, ուրիշներու գրականութեան մասին իր վերլուծումները կշիռ ունէին, կը փնտռուէին: Հանդարտ, հաւասարակշռեալ, շատ խելացի, կարգապահ անճնաւորութիւն մըն էր ըստ իր ժամանակակիցներուն: Շատ բան կարդացած էր ֆրանսական գրականութենէն: Դանդաղ կը կարդար, բայց կ'իւրացնէր ինչ որ կը կարդար, չէր արտօներ որ մէկ տող իսկ կորսուի կամ չստացուի: Իր քննադատութիւններուն մէջ ալ հանդարտ ու պաղարիւն էր, գիտէր պահել որակ ու հմտութիւն: Այս բոլորն էին արդեօք պատճառ դարձած՝ որ ան յարգուէր նաեւ որպէս բանաստեղծ: Իր մտերիմ բարեկամներէն զժուարահաճ քննադատ Յակոբ Օշական, որ շատ կը սիրէր ու կը յարգէր զինքը եւ որուն մահէն քսան, երեսուն տարի վերջ անոր գործին մօտեցաւ մեծ յարգանքով ու սիրով, կը ցաւէր որ ո՛չ մէկը Արտաշէս Յարութիւնեանին ըսած էր որ ան բանաստեղծ չէր: Բայց ինք, Արտաշէս Յարութիւնեան ինչո՞ւ չէր հասկցած որ ինք բանաստեղծ չէր, հակառակ որ այնքան լաւ քննադատ մըն էր ուրիշներու նկատմամբ:

Դարաշրջանը Թրքահայ բանաստեղծութեան ու գրականութեան զարթօնքի ու վերելքի շրջանն էր: Այդ օրերու գրողները «վաղուան» նոր գրականութիւն մը ստեղծելու որոնումին ու գիտակցութեան մէջ էին: Անոնք որոնք իրենց մօտ բանաստեղծի կոչում կը գտնէին կամ գտնել կը կարծէին, կը զգային որ մասնակցութիւն բերելու էին բանաստեղծական նոր ոճ ու լեզու ստեղծելու աշխատանքին: Եւ բոլորն ալ ձեռք կ'առնէին ահաւասիկ քնարը, որ այդ շրջանի բանաստեղծութեան խորհրդանշանն էր: Այս բոլորին մէջ, նոյնիսկ

եթէ ոմանց պարագային բանաստեղծութիւնը մեծ բան մը չհաշէր, հայոց լեզուն անպայման բան մը կը շահէր: Հայոց լեզուն կ'ուռճանար, կը հարստանար, կը գեղեցկանար, յետագայ հրաշալի բանաստեղծութիւններու գործիքը կը դառնար:

Գրականութեան դասի աշակերտը, այժմ, եթէ պատահամաբ կամ հրաշքով լսէ բանաստեղծ Արտաշէս Յարութիւնեանի անունը եւ իր ուսուցչին հարցնէ թէ այսօր ի՞նչ բանն է որ կրնար մեր ուշադրութիւնը հրաւիրել անոր բանաստեղծութեան մէջ, ուսուցիչը բարեհաճօրէն պիտի պատասխանէ.

«Նախ լեզուն: Եկո՛ւր ողջունենք բանաստեղծին լուսաշող լեզուն եւ ջանանք բաներ ու բառեր սորվիլ անոր տողերուն ընդմէջէն: Անպայման բաներ մը պիտի սորվինք ու անպայման բանով մը փայտ ու ածուխ պիտի նետենք մեր գործածած մեծասքանչին օճախին մէջ, որուն հուրը օրէ օր կը մարի: Ուրեմն նախ լեզուն: Յետոյ բանաստեղծական յուզումները: Յուզումներ՝ մարդկային: Յուզումներ՝ որոնցմով մեր ազգային գանձարանը հարստացնել կը ջանար բանաստեղծը: Հոգ չէ թէ մեծ ցնցումներ չկան հոն, բայց մենք մեր մորթին վրայ կրնանք զգալ այդ յուզումները եւ անոնցմով կրնանք բան մը ազնուացնել մեր ներաշխարհին մէջ: Եւ վերջապէս ամենակարեւորը, ամէնէն յարգելին՝ իր տխուր վախճանը, իր եղերական ու կանխահաս մահը, որով ջախջախուեցաւ ո՛չ միայն կեանք մը, այլ նաեւ Քնար մը: Եկուր այս բոլորին համար յարգենք բանաստեղծին յիշատակը ու մտնենք անոր բանաստեղծութեան պարտէզէն ներս, գոնէ ցնցուղ մը ջուր սրսկելու համար անոր ծաղիկներուն վրայ, որոնք արդէն թօշնած են բաւական»:

Արդէն կը հասնի մեզի բանաստեղծին ձայնը:

Վարդեր՝ հոգւոյս մէջ
կը թօշնիմ դալկոտ:

Անոնք այդ քիչ մը ջուրը կը խնդրեն մեզմէ:

ՄՈՍԻՆ ՃԵՐՄԱԿ ՄԱՐՄԻՆԸ

Արտաշէս Յարութիւնեանի բանաստեղծութեան մոռցուած պարտէզին դուռը պիտի բանանք անոր «Կարօտներս» խորագրեալ բանաստեղծութիւնը կարդալով: Ասիկա մէկն է Արտաշէս Յարութիւնեանի քանի մը բանաստեղծութիւններէն, որոնք կրնան զիմանալ ժամանակին դէմ: Մալկարացի բանաստեղծը տխուր օր մը ապրած է եւ այդ տխրութիւնն է որ ծնունդ տուած է այս բանաստեղծութեան: Ան կը խօսի իր կարօտներուն մասին որոնք կը քանդեն զինքը, որոնք կը սպառեն զինքը մոմի մը պէս:

Նախ կարդանք առաջին չորս տողերը.

Հոգւոյս խռրը կարօտներ կամ
Որ կը Քանդեն զիս օրէ օր,
Ինչպէս բոցիմ կարմիր լեզուս
Մոմիմ ցերմակ մարմիմն աղուոր:

Պարզունակ այս չորս տողերը, որպէս առաջին հանդիպում բանաստեղծին հետ, 1915-ին պատահած իր եղբրական մահէն մօտաւորապէս իննսուս տարի վերջ, համակրանքի տրամադրութեամբ մը կը համակեն մեզ անոնց հեղինակին նկատմամբ: Պարզունակ են, բայց գեղեցիկ: Գեղեցիկ մանաւանդ՝ մոմի նմանութեան գիւտով: Մոմը ստեղծուած է որպէսզի վառի, բոցավառի: Բայց այդ բոցին կարմիր լեզուն է որ կը քանդէ

մումին ճերմակ աղուոր մարմինը: Ճիշդ այդպէս,
կարօտներ կան բանաստեղծին հոգիին խորը, նաեւ
մտքին մէջ, որոնք կը քանդեն զինքը, .

Կարօտներ կան խորը մտքիս,
Որ անդադար գայն կը փոքեն.
Լա՛ւ, ի՞նչ է վերջն այս ցաւերուն,
Լուռ՝ կը խորհիմ ես իմքնիքն:
Ու կը լայննայ վերքը տակաւ
Չդարմանուած կարօտներուն.
Ոչ ո՛ր գիտէ գանձք, ի՞նչ փոյթ,
Ես դագաղն եմ այդ ցաւերուն:

Բանաստեղծը ահաւասիկ իրեն կը պահէ իր կարօտ-
ներուն բովանդակութիւնը, զանոնք կը թաղէ իր մէջ,
իր իսկ գործածած պատկերով ինքզինք կը դարձնէ
այդ կարօտներուն դազաղը: Բայց այդ կերպով իսկ
ան արդէն ընթերցողը կը հրաւիրէ երեւակայելու,
ենթադրութիւններ ընելու: Որովհետեւ այս մէկը
բանաստեղծին կողմէ ցուցաբերուած գաղտնապահու-
թիւն մըն է, որ հակառակ ազդեցութիւն կը գործէ,
որ ազատ ու խիզախ թռիչք կուտայ ընթերցողին
որպէսզի կռահէ թէ ինչեր կան այդ գաղտնապահութեան
տակ: Բայց խօսքը դարձեալ թողունք բանաստեղծին.

Չնչի՞ն ցաւեր, է՛, ո՞վ գիտէ,
Խորհուրդներն են անձնք հոգւոյս.
Մեծ նրազներ եւ իդճեր վառ
Կը մարիմ խորն այդ ցաւերուս:
Ու կարօտներն իմ մեծամոլ
Կը սպառեն զիս միմչեւ ցմահ,
Ինչպէս բոցի կարմիր լեզուն
Մտիմ մաքուր մարմինն աղուոր:

Քսան տողերէ բաղկացեալ այս գողտրիկ բանաստեղծութեամբ կը բանանք ահաւասիկ Մալկարացի բանաստեղծին ցաւերով ու կարօտներով լեցուն ներաշխարհը: Կը բանանք այդ ներաշխարհը ու հոն կը գտնենք չնչին կամ ծանր ցաւերէ կազմուած խորհուրդներ, որոնց մէջ մի առ մի կը մարին բանաստեղծին մեծ երազներն ու վառ իղձերը: Համոզիչ է: Ամէնէն մեծ երազն անգամ կրնայ մարիլ փոքրիկ, չնչին ցաւի մը մէջ: Ամէնէն մեծամոլ կարօտն անգամ կրնայ մարիլ այդ չնչին ցաւին մէջ: Մենք վարժուած ենք մեր եղերաբախտ բանաստեղծներուն ներաշխարհին մէջ գտնելու այս ցաւոտ տրամադրութիւնը, երազներու փլատակներէն ծնունդ առնող յուսախաբ ու յուսահատ մեղամաղձոտութիւնը: Բայց այս անգամ գործ չունինք երեսուն տարեկան երիտասարդի մը հետ որ թոքախտաւոր է եւ կը սպասէ իր մահուան:

Այս անգամ գործ ունինք առողջ, ազնուական, հաւասարակշռեալ, ինքնուս, զրական գիտելիքներու բարձր ճաշակով սնած եւ ինքզինք ամբողջովին զրաքննադատութեան նուիրած մտաւորականի մը հետ, որ տակաւին չի գիտեր թէ 42 տարեկանին այս կեանքէն հրաժեշտ պիտի առնէ եղբրական մահով, զոհ երթալով շրջանի ահաւոր փոթորիկին: Հիւանդութիւնը չէ որ կարմիր բոցով կը հալեցնէ անոր ներքին մումը: Հապա ի՞նչն է: Չըսեր: Թերեւս պիտի տարուէինք մտածելու որ երեւակայական ու անիրական ցաւեր էին անոնք, ցաւեր՝ որոնք ստեղծուած են յանուն բանաստեղծութեան: Բայց եթէ պիտի վստահինք Յակոբ Օշականին, որ մօտէն ճանչցած էր զինքը, մեր բանաստեղծը զուրկ էր ուժեղ երեւակայութենէ: Ուստի, չէր շիներ, չէր հնարեր, անգոյ տրամադրութիւններու մասին չէր խօսեր: Պարզապէս ականջ կուտար իր իրաւ ներքին կարօտներուն ու ցաւերուն: Եւ արդէն մեր ո՞ր բա-

նաստեղծը չէր ունեցած այդ ցաւերն ու կարօտները:
Դարձնենք քանի մը էջ ու դարձեալ գտնենք նոյն
տխուր տրամագրութիւնը իր հոգւոյն խորը: «Սիրտս
անբաւ սուգերով» անուն բանաստեղծութենէն են սա
չորս տողերը.

Սիրտս անբաւ սուգերով է բեռնաւոր
Մինչ՝ հեգնօրէն՝ դեռ պէտք է որ ես ժպտիմ.
Անկարելի արցունքներուն պէտք է որ
Ես փայփայեմ հեշտին ցաւը մտերիմ:

ՍԻՐՏՍ ԱՆԲԱՒ ՍՈՒԳԵՐՈՎ

Պայման չէ որ բանաստեղծի մը սիրտը իրաւ սուգերով
ու ցաւերով բեռնաւոր ըլլայ երբ ան կը գրէ

Սիրտս անբաւ սուգերով է բեռնաւոր
Մինչ հեգնօրէն՝ դեռ պէտք է որ ես ժպտիմ:

Ասիկա պատիկ ու անմեղ սուտ մը կրնայ ըլլալ, որ
բանաստեղծութիւն գրելու աւանդական արարողու-
թեանց մաս կը կազմէ: Դժուար չէ ենթադրել որ
թերեւս աշխարհի ամէնէն երջանիկ բանաստեղծն է
որ գրած է աշխարհի ամենածանր տառապանքներուն
մասին: Բանաստեղծները կրնան ստել երբ կ'ըսեն թէ
կը տառապին, կուլան, կարօտներու մէջ կ'այրին,
եւայլն: Այս սուտը սակայն մեծ բան մը չի զեղչեր
անոնց գրածէն, եթէ գրուածը լաւ գործ է: Մեզի համար
կարեւորը գրուածն է, կարգացուածն է, բանաստեղ-
ծութեան մեր վրայ թողած յուզումն ու տպաւորու-
թիւնն է, եւ ո՛չ թէ այն որ իրապէս կայ բանաստեղծին
սրտին մէջ: Ի վերջոյ գիտենք կամ բնաւ պիտի չմոռ-

նանք որ արուեստը կեղծ տեսարան կամ զգացում ստեղծելու տաղանդ է, արուեստը կը խօսի ո՛չ թէ իրականին մասին, այլ կը խօսի անիրականին մասին եւ այնքա՛ն կը յաջողի որքան ան կը յուզէ որպէս իրական զգացումի թելադրութիւն:

Բայց անտարակոյս կայ նաեւ տառապանքին ազդեցութիւնը՝ բանաստեղծներուն վրայ: Ինչ մեղք որ մեր բանաստեղծները միշտ ալ լայն բաժին ստացած են մարդկային տառապանքներու ովկիանէն եւ այդ տառապանքին ազդեցութեան տակ մեզի տուած են հրաշալի տողեր: Եթէ գիտենք թէ երիտասարդ Մեծարենց մահամերձ էր եւ ինք ալ գիտէր թէ մահամերձ էր, այնուհետեւ անոր տխուր տողերուն անկեղծութենէն չենք կրնար կասկածիլ: Բայց եթէ չգիտնայինք թէ Մեծարենցի կեանքին մէջ ինչպիսի ողբերգութիւն մը կար, եւ բոլորովին անծանօթի աչքով կարդայինք իր սա կամ նա բանաստեղծութիւնը, կրնայինք չգիտնալ թէ իրական տառապանքը ինչպիսի բաժին մը ունեցած էր թուղթին յանձնուած բանաստեղծութեան մէջ:

Արտաշէս Յարութիւնեան «Սիրտս անբաւ սուգերով» խորագրեալ բանաստեղծութեան մէջ կը խօսի իր սուգերուն մասին, որոնց դիմաց պարտաւոր է կեղծ ժպիտ ցուցադրել:

Ու կ'ընեմ գայս, Մայր-քնութեան անձնատուր,
Հպարտ՝ իմ խուլ, իմ անծանօթ սուգերով,
Կ'անցնիմ կեանքէն՝ հանդարտ քայլովս իմ ամուր,
Ու դէմքս ա՛լ չունի սուգ, ցաւ կամ վրդով:
Երագաւէտ առտունները կը դիտեմ,
Եւ կամ քրքումն՝ ստուերալից իրիկուան,
Կամ գիշերուան լոյսերումն հետ դէմ առ դէմ
Ես կը փնտռեմ հոգւոյս վերջիմ օթււանն:

Անիրաւութիւն չընենք Արտաշէս Յարութիւնեանին, Յակոբ Օշականին հետ կրկնելով որ Յարութիւնեան բանաստեղծ է: Բանաստեղծական համեստ ու ընդունելի գեղեցկութիւն մը կայ վերի տողերուն, մանաւանդ վերջին տողին մէջ: Այդ տողերուն մէջ մենք կը գտնենք ազնուականօրէն հպարտ, մարդասէր, ապրելու ու մարդոց օգտակար ըլլալու կամքով լուսաւորուած խորխտ բանաստեղծ մը, որ իր կուրծքին կը սեղմէ իր ցաւերը ու կը ջանայ մոռնալ զանոնք ի սէր այն կեանքին ու նուիրումին, որ կը սպասուի իրմէ: Բանաստեղծ մը, որ բնութեան լինելութեանց մէջ, «երազաւէտ առտուններուն կամ ստուերալից իրիկուններուն» մէջ կը փնտռէ իր հոգւոյն վերջին խաղաղութիւնն ու օթեւանը: Մենք գեղեցիկ կը գտնենք այս պատկերը: Կրնանք տպաւորուիլ նաեւ սա «Մութ է սենեակս» խորագրեալ բանաստեղծութեան զիմաց, մանաւանդ ընդգծելով այստեղ գործածուած բառերու ու լեզուի ինքնատպութիւնը.

Մութ է սենեակս, երազներում իմ տաճար,
Ու ես պառկած եմ անկողնիս մէջ, անշա՛րժ,
Անգթօրէն անշարժ, ու հոն չարաչար
Կը համակէ տակաւ գիս այս միստիկ վարժ:
Պատուհանս բաց է լագուարթ անհումիմ,
Թռիչ կ'առնէ հոգիս, կռահ'կ թրթռում,
Ու վերացման կ'ըմպեմ, արբշի՛ն, ես գիմիմ
Հոն, դէմ առ դէմ անվերջ, ամմեռ իրերում:
Ու հոն եմ դեռ, պիշ ու անթարթ, ամխլիրտ,
Կ'զգամ հոգւոյս նրբիմ սփռումն անայլայլ.
Մինչ մարմինս, անսահմանէն ընկճեալ դիրտ,
Կը սորսորի ցոլժերում տակ երկնափայլ:

Չենք կրնար զամբիւղ նետել ո՛չ այս բանաստեղ-

ծուլթիւնը, ո՛չ ալ այն բառերը որոնք գործածուած են այստեղ: Անտարակոյս եթէ բառերու ընկալումը դժուարացած չըլլար մեր օրերու ընթերցողին համար, գործածուած պատկերին գեղեցկութիւնը աւելի հասկընալի պիտի դառնար: Ահաւասիկ բանաստեղծը կը զգայ իր հոգւոյն նուրբ սփռումը գիշերուան մէջ, ինչպէս որ կը զգայ նաեւ որ իր մարմինը, անսահմանի մեծութեան տակ ճզմուած դիրտի մը, գինիի մրուրի, ամբողջ կեանքի մը ընթացքին ըմպուած գինիէն մնացած աղտի մը նման կը սորսորի, կը հոսի-կ'երթայ երկնափայլ ցոլքերու տակ: Գիշերուան մը անշարժութեան մէջ, բաց պատուհանի մը դիմաց, անսահմանին ու սահմանաւորին այս պայքարը բան մը պէտք չէ՞ խաղցնէ մեր սրտէն ներս, ինչպէս խաղցուցեր է բանաստեղծին սրտին մէջ:

ՔԱՂՅՐ ԾԱՂԻԿ ԳԼԽԻԿՈՐ

Պահ մը յիշենք Միսաք Մեծարենցի սա անմահ չորս տողերը.

Վայրի ծաղիկ, ամուռն ի՞նչ է,
ըսէ՛, մասուր ու կանանչէ
ցանկապատիմ շուքիմ նստած
վայրի ծաղիկ, ամուռն ի՞նչ է:

Միսաք Մեծարենցի վայրի ծաղիկէն ու վայրի ծաղիկին տակ թաքնուած խորհրդաւոր էակէն ուստում մը ընենք դէպի Արտաշէս Յարութիւնեանի ծաղկաստանը.

Քաղցր ու գլխիկոր ծաղիկներն աշնան
կ'երագեմ մենիկ.

Զկայ գթութեամբ հարցնող սակայմ՝
- Ո՛վ դուք, ի՞նչ ունիք:

Եթէ հարցուի, ծաղիկները պատասխան չունին ան-
չուշտ, պատասխանելու ճայն չունին: Ո՛վ դուք, ծաղիկ-
ներ, որ գլխիկոր էք, եւ որ առանձնութեան մէջ կ'երա-
զէք, ի՞նչ ունիք, ի՞նչ է ձեր տառապանքը: Ծաղիկները
պատասխան չունին, բայց մենք ալ արդէն պէտք
չունինք լսելու անոնց պատասխանը, որովհետեւ գի-
տենք թէ ինչ է այդ պատասխանը, գիտենք մանաւանդ
եթէ բանաստեղծ ենք: Որովհետեւ եթէ բանաստեղծ
ենք, չենք կրնար անտարբեր մնալ այն ցաւերուն,
որոնք մեզի չեն պատմուիլ իրենց տէրերուն կողմէ:
Կարդանք վերի չորս տողերուն յաջորդող տասներկու
տողերը, որոնցմով կը վերջանայ բանաստեղծութիւնը:

Եւ կը դալկանամ ու կը թարշամիմ
Խորհուրդ եմ համակ.
Սուրբ միայնութեամ ու մոռացումիմ
Մաքուր մահատակ:

Առտուն անոնց հետ հոգիս կամեցաւ
Խօսիլ Քաղցրօրէն
Այլ չպատեցիմ իրենց սուգն ու ցաւ,
Լո՛ւռ էիմ նորէն:

Ու յամբ, հեռացայ, ես ինձս շփոթ,
Յարգանքով լեցուն,
Լի՛ կարեկցութեամբը վերապահոտ՝
Ջրուած ցաւերուն:

Եկէք ողջունելի գիւտ մը ու գեղեցկութիւն մը
գտնենք վերջին չորս տողերուն մէջ: Տարազը կրնայ

մտածելու առաջնորդել մեզ: Յարգանքով ու կարեկցու-
թեամբ լեցուի՛լ չըսուած ցաւերուն, չսպասուած ցաւե-
րուն նկատմամբ: Այստեղ բանաստեղծին խօսքը անտա-
րակոյս ուղղուած չէ միայն ծաղիկներուն: Ան կը խօսի
մեր հոգիին մասին, մեր ներաշխարհին մասին: Ու
անգամ մը եւս կը յիշեցնէ մեզի թէ ամէնէն հպարտ
ու ծանրածանր ցաւերն անո՛նք են, որոնք չեն
սպասուիր ուրիշներուն:

Արտաշէս Յարութիւնեանն ալ մէկն է շրջանի այն
բանաստեղծներէն, որոնք բանաստեղծական կառոյցի
ու յանգերու համրանքի մտահոգութիւններով շարունակ
«ը» մը կը տեղաւորեն բառերու մէջ: Մենք այստեղ
միշտ կը նախընտրենք զանց առնել այդ «ը»երը, բայց
պարտաւոր ենք յիշեցնելու թէ բնագրին մէջ կան
անոնք: Օրինակ՝ միայն սա վերի բանաստեղծութեան
մէկ տողին մէջ երեք «ը»եր գործածուած են
բանաստեղծական մտահոգութեամբ:

Զ(ը)կայ գ(ը)թուքեամբ հարց(ը)նող սակայմ՝

Տակաւին ուրիշներ.

Ու յամբ, հեռացայ ես ինձս շ(ը)փոթ

Այսօր երբ կը կարդանք այս բանաստեղծութիւնները,
կը զգանք որ ոչի՛նչ կը կորսուի եթէ մենք վերցնենք
այդ աւելորդ «ը»երը որոնք կրնան ուղղազրական շփոթ
ու հարցման նշաններ ստեղծել:

Բայց, կարգալու՛ Արտաշէս Յարութիւնեանի բանաս-
տեղծութիւնները, կրնանք զարմանալ այդ շրջանի մեր
մտաւորականներուն իրենք զիրենք պատրաստելու
կարողութեան վրայ: Որքան որ գիտենք, Մալկարացի
այս մտաւորականը, որ իր ապրած շրջանին հեղի-

նակաւոր քննադատ էր իր արձակով, Մալկարայի մէջ հազիւ թէ նախնական ուսում մը ստացած էր եւ այնուհետեւ ի՛նքն էր որ ինքզինք հասցուցած էր թէ՛ լեզուական, թէ՛ գրական գիտելիքներու ու օտար գրականութիւնները ճանչնալու տեսակէտէ:

Այսօր ընթերցողները, նոյնիսկ եթէ բախտն ու փափաքը ունենային Արտաշէս Յարութիւնեանի նման համեստ բանաստեղծներու գործերը կարդալու, իրենց դէմքը պիտի ծամածռէին, գանգատելով որ իրենց համար անհասկնալի շատ բառ կայ այս բանաստեղծութիւններուն մէջ: Մինչդեռ այդ բառերուն գոյութիւնը օրհնութիւն մըն է՝ օ՛ր լեզուին համար եւ բոլորս ալ մեր անձնական ու ընկերային հասունութեան վրայ բան մը կ'աւելցնենք եթէ այդ բանաստեղծութիւնները կարգանք բառարանի գործածութեամբ եւ ձերբակալենք առաջին ակնարկով անհասկնալի մնացածը հասկնալի դարձնելու խորհուրդը:

ԿՐ ՏԵՂԱՅ ՉԻՒՆՆ ԱՌԱՏՕՐԷՆ

Արտաշէս Յարութիւնեանն ալ, իր բազմաթիւ ժամանակակիցներուն նման, բնութեան նկարիչ մըն է, բնութիւնը նկարագրելու սիրահար բանաստեղծ մը, որ իր կեանքին մեծ մասը անցուցած ըլլալով գաւառը, իր փոքրիկ գիւղաքաղաքին մէջ, զոր ինք գիւղ կը կոչէր, սիրած է ու ճանչցած է Մայր Բնութիւնը: Անոր ալ բանաստեղծութիւնները լեցուն են «իրիկուն»ներու, «առաւօտ»ներու, լուսափայլ երկինքներու ու իր մենաւոր սենեակին բաց պատուհանէն դիտուած տեսարաններու ներշնչումներով: Բնութեան գոյներու այս ճոխութեան մէջ յատուկ իր տեղն ունի «ճերմակ»ը, այսինքն ձիւնը: Ձիւնը կրնայ յաճախանք մը դառնալ

Արտաշէս Յարութիւնեանի վերջին բանաստեղծութիւններուն մէջ: Եկէ՛ք միասնաբար կարդանք «Զիւնը» խորագրեալ բանաստեղծութիւն մը, որուն մէջէն պիտի ձերբակալենք մէկ-երկու գեղեցիկ գիւտեր ու բանաստեղծական փայլատակումներ:

Անհունութեամ չորս ծայրերէն,
Գաւառներէ անծանօթ,

Կը տեղայ ճիւնն առատօրէն,

Ջղագալար ու տենդոտ:

Մթնոլորտին մէջ դողահար

Կը պարէ ճիւնն սպիտակ.

Հովն է՝ դժնեայ ջութակահար

Մահուամ տօնին այս սպիտակ:

Ու երկիմֆէն անուրջներ բիւր,

Մտածումներն անարատ,

Վար կը թափին, կ'իյնան սփիւռ

Նրկրի վրայ մահառատ:

Պատկերը զծուած է արդէն: Կարծես բանաստեղծը կեզրոն մը ըլլար, անհունութեան չորս ծայրերէն, անձանօթ գաւառներէն եկած ճիւն մը կը տեղայ իր վրայ: Զիւները, երազներու նման, անուրջներու նման կը թափին գետին, կը սփռուին գետնին վրայ ու մահով հարուստ հողին վրայ իրենց մահուան կը սպասեն:

Սակայն այս պարզունակ նկարագրականին յանկարծ պիտի յաջորդեն չորս տողեր, որոնց մէջ բանաստեղծը ունի գիւտ մը, մտածումի փայլատակում մը.

Ո՛վ երազներ, արդեօք ինչո՞ւ

Կը վտարուի՞ք երկիմֆէն.

Բարձրութիւններն այդ օդաչու

Կը փորձեն ձեզ պահել ի՞նչ:

Բանաստեղծը յանկարծ ձիւներուն մէջ ահաւասիկ տեսաւ երազներ, որոնք մեզմէ դէպի երկինք չեն բարձրանար, այլ երկինքէն կը վտարուին ու երկիր կը զրկուին: Ի՞նչ է, երկինքը բարկացած է անոնց որ զանոնք կը զրկէ դէպի «մահառատ» երկիր:

Ո՛վ ձիւն մաքուր, ո՛վ գաղափար
Վսեմութեանց անառիկ,
Դեռ կը տեղաս թռլլ, յամբարար,
Յրուում, թրթռում, թափառիկ:
Ի՛նչ, համակե՞լ կը փորձես դում
Մաքուրեամբդ յաղթական
Մթին երկրին, երկրին տրտում
Սալայատակն անկենդան:

Ձիւնը կրնա՞յ իր յաղթական մաքրութեամբ համակել երկրին մութ ու տխուր սալայատակները: Միամիտ խաղ: Ձէ՞ որ ձիւնը քիչ վերջ մարդոց կողմէ ոտքի կոխան պիտի ըլլայ: Բանաստեղծին սիրտը կը համակուի տխրութեամբ ու յուսահատութեամբ: Անոր սրտին մէջ ալ կը վառի անհուններու, անսահմաններու ճերմակ կարօտը:

Եւ կը հալիս ու կը հատնիս,
Հատիկներդ ա՛լ թել չումիմ:
Արդեօ՞ք մերմակ կարօ՞տն ունիս,
Դժբախտ կարօտն անհումիմ:

Անհունէն վտարուած, բայց անհունին կարօտով փութորկուած ձիւնը միշտ ալ վիպապաշտ ներչնչումներու կ'առաջնորդէ մեր բանաստեղծը: «Ձիւնոտ իրիկուն» խորագրեալ ուրիշ բանաստեղծութեան մը մէջ կը կարդանք.

Զիւնն աւելի՛ շռայլօրէն կ'իյնայ վար
Տրտմաթախիծ իրիկուան մը սուգին մէջ.
Կը կործանի անհուն կապոյտն երկնքին,
- Մրրկավար ցնորժներու խենդ խուճապ-
ինծի տալով վայելժն ադի, հեշտագին՝
Ունայնութեանն երազներու հմայաթափ:
Զարագուշակ իրիկուան մէջ՝ ամէն իր
Սպասում մ'է՛ն ճամբուն վրայ քազմախոսք.
Եւ ամէն քան լուռ կ'որոնայ մտացիր
Նախագգացումը գիշերուան մօտալուտ:

Իրիկունէն դէպի գիշեր այս անցքը, ձիւնոտ եւ ունայ-
նութեան երազներու հեշտագին վայելքով, հոգեվիճակ
մըն է, մնայուն հոգեվիճակ մեր «ուժանլիք» բանաս-
տեղծութեան մէջ: Կրնանք երբեմն հարց տալ թէ մեր
մեծանուն կամ խոնարհ բանաստեղծները ի՞նչի մասին
պիտի գրէին, եթէ իրենց արգիլուէր գրել գիշերային,
ցայգային, այգային, իրիկնային ինչ ինչ տեսարան-
ներու ու անոնցմէ տեղացող լոյսերու ու յոյզերու
մասին:

ՍՊԻՏԱԿ ԵՐԱԶ

Ըսինք արդէն որ ձիւնը յաճախակիօրէն ներշնչած
է Արտաշէս Յարութիւնեանը: Կրնանք մտածել որ մեր
բանաստեղծը կը սիրէր ձիւնը, հեշտանք ու հաճութիւն
կը տեսնէր անոր մէջ, մանաւանդ եթէ հովը դադրէր
փշելէ, դադրէր ձիւնը հալածելէ, եւ արտօնէր որ
«հեշտաւէտ սպիտակ» մը իջնէր երկրին վրայ:

«Կուգայ Ձիւնը»: Այս ալ ուրիշ բանաստեղծութիւն
մըն է, որ գրի առնուած է ձիւնով ծածկուած պատ-
կերներու դիմաց:

Կուգայ ձիւնը առատութեամբ հեշտագին,
Իրիկուամ մէջ՝ անհունօրէն ձանձրահար,
Ձիւնը, անվե՛րջ, դեռ կը տեղայ հողմավար ...
Կը քանդուիմ թիւր պալատներն երկնքին:

Կրկնենք վերջին տողը. «կը քանդուին երկնքին հա-
զարաւոր պալատները»: Հասկցէ՛ք ինչ որ կը հասկնաք,
երեւակայեցէ՛ք ինչ որ կ'երեւակայէ՛ք երկնքի պալատ-
ներուն մասին: Ձիւնը կուգայ: Եւ կուգայ «առատու-
թեամբ հեշտագին»: Սա «հեշտագին» բառը, որ միայն
Մեծարեհնցի չէ, այլ շրջանի բոլոր բանաստեղծներուն
կողմէ սիրուած ու հիմա մոռցուած բառ մըն է, ցոյց
կուտայ թէ մեր բանաստեղծը կ'ախորժի ձիւնէն եւ
կը գտնէ որ այդ ձիւնը բան մը կը փոխէ ձանձրացուցիչ
իրիկուններուն մէջ եւ «հեշտանքով կը պարուրէ»
բնութիւնը:

Բունն հեշտանքով կը պարուրէ ամէն ինչ,
Համագրաւ ու յաղթապանծ ուրուականն,
Ու սանձարձակ մոլուցքն հովուն խօլական
Կը խոռվէ երազներուս համդարտ նինջ:

Դեռ կը դիտեմ ձիւնը, - կուգայ վերստին,
Լերդ ծիծաղ մը կ'ամոքէ սիրտս անզգած.
Չունիմ այլեւս անձուկ, թախիժ կամ կասկած,
Երբ կը ժպտիմ ձիւնամոլոր իմ քախտին:

Բանաստեղծական պարզունակ պատկերներ են ասոնք,
որոնք թարգման միայն կրնան հանդիսանալ ներքին
տրամադրութեան մը եւ չեն կրնար յափշտակել մեզ:
Սակայն կրնան մեր ուշադրութիւնը գրաւել որպէս
պատկեր մը մեր երբեմնի գաւառէն: Եկէ՛ք ըսենք որ
ձիւնը երբեք նոյնը չէ մեծ քաղաքին մէջ եւ գեղջկական

Համայնապատկերին մէջ: Այսօր մենք ձիւնին կը նայինք մեծ քաղաքներու մեր պատուհաններէն կամ մեծ քաղաքներու պողոտաներուն վրայէն: Չունինք բանաստեղծ մը որ գաւառէն մեզի պատկերներ զրկէր այդտեղ տեղացող ձիւնին մասին:

Մեր բանաստեղծը ունի ուրիշ բանաստեղծութիւն մըն ալ, որ կը կոչուի «Սպիտակ երազ» եւ որ ձօնուած է բանաստեղծուհի Սիպիլին: Ձիւնոտ գիշերուան մը նկարագրութեամբ է որ կը սկսի այս քիչ մը երկարաշունչ քերթուածը, որուն մէջ ձիւնը այս անգամ այնքան բարի ու հաճոյակատար չէ: Լեռնային ճամբաներու վրայ ճամբորդ մը կայ, ձերբակալուած՝ հովին ու ձիւնին կողմէ: Ի՞նչ պիտի պատահի:

Կը տեղայ ձիւնն՝ անկարեկիր թուլութեամբ,
Կանգնելով իր անհուն տաճարն սպիտակ,
Եւ բնութեան հոգին թախծոտ, մտամփոփ
Կը սարսռայ այս ձիւնեղէն սուգին տակ:

Մերթ կը լսուի՜ն տարտամ վանկեր վայրենի
Խուլ արձագանգ՝ լերանց կարմիր կիրճերու
Եւ հէգ մամբորդն արհաւիրճի տնդն ունի,
Իր ծածկամիտ ճակատագրէն՝ շուարում:

Կը մթագնի ցուրտ մայուածճը մամբորդին,
Այս սպիտակ ողողման մէջ՝ խեղդամահ,
Ու կը դիզուի ձիւնն անտարբեր իր չորս դին,
Սե՛ւ մատնութիւն, յուշիկ, անձայն ու խաղաղ:

Ահաւասիկ մէկը Արտաշէս Յարութիւնեանի ցանցառ բանաստեղծութիւններէն, ուր, բնութեան նկարագրականի մը կողքին, կը պատմուի նաեւ դէպք մը, եղելութիւն մը: Լեռներու վրայ մնացած ճամբորդին պատմութիւնն է այս եւ արդէն կը գուշակենք թէ ինչ պիտի պատահի:

Ալ կը սպառիմ վերջին ուժեր մարդկային,
Եւ մամբոբոբը կ'ընկնի՝ քախտին անձնատուր,
Մինչ երկիրդի չունի արատն իր հոգին,
Խիղճն՝ ապահարկ մուսստացման խայթէն սուր:
Այլեւս անուշ մերմակ անուրջ մ'անմմամ
Կը լեցնէ արի ու ջինջ իր հոգին,
Արբեցութիւնն այս անբասիր պարտութեան
Ջայն կը թաղէ մոռացման գիրկն հեշտագին:

Մահը քարի՛ ագատարար, կը հասնի
Վսեմ պահուն անպարագիր անուրջին
Եւ ուղեւորն ա՛լ մարդկային հոգ չունի,
Երանաւէտ սեմին վրայ ոչինչին:
Տակաւ գիշերն իր անսահման սեւ շուրջառ
Կը տարածէ դաշտին վրայ մեմաւոր,
Թաղելով այս մաքուր խորհուրդն՝ իր յամառ
Եւ ցրտագին ծալքերուն տակ սգաւոր:

Ահաւասիկ ճամբորդի մը տխուր ողիսականը,
պատմուած չափէն աւելի վիպապաշտ ոճով ու մեր-
ձեցումով: Չենք գիտեր թէ Սիպիլ ի՞նչպէս գտած էր
իրեն ձօնուած այս բանաստեղծութիւնը, որ, որքան
ալ պատմէ մարդու մը ողբերգական մահը, չի դադրիր
բնութեան պատկեր մը ըլլալէ, պատկեր մը որ
դժբախտաբար քիչ մը հեռու կը մնայ Սիպիլի ամե-
նօրեայ ընկերային ու քաղթենի շրջապատէն: Բանաս-
տեղծութիւնը մեծ բան մը չ'աւելցնէր Արտաշէս
Յարութիւնեանի վաստակին վրայ, բայց կը կարծենք
որ կ'արժէր որ պահ մը դանդաղէինք անոր վրայ,
որպէսզի անգամ մը եւս տեսնէինք բանաստեղծին զգայ-
նութիւնը սպիտակ ձիւնին նկատմամբ:

ՏԱՂԱՆԴԻՆ ԽՈՐՀՈՒՐԳԸ

Արտաշէս Յարութիւնեան ընդհանրապէս շատ տպաւորուած է իր գիւղին ձմեռնային տեսարաններէն: Ձմեռուան եղանակը հարուստ նախանիւթ է մեր բանաստեղծին համար: Բայց այդ բանաստեղծութիւնները կը մնան պարզապէս որպէս գեղեցիկ բառերով ու գեղեցիկ գոյներով նկարագրուած տեսարաններ, չեն մտներ գրական ցնցիչ գեղեցկութիւններու սահմանէն ներս, մեզմէ ներս չեն ստեղծեր յիշողութեան մէջ քանդակուելու արժանի յուզումներ: Ասոր համար պիտի դատապարտենք մեր բանաստեղծը: Ո՛չ: Որովհետեւ անոր բանաստեղծութիւնը նախ հաւատարիմ կը մնայ շրջանի ճաշակին ու նորաձեւութեան: Ասիկա այն ճաշակն է որ եղած է Միսաք Մեծարենցներու նմաններուն ճաշակը: Որպէսզի աւելի լաւ բացատրենք թէ ինչ ըսել կ'ուզենք, կարդանք Արտաշէս Յարութիւնեանի «Ձմեռուան հովուերգութիւնը», որուն մէջ շունչեր պիտի գտնենք Միսաք Մեծարենցեան ու Դանիէլ Վարուժանեան բառերէ ու պատկերներէ:

Իրիկունը կը ծաւալի ձորիմ մէջ,
Յուրտ գիշերուան քերանարաց դռներէն
Բլրիմ թաւշտ կողիմ վրայ, մեղմօրէն
Հովի քնքուշ հեւք մը կ'առնէ ելեւէջ:
Կը թրթռայ յուշիկ՝ գեփիւռը թեթեւ,
Եւ դեռածիլ դալարիքը ձմեռուան
Իր համրոյրիմ փայփայամբէն՝ ցուրտ մահուան
Կարծես կը զգայ մախազգացումն ակններէ:

Շարունակելէ առաջ, պահ մը ողջունենք գեղեցիկ լեզուն ու անցողակի կերպով գործածուած փոքր ինչ

գրական պատկերները, ինչպէս պատկերը՝ սա «ցուրտ գիշերուան բերանաբաց դռներ»ուն, որոնցմէ կը հասնի հովի քնքուչ հեւք մը: «Բնութեան բերանաբաց դուռը» գիւտ մըն է, կ'արժէ որ ընդգծենք: Ահա նաեւ տող մը, զոր կրնանք իրաւամբ կամ անիրաւօրէն վերագրել Մեծարենցին. «Կը թրթռայ յուշիկ՝ զեփիւռը թեթեւ»: Յետոյ կը շարունակենք.

Իրիկունն է, լուռ է գիւղակն ամայի,
Վերադարձող կովերը մերթ, սրտագին,
Կը քառաչեն կարօտն իրենց հորթուկին,
Փողոցներուն մէջ գիւղակին ամայի:
Ետ կը դառնան մարդիկ՝ հեռուի դաշտերէն,
Մինչ յոգնութեան տոպրակը դեռ կոնակին,
Հողագործը, դուրսը նստած իր հիւղին,
Տրեխներուն կը թօթուէ հողն յամրօրէն:
Ու երկմէքի թաւշին խորէն կապտամուշ,
Կռունկներու կարաւան մը կը հոսի,
Եւ չի կննար, դեռ շա՛տ ցուրտ է, եւ քանզի
Գարունն, աւա՛ղ, գուցէ մնայ դեռ շատ ուշ:

Եւ հիմա քիչ մըն ալ Դանիէլ Վարուժան կը գտնենք սա վերի տողերուն մէջ, իրաւամբ կամ անիրաւօրէն: Դանիէլ Վարուժան կը գտնենք իրենց հորթուկին կարօտը հառաչող կովերուն մէջ: Դանիէլ Վարուժան կը գտնենք հեռուի դաշտերէն վերադարձող յոգնած հողագործերուն մէջ: Իրականութեան մէջ կարելի է հարց տալ սա շատ հետաքրքրական հարցումը: Այս ոճը, զոր կը նմանցնենք Մեծարենցին կամ Վարուժանին ոճին, իսկապէս այդ երկուքի՞ն կը պատկանէր, թէ ոչ ատիկա շրջանի բազմաթիւ բանաստեղծներուն հասարակաց ոճն էր եւ մենք զայն ժամանակի ընթացքին դարձուցած ենք երկու մեծանուն բանաս-

տեղծներուն սեփականութիւնը՝ քանի որ այս երկուքն էին որ ամէնէն նշանաւորը դարձած էին բոլոր միւս բանաստեղծներուն մէջէն: Ո՞վ որուն վրայ ազդեցութիւն գործած էր, ո՞վ առաջին անգամ հնարած էր այս ոճը:

Գրականութեան մասնագէտները կրնան ուսումնասիրել այս կէտը, բայց մենք ուս պիտի թօթուենք այս հարցումին առջեւ եւ պիտի ըսենք. Կը մնայ ու ժառանգութեան տէրը կը դառնայ ա՛ն որ ամէնէն ուժեղն է ու տաղանդաւորը: Միսաք Մեծարենցը ինքնին ոճ մըն է այսօր մեզի համար: Դանիէլ Վարուժանը ինքնին ուրիշ ոճ մըն է մեզի համար: Սիամանթօն բոլորովին տարբեր ոճ մըն է մեզի համար: Պետրոս Դուրեանը ինքնին եզակի ու անկրկնելի ոճ մըն է իր փոքրածաւալ գործին մէջ: Գրականութեան հետազօտիչները, եթէ սկսին դարձնել այդ չըջանի մամուլին մոռցուած էջերը, թերեւս պիտի գտնեն բազմաթիւ բանաստեղծներ, որոնք նոյն օրերուն նոյն ոճերով գրչի արտադրութիւններ կը հրամցնէին ընթերցողներուն: Բայց անոնք չկրցան սեփականատէրը կամ ստեղծիչը դառնալ իրենց գործածած այդ ոճին: Որովհետեւ շատեր կը մտնեն գրականութեան պարտէզէն ներս, բայց քիչեր կ'ընտրուին ու կը մնան: Յաղթանակը եւ ամէն ինչ կը պատկանի անո՛ր որ ընտրուած է եւ մնացած է:

Արտաշէս Յարութիւնեանի «Անըջանք» խորագրեալ բանաստեղծութեան սա առաջին տողերը մեզի արձագանգ մը չե՞ն բերեր Միսաք Մեծարենցէն.

Գարնամ գիշերուամ երկիմբն է պայծառ,
լուսնով ոսկեգօծ մառախուղիմ մէջ,
Կապոյտիմ աչքերն հեշտամբով անճառ
Կը քթթեմ քնա՛տ ու երագատեմչ:

Օ՛ խորհուրդը տաղանդին: Գրականութիւնն ալ ունի իր մարգարաշտը, որուն վրայ վազողները պիտի մրցին իրարու հետ: Բոլորն ալ վազելու համար շարուած են քով քովի: Բայց որո՞ւն սրունքները աւելի արագաշարժ են, ո՞վ աւելի լաւ կը գործածէ վազելու թէքնիքը: Ո՞վ իր կուրծքը առաջին անգամ պիտի դպցնէ աւարտականի ժապաւէնին:

ՊԱՏԱՐԱԳ ՈՒ ԱՂՕԹՔ

Որքան որ գիտենք, Արտաշէս Յարութիւնեանի մօտ կրօնաշունչ բանաստեղծութիւնները ցանցառ են: Մեր բանաստեղծին գեղջկական համայնապատկերին մէջ եկեղեցին կարեւոր ներկայութիւն չունի: Թէեւ իրարու յաջորդող բանաստեղծութիւններու խորագիրներուն մէջ երբեմն կը հանդիպինք «պատարագ» կամ «աղօթք» բառերուն, բայց անոնք առաւելաբար ունին բարոյական ու բանաստեղծական իմաստ:

Կրնանք քիչ մը հետաքրքրուիլ սա բանաստեղծութեամբ որուն վերնագիրը «Պատարագ» է: Ի՞նչպիսի պատարագի մը մասին է որ կը խօսի բանաստեղծը.

Վարդեր՝ հոգւոյս մէջ
Կը թօշմիմ դալկոտ,
Վարդի թերթեր գէջ,
Թարմ ու մշկահոտ:
Գարուն մ'իմ սրտիմ
Մէջ կը գումատի
Ու հոն կը փթթիմ
Ցաւեր մորատի:

Ու կը մթնէ, ո՛հ,
Տաճարն ամայի,

Հոգիս է դժգոհ
Տագնապներով լի:

Քիչ մը երաժշտութիւն կայ այս բանաստեղծութեան մէջ, բայց ո՛չ հոգեւոր երաժշտութիւն: Իրական պատարագի մասին չէ խօսքը: Տաճարն ալ ներքին տաճար մըն է ապահովաբար:

Կ'երկարի, - մինչ ո՞ւր
Խորհուրդն անծանօթ,
Ու կը մխայ, լուռ,
Խունկն անուշահոտ:
Եւ արբեցութիւնն
Այս ցաւին անգութ
Կը լնու անժուկ
Կեանքս քաղմասուտ:

Ահաւասիկ չգտանք այն ինչ որ կը փնտռէինք: Արդեօք զայն պիտի գտնե՞նք սա միւս բանաստեղծութեան մէջ, «Պղծուած Պատարագ» խորագրով, ընդամէնը 16 տողերով:

Օր մը գիս մարդիկ շատ մոռալ գտան
Սրտիս բոցաթել խոյանձներում մէջ,
Խոյանձներ յախուռն, ճախրանք քաղմատենն՝
Յանդուգն իդներու թելերու վրան:
Ու պատշաճութեան համար ես՝ լռիմ՝
Մարեցի բոցոտ կանթեղն աչքերուս,
Եւ ալ կարծեցիմ թէ ցուրտ ու անյոյզ,
Մարեր է մաժուր խունկը բուրվառիմ:
Այսօր ես ինքնս եմ դէմքով սառնորակ,
Որ իր եսութեան խորանիմ վրայ
Դժմէ աղօթք մը դեռ կը մըմոռայ,

Իր սիրտն ընկելով այնտեղ պատարագ:
Եւ յօժարակամ՝ այլ տառապագիմ,
Կ'ստուգէ թէ իր հոգին ամբարիշտ
Կը խոշտանգէ մերթ անսահման մէկ վիշտ.
- Ջղջո՞ւմը լիման աշխարհիկ կեանքի:

Թերեւս դարձեալ չգտանք այն ինչ որ կը փնտռէինք:
Բայց գտանք անակնկալօրէն տարբեր ու իմաստալից
յուզականութիւն մը, աշխարհիկ կեանքէ հրաժարում
մը: Բանաստեղծը, տեղի տալով մարդկային ակնարկ-
ներու ճնշումին առջեւ, ահաւաստիկ մարեր է իր ներաշ-
խարհը փոթորկող խոյանքներն ու իղձերը, մարեր է
աչքերուն կանթեղը, հակառակ որ տակաւին կրակ կայ
անոնց մէջ: Մարեր է զանոնք ու դարձեր է ըստ երեւոյ-
թին սառնասիրտ քուրմ մը, որ իր սիրտը պատարագ
կ'ընէ եսութեան խորանին վրայ: Քիչ մը կը
դժուարանանք հասկնալու թէ ինչո՞ւ բանաստեղծը
ստանձներ է այդ զոհողութիւնը, ինչո՞ւ յօժարակամ,
բայց տառապագին կերպով իր սիրտն ու հոգին յանձներ
է աշխարհիկ կեանքէ հրաժարելու զղջումին: Բայց
ընդունինք որ խորհուրդ մը կայ սա բանաստեղծութեան
մէջ, որ թէեւ չ'անցնիր եկեղեցիին ու իրական խորանին
կրօնաշունչ ուղիներէն:

Հապա սա երրորդ բանաստեղծութի՞ւնը, որուն խորա-
գիրն է «Աղօթք»: Հոս թերեւս պիտի մտնենք իրական
տաճարէն ներս ու պիտի ծնրադրենք անհետացած մար-
դոց յիշատակին առջեւ: Իրիկուն է, անսահման խա-
ղաղութիւն մը կը սաւառնի դաշտին վերեւ, հորիզո-
նին վրայ մահամերձ է արեւը: Հեռուն՝ հսկայ լեռնա-
շղթայ մը կայ, մշուշը կաթէ անկողին մը տարածած
է համայնապատկերին վրայ: Ահա արդէն բանաս-
տեղծական շատ գեղեցիկ տողերով գծուած է տէքօրը:
Ու հիմա կը սկսինք կարդալ մնացեալ տողերը.

Կիրակմուտո՛ք է, օրհներգութեանց պահն անգոյր,
Կը ճայնարկեն կոչնակները սխրագին,
Եւ տուններէն թռչող խունկը քաղցրարոյր
Կ'արբեցնէ մթնուորտը գիւղակին:
Մինչ կը ցնծայ յիշատակն անոնց որ
Անհետացան անել մամբուն մէջ մթին,
Եւ արցունքոտ քաղցր յուզում մ'անսովոր,
Կը համակէ սգատխուր մեր հոգին:
Համայնական ծնրադրութեան խորհուրդին
Կը մասնակցի նաեւ քերթողն անանուն.
Ո՛վ բնութիւն, ընդունէ՛ իր սրտագին
Պաշտամունքին հծծիւնները շուարուն:

Ո՛վ է այդ «անանուն քերթողը», եթէ ոչ ինքը, մեր
բանաստեղծը, որուն այս անգամ կը հանդիպինք
թերեւս իրական տաճարին մէջ, ծնրադիր, մեռելներու
հոգւոյն աղօթող:

ԱՐՉԱՆԱԳՐԷ՝ ՏԵՏՐԱԿԻԴ ՍԷՉ

Մակարացի Արտաշէս Յարութիւնեանի սրտին մէջ
կարօտ մը կայ: Անծանօթ աշխարհի մը, անծանօթ
երկրի մը նկատմամբ կարօտ մը: Ո՛ր երկիրն է այդ,
մենք չենք գիտեր: Իր վերջին գիրքին՝ «Նոր Քնար»ին
վերջին էջերուն մէջ է որ կը կը հանդիպինք այդ
կարօտին մասին գրուած բանաստեղծութեան մը:
Բանաստեղծութեան անունն է «Երկրախտ»: «Երկ-
րախտ»: Քիչ մը զժուար բառ մը, արդարեւ: Ասիկա
մեզի ծանօթ «Հայրենաբաղձութիւն»ը պէտք է ըլլայ:

Ծովէն անդին, ու լեռներէն ալ անդին,
Մառախուղին խորն երագի մ'ոսկեփայլ,

Աշխարհ մը կայ, որում պատկերն հոգեգմայլ
կը կորսուի ծոցն անստոյգ անդունդին:

Ախ խորհուրդն ու պերճանքը, նազանքն ու շփացա-
ծութիւնը բանաստեղծութիւն կոչուած սա արուեստին:
Մենք որքան աւելի լաւ պիտի հասկնայինք բանաս-
տեղծին ըսածը, եթէ ան սա վերի տողերը գրէր մեր
լեզուին պահանջած ակադեմական ձեւով:

Ծովէն անդին ու լեռներէն ալ անդին,
Ոսկեփայլ երագի մը մառախուղին խորը
Կայ աշխարհ մը, որում հոգեգմայլ պատկերը
կը կորսուի անստոյգ անդունդի մը ծոցին մէջ:

Եթէ գրականութեան աշակերտը իր ուսուցչին հարցնէ
թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ բանաստեղծութեան
ոգին, ուսուցիչը կրնայ ցոյց տալ այս երկու «չորս
տող»երը, եւ ըսել. բանաստեղծութիւնը կը կայանայ
սա վարը պարզօրէն ըսուածը վերի անսովոր ձեւով
ըսելու արուեստին մէջ:

Բայց ուսուցիչը պիտի աւելցնէ որ եթէ կայ
բանաստեղծութիւն գրելու արուեստ, կայ նաեւ բանաս-
տեղծութիւն կարդալու արուեստ: Բանաստեղծութիւն
կարդալու արուեստը կը կայանայ վերը ըսուած դժուար
հասկնալի ձեւը վարը ցոյց տրուած դիւրաւ հասկնալի
ձեւով ընկալելու մէջ: Եւ գրականութեան ուսուցիչը,
առիթէն օգտուելով, իր աշակերտին պիտի բացատրէ
թէ ո՞՞ր է բանաստեղծութիւն մը կարդալ մէկ շունչով,
առանց պարբերաբար կանգ առնելու սա կամ նա տողին
վրայ, առանց պահ մը մտածելու թէ ի՞նչ կայ սա չորս
տողերուն մէջ, ո՞ր կէտերը պէտք է ողջունել մինչեւ
հոն կարդացուած կտորին մէջ, եւ անկէ վերջ
չարունակել նոյն կերպով: Սա կը նշանակէ որ, երբ

գործ ունինք մեր դասականներուն հետ, նոյնիսկ 12 տողէ բաղկացեալ բանաստեղծութիւն մը կարդալու ընթացքին, պիտի կանգ առնենք թերեւս երկու անգամ: Եւ երբեք ու երբեք մէկ շունչով չկարդալ հինգ, վեց բանաստեղծութիւն իրարու ետեւէ: Կեցէք, տուէք մէկուէն իրաւունքը, յետոյ անցէք միւսին:

Արդէն բաւականաչափ կանգ առինք վերի առաջին չորս տողերուն վրայ ու հիմա կրնանք շարունակել:

Չճնադ աշխարհ, ուր խոկումներս կը փթթիմ,
Անբջահիւս տեսլերեւոյթը անայլայլ
Կը լեցնէ պարապմ հոգւոյս իմ մոռայլ
Որ՝ թաղծարեկ՝ զճեզ կը տեմչայ վերստիմ:
Կը խուսափի՛ս տարտամիմ խորմ օրէ օր,
Ի գո՛ւր մայուած՛քս երեւոյթիմ դիւթաւոր
Կը մկրտի մշդել վայրկեամն հոսամուտ:
Ու գիմնվցած անկարելի երագէմ,
Ոտ՛ներս դեռ յամառօրէն կը վագեմ
Անվերջ ցամբուն երկայմ՛քիմ վրայ բագմախութ:

Այսքան է բանաստեղծութիւնը: Եւ կը մտածենք որ արդէն իսկ շատ է, որովհետեւ կենսականը ըստած է առաջին չորս տողին ու վերջին երեք տողին մէջ: Մէջտեղի տողերը չեն գոհացներ մեզ, տարտամ կը մնան, տարտամ ու արուեստական, կամ գոնէ անյաջող կերպով ըստած: Բայց արդէն բաւարարուած ենք սկիզբի ու վերջաւորութեան տողերով: Նոյնիսկ կրնանք յուզուիլ ի տես բանաստեղծին յուզումին՝ որ ծնունդ կ'առնէ հեռաւոր հորիզոններու ետին մնացած խորհրդաւոր ու կարօտալից աշխարհէ մը, որուն հասնիլը անկարելի երագ մը թուելով հանդերձ, բանաստեղծը կը դիմէ շարժունակ դէպի հոն, խութերով լեցուն անվերջանալի ճամբուն վրայէն վազելով անդադար:

Այնուհանդերձ եկէ՛ք պահ մը ողջունենք սա բանաստեղծութեան մէջ գործածուած գեղեցիկ բառերը. անըջահիւս, տեսլերեւոյթ, թաղծաբեկ, դիւթաւոր, հոսանուտ, բազմախուփ: Գրականութեան աշակերտը թող հաճի սորվիլ սա վեց բառերը, որոնք մեզի կ'ընծայուին 14 տողէ բաղկացեալ բանաստեղծութեան մը մէջ: Բանաստեղծութիւնը թող մեռնի՛ օր մը, մոռցուի՛, սրբուի՛ մեր գրականութեան պարտէզին մէջէն, կամ թող մնայ՛ աննշան անկիւն մը, աննշմար, բայց սա բառերը թող ապրին, չմեռնին, չմոռցուին:

Բայց ի՞նչպէս պիտի ապրին այդ բառերը, եթէ չապրի բանաստեղծութիւնը:

Եւ գրականութեան ուսուցիչը պիտի ըսէ որպէս վերջին խօսք.

«Տղաս, այս բանաստեղծութիւնը մեծ արժէք մը ունի կամ ոչ, կարելոր է թէեւ, բայց կարելոր է նաեւ այն՝ թէ այս բանաստեղծութիւնը ի՞նչ կ'ապրեցնէ մեր լեզուին մէջ: Տես թէ այս բանաստեղծութիւնը, բացի շրջանի մը ճաշակը ապրեցնելէ, ինչպիսի լեզու մը ու ոճ մը կ'ապրեցնէ իր փոքրիկ հասակին մէջ: Տե՛ս, եւ զայն եւս արձանագրէ տետրակիդ մէջ»:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Արտաշէս Յարութիւնեանի վերջին գիրքին վերջին էջերուն մէջ կը հանդիպինք քանի մը բանաստեղծութիւններու, որոնք կը կրեն նշանաւոր հայերու անուններ: Պետրոս Դուրեան, Ռ. Յ. Պէրպէրեան, Եղիա Տէմիրճիպաշեան, Մատթէոս Մամուրեան: Այն տպաւորութիւնը կը ստացուի որ այս բանաստեղծութիւնները գրուած են անոնց մահուան առթիւ:

Բանաստեղծութեան սիրահար մարդիկ միշտ ալ կրնան հարց տալ թէ որքա՞ն «բանաստեղծական» է քերթուած

մը գրել նշանաւոր մարդու մը փառաբանութեան կամ ողջունման համար: Խորհրդային շրջանին թօներով բանաստեղծութիւն գրուեցան Լենինի, Սթալինի, Գարլ Մարքսի եւ նմանօրինակ քաղաքական մարդոց մասին: Դժուար էր զանոնք բանաստեղծութիւն կոչել, որովհետեւ անոնք գրի կ'առնուէին յաճախ ստիպողութեան բերումով, ճնշումի տակ, որոշ յաջողութիւններ ու արդիւնքներ ձեռք բերելու ակնկալութեամբ: Թերեւս կարգ մը անձեր ալ կը գրէին իրաւ համոզումով, անկեղծ զգացումներով: Բայց փաստ մը կայ: Երբ կործանեցաւ Խորհրդային Միութիւնը, այդ բանաստեղծութիւնները անընթեռնելի դարձան: Չամբիւղ նետուեցան: Կը նշանակէր որ անոնց մէջ բանաստեղծութեան արուեստը կը բացակայէր:

Անձերու մասին գրուած հիանալի բանաստեղծութիւններ չկա՞ն: Օ՛, եւ թէ ինչ հիանալի բանաստեղծութիւններ կան: Ահաւասիկ կարծես կը լսենք Չարենցի ձայնը.

Երագ տեսայ Սայաթ Նովէն մօտս եկաւ
սագը ձեռիմ,
Հրի մման վառման գիմու ոսկեջրած թաւը ձեռիմ:

Չարենցէն զատ, դեռ քանիներ հրաշալիքներ գրած են Սայաթ Նովայի կամ ուրիշներու մասին: Անձերու մասին գրուած այս բանաստեղծութիւնները դարեր շարունակ կրնան մնալ որպէս լու բանաստեղծութիւն, որովհետեւ անոնց մէջ արուեստ ու զգացում, մանաւանդ անկեղծութիւն ու գիւտ կայ: Բայց բանաստեղծութեան մէջ ամէնէն վտանգաւոր գետինն է այս: Անձի մասին բանաստեղծութիւն գրել:

Հիմա եկէք միացէք մեզի որպէսզի պահ մը դանդաղինք Արտաշէս Յարութիւնեանի «Պետրոս Դուրեան»ին

վրայ: Երկար կտոր մը չէ: Տասնըչորս տող: Ուրեմն կարդանք մէկ շունչով.

Տժգոյն տղայ մ'էր, կանխահաս սիրահար,
Այրած հոգի՝ այն անսովոր կրակէն,
Եւ ապերախտ իր կեանքին ալ ըրած թէն,
Ինչպէս կնկան՝ գոր ողորմելի չենք կրնար:
Իր տենդակոծ մատներում տակ՝ մի թնար,
Մերթ մըմնջեց հեծեծագիմ՝ Բողբոջէն,
Ու մերթ գոռաց բողբոջի շեշտն հրեղէն
Միմչել ինկաւ տժգոյն տղան վշտահար:
Բոցի, բոյրի, կայծի, վարդի ու շամթի,
Մերթ խօլ կիրքի, մերթ արցունքի, աղօթի,
Քուրայ մ'էր ան, հէ՛գ պատանին քազմացաւ:
Առտուն երգեց. շունչն հատեր էր իրիկունան:
Իր հոգին ալ (վերջալոյս մը կը մեռնէր),
Խունկ մաքրարոյր, լուռ մխալով ցնդեցաւ:

Արտաշէս Յարութիւնեանի այս փոքրիկ, բայց ընդունելի բանաստեղծութեան մէջէն ընտրենք երկու տողեր, որոնք կը յաջողին գծել պատկերը Պետրոս Դուրեանին: «Առտուն երգեց - իրիկունը շունչը հատեր էր արդէն: Եւ անոր հոգին, մաքրամաքուր խունկի մը նման լուռ մխալով ցնդեցաւ»:

Արտաշէս Յարութիւնեանի բանաստեղծութիւնները, ինչ որ ալ ըլլայ անոնց արժէքը, երեք գիրքերու մէջ ամփոփուեցան ու եթէ ոչ թեթեւ մոռացումէ մը, գոնէ կորուստէ փրկուեցան: Բայց իր արձակ էջերը, որոնց մասին գովասանքով կը խօսին Օշականն ու բազմաթիւ ուրիշ հեղինակաւոր անձեր: Անոնք ո՛ւր են: Որքան գիտենք, հատորով հրատարակուած չեն: Ուրեմն՝ կորսուած են մամուլի էջերուն մէջ:

Մենք սուրբ պարտականութիւն մը կատարեցինք

Արտաշէս Յարութիւնեանի գրական դամբարանին տըր-
լած այս կարճատեւ այցելութեամբ: Քիչ վերջ դարձեալ
հրաժեշտ պիտի առնենք իրմէ: Բայց քիչ մը թար-
մացուցինք անոր ծաղիկները, ջուր սրակեցինք անոնց
վրայ: Եւ կը հաւատանք որ իրմէ հրաժեշտ առնելու
լաւագոյն ձեւն է կարգալ իր վերջին գրութիւնը՝ որ
կը կրէ «Վերջաբան» խորագիրը:

Թո՛ղ սրտապնդէ գժեզ տակաւիմ
Հո՛գիս, գէշ գրքի մը պարծամքիմ ունայմ.
Կը սիրես կեանքը ու դեռ կ'ապրիս գայմ,
Քամի չէ ցամաքած հեզմութեամ գիմիմ:
Եւ չես գամգատիր եթէ եղաւ որ
Գիրքդ չստեղծեց մոր յոյզ մ'իրակամ.
Գիտե՛ս, վնիռն է թակատագրակամ,
Կը համակերպիս քախտիդ՝ գլխիկոր:
Կը ջանաս փրկուիլ հոգերէ ունայմ,
Ու կը խորտակես կապերդ բոլոր,
Եւ ինքզնիքդ պիտ' կ'երթաս անմոլոր՝
Դէպի խորհուրդը անվերջ գիշերուամ:

Արտաշէս Յարութիւնեանն ալ, եթէ չենք սխալիր,
անոնցմէ է որոնք գերեզման չունեցան: Եթէ ունենար,
ի՞նչ աւելի լաւ բան պիտի գրէինք դամբարանին վրայ,
եթէ ոչ վերի բանաստեղծութիւնը:

Ան քաղցրաժպիտ ընդունեց ահա համեստ բանաս-
տեղծի իր ճակատագիրը եւ առանց մոլորելու գնաց
գէպի խորհուրդը անվերջ գիշերուան: Պիտի յարգենք
իր բանաստեղծութիւնը, պիտի յարգենք մանաւանդ
իր տխուր ճակատագիրը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Որպէս Մուտք	5
Կարդալով Դանիէլ վարուժանը	7-56
Կարդալով Իգնա Սարըասլանը	56-102
Կարդալով Սիլվա Կապուտիկեանը	102-137
Կարդալով Սիպիլի Մոռցուած էջերը	137-169
Պարոյր Սեւակի Հետ Գլուխ Գլխի	169-219
Կարդալով Սիամանթօն	219-254
Եկէ՛ք Բաժնենք Մեծարեցի Յուզումները	254-305
Եկէ՛ք Սեղմենք Ռուբէն Սեւակի Ձեռքը	305-372
Յիշելով Արտաշէս Յարութիւնեանը	372-405

R. HADDECİYAN

**ARAKASD TEBİ PANASDEGZUTYUN
(ŞİİRE DOĞRU YELKEN AÇMAK)**

**MURAT OFSET Matbaası
İstanbul - 2006**

**Գրաշարութիւն Եւ Տպագրութիւն
ՄԱՐՄԱՐԱ - ՄՈՒՐԱՏ ՕՅՍԷԹ**

**Փորձերու Սրբագրութիւն
ՄԱՔՐՈՒՀԻ Պ. ՅԱԿՈՔԵԱՆ**

**Էջադրութիւն
ՆԱԻՐԱ ՍԻԻՉՍԷ**

**Կողքի Նկար
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍՔԻԻ
(Հանդարտ Ծովը)**

**Կողքի Պատրաստութիւն
ԱՐԻ ՀԱՏՏԷՃԵԱՆ**

ԻՍԹԱՆԳՈՒԼ - 2006



(Լուսանկար՝ Յովհաննես Չամսարեան,
Հայէպ)

Ահա կրկին գրադարանէս վար կը քաշեմ ինը հայ բանաստեղծներ եւ պահ մը կը մտնեմ անոնց մտերմութեան մէջ: Պատահաբար ընտրուած բանաստեղծներ են անոնք, որոնք անպայման գեղեցիկ խօսք ու զգայնութիւն ունին ինծի փոխանցելու: Կրնայի ուրիշներն ալ ընտրել, կամ պատահաբար ձեռքս դնել մէկուն կամ միւսին վրայ: Չկայ մէկը որ իր սա կամ նա էջով յուզում չպատճառէ ինծի, կեանքի օրերուս գոյն ու ապրում չշնորհէ: Կը բաւէ որ ես պահ մը առանձնանամ անոնց հետ եւ ականջ տամ անոնցմէ հասնող ձայներու, ինչպէս որ ականջ կուտամ ձայնի մը, որ բովի սենեակէն կը հասնի աներեւոյթ ու մէլամաղձոտ երգիչի մը շրթներէն: Ողջո՞յն կրկին հայ բանաստեղծութեան: